ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնի
Սեպտեմբեր 2011

Տավուշի մարզում ձեռնարկատիրության եւ գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերամշակման եւ արտահանման փաստացի կարողությունների եւ զարգացման հնարավորությունների հետազոտություն



Ֆինլանդիայի Արտաքին Գործերի Նախարարություն

ՄԱԿ-ի Զարգացման Ծրագիր

ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնի ՍՊԸ

Բովանդակություն

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ 5

1 ՆԱԽԱԲԱՆ 8

1.1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ 8

1.2 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 9

1.2.1 Տեղեկատվության հավաքման աղբյուրները 9

1.2.2 Տեղեկատվության հավաքումը, ամփոփումը, վերլուծությունը 11

1.2.3 Հետազոտության արդյունքները 12

2 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ 13

2.1 ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 13

2.2 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ 16

2.2.1 Պատմական ցուցանիշները 16

2.2.2 Զարգացման միտումները 18

2.2.3 Բուսաբուծության ոլորտը 20

2.2.3.1 Ներկա վիճակը եւ խնդիրները 20

2.2.3.2 Առաջատար արտադրանքը 26

2.2.4 Անասնաբուծության ոլորտը 28

2.2.4.1 Ներկա վիճակը եւ խնդիրները 28

2.2.4.2 Առաջատար արտադրանքը 31

2.2.5 Գյուղմթերքների վերամշակման ոլորտը 32

2.2.5.1 Ներկա վիճակը եւ խնդիրները 32

2.2.5.2 Գյուղմթերքների վերամշակման առաջատար ոլորտները 35

2.3 ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ 36

2.3.1 Արտադրության եւ արտահանման ներուժը 36

2.3.1.1 Առաջնային գյուղատնտեսական արտադրանք 37

2.3.1.2 Վերամշակված արտադրանք 40

2.3.2 Արտադրության եւ արտահանման ներուժի հիմնավորումներ 42

2.3.2.1 Առաջնային գյուղատնտեսական արտադրանք 42

2.3.2.2 Վերամշակված արտադրանք 44

2.3.3 Արտադրության եւ արտահանման խոչընդոտները եւ դրանց հաղթահարման ուղիները 46

2.3.4 Ներուժային ապրանքների իրացման շուկաները 55

2.3.5 Արտահանման օրենսդրական դաշտը 57

2.3.5.1 Ընդհանուր տվյալներ 57

2.3.5.2 ԱԱՀ-ի շեմի առկայության ազդեցությունը 58

2.3.5.3 ԱԱՀ վճարումից արտահանման ազատված լինելու ազդեցությունը 59

2.3.5.4 Ազատ տնտեսական գոտիների ազդեցությունը 60

2.3.5.5 Հարկային խոչընդոտների եւ դրանց հաղթահարման հնարավորությունները 62

2.3.5.6 Մաքսային գործընթացների ազդեցությունը 64

3 ՓՄՁ-ՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 66

3.1 ՓՄՁ-ՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ 66

3.2 ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ 67

3.2.1 Նոր բիզնեսներ հիմնելու պայմանները 67

3.2.2 Բիզնեսների ձեւավորման խնդիրների հաղթահարումը եւ աջակցության կարիքները 69

3.2.2.1 Խնդիրների հաղթահարման առաջարկություններ ... 69
3.2.2.2 Սկսնակ բիզնեսների խորհրդատվական աջակցության կարիքները ... 71

4 ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՎՐԱ ... 73

4.1 ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ... 73

4.2 ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ... 74

5 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ... 76

5.1 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ... 76

5.1.1 Տեղեկացվածությունը իրականացված եւ ընթացիկ ծրագրերի վերաբերյալ ... 76

5.1.2 Քաղված դասերը եւ կրկնօրինակման ներուժը ... 77

5.2 ՄԱԶԾ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ... 79

6 ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ... 80

6.1 ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՌԿԱ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ... 80

6.1.1 Առկա կենտրոնների կարգավիճակը ... 80

6.1.2 Տրամադրվող տեղեկատվության բնութագիրը ... 82

6.1.2.1 Առկա տեղեկատվության տեսակները եւ տրամադրման եղանակները ... 82

6.1.2.2 Առկա տեղեկատվության գնահատականը ... 84

6.1.3 Գործունեության հիմնական խնդիրները եւ խոչընդոտները ... 85

6.2 ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆՈՐ ԿԵՆՏՐՈՆԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ... 87

6.2.1 Պահանջվող տեղեկատվության տեսակները ... 87

6.2.2 Պահանջվող տեղեկատվության ձեւաչափը ... 89

6.2.3 Վճարներ ... 90

7 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԸ ... 92

7.1 ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ... 92

7.1.1 Մեթոդը ... 92

7.1.2 Տեղեկատվական կարիքները ... 92

7.1.3 Տեղեկատվության ստացման գերադասելի ձեւաչափերը ... 95

7.2 ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ... 96

7.2.1 Վերապատրաստման հիմնական թեմաները ... 96

7.2.2 Վերապատրաստման լրացուցիչ թեմաներ ... 99

7.2.3 Վերապատրաստման դասընթացների իրականացման վայրը ... 99

8 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ... 100

8.1 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ... 100

8.1.1 Գյուղատնտեսության եւ վերամշակման ոլորտի զարգացման միտումները ... 100

8.1.2 Գործարար միջավայրը ... 102

8.1.3 Իրականացված զարգացման ծրագրերը ... 102

8.1.4 Շուկայական տեղեկատվական կենտրոնի ստեղծման նախադրյալները ... 103

8.1.5 Տեղեկատվության եւ գիտելիքների կարիքները ... 103

8.2 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ... 104

8.2.1 Ընդհանուր բնույթի առաջարկություններ ... 104

8.2.2 Կոնկրետ գործողությունների առաջարկություններ ... 104

9 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ... 106

9.1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ 106

9.1.1 Տեղեկատվության աղբյուրների 1-ին խումբ 1. Հարցումների մասնակիցները 106

9.1.2 Տեղեկատվության աղբյուրների 2-րդ խումբ 1. Վիճակագրական նյութեր, պաշտոնական տեղեկանքներ, հաշվետվություններ 112

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1 - Տեղեկատվության աղբյուրների առաջին խումբը 10
Աղյուսակ 2 - Խոշոր ֆերմերների թվի բաշխվածքն ըստ գործունեության տեսակների 11
Աղյուսակ 3 - Տավուշի մարզի մշտական բնակչությունը 01.07.2011թ.-ի դրությամբ ըստ բնակության վայրերի եւ տարածաշրջանների 13
Աղյուսակ 4 - Տավուշի մարզի հողային ֆոնդը 01.07.2010թ.-ի դրությամբ 14
Աղյուսակ 5 - Արտադրանքի թողարկումը Տավուշի մարզում 2009-2010թ.-ին 15
Աղյուսակ 6 - Մանրածախ առեւտրի օբյեկտների քանակը Տավուշի մարզում 2006-2010թթ.-ին 16
Աղյուսակ 7 - Գյուղատնտեսության համախառն արտադրանքը ընթացիկ գներով 2006-2010թթ.-ին, մլրդ. դրամ 17
Աղյուսակ 8 - Բուսաբուծության հիմնական ցուցանիշները Հայաստանում եւ Տավուշի մարզում 2006-2010թթ.-ին 21
Աղյուսակ 9 - Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները եւ համախառն բերքը Տավուշի մարզում ըստ մշակաբույսերի տեսակների, 2009թ. 22
Աղյուսակ 10 - Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները եւ համախառն բերքը Տավուշի մարզում ըստ տարածաշրջանների, 2010թ. 24
Աղյուսակ 11 - Տավուշի մարզի գյուղատնտեսական հողերի ոռոգելիության աստիճանը 01.07.2010թ.-ի դրությամբ 25
Աղյուսակ 12 - Տավուշի մարզի բուսաբուծության ոլորտի առաջատար 20 ապրանքներն ըստ ռեսպոնդենտների 26
Աղյուսակ 13 - Անասնագլխաքանակը Տավուշի մարզում 2007-2011թթ.-ին (հունվարի 1-ի դրությամբ), գլուխ 29
Աղյուսակ 14 - Անասնագլխաքանակն ըստ տարածաշրջանների, 2011թ. (հունվարի 1-ի դրությամբ) 29
Աղյուսակ 15 - Անասնաբուծական հիմնական մթերքի արտադրությունը Տավուշի մարզում 2006-2010թթ.-ին 30
Աղյուսակ 16 - Տավուշ մարզում խոշոր եղջերավոր անասնաբուծությամբ զբաղվող համեմատաբար խոշոր տնտեսությունների թիվը 2011թ.-ի օգոստոսի դրությամբ 31
Աղյուսակ 17 - Տավուշի մարզի անասնաբուծության ոլորտի առաջատար 5 ապրանքները 31
Աղյուսակ 18 - Տավուշի մարզում 2011թ.-ի օգոստոսի դրությամբ առկա վերամշակող ձեռնարկությունների թիվն ըստ գործունեության տեսակի եւ բիզնես ակտիվության 32
Աղյուսակ 19 - Տավուշի մարզի խաղողի վերամշակման ձեռնարկությունների կողմից իրականացված մթերումները 2006-2010թթ.-ին, տոննա 33
Աղյուսակ 20 - Տավուշի մարզի պտուղ-բանջարեղենի վերամշակման ձեռնարկությունների կողմից իրականացված մթերումները 2006-2010թթ.-ին, տոննա 34
Աղյուսակ 21 - Տավուշի մարզի բուսաբուծության արտադրանքի վերամշակման առաջատար ոլորտներն ըստ ռեսպոնդենտների 36
Աղյուսակ 22 - Տավուշի մարզի անասնաբուծության արտադրանքի վերամշակման ներուժային ոլորտները 36
Աղյուսակ 23 - Ներուժային առաջնային գյուղատնտեսական ապրանքներ 37
Աղյուսակ 24 - Ներուժային առաջնային գյուղատնտեսական ապրանքներն ըստ ռեսպոնդենտների խմբերի 39
Աղյուսակ 25 - Ներուժային վերամշակված ապրանքներ 40
Աղյուսակ 26 - Ներուժային վերամշակված ապրանքներն ըստ ռեսպոնդենտների խմբերի 41
Աղյուսակ 27 - Առաջնային գյուղատնտեսական ներուժային ապրանքների իրացման շուկաները 55
Աղյուսակ 28 - Վերամշակված ներուժային ապրանքների իրացման շուկաները 56
Աղյուսակ 29 - ԱԱՀ վճարման շեմի ազդեցությունը ռեսպոնդենտների գործունեության վրա 58
Աղյուսակ 30 - ԱԱՀ-ից ազատված լինելու ազդեցությունը ռեսպոնդենտների գործունեության վրա 59
Աղյուսակ 31 - ԱՏԳ-ների ազդեցությունը ռեսպոնդենտների գործունեության վրա 61
Աղյուսակ 32 - Մաքսային գործընթացների ազդեցությունը ռեսպոնդենտների գործունեության վրա 64
Աղյուսակ 33 - Մարզում առկա պայմանները նպաստավո՞ր են արդյոք նոր բիզնես հիմնելու համար 67

Աղյուսակ 34 - Սկսնակ բիզնեսների խորհրդատվական աջակցության (նախապես սահմանված) կարիքները 71
Աղյուսակ 35 - Սկսնակ բիզնեսների խորհրդատվական եւ այլ աջակցության (լրացուցիչ հայտնաբերված) կարիքները 72
Աղյուսակ 36 - Տավուշի մարզում իրականացված եւ ընթացիկ զարգացման ծրագրերը 76
Աղյուսակ 37 - Տարբեր շահագրգիռ կառույցների կողմից մատուցվելիք օժանդակությունը 79
Աղյուսակ 38 - Տեղեկատվության ստացման ներկա ձեւաչափերը 90
Աղյուսակ 39 - Տեղեկատվության տարբեր տեսակների կարեւորությունը, առկայությունը եւ հասանելիությունը 92
Աղյուսակ 40 - Տեղեկատվության ստացման գերադասելի ձեւաչափերը 95
Աղյուսակ 41 - Վերապատրաստման կարիքների գնահատականը 97

Նկարների ցանկ

Նկար 1 - Հայաստանի եւ Տավուշի մարզի գյուղատնտեսության համադրելի գներով համախառն արտադրանքի ինդեքսը 2006-2010թթ.-ին 17
Նկար 3 - Տավուշի մարզի բուսաբուծության համախառն արտադրանքը ընթացիկ գներով 2006-2010թթ.-ին, մլրդ. դրամ 20
Նկար 4 - Տավուշի մարզի անասնաբուծության համախառն արտադրանքը ընթացիկ գներով 2006-2010թթ.-ին, մլրդ. դրամ 28
Նկար 5 - Տրամադրվող տեղեկատվության բնութագրիչների գնահատականը 84

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՄԱԿ-ի Զարգացման Ծրագիրը (ՄԱԶԾ) Ֆինանսական կառավարության հետ համատեղ իրականացվող ծրագրի շրջանակներում աջակցում է Տավուշի մարզի ՓՄՁ սուբյեկտների արտաքին տնտեսական գործունեության ընդլայնմանը եւ նորարարական արտադրությունների համար նպաստավոր պայմանների ձեւավորմանը: Այդ ծրագրի ընդհանուր նպատակն է առեւտրի խթանման միջոցով աջակցել Տավուշի մարզի տնտեսական զարգացմանը: Ծրագրի հիմնական նպատակներն են ա) հանրային ոլորտի դերակատարների, ՓՄՁ-ների, բիզնեսին աջակցող հաստատությունների եւ այլնի համար առեւտրի ուղղորդման եւ արտահանման խթանման կարողությունների զարգացում; բ) շուկաների տեղեկատվական կենտրոնի» կարողությունների հզորացում համապատասխան ծառայությունների տրամադրման նպատակով; գ) տեղական բիզնեսի կարողությունների ընդլայնում՝ արտահանմանն ուղղված նորարարական ծրագրերի/բիզնես գաղափարների իրականացման միջոցով:

ՄԱԶԾ-ն, նախաձեռնելով սույն հետազոտության իրականացումը, նպատակ ունի ավելի թարմ տվյալներ ստանալ Տավուշի մարզում եւ նրա առանձին տարածաշրջաններում ձեռնարկատիրության եւ գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերամշակման եւ արտահանման փաստացի կարողությունների եւ ընդլայնման հնարավորությունների մասին: Հետազոտությունը ներառում է Տավուշի մարզի եւ նրա առանձին տարածաշրջանների բիզնես միջավայրի առկա իրավիճակի վերլուծությունը:

Հետազոտությունն իրականացվել է Տավուշի մարզի ձեռնարկատիրության ոլորտի շահագրգիռ բոլոր կողմերի, այդ թվում՝ սկսնակ եւ գործող ձեռնարկատերերի, կոոպերատիվների, տեղական ինքնակառավարման մարմինների, ՀԿ-ների, բիզնես եւ մարքեթինգի տեղեկատվական կենտրոնների, վարկային կառույցների, միջազգային կազմակերպությունների եւ ֆերմերային մեծ տնտեսությունների շրջանում անցկացված հարցումների միջոցով: Ի հավելումն դրա, օգտագործվել է մեծ քանակությամբ վիճակագրական տեղեկատվություն, ինչը թվերի լեզվով հաստատել է այն, ինչ ներկայացրել են ռեսպոնդենտները:

Տավուշի մարզն ընդգծված գյուղատնտեսական տարածաշրջան է: Մարզում բնակչության 61%-ը բնակվում է գյուղերում, թողարկվող արտադրանքի 83%-ը (2010թ., արժեքային արտահայտությամբ) բաժին է ընկնում գյուղատնտեսությանը: Տնտեսության մյուս առաջատար ոլորտը սննդամթերքի արտադրությունն է, որի գերակշիռ մասը բաժին է ընկնում գյուղմթերքների վերամշակմանը: Արտահանման խթանման միջոցով մարզի զարգացման հնարավորություններն ավելացնելու համար ջանքերն առաջին հերթին պետք է ուղղվեն գյուղատնտեսության եւ նրա հետ կապված ոլորտներ, որոնք են առաջնային գյուղատնտեսությունը եւ գյուղմթերքների վերամշակումը:

Հետազոտության ընթացքում բացահայտվել է, որ Տավուշի մարզի գյուղատնտեսության եւ սննդի վերամշակման զարգացման միտումները վերջին տարիներին բավականին դանդաղել են: Նվազել է գյուղատնտեսության համախառն արտադրանքը, պակասել է անասնագլխաքանակը, բազմաթիվ խնդիրներ կան ենթակառուցվածքների, իրացումների կազմակերպման, տեխնոլոգիական զինվածության, բարձրորակ եւ բարձրարժեք մթերքների արտադրության, ֆինանսավորման մատչելիության եւ բազմաթիվ այլ խոչընդոտների հետ կապված: Բազմաթիվ վերամշակող ձեռնարկություններ (հատկապես կաթի վերամշակման ոլորտում) գտնվում են պարապուրդի մեջ:

Դրան զուգահեռ, առկա են նաեւ զարգացման լուրջ հնարավորություններ եւ նախադրյալներ: Մասնավորապես՝ քանակական եւ որակական լուրջ առաջխաղացում է նկատվում այգեգործության (հատկապես դեղձի եւ մերձարեւադարձային պտուղների մշակման), խաղողագործության, ծխախոտի մշակության, մսի արտադրության, ձկնաբուծության, ջերմատնային գործունեության, սննդի վերամշակման (գինու եւ կոնյակի, պահածոների, չիրերի արտադրության) եւ այլ ոլորտներում: Հետազոտության ընթացքում բացահայտվել են Տավուշի մարզում արտադրության եւ արտահանման լուրջ ներուժ ունեցող մի շարք ապրանքներ, որոնք են.

▪ **Առաջնային գյուղատնտեսական ապրանքներ**	➥ Խաղող, տավարի միս, արքայանարինջ, դեղձ, մերձարեւադարձային պտուղներ, կաթ, ծխախոտ, հատապտուղներ, հոն, մեղր
▪ **Վերամշակված ապրանքներ**	➥ Մրգօղիներ, պանիր, չրեր, գինի եւ կոնյակ, պահածոներ, մուրաբաներ, ջեմեր

Տարբեր ներուժային ապրանքների մասով արտադրության եւ արտահանման խոչընդոտները, ինչպես նաեւ դրանց հաղթահարման հնարավոր ուղղությունները խիստ տարբեր են: Նույնիսկ խմբավորված վերլուծության արդյունքներով հնարավոր խոչընդոտների ցանկը երկար է եւ ընդգրկում է գործունեության գրեթե բոլոր ուղղությունները: Նման իրավիճակը բնորոշ է ոչ միայն Տավուշի մարզին, այլեւ ողջ Հայաստանին:

Այնուամենայնիվ՝ կարելի է առանձնացնել առավել ցայտուն արտահայտված խոչընդոտներ՝ արտադրանքի քիչ քանակներ, ներդրումներ իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների անհասանելիություն, ոռոգման համակարգի եւ գյուղատնտեսական այլ ենթակառուցվածքների անբավարարություն, հնացած տեխնոլոգիաներ, իրացման դժվարություններ, հարկային սխալ վարչարարություն, մասնագիտական պատրաստվածության ցածր մակարդակ: Սրանք պետք է լինեն թիրախային այն ուղղությունները, որոնց առաջին հերթին պետք է անդրադառնան շահագրգիռ կառույցները՝ զարգացման ծրագրերը եւ պետական մարմինները:

Ներուժային ապրանքների համար որպես առաջնային եւ հիմնական շուկա են հանդիսանում մարզի եւ Հայաստանի շուկաները, որոնք այս ապրանքների առաջարկի դեֆիցիտ ունեն: Սա լավագույն հնարավորություններ է ստեղծում կոնկրետ ապրանքների մասով արտադրության ծավալների ընդլայնման եւ իրացման համար: Արտահանման լավագույն ներուժն ունեն դեղձը, արքայանարինջը, թուզը, պանիրը, կոնյակը եւ պահածոները: Արտահանման ամենախոստումնալից շուկաները առաջնային գյուղատնտեսական ներուժային ապրանքների համար հանդիսանում են Ռուսաստանը եւ Վրաստանը:

Օրենսդրական եւ կարգավորման դաշտերի ազդեցությունը Տավուշի մարզի տնտեսական զարգացման վրա երկակի է: Առկա օրենսդրությունն ընդհանուր առմամբ վատը չէ: Այնպիսի միջոցառումները, ինչպիսիք են ԱԱՀ բարձր շեմը, գյուղատնտեսության ազատվածությունը հիմնական հարկատեսակներից, արտահանման խթանման միջոցառումները եւ այլն մեծապես նպաստում են զարգացմանը: Այլ է խնդիրը օրենսդրական դաշտի կիրարկման տեսանկյունից: Հարկային եւ մաքսային չափազանց խիստ եւ հաճախ անհավասար վարչարարությունը լուրջ բացասական ազդեցություն է գործում մարզի զարգացման միտումների վրա: Չկան արտոնություններ սկսնակ եւ հեռավոր ու սահմանամերձ վայրերում գործող տնտեսությունների եւ ձեռնարկությունների համար:

Վերջին պնդումը հատկապես ցայտուն է արտահայտված փոքր եւ միջին ձեռնարկությունների եւ ֆերմերային տնտեսությունների պարագայում: Մարզի գործարար միջավայրը հետազոտության

մասնակիցների մեծամասնության կարծիքով նպաստավոր չէ տնտեսական կայուն զարգացում ապահովելու համար: Խնդիրները կրկին նույնն են. արտադրության անբավարար պայմաններ եւ հնացած տեխնոլոգիաներ, անարդյունավետ ենթակառուցվածքներ, արտադրանքի իրացման դժվարություններ, մասնագիտական եւ ընդհանուր խորհրդատվության պակաս, ֆինանսավորման անհասանելիություն եւ այլն:

Հայաստանի տնտեսության մենաշնորհման մակարդակն արտահայտված բացասական ազդեցություն չի թողնում Տավուշի մարզի զարգացման միտումների վրա: Լուրջ խոչընդոտներից մասնավորապես նշվել է վառելիքի շուկայի մենաշնորհային վիճակը, որը սեզոնին մեծապես խոչընդոտում է առաջնային գյուղատնտեսության զարգացմանը: Բացահայտվել է նաեւ արտադրողների ծայրահեղ բացասական վերաբերմունքը իրենց արտադրանքի իրացման մեջ ներգրավված եւ որոշակի մենաշնորհային դեր ունեցող միջնորդ օղակների նկատմամբ: Միաժամանակ կարծում ենք, որ տվյալ պարագայում հիշատակության են արժանի նաեւ պարարտանյութերի եւ բուժանյութերի մոնոպոլացված շուկաները: Ռեսպոնդենտների կողմից այս երկու ապրանքատեսակների չհիշատակելը կարող է պայմանավորված լինել դրանց (թանկության պատճառով) ոչ ինտենսիվ օգտագործմամբ:

Տավուշի մարզն ի սկզբանե հանդիսացել է զարգացման ծրագրերի հետ համագործակցող Հայաստանի ամենաակտիվ մարզը: Այստեղ զարգացման ծրագրեր են իրականացրել ներքին եւ միջազգային ֆինանսավորում ունեցող գրեթե բոլոր կառույցները: Հիմնական պատճառները մարզի հեռավոր տեղադիրքը եւ համայնքների մեծ մասի սահմանակցությունն է հարեւան Ադրբեջանին: Առավել ճանաչված են զարգացման ծրագրեր իրականացնող հետեւյալ կառույցները՝ ՄԱԿ-ը, ՀԲ-ն, ՀՄՀ-Հայաստանը, World-Vision-ը, IFAD-ը: Տարբեր ծրագրերի կողմից իրականացված հաջող գործողություններից կրկնօրինակման ներուժ ունեն հետեւյալ գործողությունները.

- Ոռոգման համակարգերի բարելավումը,
- Այգեգործության զարգացումը (նոր այգիների հիմնումը),
- Անասնաբուծության զարգացումը (գլխաքանակի ավելացումը),
- Արոտավայրերի հասանելիության, կառավարման եւ արդյունավետության բարելավումը,
- Մեքենայացված մշակության զարգացումը,
- Բարձրարժեք արտադրության խթանումը եւ այլն:

Հետազոտությանը մասնակցած գրեթե բոլոր զարգացման ծրագրերը եւ ՀԿ-ները հայտնել են ՄԱԶԾ հետ համագործակցելու իրենց պատրաստակամությունը:

Հետազոտության ընթացքում բացահայտվել է նաեւ, որ շուկայական տեղեկատվության պակասը մեծապես խոչընդոտում է ներուժային ապրանքների պատշաճ շուկայավարմանը եւ իրացմանը: Գրեթե բոլոր արտադրողները պոտենցիալ շուկաների եւ գործընկերների, իրենց արտադրանքի գների եւ իրացման հնարավորությունների վերաբերյալ թարմ եւ ճշգրիտ տեղեկություններ ստանալու խիստ կարիք ունեն: Հետազոտվողների կողմից մեծապես կարեւորվել է շուկայական տեղեկատվական կենտրոնի ստեղծումը:

Հետազոտության արդյունքում բացահայտվել են նաեւ Տավուշի մարզի ֆերմերների եւ վերամշակող ձեռնարկությունների ներկայացուցիչների տեղեկատվական եւ գիտելիքների հիմնական կարիքները: Դրանց թվում հատկապես շեշտվել են նոր տեխնոլոգիաների (ագրոտեխնիկայի), գործունեության կազմակերպման եւ պլանավորման, արտադրանքի շուկայավարման գիտելիքների անբավարարությունը:

1 ՆԱԽԱԲԱՆ

«Տավուշի մարզում ձեռնարկատիրության եւ գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերամշակման եւ արտահանման փաստացի կարողությունների եւ զարգացման հնարավորությունների հետազոտությունն» (այսուհետ՝ հետազոտություն) իրականացվել է **ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի** (ՄԱԶԾ) Հայաստանի գրասենյակի պատվերով: Հետազոտությունն իրականացվել է **«ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնի» ՍՊԸ**-ի[1] կողմից՝ 2011թ.-ի հուլիս-սեպտեմբեր ժամանակահատվածում:

1.1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՄԱԿ-ի Զարգացման Ծրագիրը (ՄԱԶԾ) Ֆիննական կառավարության հետ համատեղ իրականացվող ծրագրի շրջանակներում աջակցում է Տավուշի մարզի ՓՄՁ սուբյեկտների արտաքին տնտեսական գործունեության ընդլայնմանը եւ նորարարական արտադրությունների համար նպաստավոր պայմանների ձեւավորմանը: Այդ ծրագրի ընդհանուր նպատակն է առեւտրի խթանման միջոցով աջակցել Տավուշի մարզի տնտեսական զարգացմանը: Ծրագրի հիմնական նպատակներն են.

- Հանրային ոլորտի դերակատարների, ՓՄՁ-ների, բիզնեսին աջակցող հաստատությունների եւ այլնի համար առեւտրի ուղղորդման եւ արտահանման խթանման կարողությունների զարգացում,
- «Շուկաների տեղեկատվական կենտրոնի» կարողությունների հզորացում համապատասխան ծառայությունների տրամադրման նպատակով,
- Տեղական բիզնեսի կարողությունների ընդլայնում՝ արտահանմանն ուղղված նորարարական ծրագրերի/բիզնես գաղափարների իրականացման միջոցով:

Տավուշի մարզը հանդիսանում է որպես Հայաստանից դեպի Ռուսաստանի Դաշնություն եւ ԱՊՀ այլ երկրներ, ինչպես նաեւ Վրաստանով դեպի Եվրոպա եւ Թուրքիա իրականացվող բեռնափոխադրումների հիմնական միջանցք: Մարզի հյուսիսում՝ հայ-վրացական սահմանին գտնվող Բագրատաշենի մաքսակետով է իրականացվում Հայաստանի ցամաքային բեռնափոխադրումների մեծ մասը: Սակայն սահմանամերձ դիրքը կամ տարանցիկ ուղիները այնքան էլ մեծ ազդեցություն չունեն մարզի զարգացման վրա, քանի որ դրանցից օգտվելու շատ քիչ հնարավորություններ ունեն ՓՄՁ-ները եւ առեւտրով զբաղվող սուբյեկտները: Տարիներ առաջ Բագրատաշեն-Սադախլո (Վրաստան) սահմանային տարածքում գործող շուկայի փակումից հետո առեւտրի հնարավորությունները մասամբ նվազել են, մասամբ էլ դժվարացել: Այսօր իրենց ապրանքները շուկա հասցնելու համար Տավուշի մարզի տնտեսվարողները ստիպված են «օգտվել» միջնորդների ծառայություններից: Ուստի, չնայած իր տեղադիրքի ընձեռած որոշ առավելություններին, Տավուշի մարզն իր ՓՄՁ սուբյեկտների կամ առեւտրի զարգացման մակարդակով առանձնապես չի տարբերվում Հայաստանի մյուս մարզերից:

Մյուս կողմից Տավուշի մարզի զարգացման համար հավելյալ հնարավորությունների ստեղծումը Հայաստանի համար ունի բացառիկ կարեւորություն: Մարզը 352 կմ ընդհանուր սահման ունի Ադրբեջանի հետ, ինչն արդեն բազմաթիվ խնդիրների աղբյուր է հանդիսանում: Սահմանամերձ համայնքների հողերի զգալի մասը չի մշակվում, իսկ սահմանամերձ են համարվում մարզի

[1] www.ampartners.am

բնակավայրերի 71%-ը: Դա էապես խանգարում է այդ համայնքների տնտեսական զարգացմանը եւ առաջացնում է սոցիալական խնդիրների այդ համայնքների բնակչության համար:

ՄԱԶԾ-ն, նախաձեռնելով սույն հետազոտության իրականացումը, նպատակ ունի ավելի թարմ տվյալներ ստանալ Տավուշի մարզում եւ նրա առանձին տարածաշրջաններում ձեռնարկատիրության եւ գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերամշակման եւ արտահանման փաստացի կարողությունների եւ ընդլայնման հնարավորությունների մասին: Հետազոտությունը ներառում է Տավուշի մարզի եւ նրա առանձին տարածաշրջանների բիզնես միջավայրի առկա իրավիճակի վերլուծությունը, այդ թվում՝

- ՓՄՁ-ների եւ մեծ ֆերմերային տնտեսությունների թվաքանակն ըստ գործունեության ոլորտների, փաստացի արտադրության, արտահանման, դրանց ներուժը, արտաքին եւ ներքին շուկայի գնահատում, օրենսդրական հիմնախնդիրները, բիզնես տեղեկատվության հասանելիությունը եւ այլն:
- Սկսնակ եւ գործող ձեռնարկատերերի կոոպերատիվների, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, ՀԿ-ների, բիզնես եւ մարքեթինգի տեղեկատվական կենտրոնների առկա գիտելիքների, կարողությունների եւ հմտությունների գնահատումը, ուսուցման կարիքները, ուսուցման առաջնահերթ թեմաները:

Հետազոտությունն ընդգրկում է հարցերի հետեւյալ շրջանակը.

- Հայաստանի գյուղատնտեսական եւ վերամշակող արդյունաբերության արտադրանքի մրցունակության մակարդակի վերլուծություն Հայաստանում, Տավուշի մարզում եւ արտահանման պոտենցիալ ունեցող հարեւան երկրներում:
- Հայաստանից ապրանքների արտահանման օրենսդրական դաշտի վերլուծություն:
- ՓՄՁ-ների գրանցման եւ փակման դինամիկան, փակման պատճառները ոլորտային կտրվածքով,
- Մարզի համար հեռանկարային համարվող արտադրատեսակների վերլուծություն:
- Շուկայի զարգացման վրա երկրի տնտեսության մոնոպոլիզացման բարձր մակարդակի ազդեցության վերլուծություն:
- Մարզում վերջին 5 տարիներին միջազգային կամ այլ սուբյեկտների կողմից ֆինանսավորված իրականացված, ներկայումս իրականացվող եւ իրականացվելիք ծրագրերի արդյունավետության գնահատում, քաղած դասեր:
- ՓՄՁ-ների եւ ֆերմերային մեծ տնտեսությունների կողմից արտադրության եւ արտահանման զարգացման համար անհրաժեշտ տեղեկատվության կարիքների գնահատում, դրանց հասանելիությունը, հավաքագրման եւ փոխանցման առաջարկվող ուղիները:
- Արտահանման նոր հնարավոր շուկաների (տեղական եւ հարեւան երկրներում) բացահայտում եւ արտադրանքի դիվերսիֆիկացման հնարավորություններ:
- Սկսնակ բիզնեսի խթանման ուղիների բացահայտում;
- Շուկաների տեղեկատվական կենտրոնի գործուն մոդելի առաջարկ:

1.2 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1.2.1 <u>Տեղեկատվության հավաքման աղբյուրները</u>

Հետազոտությունն իրականացվել է երկու խումբ աղբյուրներից հավաքված տվյալների հիման վրա: **Առաջին խումբը** կազմում են Տավուշի մարզի ձեռնարկատիրության ոլորտի շահագրգիռ բոլոր կողմերը, այդ թվում՝ սկսնակ եւ գործող ձեռնարկատերեր, կոոպերատիվներ, տեղական

ինքնակառավարման մարմիններ, ՀԿ-ներ, բիզնես եւ մարքեթինգի տեղեկատվական կենտրոններ, վարկային կառույցներ, միջազգային կազմակերպություններ եւ ֆերմերային մեծ տնտեսություններ: Տեղեկատվության **երկրորդ խումբը** կազմում են Տավուշի մարզի վերաբերյալ վիճակագրական աղբյուրները, նախկինում կատարված հետազոտությունները եւ այլն:

Տեղեկատվության աղբյուրների առաջին խմբի կազմում ընդգրկվել են բավարար թվով սուբյեկտներ (170 ռեսպոնդենտ), որը թույլ է տվել բավարար տեղեկություններ եւ գնահատականներ ստանալ հետազոտության թեմայի վերաբերյալ: Ըստ այդմ, հետազոտության տեղեկատվության աղբյուրների առաջին խումբը բաղկացած է հետեւյալ սուբյեկտներից.

Աղյուսակ 1 - Տեղեկատվության աղբյուրների առաջին խումբը

Տեղեկատվության աղբյուրներ	Ռեսպոնդենտների քանակը
Պետական եւ հանրային կառույցներ	24
Զարգացման ծրագրեր	7
Հասարակական կազմակերպություններ (ՀԿ)	13
Ֆինանսական հաստատություններ	5
Վերամշակողներ	36
Խոշոր ֆերմերներ	85
Ընդամենը	**170**

Տեղեկատվության նշված խմբերից որոշները բաժանվում են ենթախմբերի: Մասնավորապես **պետական եւ հանրային կառույցների** կազմում ընդգրկված են պետական (մարզպետարան) եւ տարածքային կառավարման (համայնքապետարան) մարմինների ներկայացուցիչներ:

Պայմանականորեն **վերամշակողներ** անվանված խմբում ներառված են գյուղմթերքների առեւտրի արժեշղթայում ներգրավված բոլոր սուբյեկտները՝ վերամշակող ձեռնարկությունները, գյուղատնտեսական կոոպերատիվները, միջնորդները:

Խոշոր ֆերմերների կազմում էլ հանդիպում են խոշոր եւ մանր եղջերավոր անասնապահությամբ, խոզաբուծությամբ եւ մեղվաբուծությամբ, պտղաբուծությամբ եւ խաղողագործությամբ զբաղվող սուբյեկտներ: Ֆերմերներին խոշոր բնորոշելու համար ցուցաբերվել է հետեւյալ մոտեցումը: Ի սկզբանե Տավուշի մարզի գյուղատնտեսության ոլորտի պատասխանատուներից (մարզպետարանի Գյուղատնտեսության վարչություն, Տավուշի ԳԱՄԿ, գյուղական համայնքների ղեկավարներ) ստացվել են մարզի բոլոր խոշոր ֆերմերների անունները եւ տնտեսությունների չափերը: Այնուհետեւ, ելնելով գյուղատնտեսության գործունեության այս կամ այն գործունեության զարգացման եւ տարածվածության մակարդակից՝ ընտրվել են տեղեկատվության ստացման համար բավարար թվով ֆերմերներ: Այնուհետեւ հետազոտության ընտրանքը ձեւավորվել է այդքան թվով ամենախոշոր ֆերմերներից: Ստորեւ ներկայացված է հետազոտված խոշոր ֆերմերների թվի բաշխվածքն ըստ գործունեության տեսակների.

Աղյուսակ 2 - Խոշոր ֆերմերների թվի բաշխվածքն ըստ գործունեության տեսակների

Խոշոր ֆերմերներն ըստ գործունեության	Տնտեսության չափը	Քանակը
Խոշոր եղջերավոր անասնապահական տնտեսություններ	> 50 գլուխ անասուն	15
Մանր եղջերավոր անասնապահական տնտեսություններ	> 30 գլուխ անասուն	10
Խոզաբուծական տնտեսություններ	> 25 գլուխ անասուն	5
Մեղվաբուծական տնտեսություններ	> 40 մեղվաընտանիք	13
Խաղողագործական տնտեսություններ	> 1 հա մշակվող տարածք	15
Պտղաբուծական տնտեսություններ	> 1 հա մշակվող տարածք	10
Ծխախոտագործություն	> 1 հա մշակվող տարածք	5
Ջերմոցային տնտեսություններ	-	6
Ոչ ավանդական գործունեությամբ տնտեսություններ*		6
Ընդամենը		**85**

* - ձիթենու արտադրություն, ջայլամաբուծություն, սագաբուծություն, եւ այլն

Ռեսպոնդենտների վերոհիշյալ խմբերից բացի եւս 2 հարցումներ են կատարվել Հայաստանում «Շուկաների տեղեկատվական կենտրոնի» հիմնման փորձ ունեցող կառույցների ներկայացուցիչների հետ: Այսպիսով, սույն հետազոտության շրջանակներում տեղեկատվության առաջին խումբը բաղկացած է 172 ռեսպոնդենտներից, որոնց ցանկը ներկայացված է հաշվետվության վերջում (տես **Գլուխ 9.1.1 «Տեղեկատվության աղբյուրների 1-ին խումբ 1. Հարցումների մասնակիցները», էջ 106**):

- ☞ **<u>Նկատառում</u>**: Նշված քանակներով հարցված ռեսպոնդենտներն, անշուշտ, մեզ ապահովել են հարուստ տեղեկատվությամբ, տալով Տավուշի մարզում ձեռնարկատիրությանն առնչվող կարեւոր հարցերի պատասխանները: Նույն հարցի շուրջ տարբեր մարդկանցից պատասխանների հավաքագրումը նման է վիճակագրական հետազոտությանը, սակայն սույն հետազոտության շրջանակներում իրականացված հարցումները չի կարելի է համարել այդպիսին: Դա հատկապես հնարավոր չէ այն պատճառով, քանի որ հետազոտության ընտրանքը ներկայացուցչական չէ: Սույն հետազոտության մասնակիցներին պետք է համարել որպես **փորձագետներ**, իսկ հետազոտությունն ինքը՝ **փորձագիտական վերլուծություն**:

Հետազոտության աղբյուրների երկրորդ խումբը ներառում է վիճակագրական մարմինների (հանրապետական եւ տեղական), պետական եւ կառավարման տարածքային մարմինների, ինչպես նաեւ Տավուշի մարզի վերաբերյալ առկա ուսումնասիրությունների եւ վերլուծությունների տվյալները: Այս խմբի մեջ մտնող տեղեկատվության աղբյուրների ցանկը բերված է **Գլուխ 9.1.2-ում («Տեղեկատվության աղբյուրների 2-րդ խումբ 1. Վիճակագրական նյութեր, պաշտոնական տեղեկանքներ, հաշվետվություններ», էջ 112)**:

1.2.2 <u>Տեղեկատվության հավաքումը, ամփոփումը, վերլուծությունը</u>

Առաջնային տվյալների հավաքագրումը իրականացվել է որակական հարցազրույցների միջոցով՝ նախօրոք մշակված հարցաթերթերով: Հարցաթերթերի մշակումից առաջ տեխնիկական առաջադրանքի հիման վրա սահմանվել է քննարկվելիք հարցերի ընդհանուր շրջանակը: Այնուհետեւ այդ հարցերը բաշխվել են ըստ ռեսպոնդենտների 6 խմբերի: Արդյունքում մշակվել է 6 հարցաշար՝

յուրաքանչյուր խմբի համար մեկական: Բոլոր հարցաշարերի համար կիրառվել է կոդավորման միասնական համակարգ:

Հարցումները անցկացվել են դեմ առ դեմ հանդիպումների միջոցով: Հարցումների միջին տեւողությունը կազմել է 1.5-2 ժամ:

Հարցաշարերի թվայնացումը իրականացվել է MS Excel ծրագրի միջոցով: Բոլոր 6 խումբ ռեսպոնդենտների համար մշակվել է մեկ միասնական տվյալների բազա: Տվյալների բազայից հարցումները իրականացվել են Pivot Table հրամանի օգնությամբ: Տվյալների վերլուծությունը հիմնականում իրականացվել է ըստ ռեսպոնդենտների խմբերի՝ երկչափ, եռաչափ եւ քառաչափ հարցումների միջոցով: Բազայից հարցումներ կատարելու ընթացքում իրականացվել է տվյալների խմբավորում՝ միավորվել են նմանատիպ կամ իմաստային առումով իրար մոտ պատասխանները: Արդյունքները ներկայացվել են աղյուսակային տեսքով, որոնց հիման վրա էլ կառուցվել է այս հաշվետվությունը:

1.2.3 Հետազոտության արդյունքները

Հետազոտության արդյունքներն են սույն հաշվետվությունը, ինչպես նաեւ ՄԱԶԾ-ին փոխանցված տվյալների էլեկտրոնային բազան:

2 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

2.1 ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Տարածքը — 2,704 քառ. կմ
- Մարզի տարածքի տեսակարար կշիռը ՀՀ տարածքում — 9.1%
- Քաղաքային համայնքների թիվը — 5 (5 քաղաքներ), որից՝
  - ➥ Սահմանամերձ կարգավիճակ ունեցող համայնքներ[2] — 2
- Գյուղական համայնքների թիվը — 57 (60 գյուղեր), որից՝
  - ➥ Սահմանամերձ կարգավիճակ ունեցող համայնքներ — 44
- Մարզի մշտական բնակչությունը 01.07.2011թ.-ի դրությամբ — 134,700 մարդ, որից՝
  - ➥ Քաղաքային բնակչությունը — 52,700 մարդ (39.1%)
  - ➥ Գյուղական բնակչությունը — 82,000 մարդ (60.9%)
- Մարզի քաղաքները
  - ➥ Իջեւան (մարզկենտրոն) — 20,600 մարդ (132 կմ Երեւանից)
  - ➥ Դիլիջան — 15,700 մարդ (96 կմ Երեւանից)
  - ➥ Նոյեմբերյան — 5,500 մարդ (185 կմ Երեւանից)
  - ➥ Այրում — 2,400 մարդ (205 կմ Երեւանից)
  - ➥ Բերդ — 8,500 մարդ (186 կմ Երեւանից)
- Մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը ՀՀ բնակչության թվաքանակում — 4.1%
- Մարզի մշտական բնակչությունն ըստ տարածաշրջանների

Աղյուսակ 3 - Տավուշի մարզի մշտական բնակչությունը 01.07.2011թ.-ի դրությամբ ըստ բնակության վայրերի եւ տարածաշրջանների

Բնակության վայրեր	ՏԱՎՈՒՇԻ մարզ	ԻՋԵՎԱՆԻ տարածաշրջան	ԴԻԼԻՋԱՆԻ տարածաշրջան	ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ տարածաշրջան	ԲԵՐԴԻ տարածաշրջան
Քաղաքներ	**52,700 (39.1%)**	20,600 (41.7%)	15,700 (70.7%)	7,900 (24.6%)	8,500 (27.4%)
Գյուղեր	**82,000 (60.9%)**	28,800 (58.3%)	6,500 (29.3%)	24,200 (75.4%)	22,500 (72.6%)
Ընդամենը	**134,700 (100.0%)**	**49,400 (100.0%)**	**22,200 (100.0%)**	**32,100 (100.0%)**	**31,000 (100.0%)**
Ընդամենը մարզում	100.0%	36.7%	16.5%	23.8%	23.0%

Աղբյուր՝ «Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 01.07.2011թ.-ի դրությամբ», ԱՎԾ, 2011

- Սահմանամերձ համայնքներում բնակչության թիվը — 76,000 մարդ (56.4%)

[2] Այս եւ հաջորդ կետում՝ Ադրբեջանի եւ Վրաստանի սահմանամերձ գոտիների համայնքները: Ցանկը հաստատված է ՀՀ Կառավարության որոշմամբ

Մարզի հողային ֆոնդը

Աղյուսակ 4 - Տավուշի մարզի հողային ֆոնդը 01.07.2010թ.-ի դրությամբ

Հողերն ըստ նպատակային եւ գործառնական նշանակության	Տարածքը, հա
Ընդամենը հողեր, այդ թվում՝	**270,399**
Գյուղատնտեսական, այդ թվում՝	**111,909**
Վարելահող	25,533
Բազմամյա տնկարկներ, այդ թվում՝	2,000
Պտղատու այգի	*759*
Խաղողի այգի	*1,241*
Այլ բազմամյա տնկարկներ	-
Խոտհարք	12,257
Արոտ	60,278
Այլ հողատեսքեր	11,842
Բնակավայրերի, այդ թվում՝	**9,942**
Բնակելի կառուցապատման, այդ թվում՝	6,395
Տնամերձ հողեր	*6,273*
Այգեգործական (ամառանոցային)	*20*
Հասարակական կառուցապատման	367
Խառը կառուցապատման	30
Ընդհանուր օգտագործման	1,144
Այլ հողեր	2,005
Արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտ. նշանակության օբյեկտների, այդ թվում՝	**1,198**
Արդյունաբերական օբյեկտներ	166
Գյուղատնտեսական արտադրական	677
Պահեստարանների	10
Ընդերք օգտագործման	346
Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակայության օբյեկտների, այդ թվում՝	**523**
Էներգետիկայի	37
Կապի	6
Տրանսպորտի	440
Կոմունալ ենթակառուցվածքների	40
Հատուկ պահպանվող տարածքների, այդ թվում՝	**25,203**
Բնապահպանական, այդ թվում՝	24,295
Արգելոցներ	-
Արգելավայրեր	-
Ազգային պարկեր	*24,295*
Առողջարարական	20
Հանգստի	176
Պատմական եւ մշակութային	712

Հատուկ նշանակության	**241**
Անտառային, այդ թվում՝	**120,183**
Անտառ	113,684
Թփուտ	1,527
Վարելահող	105
Խոտհարք	3,165
Արոտ	316
Այլ հողեր	1,384
Ջրային, այդ թվում՝	**1,200**
Գետեր	637
Ջրամբարներ	404
Լճեր	35
Ջրանցքներ	81
Հիդրոտեխնիկական եւ ջրատնտեսական այլ օբյեկտներ	44
Պահուստային, այդ թվում՝	**0.4**
Աղուտներ	-
Ավազուտներ	-
Ճահիճներ	-
Այլ անօգտագործելի հողեր	0.4

Աղբյուր՝ «Հաշվետվություն (Ձեւ 22)՝ Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության եւ բաշխման (ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի, գործառնական նշանակության եւ սեփականության սուբյեկտների), առ 01.07.2010թ., Տավուշի մարզ», Տավուշի մարզպետարան

- ՀՀ պետական սահմանից մարզին բաժին ընկնող մասը 400 կմ, որից՝
  - Ադրբեջանին սահմանակցող մասը 352 կմ
  - Վրաստանին սահմանակցող մասը 48 կմ

- Մարզում թողարկվող արտադրանքը

Աղյուսակ 5 - Արտադրանքի թողարկումը Տավուշի մարզում 2009-2010թ.-ին

Տնտեսության ճյուղեր	Թողարկված արտադրանքի արժեքը ընթացիկ գներով, մլն. դրամ	
	2009	2010
Արդյունաբերական արտադրանք, այդ թվում՝	**5,188.5**	**5,610.0**
Հանքագործական արդյունաբերություն եւ բաց հանքերի շահագործում	534.1	568.7
Սննդամթերքի արտադրություն	2,576.0	2,551.6
Խմիչքների արտադրություն	233.9	342.1
Փայտանյութի մշակում, փայտից, խցանակեղեւից, ծղոտից եւ հյուսկեն նյութերից արտադրատեսակների արտադրություն (բացի կահույքից)	55.4	83.7
Կահույքի արտադրություն	16.5	17.5
Ռետինե եւ պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	49.9	25.9
Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	48.5	229.6

Էլեկտրականության, գազի, գոլորշու եւ օդի մատակարարում	1,396.7	1,484.6
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում եւ վերամշակում	277.4	306.2
Գյուղատնտեսական արտադրանք, այդ թվում՝	**24,300.0**	**28,300.0**
Բուսաբուծության արտադրանք	11,700.0	13,500.0
Անասնաբուծության արտադրանք	12,600.0	14,800.0

Աղբյուրներ՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը եւ Երեւան քաղաքը թվերով», ԱՎԾ, 2010
«Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման, ըստ մարզերի եւ ք. Երեւանի 2010թ.-ի հունվար-դեկտեմբերին», ԱՎԾ, 2011

- Մարզում մանրածախ առեւտրի օբյեկտների քանակը

Աղյուսակ 6 - Մանրածախ առեւտրի օբյեկտների քանակը Տավուշի մարզում 2006-2010թթ.-ին

Մանրածախ առեւտրի օբյեկտների տեսակներ	2006	2007	2008	2009	2010
Խանութներ	447	446	560	652	651
Կրպակներ	361	372	393	380	379
Սպառողական արտադրանքի շուկաներ	2	2	2	1	1
Գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	2	2	2	2	2
Առեւտրի այլ օբյեկտներ	50	42	36	36	34
Ընդամենը	**862**	**864**	**993**	**1,071**	**1,067**

Աղբյուրներ՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը եւ Երեւան քաղաքը թվերով», ԱՎԾ, 2010
«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010թ.-ի հունվար-դեկտեմբերին», ԱՎԾ, 2011

Բերված տեղեկությունները վկայում են այն մասին, որ Տավուշի մարզն ընդգծված գյուղատնտեսական տարածաշրջան է: Մարզում բնակչության 61%-ը բնակվում է գյուղերում, թողարկվող արտադրանքի 83%-ը (2010թ., արժեքային արտահայտությամբ) բաժին է ընկնում գյուղատնտեսությանը: Տնտեսության մյուս առաջատար ոլորտը սննդամթերքի արտադրությունն է, որի գերակշիռ մասը բաժին է ընկնում գյուղմթերքների վերամշակմանը:

Ակնհայտ է, որ արտահանման խթանման միջոցով մարզի զարգացման հնարավորություններն ավելացնելու համար ջանքերն առաջին հերթին պետք է ուղղվեն գյուղատնտեսության եւ նրա հետ կապված ոլորտներ, որոնք են առաջնային գյուղատնտեսությունը եւ գյուղմթերքների վերամշակումը: Դրանով հնարավոր կլինի հասնել մարզի տնտեսության իրական աշխուժացման, իսկ արդյունքները նկատելի կլինեն մարզի բնակչության մեծ մասի համար: Բացի այդ, Տավուշի մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը խոչընդոտող խնդիրների մեծ մասն այս կամ այն կերպ կապված են գյուղատնտեսության հետ, սկսած ոռոգման հետ կապված խնդիրներից, վերջացրած միջհամայնքային ճանապարհներով:

2.2 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.2.1 Պատմական ցուցանիշները

Գյուղատնտեսությունը Տավուշի մարզում, ինչպես եւ ողջ Հայաստանում, չի ապրում իր լավագույն ժամանակները: Ստորեւ ներկայացված են վերջին 5 տարիներին Հայաստանի եւ Տավուշի մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքների թողարկման ծավալները.

Աղյուսակ 7 - Գյուղատնտեսության համախառն արտադրանքը ընթացիկ գներով 2006-2010թթ.-ին, մլրդ. դրամ

	2006	2007	2008	2009	2010
Հայաստան	555.9	633.9	628.1	555.7	637.6
Տավուշի մարզ	30.6	35.5	28.5	24.3	28.3

Աղբյուրներ՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը եւ Երեւան քաղաքը թվերով», ԱՎԾ, 2010
«Հայաստանի Հանրապետության մարզերը եւ Երեւան քաղաքը թվերով», ԱՎԾ, 2008
«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010թ.», ԱՎԾ, 2011

Ընթացիկ գներով գյուղատնտեսական համախառն արտադրանքի ցուցանիշը պատկերացում չի տալիս ոլորտի զարգացման վերաբերյալ: Փաստն այն է, որ վերջին 3-4 տարիներին Հայաստանի գյուղատնտեսության աճը ոչ միայն դանդաղել է, այլեւ արձանագրում է անկում: Դա նկատելի է **համադրելի գներով** գյուղատնտեսության համախառն արտադրանքի ցուցանիշների համեմատությունից (տես Նկար 1): Պատկերը նույնն է Տավուշի մարզում:

Նկար 1 - Հայաստանի եւ Տավուշի մարզի գյուղատնտեսության համադրելի գներով համախառն արտադրանքի ինդեքսը 2006-2010թթ.-ին



Տավուշի մարզում գյուղատնտեսության ցուցանիշների վատթարացումը պայմանավորված է 2007-2008թթ.-ին խոզերի գլխաքանակի անկմամբ, 2010թ.-ին անբարենպաստ կլիմայական պայմաններով: Մարզի (ինչպես եւ ողջ Հայաստանի) տնտեսությանը ծանր հարված էր 2008թ.-ին արձանագրված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը: Դրա արդյունքում ավելացել է բնակչության աղքատության մակարդակը: Որպես հետեւանք՝ սպառողական ապրանքների սպառումը նվազել է: Այսպես, 2008թ.-ի համեմատ Տավուշի մարզում 2009թ.-ին աղքատությունն ավելացել է 8.1%-ով՝ հասնելով 31.3%-ի: Եվ դա այն պարագայում, երբ աղքատության ընդհանուր գիծը կազմել է 30,920 դրամ: 2011թ.-ին մարզում աղքատության մասշտաբներն էլ ավելի են մեծացել: 2011թ.-ի առաջին եռամսյակի արդյունքներով աղքատության ընդհանուր գիծն արդեն կազմում է 62,600 դրամ, ինչն առաջին հերթին պայմանավորված է գյուղմթերքների գների աննախադեպ բարձրացմամբ, ինչն էլ իր հերթին պայմանավորված է 2010թ.-ի անբարենպաստ գյուղատնտեսական տարով: Ակնհայտ է, որ Հայաստանում եւ Տավուշի մարզում աղքատությունը կրկին հասել է տագնապալի մասշտաբների:

Տավուշի մարզի գյուղմթերքների վերամշակման ոլորտը, որը հիմնականում կախված է առաջնային գյուղատնտեսական արտադրանքի առաջարկից, իր վրա կրում է մարզի գյուղատնտեսության մեջ

տեղի ունեցող բոլոր իրադարձությունների ազդեցությունը: Ուստի զարմանալի չէ, որ վերջին տարիներին վերամշակված արտադրանքի քանակները մեծապես տատանվում են՝ ցույց չտալով կայունության որեւէ նշան: Դրանով պայմանավորված՝ թույլ եւ անկայուն է մնում վերամշակող ձեռնարկությունների գործունեությունը: Այս եւ այլ խնդիրների մասին ներքեւում խոսվում է ավելի մանրամասն:

2.2.2 Զարգացման միտումները

Սույն բաժնում հիմնականում վերլուծվել են Տավուշի մարզի գյուղատնտեսության զարգացման միտումների վերաբերյալ հետազոտության մասնակցած ռեսպոնդենտների կարծիքները: Որոշ դեպքերում այս կարծիքները հաստատվում են վերը ներկայացված վիճակագրական վերլուծության արդյունքներով, որոշ դեպքերում իրավիճակն ավելի ոչ միանշանակ է: Տարբեր խմբերի ռեսպոնդենտների պատասխանները որակապես բավականին տարբերվում են, ինչի պատճառով հետագա վերլուծությունն իրականացվել է ըստ ռեսպոնդենտների խմբերի:

Զարգացման ծրագրերի ներկայացուցիչները համեմատաբար բացասական երանգների մեջ են տեսնում գյուղատնտեսության զարգացման վերջին միտումները Տավուշի մարզում: Նրանց կարծիքով վերջին ժամանակահատվածում զարգացման միտումները թույլ են կամ ընդհանրապես չկան, իսկ բնակչությունը հիասթափված վիճակում է գտնվում: Ընդհանուր խնդիրների թվում հիշատակվում են ոռոգման ենթակառուցվածքների վատ վիճակը եւ ոռոգման ջրի անբավարարությունը, արոտավայրերի սակավությունն ու անարդյունավետ օգտագործումը, հաճախակի հիվանդությունները խոզաբուծության մեջ, գիտելիքների անբավարարությունը եւ միջնորդների գերակա դերը, մայրաքաղաք Երեւանից եւ իրացման մյուս շուկաներից հեռու գտնվելը եւ այլն: Միեւնույն ժամանակ հիշատակվում է, որ բազմաթիվ բարեփոխումներ արդեն իրականացվել են եւ որոշներն էլ ընթացքի մեջ են: Ռեսպոնդենտները այստեղ նկատի ունեն, մասնավորապես, միջազգային կառույցների կողմից ֆինանսավորվող ծրագրերը: Զարգացման լավ նախադրյալներ ունեն հատկապես անասնաբուծության (մսի արտադրության), պտղի, ծխախոտի, խաղողի եւ մերձարեւադարձային պտուղների մշակությունը:

Հետազոտված 85 *խոշոր ֆերմերներից* 19-ը համաձայնվել են մարզի գյուղատնտեսության վատ վիճակի վերաբերյալ պնդման հետ: Հիմնական խնդիրների թվում հիշատակվում են.

- հեռավոր արոտավայրերի ճանապարհների անանցանելիությունը,
- աշխատուժի անբավարարությունը,
- գյուղատնտեսական տեխնիկայի (հատկապես կոմբայնների) անբավարարությունը եւ հնությունը,
- պետական օժանդակության անբավարարությունը, անասնակերի, վառելիքի, սերմերի, դեղորայքի եւ պարարտանյութերի թանկությունը,
- կենդանիների հիվանդությունները եւ բերքի կորուստները, բնակլիմայական պայմանների (կարկտահարություն, երաշտ) պատճառով եւ փոխհատուցման հնարավորությունների բացակայությունը,
- մատչելի ֆինանսավորման բացակայությունը,
- մասնագիտական խորհրդատվության պակասը,
- հատուկ հիշատակվել է ոռոգման համակարգի վատ վիճակը եւ ոռոգման ջրի անբավարարության խնդիրը:

Հետազոտված 85 խոշոր ֆերմերներից 14-ը հիշատակել են, որ զարգացման լավ միտումներ են նկատվում հատկապես այգեգործության՝ դեղձի եւ մերձարեւադարձային պտուղների մշակության ոլորտում: Այս ոլորտը ավանդաբար զարգացած է եղել մարզում՝ հատկապես Նոյեմբերյանի տարածաշրջանում: Իհարկե, զուգահեռաբար նշվում են նաեւ խնդիրները՝ ոռոգման դժվարությունները, մասնագիտական խորհրդատվության պակասը, իրացման դժվարությունները եւ այլն: Ի լրումն այգեգործության՝ 10 ռեսպոնդենտներ որպես զարգացող ոլորտ նշել են նաեւ խաղողագործության մասին՝ հիմնավորելով իրենց կարծիքը մարզում ձեւավորված ավանդույթներով, վերամշակող եւ մթերող կառույցների առկայությամբ եւ այլն: Զուգահեռաբար նշվել են նաեւ խնդիրները՝ մշակության դժվարությունը, խաղողի տնկարկների նոսրությունը, հիվանդությունները եւ, որ ամենակարեւորն է, իրացման խնդիրները եւ մթերման ցածր գները: Հետազոտված 85 խոշոր ֆերմերներից 32-ը հիշատակել են, որ զարգացման լավ միտումներ են նկատվում անասնաբուծության ոլորտում: Հիմնական հիմնավորումների շարքում նշվում է արոտավայրերի եւ բնական կերերի առկայությունը եւ մատչելիությունը, արտադրանքի (մսի) ճանաչվածությունը եւ պահանջարկը շուկայում: Հատուկ շեշտադրվում է մեղվաբուծության պոտենցիալը: Զարգացման հիմնական խոչընդոտը հիվանդություններն են եւ կանխարգելիչ միջոցառումների անբավարարությունը: Նոր դիտարկվող զարգացման միտումների ներքո հիշատակվել են նաեւ ջերմոցային տնտեսությունները, որոնք բավականին մեծ քանակով սկսել են հիմնվել եւ հաջող գործունեություն իրականացնել մարզի որոշ գյուղերում:

Հետազոտված 13 *ՀԿ-ների ներկայացուցիչներից* 4-ը զարգացման միտումներ չեն տեսնում եւ հակված են ավելի շատ խնդիրներին անդրադառնալ, քան ձեռքբերումներին: Զարգացման խոչընդոտների շարքում հիշատակվում են.

- բնակլիմայական վատ պայմանները,
- հակակարկտային պայմանների բացակայությունը,
- գյուղական համայնքներից բնակչության հեռանալը,
- գյուղատնտեսական տեխնիկայի եւ մեխանիզացիայի անբավարարությունը, մեքենայացված մշակման կիրառության ցածր մակարդակը,
- անասնագլխաքանակի վերջին տարիների զգալի անկումը,
- հեռավորությունը իրացման շուկաներից (հիմնականում Նոյեմբերյանի տարածաշրջանի համար),
- չմշակվող եւ լքված հողերի մեծ քանակները,
- մարզի գյուղատնտեսական համակարգված զարգացման ռազմավարության բացակայությունը:

ՀԿ-ների մյուս ներկայացուցիչների համար զարգացման միտումներն ավելի նկատելի են: Ոլորտները նույնն են՝ այգեգործություն եւ մսի արտադրությանը միտված անասնաբուծություն: Հատուկ անդրադարձ է կատարվել ծխախոտի մշակությանը: Որոշակի զարգացման պոտենցիալ ունի նաեւ ձկնաբուծությունը:

Հետազոտված 19 *պետական եւ հանրային կառույցների ներկայացուցիչներից* 11-ը զարգացման միտումներ չեն տեսնում: Զարգացման խոչընդոտների շարքում հիշատակվում են.

- բնակլիմայական վատ պայմանները,
- հակակարկտային պայմանների բացակայությունը,
- վառելիքի թանկությունը, որակյալ սերմերի թանկությունը եւ պակասը,
- արոտավայրեր տանող ճանապարհների վատ վիճակը,
- ջրովի հողի սակավությունը եւ ընդհանրապես ոռոգման խնդիրները,
- տնային կենդանիների հիվանդությունների կանխարգելման եւ բուժման խնդիրները,
- գյուղատնտեսական տեխնիկայի հնությունն ու սակավությունը,

- հեռավորությունը իրացման շուկաներից, արտադրանքի իրացման միջնորդավորված ձեւը,
- չմշակվող եւ լքված հողերի մեծ քանակները,
- մատչելի ֆինանսավորման անհասանելիությունը,
- սահմանամերձ հողերի մշակության անհնարինությունը:

Այս խմբի մյուս ռեսպոնդենտների կարծիքով զարգացման միտումներ են նկատվում մսի արտադրությանը միտված անասնաբուծության, մեղվաբուծության, ծխախոտի մշակության, որոշակիորեն խաղողագործության եւ, հատկապես, պտղաբուծության ոլորտներում: Հատուկ նշվում է, որ զարգացման լուրջ ներուժ ունի մերձարեւադարձային պտուղների եւ հատապտուղների մշակությունը:

Հետազոտված 36 *վերամշակողներից* 10-ը զարգացման միտումներ չեն տեսնում: Խնդիրները նույնական են եւ ներկայացնելու կարիք այլեւս չկա: 15 վերամշակողների կարծիքով զարգացման որոշակի միտումներ են նկատվում անասնաբուծության մեջ՝ չնայած արտադրանքի (հատկապես կաթի) իրացման խնդիրները շատ են: Ձկնաբուծությունը նշվում է որպես զարգացման լուրջ պոտենցիալ ունեցող ոլորտ: Պտղաբուծության (մասնակիորեն նաեւ խաղողագործության) զարգացման միտումները նկատելի են 8 վերամշակողների կարծիքով՝ հատկապես Նոյեմբերյանի (Իջեւանի) տարածաշրջանում: Հիմնվել են նոր այգիներ, ներդրվել են մշակության ժամանակակից տեխնոլոգիաներ:

Հետազոտված 5 *ֆինանսական հաստատությունների ներկայացուցիչներից* 3-ը զարգացման միտումներ չեն տեսնում: Մյուս 2 ռեսպոնդենտների կարծիքով զարգացման հեռանկար ունեն ջերմոցային տնտեսությունները եւ մերձարեւադարձային պտուղների մշակությունը:

Նկար 2 - Տավուշի մարզի բուսաբուծության համախառն արտադրանքը ընթացիկ գներով[3] 2006-2010թթ.-ին, մլրդ. դրամ



Աղբյուրներ՝
«Հայաստանի Հանրապետության մարզերը եւ Երեւան քաղաքը թվերով», ԱՎԾ, 2010
«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010թ.», ԱՎԾ, 2011

2.2.3 <u>Բուսաբուծության ոլորտը</u>

2.2.3.1 Ներկա վիճակը եւ խնդիրները

Տավուշի մարզի բուսաբուծության ոլորտի ցուցանիշները պայմանավորված են հողային ռեսուրսների առկայությամբ եւ բնակլիմայական պայմանների առանձնահատկություններով: Աղյուսակ 4-ից երեւում է, որ 01.07.2010թ.-ի դրությամբ մարզի գյուղատնտեսական հողերը կազմում են 111,909 հա, որից վարելահողեր՝ 25,533 հա:

Ամեն տարի, կախված գյուղատնտեսական սեզոնի կլիմայական առանձնահատ-կություններից, որն ազդում է մշակաբույսերի բերքատվության ցուցանիշների վրա, Տավուշի մարզում թողարկվում է 10-15 մլրդ. դրամի բուսաբուծության արտադրանք (տես Նկար 2): Ավանդաբար բուսաբուծությունն իր արտադրանքի ծավալներով միշտ զիջել է անասնաբուծության արտադրանքին: Սակայն վերջին 2-3

[3] Ըստ ԱՎԾ Գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետի՝ մարզերի համար բուսաբուծության համախառն արտադրանքը համադրելի գներով չի հաշվառվում

տարիներին Տավուշի մարզի գյուղատնտեսության կառուցվածքում բուսաբուծության եւ անասնաբուծության արտադրանքները մոտավորապես հավասարակշռվել են, ինչը պայմանավորված է 2007-2008թթ.-ին անասնաբուծության ոլորտի անկմամբ:

Տավուշի մարզի ֆերմերները աճեցնում են բոլոր այն մշակաբույսերը, որոնք աճում են Հայաստանի այլ տարածաշրջաններում: Սակայն մարզն ունի իր առանձնահատկությունները: Որոշ մշակաբույսերի աճեցման գծով Տավուշի մարզն առաջատար դիրքեր ունի Հայաստանում, իսկ որոշների գծով՝ հետնապահների թվում է: Սակայն նախքան այդ առանձնահատկություններին անդրադառնալը, ներկայացնենք Տավուշի մարզի գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների եւ համախառն բերքի ցուցանիշները վերջին 5 տարիների համար: Միաժամանակ, հասկանալու համար, թե ինչ դեր ունի Տավուշի մարզը Հայաստանի բուսաբուծության արտադրանքի թողարկման հարցում, զուգահեռաբար ներկայացնում ենք նաեւ նույն ցուցանիշները Հայաստանի համար:

Աղյուսակ 8 - Բուսաբուծության հիմնական ցուցանիշները Հայաստանում եւ Տավուշի մարզում 2006-2010թթ.-ին

Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները, հա

Մշակաբույսեր	Հայաստան					Տավուշի մարզ				
	2006	2007	2008	2009	2010	2006	2007	2008	2009	2010
Հացահատիկային մշակաբույսեր	180,432	174,224	170,630	169,548	157,382	7,900	7,936	6,753	6,289	7,390
Հատիկաընդեղենային մշակաբույսեր	1,974	1,989	2,208	2,085	1,925	651	678	685	748	653
Տեխնիկական մշակաբույսեր, որից՝	773	1,616	2,386	2,418	2,407	301	903	1,198	1,091	942
Ծխախոտ	*80*	*118*	*170*	*297*	*418*	*43*	*56*	*101*	*153*	*190*
Կարտոֆիլ	33,045	31,674	34,298	31,998	28,362	2,336	1,816	1,852	1,888	1,948
Բանջարանոցային մշակաբույսեր	24,364	25,607	24,219	23,914	23,506	978	919	899	961	943
Բոստանային մշակաբույսեր	4,025	5,884	5,446	6,163	4,476	110	57	90	121	83
Կերային մշակաբույսեր	65,550	64,989	65,272	63,888	65,533	1,605	1,923	2,399	2,354	2,188
Պտուղ եւ հատապտուղ	35,403	38,020	36,748	36,959	37,710	2,107	2,342	2,339	2,348	2,350
Խաղող	15,746	15,888	16,796	16,480	17,373	1,319	1,347	1,345	1,312	1,313

Գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքը, տոննա

Մշակաբույսեր	Հայաստան					Տավուշի մարզ				
	2006	2007	2008	2009	2010	2006	2007	2008	2009	2010
Հացահատիկային մշակաբույսեր	208,587	447,375	409,182	369,076	321,954	8,996	20,560	19,024	18,876	13,568
Հատիկաընդեղենային մշակաբույսեր	3,956	5,163	6,171	5,783	4,469	885	1,196	1,589	1,791	1,009
Տեխնիկական մշակաբույսեր, որից՝	տ/է	տ/է	տ/է	տ/է	տ/է	տ/է	տ/է	տ/է	տ/է	տ/է
Ծխախոտ	*171*	*268*	*538*	*1,055*	*1,376*	*76*	*114*	*258*	*356*	*576*
Կարտոֆիլ	539,477	579,571	647,215	593,551	481,956	10,795	19,822	25,470	25,485	14,533
Բանջարանոցային մշակաբույսեր	753,518	828,624	778,402	819,804	707,593	5,388	7,983	8,306	8,366	7,258
Բոստանային մշակաբույսեր	134,935	206,295	182,159	216,101	132,506	1,186	1,219	1,552	1,705	1,589
Կերային մշակաբույսեր	տ/է	տ/է	տ/է	տ/է	տ/է	տ/է	տ/է	տ/է	տ/է	տ/է
Պտուղ եւ հատապտուղ	286,038	260,239	317,835	332,152	128,497	3,450	10,149	10,712	10,822	5,938
Խաղող	201,371	218,883	185,832	208,649	222,905	10,260	13,711	6,297	10,282	11,612

Աղբյուր՝ «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները եւ համախառն բերքը 2006-2010թթ.», ԱՎԾ, 2007-2011

Մշակաբույսերի խմբերով վերը բերված տեղեկությունները ամբողջական պատկերացում չեն տալիս այն մասին, թե որոնք են Հայաստանի բուսաբուծության ոլորտում Տավուշի մարզի համեմատական առավելությունները եւ առաջատար դիրքերը: Դա անելու համար պետք է ցանքատարածությունների/տնկարկների եւ բերքի ցուցանիշները բացել ըստ մշակաբույսերի տեսակների: Ընդ որում՝ մարզի իրական պոտենցիալը հասկանալու համար պետք է հիմք ընդունել 2009թ.-ի ցուցանիշները, քանի որ 2010թ.-ը գյուղատնտեսական արտադրանքի թողարկման տեսանկյունից եղել է աննախադեպ անբարենպաստ տարի:

Աղյուսակ 9 - Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները եւ համախառն բերքը Տավուշի մարզում ըստ մշակաբույսերի տեսակների, 2009թ.

Մշակաբույսեր	Տնկարկները, հա			Համախառն բերքը, տ		
	Հայաստան	Տավուշ	%	Հայաստան	Տավուշ	%
Հացահատիկային մշակաբույսեր	**169,548**	**6,289**	**3.7%**	**369,076**	**18,876**	**5.1%**
Աշնանացան ցորեն	85,041	3,183	3.7%	182,625	5,876	3.2%
Աշնանացան տարեկան	120	0	0.0%	318	0	0.0%
Աշնանացան գարի	2,666	970	36.4%	4,588	1,997	43.5%
Գարնանացան ցորեն	6,843	6	0.1%	15,456	13	0.1%
Գարնանացան տարեկան	95	0	0.0%	225	0	0.0%
Գարնանացան գարի	65,907	370	0.6%	140,553	620	0.4%
Վարսակ	947	0	0.0%	1,655	0	0.0%
Հաճար	5,290	7	0.1%	8,425	11	0.1%
Եգիպտացորեն	2,639	1,753	66.4%	15,232	10,360	68.0%
Հատիկաընդեղենային մշակաբույսեր	**2,085**	**748**	**35.9%**	**5,783**	**1,791**	**31.0%**
Ոլոռ հատիկի համար	71	2	2.8%	124	2	1.6%
Լոբի հատիկի համար	1,952	746	38.2%	5,549	1,789	32.2%
Ոսպ	5	0	0.0%	5	0	0.0%
Սիսեռ	32	0	0.0%	52	0	0.0%
Այլ (մաշ, վիկա, պատիճավոր բակլա)	25	0	0.0%	53	0	0.0%
Տեխնիկական մշակաբույսեր	**2,418**	**1,091**	**45.1%**	**1,251**	**356**	**28.5%**
Ծխախոտ	297	153	51.5%	1,055	356	33.8%
Կտավատ	126	0	0.0%	196	0	0.0%
Այլ (չաման, սորգո, արեւածաղիկ)	1,995	938	47.0%	տ/չ	տ/չ	-
Կարտոֆիլ	**31,998**	**1,888**	**5.9%**	**593,551**	**25,485**	**4.3%**
Բանջարանոցային մշակաբույսեր	**23,914**	**961**	**4.0%**	**782,287**	**8,366**	**1.1%**
Կաղամբ	3,376	112	3.3%	124,377	2,002	1.6%
Վարունգ	2,549	155	6.1%	71,060	1,456	2.0%
Լոլիկ	6,231	185	3.0%	273,275	1,392	0.5%
Սեղանի ճակնդեղ	693	56	8.1%	15,163	496	3.3%
Սեղանի գազար	913	42	4.6%	23,405	285	1.2%
Գլուխ սոխ	2,085	126	6.0%	50,416	1,108	2.2%
Սխտոր	866	57	6.6%	9,262	287	3.1%

Կանաչ ոլոռ	72	6	8.3%	335	16	4.7%
Այլ (կանաչի, սմբուկ, տաքդեղ)	7,056	222	3.1%	214,680	1,323	0.6%
Բանջարանոց. մշակաբույսերի սերմադաշտեր	73	0	0.0%	314	0	0.0%
Բոստանային մշակաբույսեր	**6,163**	**121**	**2.0%**	**216,101**	**1,705**	**0.8%**
Կերային մշակաբույսեր	**63,888**	**2,354**	**3.7%**	**տ/է**	**տ/է**	**-**
Պտուղ եւ հատապտուղ	**36,959**	**2,348**	**6.3%**	**332,167**	**10,865**	**3.3%**
Խնձոր	9,627	569	5.9%	120,844	2,009	1.7%
Տանձ	2,936	211	7.2%	28,247	794	2.8%
Սերկեւիլ	22	0	0.0%	1,432	72	5.0%
Ծիրան	9,983	19	0.2%	80,686	48	0.1%
Սալոր	1,976	342	17.3%	10,344	372	3.6%
Դեղձ	5,385	393	7.3%	57,883	4,290	7.4%
Կեռաս	1,126	47	4.2%	7,682	67	0.9%
Բալ	տ/է	տ/է	-	3,698	79	2.1%
Հոն	տ/է	տ/է	-	825	544	65.9%
Ընկույզ	տ/է	տ/է	-	3,789	442	11.7%
Տխիլ	տ/է	տ/է	-	544	80	14.8%
Նուռ	տ/է	տ/է	-	428	62	14.4%
Արքայանարինջ	տ/է	տ/է	-	1,104	617	55.9%
Թուզ	տ/է	տ/է	-	520	295	56.7%
Հատապտուղներ	2,118	153	7.2%	14,140	1,095	7.7%
Խաղող	**16,480**	**1,312**	**8.0%**	**208,649**	**10,282**	**4.9%**

Աղբյուր՝ «Մրգերի եւ բանջարեղենի արտահանման հնարավոր ծավալների ուսումնասիրություն», ՀԲ / Զարգացման Հայկական Գործակալություն / ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնի, 2010

Բերված տվյալներից երեւում է, որ 2009թ.-ի տվյալներով Հայաստանի բուսաբուծության արտադրանքի կազմում Տավուշի մարզն առաջատար դիրքեր ունի հետեւյալ մշակաբույսերի աճեցման գծով.

- Գարի աշնանացան — մարզում թողարկվել է Հայաստանի բերքի 43%-ը
- Եգիպտացորեն — մարզում թողարկվել է Հայաստանի բերքի 68%-ը
- Լոբի հատիկի համար — մարզում թողարկվել է Հայաստանի բերքի 32%-ը
- Ծխախոտ — մարզում թողարկվել է Հայաստանի բերքի 34%-ը
- Հոն — մարզում թողարկվել է Հայաստանի բերքի 66%-ը
- Արքայանարինջ (կորոլյոկ) — մարզում թողարկվել է Հայաստանի բերքի 56%-ը
- Թուզ — մարզում թողարկվել է Հայաստանի բերքի 57%-ը

Եգիպտացորենի եւ վերջին երեք մրգատեսակների գծով Տավուշի մարզը Հայաստանում ունի անառարկելի առաջատար դիրքեր: Դա պայմանավորված է մարզի մերձարեւադարձային բնակլիմայական գոտիներով, որոնք առկա չեն Հայաստանի այլ մարզերում, բացառությամբ Սյունիքի մարզի Մեղրիի տարածաշրջանի: Ուստի այս չորս ապրանքների արտադրության գծով Տավուշի մարզն ունի նաեւ բացառիկ դերակատարություն:

Մյուս գյուղմթերքներից Տավուշի մարզի տնտեսության մեջ կարեւոր դեր ունի խաղողը, որի ցուցանիշներով Տավուշի մարզը Հայաստանում 4-րդն է: Տավուշի մարզի խաղողի գերակշիռ մասն

ունի արդյունաբերական նշանակություն, քանի որ հանդիսանում են տեխնիկական սորտեր: Կան մի շարք այլ ապրանքներ, որոնց արտադրության քանակների գծով Տավուշի մարզը առանձնապես աչքի չի ընկնում, սակայն մարզի տնտեսության համար ունեն կարեւոր նշանակություն: Խոսքը գնում է դեղձի, հատապտուղների, ընկույզի, տխիլի, նուռի մասին: Ընդ որում՝ դեղձը հանդիսանում է Տավուշի մարզում արտադրվող այն բացառիկ առաջնային գյուղմթերքներից, որն արտահանվում է Հայաստանից դուրս:

Տավուշի մարզի 4 տարածաշրջանները գյուղմթերքների արտադրության գծով ունեն տարբեր «մասնագիտացումներ» (տես Աղյուսակ 10):

Աղյուսակ 10 - Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները եւ համախառն բերքը Տավուշի մարզում ըստ տարածաշրջանների, 2010թ.

Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածություններն ըստ տարածաշրջանների

Մշակաբույսեր	ՏԱՎՈՒՇԻ մարզ	ԻՋԵՎԱՆԻ տարածաշրջան		ԴԻԼԻՋԱՆԻ տարածաշրջան		ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ տարածաշրջան		ԲԵՐԴԻ տարածաշրջան	
		հա	%	հա	%	հա	%	հա	%
Հացահատիկային եւ հատիկաընդեղենային մշակաբույսեր	**8,043**	1,699	21.1%	64	0.8%	3,181	39.5%	3,099	38.5%
Տեխնիկական մշակաբույսեր	**942**	39	4.1%	0	0.0%	868	92.1%	35	3.7%
Կարտոֆիլ	**1,948**	683	35.1%	388	19.9%	294	15.1%	583	29.9%
Բանջարանոցային մշակաբույսեր*	**910**	347	38.1%	15	1.6%	225	24.7%	323	35.5%
Բոստանային մշակաբույսեր	**83**	7	8.4%	0	0.0%	75	90.4%	1	1.2%
Կերային մշակաբույսեր	**2,188**	500	22.9%	173	7.9%	290	13.3%	1,225	56.0%
Պտուղ եւ հատապտուղ*	**2,256**	446	19.8%	174	7.7%	1,053	46.7%	583	25.8%
Խաղող*	**1,270**	330	26.0%	1	0.1%	376	29.6%	563	44.3%

* - Բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունների, պտուղ/հատապտղի եւ խաղողի մասով ԱՎԾ-ից, Տավուշի մարզպետարանից եւ գյուղապետարաններից ստացված թվերի մեջ կան որոշ տարբերություններ (համապատասխանաբար -33 հա, -94 հա եւ -43 հա): Դա նկատելի է, եթե համեմատվեն Աղյուսակ 8-ի եւ Աղյուսակ 10-ի տվյալները: Սակայն բերված տվյալները միանգամայն բավարար են հասկանալու համար տարբեր մշակաբույսերի եւ ցանքատարածությունների եւ տնկարկների կազմում տարածաշրջանների մասնաբաժինները:

Գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքն ըստ տարածաշրջանների, տոննա

Մշակաբույսեր	ՏԱՎՈՒՇԻ մարզ	ԻՋԵՎԱՆԻ տարածաշրջան		ԴԻԼԻՋԱՆԻ տարածաշրջան		ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ տարածաշրջան		ԲԵՐԴԻ տարածաշրջան	
		տոննա	%	տոննա	%	տոննա	%	տոննա	%
Հացահատիկային եւ հատիկաընդեղենային մշակաբույսեր	**14,577**	3,956	27.1%	244	1.7%	4,536	31.1%	5,841	40.1%
Տեխնիկական մշակաբույսեր, որից՝	**տվյ. չկան**	տ/չ	-	տ/չ	-	տ/չ	-	տ/չ	-
Ծխախոտ	***578***	*124*	21.5%	*0*	0.0%	*335*	58.0%	*117*	20.2%
Կարտոֆիլ	**14,533**	4,697	32.3%	2,445	16.8%	2,493	17.2%	4,898	33.7%
Բանջարանոցային մշակաբույսեր	**7,258**	2,725	37.5%	111	1.5%	2,078	28.6%	2,344	32.3%
Բոստանային մշակաբույսեր	**1,589**	36	2.3%	0	0.0%	1,543	97.1%	10	0.6%
Կերային մշակաբույսեր	**տվյ. չկան**	տ/չ	-	տ/չ	-	տ/չ	-	տ/չ	-
Պտուղ եւ հատապտուղ	**5,938**	841	14.2%	54	0.9%	4,232	71.3%	811	13.7%
Խաղող	**11,612**	2,079	17.9%	5	0.0%	4,137	35.6%	5,391	46.4%

Աղբյուր՝ Տավուշի մարզպետարան եւ գյուղապետարաններ

Ըստ տարածաշրջանների առաջնային գյուղատնտեսական արտադրանքի տարբերությունները պայմանավորված են առանձին տարածաշրջանների տարածքների մեծությամբ եւ բնակլիմայական պայմաններից: Այս առումով «ամենաթույլը» Դիլիջանի տարածաշրջանն է, որն ունի ամենափոքր տարածքը, որի մեծ մասը կազմում են անտառները: Այն **ավելի շուտ տուրիստական, քան գյուղատնտեսական տարածաշրջան է**: Հիմք ընդունելով մյուս տարածաշրջանների բնակչության ուրբանիզացիայի մակարդակը, ինչպես նաեւ առաջնային գյուղատնտեսական արտադրանքի քանակն ու կառուցվածքը, կարելի է եզրակացնել, որ Նոյեմբերյանի եւ Բերդի տարածաշրջանները հանդիսանում են ընդգծված **գյուղատնտեսական տարածաշրջաններ**:

Տավուշի մարզի բուսաբուծության ոլորտում **առկա խնդիրները** բազմազան են, պայմանավորված օբյեկտիվ եւ սուբյեկտիվ հանգամանքներով: Գլխավոր խնդիրների շարքից են հողերի վիճակի եւ ենթակառուցվածքների առկայության հարցը: Տավուշի մարզում **հողերը կտրտված են** եւ մեծ մասամբ գտնվում են թեք հարթությունների վրա: Դա զգալիորեն բարդացնում է գյուղատնտեսական աշխատանքները, բացասաբար է ազդում հողերի մշակման արդյունավետության ցուցանիշների վրա: **Թերզարգացած է ոռոգման համակարգը**: Վարելահողերի եւ բազմամյա տնկարկների տարածքներից ոռոգման հնարավորությամբ ապահովված են հողերի միայն 20%-ը: Ստորեւ ներկայացված են գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգելիության աստիճանի վերաբերյալ տվյալները.

Աղյուսակ 11 - Տավուշի մարզի գյուղատնտեսական հողերի ոռոգելիության աստիճանը 01.07.2010թ.-ի դրությամբ

Հողերն ըստ նպատակային եւ գործառնական նշանակության	Տարածքը, հա	որից՝ ոռոգվող հողերը, հա	Ոռոգելիության աստիճանը
Գյուղատնտեսական նշանակության հողեր, այդ թվում՝	**111,909**	**5,614**	**5%**
Վարելահող	25,533	3,949	15%
Բազմամյա տնկարկներ, այդ թվում՝	2,000	1,654	83%
Պտղատու այգի	*759*	*542*	*71%*
Խաղողի այգի	*1,241*	*1,112*	*90%*
Այլ բազմամյա տնկարկներ	-	-	-
Խոտհարք	12,257	12	0%
Արոտ	60,278	-	-
Այլ հողատեսքեր	11,842	-	-

Աղբյուրներ՝ «Հաշվետվություն (Ձեւ 22)՝ Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության եւ բաշխման (ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի, գործառնական նշանակության եւ սեփականության սուբյեկտների), առ 01.07.2010թ., Տավուշի մարզ», Տավուշի մարզպետարան
«Հաշվետվություն (Ձեւ 22ա)՝ Հայաստանի Հանրապետության ոռոգվող հողերի առկայության եւ բաշխման (ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի եւ սեփականության սուբյեկտների), 2010թ., Տավուշի մարզ», Տավուշի մարզպետարան

Բերված տվյալները ցույց են տալիս, որ ոռոգելիության համեմատաբար բարձր աստիճան ունեն պտղատու այգիները եւ խաղողի տնկարկները, սակայն դրանք զբաղեցնում են գյուղատնտեսական նշանակության հողերի ընդամենը 2%-ը: Մնացած գյուղատնտեսական հողերից խիստ կարեւոր է վարելահողերի ոռոգելիության աստիճանը, որը, սակայն, շատ փոքր է (15%): Դա է պատճառը, որ չոռոգվող վարելահողերի 45%-ը (2010թ.-ի արդյունքներով) չի մշակվում եւ օգտագործվում է որպես խոտհարք կամ արոտավայր:

2.2.3.2 Առաջատար արտադրանքը

Տավուշի մարզի բուսաբուծության (ինչպես նաեւ հետագայում անասնաբուծության եւ վերամշակման) ոլորտ(ներ)ի առաջատար ապրանքների ցանկը սահմանվել է ըստ հետազոտված ռեսպոնդենտների կարծիքների: *Ընդհանուր առմամբ այն ամփոփում է ոլորտի վերաբերյալ վերը իրականացված վերլուծությունը՝ չնայած որոշ ապրանքների մասով առկա է որոշակի սուբյեկտիվ մոտեցում: Այս մոտեցումը պայմանավորված է հատկապես խոշոր ֆերմերների կարծիքներով, որոնք որոշակիորեն հակված են առաջատար համարել այն ապրանքները, որոնց մշակությամբ իրենք զբաղվում են:* Առաջատար ապրանքների բացահայտված ցանկը ներկայացվում է ստորեւ (տես՝ Աղյուսակ 12):

Աղյուսակ 12 - Տավուշի մարզի բուսաբուծության ոլորտի առաջատար 20 ապրանքներն ըստ ռեսպոնդենտների

Առաջատար ապրանքներ	Պետական եւ հանրային կառույցներ	Զարգացման ծրագրեր	ՀԿ-ներ	Ֆինանսական հաստատու-թյուններ	Վերամշա-կողներ	Խոշոր ֆերմերներ	Ընդամենը
Խաղող	14	5	12	5	27	48	**111**
Արքայանարինջ	12	3	5	2	8	49	**79**
Դեղձ	8	4	10	4	15	26	**67**
Ծխախոտ	10	3	6	4	13	28	**64**
Թուզ	9	4	3	2	10	30	**58**
Եգիպտացորեն	6	0	3	0	8	35	**52**
Կարտոֆիլ	7	0	2	0	4	27	**40**
Ցորեն	9	1	1	0	8	18	**37**
Լոբի	2	1	0	1	2	28	**34**
Հատապտուղ	6	3	1	2	3	19	**34**
Վարունգ	0	0	0	0	3	18	**21**
Լոլիկ	0	0	0	0	0	18	**18**
Գլուխ սոխ	0	0	0	0	2	14	**16**
Մերձարեւադարձային[4]	2	3	0	0	1	6	**12**
Սալոր	0	0	2	0	3	6	**11**
Հոն	0	0	1	1	2	6	**10**
Խնձոր	0	0	1	0	0	7	**8**
Արեւածաղիկ	0	0	1	1	2	1	**5**
Ընկույզ/տխիլ	0	0	0	0	1	4	**5**
Ձիթապտուղ	0	0	0	0	2	3	**5**

Աղբյուր՝ Հետազոտության արդյունքների տվյալների բազա

Չնայած աղյուսակում ներկայացված տվյալները բավականին խոսուն են, որոշակի մեկնաբանություններ, այնուամենայնիվ, պետք է կատարվեն գոնե առաջատար մի քանի ապրանքների մասով: *Խաղողի* մշակությունը ավանդաբար Տավուշի մարզի բուսաբուծության ոլորտի ամենազարգացած ոլորտներից մեկն է: Վերջին ժամանակահատվածում այս ճյուղը լուրջ խնդիրների առջեւ է կանգնել վերամշակող ձեռնարկությունների կողմից սահմանված ցածր գների

[4] Մերձարեւադարձային մշակաբույսերի ներքո ռեսպոնդենտները նկատի են ունեցել հիմնականում արքայանարինջը, թուզը եւ նուռը

պատճառով: Երբեմն, մթերման գները թույլ չեն տալիս նույնիսկ փոխհատուցել գյուղացիների հիմնական ծախսերը: Այնուամենայնիվ, մարզում կան բազմաթիվ տնկարկներ, վերամշակողները կայուն վճարունակ պահանջարկ են ներկայացնում եւ բազմաթիվ ֆերմերներ դեռեւս հակված են շարունակելու խաղողի մշակությունը:

Արքայանարինջի արտադրությունը բուսաբուծության ոլորտում ինտենսիվ զարգացում ապրող ամենախոստումնալիս ոլորտներից է: Առկա է ներքին մեծ պահանջարկ, մշակությունը եւ պահպանման պայմանները համեմատաբար հեշտ են, իրացման գները բարձր են, բնակլիմայական պայմանները՝ նպաստավոր (հիմնականում Նոյեմբերյանի տարածաշրջանում):

Դեղձի արտադրությունը ավանդաբար զարգացած է հատկապես Նոյեմբերյանի տարածաշրջանում: Վերջին տարիներին այգիների վերականգնման, թարմացման եւ նոր այգիների հիմնման մեծածավալ աշխատանքներ են տարվել (եւ տարվում են) հատկապես IFAD-ի կողմից իրականացվող ծրագրերով, որոնք ակնհայտ դրական արդյունքներ են տվել: Նոյեմբերյանի դեղձը լավ ճանաչված եւ պահանջված է ինչպես տեղական շուկայում, այնպես էլ հարեւան Վրաստանի եւ Ռուսաստանի շուկաներում՝ այսինքն՝ առկա է նաեւ այս ապրանքի արտահանման ոչ վատ պոտենցիալ:

Ծխախոտի մշակության ավանդույթները մարզում եւս բավականին հին են: Վերջին ժամանակահատվածում ծխախոտի ցանքատարածությունները Տավուշի մարզում խիստ ավելացել են: Դրան մեծապես նպաստել է «Գրանդ Հոլդինգ» կազմակերպության կողմից իրականացվող քաղաքականությունը, որը կայուն պահանջարկ է ստեղծել եւ պատրաստ է մթերել այս արտադրանքի ցանկացած քանակություն: Ծխախոտի արտադրությունը մասնավոր համագործակցության (B2B[5]) լավագույն օրինակն է Տավուշի մարզում: Ծխախոտի մթերման գներից ֆերմերների դժգոհություններն անհամեմատ ավելի քիչ են, քան խաղողի եւ պտուղների մթերման գների պարագայում:

Թզի մշակության դրական պայմանները մեծապես հիմնված են ներքին շուկայում առկա վճարունակ պահանջարկի վրա: Հայաստանում այս պտուղը մշակվում է հիմնականում Տավուշի (Իջեւանի եւ նոյեմբերյանի տարածաշրջաններ) եւ Սյունիքի (Մեղրիի տարածաշրջան) մարզերում. արտադրության քանակները մեծ չեն եւ շուկայական գները նպաստավոր են ֆերմերների համար: Չնայած դրան՝ այս ապրանքը թարմ վիճակում արտահանման մեծ ներուժ չունի՝ հիմնականում պայմանավորված տեղափոխման եւ պահպանման բարդություններով:

Եգիպտացորենի ներգրավումը Տավուշի մարզի բուսաբուծության առաջատար ապրանքների թվում պայմանավորված է Հայաստանի խոշոր անասնաբուծական (հատկապես՝ թռչնաբուծական) տնտեսությունների կողմից իրականացվող մթերումներով: Կրկին՝ առկա շուկայական պահանջարկը (այն է՝ արժեշղթաների առկայությունը) զարգացման լավ միտումներ է ապահովում:

Վերջին պնդումը քիչ թե շատ կիրառելի է աղյուսակում թվարկված բոլոր ապրանքների համար: Ակնհայտ է, որ զարգացման շարժիչ ուժը շուկայական պահանջարկն է: Սա նշանակում է, որ ընդհանուր զարգացում ապահովելու համար անհրաժեշտ է ջանքերը կենտրոնացնել առկա շուկայական պահանջարկը էլ ավելի խթանելու եւ լավագույնս բավարարելու, ինչպես նաեւ մյուս ապրանքների համար էլ այդ պահանջարկը ձեւավորելու համար: Վերջին խնդրի լուծման համար անհրաժեշտ է հնարավորինս բարձրացնել ֆերմերների տեղեկացվածությունը ներքին եւ արտաքին

[5] Business to Business

շուկայական հնարավորությունների վերաբերյալ, բարձրացնել արտադրանքի որակը, նվազեցնել մշակության ծախսերը եւ բարձրացնել մրցունակությունը մատչելի գներ առաջարկելով:

Ավանդաբար եւ վերջին ժամանակներում զարգացող ոլորտների կողքին զարգացման լավագույն նախադրյալներ են դրսեւորում նաեւ նոր ապրանքներ: Մասնավորապես բուսաբուծության ոլորտում ռեսպոնդենտների կողմից նման ապրանքներ շարքում առանձնացվում են ցիտրուսային բույսերը, արեւածաղիկը, սխտորը, ձմերուկը, քաղցրահամ կարտոֆիլը, ձիթապտուղը, ընդեղենը (ոլոռ, ոսպ, սիսեռ), սունկը եւ այլն: Այս կուլտուրաների մեծ մասի մշակությունը առկա է եղել մարզում նաեւ առաջ, սակայն ոչ մեծ քանակներով՝ հիմնականում նախատեսված սեփական սպառման համար: Ներկա իրավիճակում որոշ ֆերմերներ նորարարական մոտեցումներ են ցուցաբերում՝ փորձելով դիվերսիֆիկացնել իրենց գործունեությունը եւ բարձրարժեք արտադրանք ստանալ:

Հատուկ ուշադրության են արժանի օրգանիկ հատապտուղների արտադրության, չորանոցների (հատկապես հաճախ է հիշատակվել) եւ ջերմոցային տնտեսություններ հիմնադրելու փորձերը: Բոլոր դեպքերում էլ, արդեն իսկ լավ արդյունքներ են արձանագրվել, չնայած նախնական ներդրումային ոչ փոքր կապիտալի անհրաժեշտությանը: Այս իրավիճակում խելամիտ կլինի մոբիլիզացնել զարգացման միջազգային ծրագրերի ռեսուրսները՝ լավագույն փորձառությունը կրկնօրինակելու նպատակով:

2.2.4 Անասնաբուծության ոլորտը

2.2.4.1 Ներկա վիճակը եւ խնդիրները

Անասնաբուծությունը եղել է Տավուշի մարզի գյուղատնտեսության ավանդաբար զարգացած եւ առաջատար ուղղությունը: Մինչեւ 2007-2008թթ. անասնաբուծության համախառն արտադրանքը կազմել է մոտ 20 մլն դրամ (տես Նկար 3), ինչը գրեթե կրկնակի անգամ ավել է եղել, քան բուսաբուծության համախառն արտադրանքը: Տավուշի մարզը հատկապես առաջատար է եղել խոզերի գլխաքանակով, որը 2007թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 28,987 գլուխ: Այդ ցուցանիշով մարզը առաջին տեղում էր Հայաստանում: Սակայն 2007թ.-ին արձանագրված աֆրիկյան ժանտախտի պատճառով խոզերի գլխաքանակը մեկ տարում կրճատվել է 4 անգամ: Չնայած ներկայումս խոզերի գլխաքանակը դանդաղորեն աճում է, սակայն դեռեւս մի քանի տարի շարունակ մարզը չի հասնի 2007թ.-ի տարեսկզբի ցուցանիշին:

Նկար 3 - Տավուշի մարզի անասնաբուծության համախառն արտադրանքը ընթացիկ գներով[6] 2006-2010թթ.-ին, մլրդ. դրամ



Աղբյուրներ՝
«Հայաստանի Հանրապետության մարզերը եւ Երեւան քաղաքը թվերով», ԱՎԾ, 2010
«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010թ.», ԱՎԾ, 2011

Մյուս անասունների գլխաքանակը եւս կրճատվել է: Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի կրճատումը պայմանավորված է մինչեւ 2010թ. աշունը կաթի գների խիստ ցածր մակարդակով (80-90 դրամ/լ): 2009-2010թթ.-ին աննախադեպ մեծ քանակներով արտահանվելու արդյունքում կտրուկ

[6] Ըստ ԱՎԾ Գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետի՝ մարզերի համար անասնաբուծության համախառն արտադրանքը համադրելի գներով չի հաշվառվում

նվազել է ոչխարների գլխաքանակը: Ընդհանուր առմամբ, 2007-2011թթ.-ին բոլոր անասունների ընդհանուր գլխաքանակը նվազել է 30%-ով:

Աղյուսակ 13 - Անասնագլխաքանակը Տավուշի մարզում 2007-2011թթ.-ին (հունվարի 1-ի դրությամբ), գլուխ

Անասուններ	Հայաստան					Տավուշի մարզ				
	2007	2008	2009	2010	2011	2007	2008	2009	2010	2011
Խոշոր եղջ. անասուններ	620,197	629,146	584,779	570,633	571,357	37,710	37,794	33,361	33,751	33,755
որից՝ կովեր	307,089	310,610	283,048	273,854	272,572	19,327	19,395	15,853	16,320	16,331
Խոզեր	152,791	86,710	84,801	112,608	114,777	28,987	7,872	8,626	13,348	13,696
Ոչխարներ	589,972	598,116	526,638	481,342	503,624	21,352	21,949	14,034	12,444	12,936
Այծեր	42,922	38,985	32,580	29,687	28,891	3,322	3,136	2,088	1,711	1,638
Ձիեր	12,628	11,776	11,290	10,777	10,042	1,613	1,741	1,642	1,755	1,694
Գոմեշներ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	190	180
Ճագարներ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	1,596	1,630
Ավանակներ, ջորիներ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	1,331	1,040
Մեղվաընտանիքներ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	200,000	տ/չ	տ/չ	տ/չ	17,826	18,444
Թռչուններ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ

Աղբյուրներ՝ «Անասնագլխաքանակի համատարած հաշվառման հանրագումարները 2007-2011թթ. հունվարի 1-ի դրությամբ», ԱՎԾ, 2007-2011
Տավուշի մարզպետարան

Ի տարբերություն բուսաբուծության արտադրանքի, որի մի քանի տեսակների գծով Տավուշի մարզը առաջատար դիրքեր ուներ Հայաստանում, անասնաբուծության մեջ մարզի դիրքերը համեստ են: Անգամ խոզերի գլխաքանակի չափերով Տավուշը դարձել է Հայաստանի 4-րդ մարզը:

Աղյուսակ 14-ում բերված տվյալները ցույց են տալիս, թե ինչպես է բաշխված Տավուշի մարզի անասնագլխաքանակն ըստ տարածաշրջանների:

Աղյուսակ 14 - Անասնագլխաքանակն ըստ տարածաշրջանների, 2011թ. (հունվարի 1-ի դրությամբ)

Մշակաբույսեր	ՏԱՎՈՒՇԻ մարզ	ԻՋԵՎԱՆԻ տարածաշրջան		ԴԻԼԻՋԱՆԻ տարածաշրջան		ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ տարածաշրջան		ԲԵՐԴԻ տարածաշրջան	
		գլուխ	%	գլուխ	%	գլուխ	%	գլուխ	%
Խոշոր եղջ. անասուններ	**33,755**	11,879	35.2%	4,304	12.8%	10,126	30.0%	7,446	22.1%
որից՝ կովեր	**16,331**	5,928	36.3%	2,337	14.3%	4,665	28.6%	3,401	20.8%
Խոզեր	**13,696**	4,301	31.4%	2,117	15.5%	3,619	26.4%	3,659	26.7%
Ոչխարներ եւ այծեր	**14,574**	4,900	33.6%	673	4.6%	3,828	26.3%	5,173	35.5%
Ձիեր	**1,694**	840	49.6%	346	20.4%	311	18.4%	197	11.6%
Գոմեշներ	**180**	160	88.9%	0	0.0%	14	7.8%	6	3.3%
Ճագարներ	**1,630**	740	45.4%	104	6.4%	453	27.8%	333	20.4%
Ավանակներ, ջորիներ	**1,040**	232	22.3%	67	6.4%	262	25.2%	479	46.1%
Մեղվաընտանիքներ	**18,444**	6,580	35.7%	1,239	6.7%	6,002	32.5%	4,623	25.1%
Թռչուններ	**185,554**	48,876	26.3%	9,060	4.9%	58,365	31.5%	69,253	37.3%

Աղբյուր՝ Տավուշի մարզպետարան

Դժվար չէ գուշակել, որ անասնագլխաքանակի նվազման պարագայում պետք է նվազեր նաեւ անասնաբուծական մթերքների եւ ապրանքների արտադրությունը: Առաջին հերթին նկատելի է մսի արտադրության ծավալների դեպքում: Միակ ցուցանիշը, որն արձանագրել է աճ՝ ձվի արտադրության քանակներն են:

Աղյուսակ 15 - Անասնաբուծական հիմնական մթերքի արտադրությունը Տավուշի մարզում 2006-2010թթ.-ին

Անասուններ	Հայաստան					Տավուշի մարզ				
	2006	2007	2008	2009	2010	2006	2007	2008	2009	2010
Անասուն եւ թռչուն՝ կենդանի քաշով, տոննա	117,100	122,200	125,900	126,200	124,300	9,000	9,200	9,400	7,600	7,600
Կաթ, տոննա	620,000	641,200	661,900	653,000	600,900	42,900	44,300	45,900	36,700	34,800
Ձու, հազ. հատ	463,700	525,400	576,100	630,100	719,200	18,900	22,900	37,400	44,300	44,800
Բուրդ, տոննա	տ/չ	1,277	1,332	1,307	տ/չ	տ/չ	31	34	36	տ/չ
Մեղր, տոննա	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	~ 3,000	տ/չ	տ/չ	տ/չ	~ 225	~ 230

Աղբյուրներ՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը եւ Երեւան քաղաքը թվերով», ԱՎԾ, 2010
«Պարենային ապահովություն եւ աղքատություն, 2010թ. հունվար-դեկտեմբեր», ԱՎԾ, 2011

Տավուշի մարզում անասնաբուծության ոլորտի **խնդիրները** նույնն են, ինչ որ ողջ Հայաստանում եւ դրա մասին քաջ գիտեն ոլորտի բոլոր պատասխանատուները եւ փորձագետները: Դրանցից գլխավորներն են տոհմային գործի խիստ ցածր մակարդակը, այդ թվում՝ արհեստական սերմնավորման ծայրահեղ ցածր կիրառությունը, անասունների կերակրման եւ պահման անբավարար պայմանները, անասնաբուծությամբ զբաղվող ֆերմերային տնտեսությունների փոքր չափերը եւ ֆերմերների գիտելիքների անբավարարությունը, տնտեսությունների ընդլայնման շրջանառու միջոցների սակավությունը կամ անհասանելիությունը եւ այլն:

Տարիներ շարունակ տոհմային գործի վարման բացակայությունը անուղղելի հարված է հասցրել անասունների տոհմային հատկանիշներին, որն արտահայտվում է անասունների մթերատվության ցուցանիշների անկմամբ: Մասնավորապես, Տավուշի մարզում կովերի միջին կաթնատվությունը կազմում է տարեկան 2,131 լ/տարեկան՝ մի փոքր պակաս, քան Հայաստանի միջին ցուցանիշը: Դա կովերի հիմնական բուծվող ցեղատեսակի («Կովկասյան գորշ») հնարավորություններից պակաս է 2.5-3 անգամ:

Լուրջ թերություններով է իրականացվում անասունների կերակրումը: Եթե նկատի ունենաք այն, որ մարզի արոտավայրերը կազմում են ավելի քան 60 հազ. հա, իսկ խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների, այծերի եւ ձիերի ընդհանուր գլխաքանակը կազմում է մոտ 50 հազ. գլուխ, կարելի էր ենթադրել, որ մարզը անասունների կերակրման խնդիր պիտի չունենար[7]: Սակայն մարզի անասնաբուծական տնտեսությունները օգտագործում են հիմնականում մոտակա (համայնքամերձ) արոտները, որը չի կազմում ընդհանուրի անգամ կեսը: Ավելին, մոտակա արոտավայրերի ինտենսիվ օգտագործման արդյունքում այդ արոտավայրերի մի զգալի մասը դեգրադացվել է, որտեղ խոտածածկույթը շատ նոսր է եւ 1 հա-ն արդեն չի կարող բավարարել 1 անասունի կերակրման համար: Այստեղից էլ առաջանում է անասունների թերսնման խնդիրը: Ավելորդ է խոսել ձմռանը անասունների կերակրման պայմանների մասին, քանի որ դա կատարվում է հիմնականում չոր խոտով կամ ծղոտով, իսկ հյութալի կերեր գրեթե չեն օգտագործվում:

[7] Ըստ ՀՀ Գյուղատնտեսության Նախարարության կողմից հիմք ընդունվող նորմատիվի, մեկ գլուխ անասունի կերակրման համար անհրաժեշտ է 1 հա արոտավայրային տարածք:

Անասնաբուծության զարգացման համար մեկ այլ խնդիր է ֆերմերային տնտեսությունների փոքր չափերը: Խոշոր եղջերավոր անասնաբուծությամբ զբաղվող տնտեսությունն ունի միջին հաշվով 2-3 անասուն: Փոքր տնտեսությունների գործունեությունը միտված է հիմնականում սեփական կարիքների բավարարմանը եւ նրանց մոտ շատ ցածր է անասնաբուծական մթերքների կոմերցիալիզացիայի մակարդակը: Իսկ խոշոր ֆերմերային տնտեսությունների թիվը մեծ չէ: Մասնավորապես, Տավուշի մարզում 10 եւ ավելի գլուխ խոշոր եղջերավոր անասուններ ունեցող տնտեսությունների թիվը չի անցնում 150-ից (տես Աղյուսակ 16), եւ դա այն դեպքում, երբ խոշոր եղջերավոր անասնաբուծական տնտեսությունների թիվը կազմում է մի քանի հազար:

Աղյուսակ 16 - Տավուշ մարզում խոշոր եղջերավոր անասնաբուծությամբ զբաղվող համեմատաբար խոշոր տնտեսությունների թիվը 2011թ.-ի օգոստոսի դրությամբ

Տնտեսությունների չափերը →	10-20 գլուխ	21-30 գլուխ	31-50 գլուխ	51-75 գլուխ	76-100 գլուխ	>100 գլուխ
Տնտեսությունների թիվը →	85	30	18	9	2	3

Աղբյուր՝ Տավուշի ԳԱՄԿ

2.2.4.2 Առաջատար արտադրանքը

Տավուշի մարզի անասնաբուծության ոլորտի առաջատար ապրանքների ցանկը ներկայացվում է Աղյուսակ 17-ում:

Աղյուսակ 17 - Տավուշի մարզի անասնաբուծության ոլորտի առաջատար 5 ապրանքները

Առաջատար ապրանքներ	Պետական եւ հանրային կառույցներ	Զարգացման ծրագրեր	ՀԿ-ներ	Ֆինանսական հաստատու-թյուններ	Վերամշա-կողներ	Խոշոր ֆերմերներ	Ընդամենը
Տավարի միս	17	3	11	1	32	72	**136**
Կաթ	11	4	7	0	28	50	**100**
Մեղր	9	0	2	2	1	29	**43**
Խոզի միս	7	2	2	3	8	20	**42**
Ոչխարի միս	3	1	2	0	1	24	**31**

Աղբյուր՝ Հետազոտության արդյունքների տվյալների բազա

Կրկին փորձենք անդրադառնալ ռեսպոնդենտների կողմից հիշատակված ապրանքներին: Խոշոր եղջերավոր անասնաբուծությունը ներկա պահին անասնաբուծության ամենազարգացած ճյուղն է Տավուշի մարզում: Առեւտրայնության տեսանկյունից հատկապես նպատակահարմար է տավարի մսի արտադրությունը, քանի որ այն պահանջված ապրանք է շուկայում եւ վերջին մեկ տարվա ընթացքում արձանագրվել է 30-50% աճ: *Կաթի* արտադրության իրավիճակը մարզում երկակի է: Կաթի մթերումների հետ կապված խնդիրները, մթերման գրեթե բոլոր կետերի գործունեության դադարեցումը ռեսպոնդենտների կողմից ամենից հաճախ հիշատակված խնդիրներից են հանդիսանում: Չնայած դրան՝ կաթը սահմանվել է մարզի անասնաբուծության ոլորտի առաջատար ապրանքներից մեկը:

Նմանատիպ իրավիճակ է նաեւ *մեղրի* պարագայում: Ռեսպոնդենտների զգալի մասն անդրադարձել է մեղրի իրացման դժվարություններին, շուկայի մենաշնորհային վիճակին, մոմաթերթերի

թանկությանը եւ այլ խնդիրների, որոնք սակայն չեն խանգարել, որպեսզի մեղրի սահմանվի որպես առաջատար եւ ներուժային ապրանք Տավուշի մարզում:

Տավուշի մարզում արտադրված *խոզի միսը* իր որակական եւ համահոտային հատկանիշներով ավանդաբար լավագույն ապրանք է համարվում շուկայում: Անցյալ տարիներին հիվանդությունների պատճառով խոզերի գլխաքանակի խիստ անկում է արձանագրվել մարզում, ինչն էլ ավելի է բարձրացրել շուկայական պահանջարկը եւ գները: Չնայած տեղական խոզի մսի համեմատաբար բարձր գներին՝ այն միեւնույն է խիստ պահանջված է եւ զարգացման լավ ներուժ ունի: Սակայն առկա են նաեւ լուրջ խնդիրներ, որոնցից կարեւորագույն կենդանիների խնամքի եւ կանխարգելիչ բուժման պայմանների ապահովումն է:

Ոչխարի միսը արտահանման լուրջ ներուժ ունեցող միակ ապրանքն է ներկայացված ցանկից: Ավելին, ներկա պահին այն խիստ պահանջված է նաեւ ներքին շուկայում: Ոչխարի գլխաքանակի վերջերս իրականացված զանգվածային արտահանման արդյունքում ներքին շուկայում ոչխարի մսի առաջարկը կտրուկ նվազել է, ինչի արդյունքում վաճառքի գները բարձրացել են մոտ 200%-ով: Այս իրավիճակում բնական է, որ ռեսպոնդենտները այն առաջատար ապրանք են համարում:

Զարգացման լավ նախադրյալներ ունեցող անասնաբուծության համեմատաբար նոր ոլորտների թվում ռեսպոնդենտները հիշատակել են մսատու թռչնաբուծությունը (նաեւ ինկուբատորային տնտեսությունների հիմնումը), ճագարաբուծությունը, ջայլամաբուծությունը, ձկնաբուծությունը, գոմեշների բուծումը: Բոլոր նշված ոլորտներում էլ փորձարարական ծրագրերի իրականացման կարիք կա, որոնք առավելագույնս կբացահայտեն այս ոլորտների ողջ պոտենցիալը Տավուշի մարզում:

2.2.5 Գյուղմթերքների վերամշակման ոլորտը

2.2.5.1 Ներկա վիճակը եւ խնդիրները

Վերջին տարիներին գյուղատնտեսության ոլորտում արձանագրված դժվարությունները չէին կարող իրենց բացասական ազդեցությունը չունենալ գյուղմթերքների վերամշակման ոլորտի վրա: Վերամշակման ոլորտը ներկայացված է երկու տեսակի վերամշակող ընկերություններով: Առաջին խումբը զբաղվում է բուսաբուծության արտադրանքի վերամշակմամբ, որոնց մեջ մտնում են գինու, կոնյակի եւ պահածոների արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունները: Երկրորդ խումբը կազմում են անասնաբուծության մթերքի վերամշակման ձեռնարկությունները, որոնք գրեթե բոլորն էլ զբաղվում են կաթի վերամշակմամբ:

2011թ.-ի օգոստոսի դրությամբ Տավուշի մարզի **բուսաբուծության արտադրանքի վերամշակմամբ** զբաղվում են 42 ձեռնարկություններ:

Աղյուսակ 18 - Տավուշի մարզում 2011թ.-ի օգոստոսի դրությամբ առկա վերամշակող ձեռնարկությունների թիվն ըստ գործունեության տեսակի եւ բիզնես ակտիվության

Գործունեությունը / Արտադրանքը	Քանակը	Բիզնես ակտիվությունը
Խաղողի վերամշակման եւ գինու/կոնյակի արտադրության ձեռնարկություններ	5	Գործող 5 Մասնակի գործող 0 Չգործող 0
Պտղի վերամշակման եւ պահածոների արտադրության ձեռնարկություններ	4	Գործող 1

		Մասնակի գործող 1 Չգործող 2
Ալրաղացներ	7	Գործող տ/չ Մասնակի գործող տ/չ Չգործող տ/չ
Հացաբուլկեղենի եւ խմորեղենի արտադրության ձեռնարկություններ	24	Գործող տ/չ Մասնակի գործող տ/չ Չգործող տ/չ
Ծխախոտի վերամշակում	3	Գործող 1 Մասնակի գործող 0 Չգործող 2

Աղբյուրներ՝ Տավուշի մարզպետարան եւ Տավուշի ԳԱՄԿ

Տավուշի մարզի բուսաբուծության զարգացման համար բացառիկ նշանակություն ունեն այն փոքրաթիվ ձեռնարկությունները, որոնք զբաղվում են խաղողի եւ պտուղ-բանջարեղենի վերամշակմամբ: Հատկապես բացառիկ նշանակություն ունեն գինու եւ կոնյակի արտադրությամբ զբաղված ձեռնարկությունները, քանի որ Տավուշի մարզում աճող խաղողի 90%-ը կազմում են տեխնիկական սորտերը, որի միակ գնորդը վերամշակողներն են: Նաեւ այս հանգամանքն է պատճառը, որ Տավուշի մարզում խաղողի արտադրության եւ վերամշակման նպատակով մթերման քանակների կորերը գրեթե իրար զուգահեռ են: Դրանում կարելի է համոզվել՝ համեմատելով Աղյուսակ 8-ի եւ ստորեւ բերված աղյուսակի տվյալները.

Աղյուսակ 19 - Տավուշի մարզի խաղողի վերամշակման ձեռնարկությունների կողմից իրականացված մթերումները 2006-2010թթ.-ին, տոննա

Վերամշակող ձեռնարկությունները եւ դրանց գտնվելու վայրերը	2006	2007	2008	2009	2010
«Իջեւանի գինու կոնյակի գործարան» ՓԲԸ[8] Իջեւանի տարածաշրջան, ք. Իջեւան	590	1,212	452	295	729
«Երեւանի կոնյակի գործարան» ՓԲԸ («Արարատ») Բերդի տարածաշրջան, ք. Բերդ	3,046	4,350	2,095	2,814	3,005
«Երեւանի շամպայն գինիների գործարան» ԲԲԸ Նոյեմբերյանի տարածաշրջան, գ. Դեբեդավան	880	1,980	1,440	465	785
«Երեւանի Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատ» ԲԲԸ	-	-	-	1,400	-
«Բերդավանի գինու գործարան» ԲԲԸ Իջեւանի տարածաշրջան, գ. Բերդավան	962	51	-	50	1,488
«Տավուշի գինու կոնյակի գործարան» ՓԲԸ Բերդի տարածաշրջան, գ. Այգեպար	-	-	-	-	1,406
Ընդամենը	**5,478**	**7,593**	**3,987**	**5,024**	**7,413**

Աղբյուր՝ ՀՀ Գյուղատնտեսության Նախարարության օպերատիվ տվյալներ

Նշված 6 ձեռնարկություններից չորսը իրենց արտադրական գործունեությունն իրականացնում են Տավուշի մարզից դուրս կամ մթերում են իրականացնում ոչ իրենց համար: Բուն Տավուշի մարզի ձեռնարկությունները երկուսն են, որոնց կողմից մթերվող խաղողը հենց մարզում էլ վերամշակվում է: Բայց դա կազմում է խաղողի միայն փոքր մասը՝ վերջին հինգ տարիներին՝ առավելագույնը 30%-ը:

[8] Նախկինում՝ «Իջեւանի գինու գործարան» ԲԲԸ, Տավուշի մարզ, ք. Իջեւան

Անհամեմատ փոքր քանակներ են կազմում պտղի եւ բանջարեղենի մթերման ծավալները: Խիստ անկանոն գործող 4 վերամշակող ձեռնարկությունների կողմից մթերվում են 5-6 անուն մրգատեսակներ՝ պահածոների արտադրության նպատակով, այդ թվում մուրաբաներ, ջեմեր, կոմպոտներ: Այդ ձեռնարկությունների կողմից 2006-2010թթ.-ին կատարված պտղի եւ բանջարեղենի մթերումների ցուցանիշները ներկայացված են ստորեւ.

Աղյուսակ 20 - Տավուշի մարզի պտուղ-բանջարեղենի վերամշակման ձեռնարկությունների կողմից իրականացված մթերումները 2006-2010թթ.-ին, տոննա

Վերամշակող ձեռնարկությունները եւ դրանց գտնվելու վայրերը	Մթերված ապրանքներ	2006	2007	2008	2009	2010[9]
«ՄԱԳԱ» ՊԳ ՍՊԸ[10] Իջեւանի տարածաշրջան գ. Վարագավան	Խնձոր	-	-	50.0	10.0	
	Ընկույզ	-	4.0	-	10.0	
	Հատապտուղ	-	-	2.0	5.0	
	Այլ պտուղներ	-	3.0	-	1.0	
	Բանջարեղեն	-	2.0	-	-	
	Ընդամենը	**-**	**9.0**	**52.0**	**26.0**	
«Այրումի ՊԳ» ԲԲԸ Նոյեմբերյանի տարածաշրջան ք. Այրում	Խնձոր	-	-	279.0	196.0	
	Դեղձ	21.0	2.0	715.0	521.0	
	Ծիրան	10.0	-	-	-	
	Կեռաս, բալ, սալոր	-	1.4	26.0	38.0	
	Ընկույզ	8.0	5.5	6.5	25.0	
	Հատապտուղ	9.2	4.3	15.0	48.0	
	Այլ պտուղներ	8.0	2.2	18.0	18.0	
	Ընդամենը	**56.2**	**15.4**	**1,059.5**	**846.0**	
«Շուշ» ՍՊԸ Նոյեմբերյանի տարածաշրջան գ. Կողբ	Խնձոր	3.0	-	-	-	
	Ընկույզ	1.0	4.0	-	-	
	Հատապտուղ	1.0	-	0.5	-	
	Այլ պտուղներ	1.0	1.2	0.5	-	
	Ընդամենը	**6.0**	**5.2**	**1.0**	**-**	
«Արթուր եւ Էդիտա» ՍՊԸ Նոյեմբերյանի տարածաշրջան գ. Ջուջեւան	Ընկույզ	1	2.0	-	-	
	Հատապտուղ	2.5	-	-	-	
	Այլ պտուղներ	-	1.0	-	-	
	Ընդամենը	**3.5**	**3.0**	**-**	**-**	
Ընդամենը		**65.7**	**32.6**	**1,112.5**	**872.0**	

Աղբյուր՝ ՀՀ Գյուղատնտեսության Նախարարության օպերատիվ տվյալներ

2011թ.-ին Տավուշի մարզի բուսաբուծության արտադրանքի վերամշակողների կազմն ընդլայնվել է եւս մեկ ձեռնարկությամբ, որը կոչվում է «Էկոգարդեն արտադրական կորպորացիա» ՍՊԸ (գտնվում է Բերդի տարածաշրջանի Այգեձոր գյուղում): Սա երկու տարի առաջ հիմնված ձեռնարկություն է:

[9] 2010թ.-ին վերամշակողների կողմից պտղի մթերման քանակների մասին տվյալներ չկան, սակայն դրանք կազմել են չնչին քանակներ

[10] Նախկինում՝ «Տավուշի պահածոների գործարան» ԲԲԸ, Տավուշի մարզ, գ. Վարագավան

Մրգի մթերումներ սկսել են անել 2010թ.-ից՝ փորձնական նպատակներով, իսկ արտադրական նպատակներով մթերումներ իրականացրել են միայն 2011թ.-ին: Մթերել են ընկույզ, թութ, հատապտուղներ, մասուր՝ փոքր քանակներով:

Ակնհայտ է, որ անմիջապես Տավուշի մարզում մթերվող եւ վերամշակվող պտուղն ու խաղողը այնքան էլ մեծ քանակներ չեն կազմում: Դա է պատճառը, որ 2010թ.-ին խմիչքների արտադրությունը կազմել է 342 մլն. դրամ, եւ դրանից անհամեմատ պակաս՝ պահածոների արտադրությունը: Ուստի Աղյուսակ 5-ում բերված սննդամթերքի արտադրության արժեքը (2,551 մլն. դրամ) հիմնականում բաժին է ընկնում հացաբուլկեղենի արտադրությանը: Վերջինս, սակայն, մարզի գյուղատնտեսության հետ չունի այնպիսի սերտ առնչություն, ինչպես գինու, կոնյակի եւ պահածոների արտադրությունը:

Ի տարբերություն խմիչքների եւ պահածոների արտադրության, Տավուշի մարզում **անասնաբուծական արտադրանքի վերամշակումը** շատ ավելի թույլ է զարգացած: Խոսքը գնում է ոչ թե անհատական ֆերմերային տնտեսություններում, այլ արդյունաբերական ձեռնարկություններում թողարկվող արտադրանքի մասին: Խնդիրը կայանում է նրանում, որ Տավուշի մարզում առաջնային անասնաբուծական ապրանքների՝ մսի եւ կաթի առաջարկը փոքր է, եղածն էլ նախատեսված է ներքին սպառման եւ թարմ տեսքով եւ ավելի թանկ գնով շուկայում վերջնական սպառման համար: Դա է պատճառը, 2011թ.-ի օգոստոսի դրությամբ չեն գործում մսի վերամշակման 2 ձեռնարկությունները, կաթնամթերքի արտադրության մոտ 2 տասնյակ ձեռնարկություններից չի գործում կեսից ավելին: Գործող հատուկենտ ձեռնարկությունները կամ կաթ են մթերում շատ փոքր քանակներով, կամ էլ վերամշակում են սեփական արտադրության կաթը, ինչպես օրինակ Դիլիջանում գտնվող «Դիլի» ՍՊԸ-ն:

Հետազոտության իրականացման պահին անգործության էին մատնված նաեւ Տավուշի մարզում առկա կաթի սպառողական 7 կոոպերատիվները: Անշուշտ, պատճառն այն չէ, որ մարզում կաթ չի արտադրվում: Որտե՞ղ եւ ինչպե՞ս է սպառվում այն 35 հազ. տոննա կաթը, որն արտադրվում է մարզում: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ այդքան կաթը արտադրվում է մարզի մոտ 10 հազ. անհատական ֆերմերային տնտեսություններում: Վերջիններս, որպես անասնաբուծական տնտեսություններ, շատ փոքր միավորներ են եւ միջին հաշվով ունեն 2-3 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, այդ թվում՝ 1-1.5 գլուխ կով: Աղյուսակ 16-ից նաեւ հիշում ենք, որ 10 եւ ավելի գլուխ անասուն ունեցող տնտեսությունների թիվը չի անցնում 150-ից: Սա նշանակում է, որ մնացած անասնաբուծական տնտեսությունները իրենց չափերով էլ ավելի փոքր են, քան վերը ներկայացված միջին թիվը: Ուստի դժվար չէ կռահել, որ **փոքր անասնաբուծական տնտեսությունների արտադրանքը գրեթե ամբողջությամբ ուղղվում է ներքին սպառմանը**: Այդ տնտեսությունները շուկայում որպես առաջարկի կողմ հանդես չեն գալիս: Որպես այդպիսին կարելի է դիտել անասնագլխաքանակի համեմատաբար մեծ չափեր ունեցող փոքրաթիվ տնտեսությունները, որոնք ցրված են ամբողջ մարզով մեկ: Այստեղից պարզ է, որ Տավուշի մարզում չկան կաթի առաջարկի կոնցենտրացիայի օջախներ: Հենց այս պատճառով էլ կաթի վերամշակող ընկերությունները կամ սպառողական կոոպերատիվներն ունեն կաթ մթերելու լուրջ խնդիրներ, ինչը մեծապես խոչընդոտում է նրանց գործունեությանը: Հենց այս պատճառով էլ կաթի իրացման խնդիրներ ունեն նաեւ խոշոր արտադրողները: Ուստի նրանք ստիպված իրենց արտադրած կաթը վերամշակում են եւ իրենք էլ զբաղվում են դրա իրացմամբ:

2.2.5.2 Գյուղմթերքների վերամշակման առաջատար ոլորտները

Տավուշի մարզում ավանդաբար զարգացած են եղել բուսաբուծության արտադրանքի վերամշակման երեք ոլորտներ՝ խաղողի վերամշակումը (գինու, կոնյակի նախնական եւ վերջնական

արտադրություն), պահածոների արտադրությունը տարբեր տեսակի պտուղներից, հատապտուղներից եւ բանջարեղենից, ծխախոտի հումքի վերամշակումը: Ռեսպոնդենտների պատասխանները լիովին հաստատել են այս կարծիքը (տես Աղյուսակ 21):

Աղյուսակ 21 - Տավուշի մարզի բուսաբուծության արտադրանքի վերամշակման առաջատար ոլորտներն ըստ ռեսպոնդենտների

Առաջատար ապրանքներ	Պետական եւ հանրային կառույցներ	Զարգացման ծրագրեր	ՀԿ-ներ	Ֆինանսական հաստատու-թյուններ	Վերամշա-կողներ	Խոշոր ֆերմերներ	Ընդամենը
Խաղողի վերամշակում	17	5	10	4	21	47	**104**
Պտղի, հատապտղի եւ բանջարեղենի վերամշակում	8	2	6	2	8	47	**73**
Ծխախոտի վերամշակում	12	3	1	0	7	30	**53**

Աղբյուր՝ Հետազոտության արդյունքների տվյալների բազա

Իրավիճակը խիստ տարբեր է անասնաբուծության արտադրանքի վերամշակման ոլորտում: Նման ձեռնարկություններ Տավուշի մարզում գրեթե չկան: Հիմնվել են բազմաթիվ կաթի մթերման կետեր, որոնցից ոչ մեկը 2011թ. ամռան դրությամբ կանոնավոր մթերումներ չի իրականացնում, սպանդանոցներ եւ մսի վերամշակման կետեր (երշիկեղենի արտադրություն) չկան: Ոլորտում գործունեություն են իրականացնում բազմաթիվ պանիր արտադրողներ, որոնք սակայն հիմնականում հանդես են գալիս որպես առաջնային ֆերմերային տնտեսություններ եւ արտադրանքը մեծամասամբ ուղղվում է սեփական սպառմանը: Այդ պատճառով ռեսպոնդենտներին անասնաբուծության արտադրանքի վերամշակման առաջատար ոլորտների վերաբերյալ տրվող հարցը վերաձեւակերպվել է: Նրանք իրենց կարծիքն են հայտնել ներուժային ոլորտների վերաբերյալ: Պատասխանները ամփոփված են ստորեւ (տես Աղյուսակ 22):

Աղյուսակ 22 - Տավուշի մարզի անասնաբուծության արտադրանքի վերամշակման ներուժային ոլորտները

Ներուժային ոլորտներ	Պետական եւ հանրային կառույցներ	Զարգացման ծրագրեր	ՀԿ-ներ	Ֆինանսական հաստատու-թյուններ	Վերամշա-կողներ	Խոշոր ֆերմերներ	Ընդամենը
Կաթի վերամշակում	5	2	1	1	12	44	**65**
Մսի վերամշակում	0	1	0	0	2	39	**42**
Բրդի վերամշակում	0	0	0	0	0	10	**10**

Աղբյուր՝ Հետազոտության արդյունքների տվյալների բազա

Ներկայացված տվյալներն ինքնաբավ են եւ լրացուցիչ մեկնաբանության կարիք չկա:

2.3 ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ

2.3.1 Արտադրության եւ արտահանման ներուժը

Առաջնային եւ վերամշակված գյուղատնտեսական արտադրանքի արտադրության եւ արտահանման ներուժի բացահայտումը հանդիսանում է սույն հետազոտության հիմնական խնդիրներից մեկը:

Խնդիր է դրվել ոչ միայն արձանագրել ավանդաբար զարգացած ոլորտների զարգացման հնարավորությունները, այլեւ լուրջ պոտենցիալ ունեցող նոր ապրանքները: Ընդ որում, իրացման տեսանկյունից կարեւորվում են ոչ միայն դեպի արտերկիր, այլ նաեւ Տավուշի մարզից դուրս, բայց Հայաստանի այլ վայրերում իրացման պոտենցիալ ունեցող ապրանքները: Հետազոտությանը մասնակցած ռեսպոնդենտների պատկերացումները ամփոփվել են հաջորդիվ:

2.3.1.1 Առաջնային գյուղատնտեսական արտադրանք

Ռեսպոնդենտների կողմից առաջնային գյուղատնտեսական ապրանքների ցանկը ներկայացվում է ստորեւ (տես Աղյուսակ 23): Աղյուսակում ներկայացված տվյալները ինքնաբավ են եւ դրանց վերաբերյալ կկատարվեն բացառապես ընդհանուր բնույթի մեկնաբանություններ:

Աղյուսակ 23 - Ներուժային առաջնային գյուղատնտեսական ապրանքներ

Արտադրության եւ իրացման ներուժ ունեցող առաջնային գյուղատնտեսական ապրանքներ	Ռեսպոնդենտների քանակ
Հիմնական ցանկ	
Խաղող	80
Տավարի միս	69
Արքայանարինջ	65
Դեղձ	48
Մերձարեւադարձային պտուղներ (թուզ, նուռ, կիվի)	57
Կաթ	47
Ծխախոտ	37
Հատապտուղներ	36
Հոն	35
Մեղր	30
Լրացուցիչ ցանկ	
Ցորեն եւ այլ հացահատիկ	21
Սեւ սալոր	16
Խնձոր	16
Ընկույզ/տխիլ	16
Խոզի միս	15
Կարտոֆիլ	15
ԸՆԴԱՄԵՆԸ Պատասխաններ	**99**

Աղբյուր՝ Հետազոտության արդյունքների տվյալների բազա

Գյուղատնտեսական առաջնային ապրանքների արտադրության եւ արտահանման տեսանկյունից կոնկրետ ներուժային ապրանքների ցանկը շատ չի տարբերվում ռեսպոնդենտների կողմից նախապես սահմանված մարզի առաջատար ապրանքների ցանկից: Այս մեկը պարզապես ավելի ընդարձակ է եւ մանրամասն: Բացի այդ, միեւնույն ցանկում ներկայացված են ե՛ւ բուսաբուծության, ե՛ւ անասնաբուծության ապրանքները:

Արտադրության եւ մարզից արտահանման ներուժի տեսանկյունից իրենց դիրքերը որոշակիորեն զիջել են, թերեւս, միայն խոզի միսը եւ մեղրը: Խոզի մսի դեպքում պատճառը արտադրանքի սահմանափակ քանակությունն է եւ բուծման առկա դժվարությունները: Մեղրի պարագայում՝ արտադրանքի իրացման համակարգի բացակայությունը (սպոնտան բնույթը): Մի փոքր ամրապնդվել են հատապտուղները եւ հոնը: Սա եւս հասկանալի է եւ պայմանավորված է մարզում վերամշակող ձեռնարկությունների առկայությամբ:

Ներուժային ապրանքների *առաջնայնության* վերաբերյալ կարծիքների զգալի տարբերություններ են նկատվում ռեսպոնդենտների տարբեր խմբերի մոտ: Այդ տարբերությունները ներկայացված են ստորեւ (տես Աղյուսակ 24):

Աղյուսակ 24 - Ներուժային առաջնային գյուղատնտեսական ապրանքներն ըստ ռեսպոնդենտների խմբերի

Պետական եւ հանրային կառույցների կողմից նշված ապրանքներ (109 պատասխան)	Քանակ	Զարգացման ծրագրերի կողմից նշված ապրանքներ (31 պատասխան)	Քանակ	ՀԿ-ների կողմից նշված ապրանքներ (60 պատասխան)	Քանակ
Խաղող	12	Մերձարեւադարձային պտուղներ (կիվի, թուզ, նուռ)	5	Խաղող	11
Դեղձ	10	Խաղող	4	Արքայանարինջ	10
Մերձարեւադարձային պտուղներ (թուզ, կիվի)	10	Կաթ	4	Դեղձ	8
Արքայանարինջ	9	Տավարի միս	3	Ծխախոտ	5
Հատապտուղներ	9	Արքայանարինջ	3	Տավարի միս	4
Տավարի միս	8	Դեղձ	3	Հատապտուղներ	3
Ծխախոտ	8			Հոն	3
ԸՆԴԱՄԵՆԸ Պատասխաններ	**66**	**ԸՆԴԱՄԵՆԸ Պատասխաններ**	**22**	**ԸՆԴԱՄԵՆԸ Պատասխաններ**	**44**
Ֆինանսական հաստատությունների կողմից նշված ապրանքներ (23 պատասխան)	**Քանակ**	**Վերամշակող ձեռնարկությունների կողմից նշված ապրանքներ (134 պատասխան)**	**Քանակ**	**Խոշոր ֆերմերների կողմից նշված ապրանքներ (378 պատասխան)**	**Քանակ**
Խաղող	4	Խաղող	18	Տավարի միս	36
Դեղձ	3	Տավարի միս	17	Արքայանարինջ	33
		Կաթ	13	Խաղող	31
		Մերձարեւադարձային պտուղներ (թուզ, նուռ)	9	Մերձարեւադարձային պտուղներ (թուզ, նուռ)	30
		Ծխախոտ	9	Մեղր	21
		Արքայանարինջ	8	Կաթ	21
		Դեղձ	8	Հոն	21
				Դեղձ	16
				Հատապտուղներ	15
ԸՆԴԱՄԵՆԸ Պատասխաններ	**7**	**ԸՆԴԱՄԵՆԸ Պատասխաններ**	**82**	**ԸՆԴԱՄԵՆԸ Պատասխաններ**	**224**

Աղբյուր՝ Հետազոտության արդյունքների տվյալների բազա

Աղյուսակում ներկայացված տվյալները բացահայտում են տարբեր խմբերի ռեսպոնդենտների տեղեկացվածությունը եւ գերակայությունները: Միաժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ այս պատասխանների մեջ, այնուամենայնիվ, սուբյեկտիվ տարր կա: Ռեսպոնդենտները հիմնականում հիշատակել են այն ապրանքատեսակները, որոնց վերաբերյալ նրանք քիչ թե շատ տեղեկացված են կամ որոնց արտադրությամբ (վերամշակմամբ) նրանք զբաղվում են: Նման իրավիճակում բնականաբար որոշակի արհեստական գերակայություններ են ձեւավորվում, որոնք կարող են ազդել ընդհանուր պատկերի վրա: Այս ազդեցությունը նվազագույնի է հասցվել դեռեւս հետազոտության նախապատրաստման եւ ռեսպոնդենտների ընտրանքի ձեւավորման փուլերում, սակայն նշված խնդրի մասին մոռանալ պետք չէ ամեն դեպքում:

2.3.1.2 Վերամշակված արտադրանք

Ի տարբերություն նախորդ բաժիններում սահմանված առաջատար ոլորտների եւ ապրանքների նկարագրության, ներուժային ապրանքների սահմանման ժամանակ ռեսպոնդենտները հակված են եղել առավել մանրամասն տեղեկություններ տրամադրել: Մասնավորապես կոնկրետացվել են ոչ միայն ապրանքախմբերը (օրինակ՝ պահածոներ), այլ նաեւ կոնկրետ ապրանքատեսակները (օրինակ՝ այս կամ այն պտղատեսակի մուրաբան կամ հյութը): Արտադրության եւ արտահանման ներուժ ունեցող վերամշակված ապրանքների վերաբերյալ ռեսպոնդենտների պատասխանները ամփոփված են ստորեւ:

Աղյուսակ 25 - Ներուժային վերամշակված ապրանքներ

Արտադրության եւ իրացման ներուժ ունեցող վերամշակված ապրանքներ	Ռեսպոնդենտների քանակ
Հիմնական ցանկ	
Մրգօղիներ (հոնի, թթի, խաղողի, խնձորի, սեւ սալորի, վայրի տանձի, դեղձի, մորու)	61
Պանիր (կովի եւ ոչխարի կաթից, թել)	60
Չիր (արքայանարինջի, սեւ սալորի, թզի, դեղձի, հոնի, տանձի, հատապտուղների)	55
Գինի եւ կոնյակ (գինենյութ, կարմիր, սպիտակ, մրգային, խաղողի, կոնյակ, քացախ)	53
Պահածոներ/մուրաբա/ջեմ (ընկույզի, հատապտուղների, հոնի, թզի, դեղձի, սալորի)	48
Լրացուցիչ ցանկ	
Թթու կաթնամթերք (թթվասեր, կովի եւ գոմեշի կաթից մածուն, ռեժան)	30
Կարագ եւ յուղ	19
Այլ պահածոներ (թթուներ վարունգի, զեյթունի, լոլիկի, ղանձիլի, մարինադ, շուշանի)	15
ԸՆԴԱՄԵՆԸ Պատասխաններ	**64**

Աղբյուր՝ Հետազոտության արդյունքների տվյալների բազա

Ներուժային վերամշակված ապրանքների ցանկը համեմատաբար ավելի շատ է տարբերվում ռեսպոնդենտների կողմից սահմանված առաջատար ապրանքների ցանկից: Նոր ապրանքներից հատկապես աչքի են ընկնում մրգօղիները եւ չիրերը: Ծխախոտի վերամշակման ոլորտը գրեթե չի հիշատակվել: Այս երեւույթներն իրենց բացատրություններն ունեն: Ռեսպոնդենտները առանձնացրել են այն ապրանքները, որոնք կարելի է արտադրել նաեւ ոչ գործարանային պայմաններում:

Արտադրության եւ սանիտարահիգիենիկ պայմանների պահպանման, ճիշտ շուկայավարման, փաթեթավորման ու պիտակավորման, շուկայի համապատասխան սեգմենտների թիրախավորման պայմաններում այս մոտեցումը կարող է շատ խոստումնալից լինել: Գոնե հայ հասարակության մեջ այսպես կոչված «տնական» արտադրանքը բավականին հարգի է եւ բազմաթիվ գնորդներ պատրաստ են հավելյալ վճարել այսպիսի արտադրանքի համար:

Վերամշակված ապրանքների դեպքում եւս նկատելի են ռեսպոնդենտների գերակայությունները տարբեր ապրանքների նկատմամբ: Տարբեր խմբերի ռեսպոնդենտների վերաբերմունքը արտադրության եւ արտահանման ներուժ ունեցող վերամշակված ապրանքների նկատմամբ ներկայացվում է ստորեւ (տես Աղյուսակ 26):

Աղյուսակ 26 - Ներուժային վերամշակված ապրանքներն ըստ ռեսպոնդենտների խմբերի

Պետական եւ հանրային կառույցների կողմից նշված ապրանքներ (52 պատասխան)	Քանակ	Զարգացման ծրագրերի կողմից նշված ապրանքներ (13 պատասխան)	Քանակ	ՀԿ-ների կողմից նշված ապրանքներ (35 պատասխան)	Քանակ
Գինի եւ կոնյակ	11	Պահածոներ (հատապտուղների մուրաբաներ եւ ջեմեր)	5	Գինի եւ կոնյակ	7
Թթու կաթնամթերք	7	Գինի	4	Չիր (արքայանարինջի, սեւ սալորի, թզի, դեղձի, հոնի, տանձի, հատապտուղների)	6
Պահածոներ/մուրաբա/ջեմ (ընկույզի, հատապտուղների, հոնի, թզի, դեղձի, սալորի)	7	Չիրեր (թզի, հատապտուղների)	3	Թթու կաթնամթերք	5
Այլ պահածոներ	5			Պահածոներ/մուրաբա/ջեմ (ընկույզի, հատապտուղների, հոնի, թզի, դեղձի, սալորի)	5
Պանիր	5			Մրգօղիներ (հոնի, թթի, խաղողի, խնձորի, սեւ սալորի, վայրի տանձի, դեղձի, մորու)	3
Ծխախոտ	5			Այլ պահածոներ (թթուներ վարունգի, զեյթունի, լոլիկի, ղանձիլի, մարինադ, շուշանի, ջոնջոլի, վայրագի)	3
ԸՆԴԱՄԵՆԸ Պատասխաններ	**40**	**ԸՆԴԱՄԵՆԸ Պատասխաններ**	**12**	**ԸՆԴԱՄԵՆԸ Պատասխաններ**	**29**
Ֆինանսական հաստատությունների կողմից նշված ապրանքներ (7 պատասխան)	**Քանակ**	**Վերամշակող ձեռնարկությունների կողմից նշված ապրանքներ (73 պատասխան)**	**Քանակ**	**Խոշոր ֆերմերների կողմից նշված ապրանքներ (206 պատասխան)**	**Քանակ**
Գինի եւ կոնյակ	2	Պանիր	15	Մրգօղիներ (հոնի, թթի, խաղողի, խնձորի, սեւ սալորի, վայրի տանձի, դեղձի, մորու)	45
		Գինի եւ կոնյակ	12	Պանիր	37
		Պահածոներ/մուրաբա/ջեմ (ընկույզի, հատապտուղների, հոնի, թզի, դեղձի, սալորի)	10	Չիր (արքայանարինջի, սեւ սալորի, թզի, դեղձի, հոնի, տանձի, հատապտուղների)	34
		Թթու կաթնամթերք	9	Կարագ եւ յուղ	17
		Մրգօղիներ (հոնի, թթի, խաղողի, խնձորի, սեւ սալորի, վայրի տանձի, դեղձի, մորու)	8	Գինի եւ կոնյակ (գինենյութ, կարմիր, սպիտակ, մրգային, խաղողի, կոնյակ, քացախ)	17
		Չիր (արքայանարինջի, սեւ սալորի, թզի, դեղձի, հոնի, տանձի, հատապտուղների)	7	Պահածոներ/մուրաբա/ջեմ (ընկույզի, հատապտուղների, հոնի, թզի, դեղձի, սալորի)	14
ԸՆԴԱՄԵՆԸ Պատասխաններ	**2**	**ԸՆԴԱՄԵՆԸ Պատասխաններ**	**61**	**ԸՆԴԱՄԵՆԸ Պատասխաններ**	**164**

Աղբյուր՝ Հետազոտության արդյունքների տվյալների բազա

Ներկայացված տվյալներն ինքնաբավ են եւ լրացուցիչ մեկնաբանության կարիք չկա:

2.3.2 Արտադրության եւ արտահանման ներուժի հիմնավորումներ

Կոնկրետ ապրանքների արտադրության եւ արտահանման ներուժի վերաբերյալ ռեսպոնդենտների ներկայացրած ոչ բոլոր հիմնավորումներն են իսկապես իրատեսական եւ օբյեկտիվ: Որոշ դեպքերում ռեսպոնդենտները հիմնավորումների փոխարեն կրկին իրենց ցանկություններն են ներկայացրել, որոշ դեպքերում էլ այդ հիմնավորումները խիստ սուբյեկտիվ են: Ինչեւիցե, ռեսպոնդենտների պատասխանների ամփոփ վերլուծությունը (առանց լուրջ խմբագրումների) *ըստ ներուժային հիմնական ապրանքների* ներկայացվում է հաջորդիվ:

2.3.2.1 Առաջնային գյուղատնտեսական արտադրանք

Խաղող

- Իրացման մեծ խնդիրներ չկան: Մարզում գործում են մի քանի խոշոր մթերողներ, որոնք մթերում են ողջ բերքը անկախ որակից: Մթերման գները հիմնականում ցածր են, սակայն կայուն վճարում են: Որոշ քանակությամբ խաղող վերամշակվում է վերջնական արտադրանքի (հիմնականում գինիների) անմիջապես Տավուշի մարզում: (44 ռեսպոնդենտ 80-ից):
- Տավուշի մարզի բնական պայմանները եւ կլիման նպաստավոր են խաղողի մշակության համար: Բերքատվության ցուցանիշները բարձր են: Առկա են մեծ քանակությամբ խաղողի տնկարկներ: (12 ռեսպոնդենտ 80-ից):
- Ավանդաբար զարգացած գյուղատնտեսական ոլորտներից մեկն է դեռեւս խորհրդային ժամանակաշրջանից: (6 ռեսպոնդենտ 80-ից):
- Էկոլոգիապես մաքուր է եւ մշակվում է ագրոտեխնիկական կանոններով: (7 ռեսպոնդենտ 80-ից):
- Մարզում գործող մթերողների մոտ հատկապես մեծ է տեխնիկական սորտերի խաղողի պահանջարկը: Այս տեսանկյունից մշակվող խաղողը շատ հարմար է՝ շաքարայնությունը ցածր է, ինչը նպաստավոր է գինիների, շամպայնի եւ կոնյակի արտադրության համար: (5 ռեսպոնդենտ 80-ից):

Տավարի միս

- Բավականին անասնագլխաքանակ կա մարզում: Բնակլիմայական պայմանները բարենպաստ են: Մարզում կան ենթալպյան եւ մարգագետնային արոտավայրեր: Արոտավայրերը բարվոք վիճակում են եւ բազմաթիվ վայրերում բնակվելու հնարավորություններ կան: Անասնակերի լուրջ խնդիրներ չկան: Առկա է երիտասարդ աշխատուժ: (17 ռեսպոնդենտ 69-ից):
- Ամբողջ երկրում բարձրորակ մսի պահանջարկ կա, ներքին առաջարկը չի բավարարում: (12 ռեսպոնդենտ 69-ից):
- Տավուշի մարզում արտադրված տավարի միսը էկոլոգիապես մաքուր է եւ համային լավ հատկանիշներ ունի: (7 ռեսպոնդենտ 69-ից):
- Ավանդաբար զարգացած գյուղատնտեսական ոլորտներից մեկն է դեռեւս խորհրդային ժամանակաշրջանից: (6 ռեսպոնդենտ 69-ից):

Կաթ

- Բավականին անասնագլխաքանակ կա մարզում: Բնակլիմայական պայմանները բարենպաստ են: Մարզում կան ենթալպյան եւ մարգագետնային արոտավայրեր: Արոտավայրերը բարվոք վիճակում են եւ բազմաթիվ վայրերում բնակվելու հնարավորություններ կան: Անասնակերի լուրջ խնդիրներ չկան: Առկա է երիտասարդ աշխատուժ: (10 ռեսպոնդենտ 46-ից):
- Արտադրության ծավալները քիչ են, պահանջարկը՝ մեծ: Միայն մեծ առաջարկի դեպքում է հնարավոր կանոնավոր իրացումներ կատարել: (8 ռեսպոնդենտ 46-ից):

- Էկոլոգիապես մաքուր է եւ համային բարձր հատկանիշներ ունի: Որակը՝ յուղայնությունը բարձր է: (7 ռեսպոնդենտ 46-ից):

<u>Արքայանարինջ</u>

- Հայաստանում աճում է շատ քիչ վայրերում, առաջարկը քիչ է: Փոխարենը ներմուծվում է եւ շուկայական պահանջարկը մեծ է: Իրացնելը հեշտ է նույնիսկ առանց արտահանման հնարավորությունների օգտագործման: Պահանջված է նաեւ չրերի արտադրության համար: (34 ռեսպոնդենտ 65-ից):
- Հնարավոր է մշակել նույնիսկ անջրդի պայմաններում: Ամեն տարի բերք է տալիս եւ քիչ ծախսատար է: Բերքատվությունը բարձր է: Արդեն մշակության որոշ փորձ է ձեւավորվել: Բնակլիմայական պայմանները նպաստավոր են եւ այգիները Տավուշի մարզում գնալով շատանում են: Ապրանքային տեսքը լավն է եւ բերքը դիմացկուն է՝ կայուն է կլիմայական փոփոխությունների նկատմամբ: (22 ռեսպոնդենտ 65-ից):

<u>Դեղձ</u>

- Էկոլոգիապես մաքուր եւ մեծ պահանջարկ վայելող ապրանք է: Ներքին պահանջարկը մեծ է, իրացումը երաշխավորված է նույնիսկ առանց արտահանման: Վաճառքի պոտենցիալը մեծ է, հեշտ է իրացնելը: Կարելի է նաեւ փոխանակել այլ անհրաժեշտ ապրանքների հետ: (21 ռեսպոնդենտ 48-ից):
- Նոյեմբերյանի տարածաշրջանը հայտնի է իր դեղձով: Ավանդաբար զարգացած գյուղատնտեսական ոլորտներից մեկն է: Հանրահայտ բրենդ է, բարձր որակ ունի, համը լավն է: Ժամանակին Նոյեմբերյանի տարածաշրջանը 34,000 տոննա բերք է տվել, որից կեսն արտահանվել է (հիմա առավելագույնը 1,000 տոննա է արտադրությունը): (13 ռեսպոնդենտ 48-ից):
- Բերքատվությունը բարձր է: Կլիման բարենպաստ է արտադրության համար, յուրահատուկ համ ունի: Կա արտադրելու փորձ, հարմար բնակլիմայական պայմաններ եւ քիչ թե շատ կայուն բերք է ապահովվում: (9 ռեսպոնդենտ 48-ից):

<u>Թուզ եւ այլ մերձարեւադարձային ապրանքներ</u>

- Մշակությունը սահմանափակ է, պահանջարկը մեծ է: Իրացումը հեշտ է՝ գները կայուն բարձր են: Առկա է արտահանման պոտենցիալ դեպի Ռուսաստան: (23 ռեսպոնդենտ 48-ից):
- Անձրեւները չեն վնասում, պտուղը միանգամից է դուրս գալիս եւ երկար է բերք տալիս: Արտադրելու պայմանները բարենպաստ են, մշակությունը հեշտ է եւ քիչ ծախսատար է: Դիմացկուն պտուղ է: Առկա է արտադրելու փորձ: Բերքատվությունը բարձր է եւ բույսը հարմարված է մարզի կլիմային: Ուշ է ծաղկում, կլիմայի փոփոխությունը չի ազդում, ցրտադիմացկուն է: (13 ռեսպոնդենտ 48-ից):
- Համային հատկությունները շատ բարձր են: Էկոլոգիապես մաքուր է: Հարմար է պահածոյացման համար: (8 ռեսպոնդենտ 48-ից):

- Կիվին թանկ եւ մեծ պահանջարկ ունեցող ապրանք է: Ներմուծվում է մեծ քանակությամբ եւ հնարավոր է ներկրման փոխարինում իրականացնել: Նոր ապրանք է Հայաստանի համար:
- Նուռը արտադրվում է սահմանափակ քանակով, պահանջարկը մեծ է: Գները բարձր են: Հնարավոր է ներմուծման փոխարինում:

<u>Ծխախոտ</u>

- Գործում են մթերման կետեր, պահանջարկն առկա է: Մթերման գներն ընդհանուր առմամբ ընդունելի են: Մասնավոր ֆինանսավորում ունեցող ծրագիր է: (23 ռեսպոնդենտ 37-ից):

- Ավանդաբար զարգացած գյուղատնտեսական ոլորտներից մեկն է դեռեւս խորհրդային ժամանակաշրջանից: Բնակլիմայական պայմանները բարենպաստ են, բերքատվությունը բարձր է: (7 ռեսպոնդենտ 37-ից):
- Հեշտ է մշակելը: Աշխատանքային պրոցեսը քիչ է, կանաչ ընդունում են: Բերքատվությունը բարձր է, վեգետացիոն ժամանակահատվածը երկար է: (3 ռեսպոնդենտ 37-ից):

Հատապտուղներ

- Անտառներում առկա են մեծ քանակությամբ: Եթե չի հավաքվում, ապա անիմաստ փչանում է: Մարզի բնությունը եւ անտառների շատությունը նպաստավոր պայմաններ են ստեղծում: (16 ռեսպոնդենտ 36-ից):
- Հեշտ է իրացնելը, կարելի է նաեւ փոխանակել այլ անհրաժեշտ ապրանքների հետ: Պահանջարկն առկա է, վերամշակող գործարանները մթերում են: Ինտենսիվ պահանջարկ է ներկայացնում «Թամարա-Ֆրութ» կազմակերպությունը: (11 ռեսպոնդենտ 36-ից):
- Բարձրորակ է, օրգանիկ արտադրության պայմաններ են, համահոտային հատկությունները շատ բարձր են, գները էժան են: Բրենդ է, անտառային մաքուր մթերք է: (7 ռեսպոնդենտ 36-ից):

Հոն

- Պահանջարկը շատ մեծ է, գործարանները եւ վերավաճառողները մթերում են: (14 ռեսպոնդենտ 35-ից):
- Անտառներում առկա են մեծ քանակությամբ: Եթե չի հավաքվում, ապա անիմաստ փչանում է: Մարզի բնությունը եւ անտառների շատությունը նպաստավոր պայմաններ են ստեղծում: Հեշտ է մշակվում, ջրի նկատմամբ մեծ պահանջ չունի: (12 ռեսպոնդենտ 36-ից):
- Բուժական հատկություններ ունեցող բարձրորակ ապրանք է: (9 ռեսպոնդենտ 36-ից):

Մեղր

- Անտառային եւ ծաղիկներով առատ գոտիները շատ են: Լորենին շատ է մարզում, իսկ լավագույն մեղրը լինում է լորենուց: Գյուղում, բարձրադիր արոտներում, հեռագնա արոտներում տեղափոխելով լավ բերք է ստացվում: Առկա է լիարժեք կերաբազա: Էկոլոգիապես մաքուր արտադրանք է: (20 ռեսպոնդենտ 30-ից):
- Պահանջարկը (հատկապես արտերկրում) մեծ է: Երբեմն, նույնիսկ պատվերներ են ընդունվում: (4 ռեսպոնդենտ 30-ից):

Ներկայացված վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ ռեսպոնդենտների հիմնավորումները կարելի է դասակարգել հետեւյալ մեծ խմբերի՝ առկա շուկայական պահանջարկ, արտադրության նպաստավոր պայմաններ եւ արտադրանքի բարձր որակական հատկանիշներ: Հատուկ ուշադրության են արժանի այն ապրանքները, որոնց մոտ միաժամանակ առկա են բոլոր երեք նախապայմանները:

2.3.2.2 Վերամշակված արտադրանք

Մրգաջրեր

- Առկա է մեծ պահանջարկ: Հնարավոր է արտադրություն կազմակերպել՝ զարգացնելով ներկայիս տնայնագործական պայմանները: Այս ապրանքը շուկայական բարձր գներով է իրացվում: Արտադրության ծավալները քիչ են, պահանջարկը՝ մեծ: (22 ռեսպոնդենտ 60-ից):
- Չափավոր օգտագործման պարագայում ունեն բուժիչ եւ առողջարար հատկություններ: (13 ռեսպոնդենտ 60-ից):

- Արտահանելու հնարավորություններ կան: Ռուսաստանում եւ հայաբնակ այլ երկրներում բավականին լուրջ պահանջարկ կա: Կարելի է թիրախել հայկական սփյուռքը: (11 ռեսպոնդենտ 60-ից):
- Արտադրանքը մաքուր եւ բարձրորակ է, համահոտային հատկանիշները շատ լավն են: Հատուկ ապրանք է համարվում Հայաստանում: (7 ռեսպոնդենտ 60-ից):

Պանիր

- Կենդանիները պահվում են ալպիական գոտիներում, որտեղ անասնակերը առատ է եւ բազմազան: Լավ հումքից բարձ յուղայնությամբ պանիր է ստացվում: Էկոլոգիապես մաքուր արտադրանք է, այլ հավելումներ չկան: (23 ռեսպոնդենտ 59-ից):
- Իրացում կա եւ տնտեսապես շահավետ է արտադրելը: Հատկապես իրացումները բարձր են ձմռանը: Ներքին շուկայում եւ արտերկրում մեծ պահանջարկ կա: (17 ռեսպոնդենտ 59-ից):
- Բնական եւ մաքուր հումքից նորագույն տեխնոլոգիաներով արտադրված արտադրանքը արտասահմանում մեծ պահանջարկ կունենա: Միջազգային շուկայում կաթնամթերքը թանկացել է, պետք է շատ արտադրել, որ էժանանա: Մոսկվայից պատվերներ կան, գնորդները պատրաստ են նույնիսկ ամենացածրորակն էլ տանել: Հեռանկար կա նաեւ Եվրոպա արտահանելու: Մի ժամանակ Վրաստանից շատ էին տանում խաչապուրիի համար, բացի այդ տուրիստներն էլ են շատ հավանում: (6 ռեսպոնդենտ 59-ից):

Չրեր

- Մեծ պահանջարկ կա: Կոնկրետ մրգատեսակները այլ մարզերում չեն աճում եւ այդ մրգերի չիրերի համար պահանջարկ է ձեւավորվել: Անհրաժեշտ է միայն ապրանքային տեսքի բերել: Իրացման լուրջ խնդիրներ չկան, էներգետիկ մեծ ծախսեր չկան, արհեստավարժ մասնագետներ չեն պահանջվում: Լավագույն դեպքում ապահովում են շուկայական պահանջարկի 30%-ը (18 ռեսպոնդենտ 55-ից):
- Արտահանվում է, քանի որ հումքը լավն է եւ լավ արտադրանք է ստացվում: Հատկապես Ռուսաստանում վաճառելու լավ ներուժ կա: (13 ռեսպոնդենտ 55-ից):
- Բնական է եւ համեղ: Հումքը շատ է եւ որակյալ արտադրանք է ստացվում: Տնական պայմաններում շատ համեղ չիր է պատրաստվում եւ իրացվում: Առողջարար է եւ էկոլոգիապես մաքուր: Օգտակար է սրտանոթային հիվանդությունների դեմ: (12 ռեսպոնդենտ 55-ից):

Գինի եւ կոնյակ

- Գործող գործարաններ կան, արտադրանքը կայացած բրենդ է եւ լավ է ճանաչված: Ձեւավորվել է կայուն պահանջարկ՝ նաեւ արտերկրում: Ծուկայական գները բավականին բարձր են: (14 ռեսպոնդենտ 50-ից):
- Արտադրանքը բարձրորակ է, ունի համահոտային բարձր հատկանիշներ: Կան ձեւավորված շուկաներ: Որակով են, գինու արտահանման պահանջարկի մոտ 20%-ն է ապահովվում: (10 ռեսպոնդենտ 50-ից):
- Հումքը շատ է եւ որակյալ: Սպիտակ գինին ճանաչված է նաեւ արտերկրում: Մշակվող խաղողը (Ռկածիթելի) հիմնականում հատուկ գինու, կոնյակի եւ շամպայնի համար է: (8 ռեսպոնդենտ 50-ից):
- Գինու արտադրությունը վերամշակման ավանդաբար զարգացած ոլորտներից մեկն է Տավուշի մարզում (6 ռեսպոնդենտ 50-ից):

Քաղցր պահածոներ

- Էկոլոգիապես մաքուր արտադրանք է: Պահածոները ապրանքային բավարար տեսք ունեն: Համային հատկանիշները շատ բարձր են: Արտահանման փորձառությունն առկա է: Նաեւ առողջարար է: (17 ռեսպոնդենտ 39-ից):
- Առկա է շուկայական բավականին մեծ պահանջարկ: Հատկապես ներուժ ունեն Ռուսաստանի եւ հայաբնակ այլ պետությունների շուկաները: Մարզում կայուն գործում են մթերման կետեր: (15 ռեսպոնդենտ 39-ից):
- Հումքը շատ է, պահանջարկը նույնպես: Քանի որ հումքը լավն է, արտադրանքի որակը բարձր է: (5 ռեսպոնդենտ 39-ից):

Ռեսպոնդենտների հիմնավորումները կրկին կարելի է դասակարգել 3 հիմնական խմբերի. շուկայական պահանջարկ եւ արտահանման հնարավորություններ, բարձրորակ արտադրանք եւ արտադրության նպաստավոր պայմաններ ու հումքի առկայություն:

2.3.3 Արտադրության եւ արտահանման խոչընդոտները եւ դրանց հաղթահարման ուղիները

Չնայած ընտրված ապրանքների արտահանման ներուժին Տավուշի մարզում առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք մեծապես խոչընդոտում են հետագա զարգացումը: Այս խոչընդոտների մի մասն ընդհանուր է բոլոր մարզերի համար, մյուս մասը՝ հատուկ է հենց Տավուշի մարզի համար: Հետազոտության արդյունքում ռեսպոնդենտներից ստացվել տասնյակ կարծիքներ յուրաքանչյուր ընտրված ներուժային ապրանքի մասով: Ստացված պատասխանները մշակվել են, խմբավորվել, հանվել են խիստ սուբյեկտիվ եւ հետազոտության խնդրի հետ կապ չունեցող կարծիքները: Կոնկրետ ապրանքների մասով արտադրության եւ արտահանման խոչընդոտներին անդրադարձ է կատարվել հաջորդիվ:

Խաղող

Խոչընդոտներ	Հաղթահարման միջոցառումներ
▪ Մթերման գները ցածր են ▪ Մթերողները պայմանագրային քանակներից ավել չեն ընդունում ▪ Շուկայական գինը զգալի բարձր է մթերման գնից ▪ Իրացման խնդիրներ կան	➥ *Ներդնել մթերումների ճկուն սխեմաներ* ➥ *Ապահովել մրցակցություն վերամշակողների եւ մթերողների միջեւ* ➥ *Պետականորեն վերահսկել մթերման գները* ➥ *Առաջարկել բերքի իրացման այլընտրանքային եղանակներ* ➥ *Բարձրացնել մթերման գները*
▪ Այգիները հին են եւ նոսրացած ▪ Նոր այգիների հիմնումը թանկ է, ֆինանսներ չկան ▪ Այգիները հատվում են ▪ Բերքատվությունը ցածր է ▪ Սորտաթարմացում չի կատարվում ▪ Ֆիլոքսերադիմացկուն տնկիներն անբավարար են	➥ *Ֆինանսավորել նոր այգիների հիմնումը (պետական եւ դոնորների միջոցներով)* ➥ *Սուբսիդավորել նոր այգիների հիմնումը* ➥ *Ստեղծել նոր տնկարկներ, կիրառել ճիշտ ագրոտեխնիկա, թարմացնել սորտերը* ➥ *Հիմնել տնկարաններ (ֆիլոքսերադիմացկուն տնկիների)* ➥ *Ապահովել մատչելի վարկային ռեսուրսներ*
▪ Բուժանյութերը եւ պարարտանյութերը թանկ են, անորակ են, հին են եւ ուշացումով են բերում	➥ *Տրամադրել էժան եւ որակյալ բուժանյութեր եւ պարարտանյութեր* ➥ *Ապահովել դեղորայքի դոզաների համապատասխանությունը լիցենզիաներին* ➥ *Հիմնել մասնագիտացված խանութների ցանց, որտեղ նորմալ բուժանյութեր կվաճառվեն*
▪ Ոռոգման ջուրն անբավարար է ▪ Ոռոգման ջուրը թանկ է ▪ Ոռոգման ջուրն աղտոտված է	➥ *Կառուցել եւ վերականգնել ոռոգման համակարգերը* ➥ *Ջրարբիացնել հողերը* ➥ *Ջրի վճարը հավաքել աշնանը* ➥ *Վերահսկել գետերի արտանետումները հանքային ձեռնարկությունների*

	պոչամբարներից
▪ Ֆերմերները չեն կարողանում միայնակ հաղթահարել խնդիրները ▪ Բերքի ծավալները փոքր են ▪ Տեղափոխումը թանկ է ▪ Հողերի մասնատված են	➥ *Միավորել ֆերմերներին ընդհանուր խնդիրների լուծման ուղղությամբ* ➥ *Խոշորացնել տնտեսությունները* ➥ *Ստեղծել միություններ* ➥ *Ստեղծել մթերման եւ դիստրիբուցիոն կազմակերպություն*
▪ Այգիները ճիշտ չեն մշակում ▪ Հիվանդությունները շատ են	➥ *Կիրառել ճիշտ ագրոտեխնիկա* ➥ *Հիմնել զանգվածային այգիներ*
▪ Գյուղատնտեսական տեխնիկան անբավարար է ▪ Ձեռքի մշակությունը շատ է	➥ *Ներդնել գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման ֆինանսական մեխանիզմներ*
▪ Գնորդները եւ մթերողները բավարար գինված չեն	➥ *Հիմնել փոքր վերամշակող կառույցներ (սառնարաններ, պահածոների արտադրամասեր, մթերման կետեր, մրգօդիների արտադրություն) եւ դրանք գինել անհրաժեշտ սարքավորումներով:*
▪ Հարկային վարչարարությունը վատն է ▪ Մրցակցությունն անհավասար է ▪ Տեղական արտադրանքը մրցունակ չե ներմուծվածի նկատմամբ ▪ Միջնորդների եւ վերավաճառողների պահվածքն անազնիվ է	➥ *Բարելավել հարկային վարչարարությունը* ➥ *Ապահովել հավասարություն* ➥ *Համակարգել պետական եւ դոնորների միջամտությունը* ➥ *Ավելացնել գյուղացիների շահույթները միջնորդների հաշվին*
▪ Հողատարածքները սահմանամերձ են, ականապատված են եւ գնդակոծվում են ▪ Ֆինանսական միջոցներն անբավարար են	➥ *Ականազերծել տարածքները* ➥ *Ներգրավել ներդրումներ*
▪ Պահպանման եւ տեղափոխման խնդիր կան ▪ Ճանապարհները շատ վատն են Բերդի տարածաշրջանում	➥ *Սառնարանային տնտեսություն ստեղծել Բերդի տարածաշրջանում* ➥ *Վերանորոգել գյուղերի ճանապարհները*
▪ Հակակարկտային կայանների բացակայությունը	➥ *Հիմնել կարկտակայաններ*
▪ Մասնագիտական գիտելիքներն անբավարար են	➥ *Անցկացնել դասընթացներ*
▪ Հողի հարկը բարձր է	➥ *Արտոնություններ տրամադրել նոր այգիներ հիմնողներին* ➥ *Պակասեցնել ջրի վարձը*

Տավարի միս

Խոչընդոտներ	Հաղթահարման միջոցառումներ
▪ Անասնաբուժական խնդիրներ կան ▪ Սրսկումները եւ դեղորայքը հասանելի չեն ▪ Անասնաբուժական միջոցառումներ չեն արվում ▪ Անասնաբուժական որակով ծառայություններ հեռավոր արոտավայրերում չկան	➥ *Ապահովել դեղորայքի հասանելի եւ ազատ վաճառքը* ➥ *Ապահովել ժամանակին եւ որակյալ անասնաբուժական ծառայությունների մատուցումը*
▪ Համաճարակները շատ են ▪ Դեղորայքի հասանելիությունը ցածր է ▪ Անասնաբուժական միջոցառումները ժամանակին չեն իրականացվում ▪ Վակցիններն անորակ են	➥ *Վերականգնել դեղորայքի պետպատվերները* ➥ *Ապահովել որակյալ վակցիններ եւ անասնաբուժական դեղորայք* ➥ *Վակցինները տրամադրել ժամանակին:* ➥ *Ապահովել մատչելի վարկային ռեսուրսներ*
▪ Անասունների գլխաքանակը քիչ է ▪ Անասնակերը թանկ է	➥ *Ապահովել մատչելի վարկային ռեսուրսներ* ➥ *Տրամադրել անասուններ* ➥ *Զարգացնել ԽԵԱ բուծությունը*
▪ Հեռագնա արոտավայրերի ճանապարհները վատ են ▪ Ինտենսիվ օգտագործմամբ դեգրադացվում են մոտակա արոտավայրերը ▪ Արոտավայրերը ջրարբիացված չեն ▪ Սարերում կացարաններ եւ հոսանք չկան	➥ *Բարելավել հեռագնա արոտավայրերի ճանապարհները* ➥ *Համալիր ծրագրեր իրականացնել* ➥ *Ջրարբիացնել հեռագնա արոտավայրերը* ➥ *Տրամադրել գյուղատնտեսական տեխնիկա* ➥ *Արոտավայրերում կառուցել կացարաններ եւ էլեկտրաֆիկացնել դրանք* ➥ *Արոտավայրերում ջուր ապահովել*

▪ Նոր տոհմային տեսակների պակաս կա ▪ Արհեստական սերմնավորում չի կատարվում ▪ Տեղական սորտերի կաթնատվությունը եւ մսատվությունը ցածր է	➥ *Նոր տոհմային ցեղեր ներկրել եւ տրամադրել* ➥ *Մսատու կամ կաթնատու ցեղի անասուններ տրամադրել ֆերմերներին* ➥ *Տոհմային գործ իրականացնել*
▪ Կերը քիչ է եւ թանկ, կերաբազան թույլ է ▪ Հեռագնա արոտավայրերի օգտագործումը դժվար է	➥ *Տրամադրել դոտացիաներ, պետականորեն աջակցել* ➥ *Տեղում ընդլայնել կերարտադրությունը* ➥ *Վերականգնել հեռավոր արոտավայրերի ճանապարհները* ➥ *Ապահովել մատչելի վարկային ռեսուրսներ*
▪ Ֆինանսներն անբավարար են ▪ Կենդանիներ չեն կարողանում գնել	➥ *Ապահովել մատչելի վարկային ռեսուրսներ* ➥ *Համալիր գյուղատնտեսական ծրագրեր իրականացնել համայնքներում*
▪ Իրացման դժվարություններ կան ▪ Մթերման կետեր չկան ▪ Միսը տնօրինում են վերավաճառողները ▪ Շուկան կայուն չէ	➥ *Տեղերում ստեղծել մսի մթերման եւ վերամշակման փոքր կետեր* ➥ *Հիմնել սպանդանոցներ* ➥ *Նոր շուկաներ գտնել արտադրանքի իրացման համար* ➥ *Շուկաների եւ գների հետ կապված տեղեկատվություն տրամադրել* ➥ *Պայմանագրային հարաբերություններ հաստատել գնորդների հետ*
▪ Գիտելիքներն անբավարար են	➥ *Անցկացնել դասընթացներ*
▪ Գյուղտեխնիկան անբավարար է եւ հին	➥ *Տրամադրել գյուղտեխնիկա՝ հատկապես տրակտորներ եւ կոմբայններ*
▪ Հարկային վարչարարությունը վատն է ▪ Մրցակցությունն անհավասար է ▪ Տեղական արտադրանքը մրցունակ չե ներմուծվածի նկատմամբ ▪ Միջնորդների եւ վերավաճառողների պահվածքն անազնիվ է	➥ *Բարելավել հարկային վարչարարությունը* ➥ *Ապահովել հավասարություն* ➥ *Համակարգել պետական եւ դոնորների միջամտությունը* ➥ *Ավելացնել գյուղացիների շահույթները միջնորդների հաշվին*

Արքայանարինջ

Խոչընդոտներ	Հաղթահարման միջոցառումներ
▪ Այգիները քիչ են ▪ Ոռոգումն անբավարար է ▪ Նոր այգիների հիմնումը թանկ է, ֆինանսներ չկան	➥ *Ֆինանսավորել նոր այգիների հիմնումը դոնորների միջոցներով* ➥ *Ստեղծել տնկարաններ եւ տրամադրել որակյալ տնկիներ* ➥ *Հիմնել նոր այգիներ* ➥ *Վերականգնել ոռոգման համակարգերը* ➥ *Արտեզյան ջրհորների միջոցով հիմնել ինքնահոս ոռոգման համակարգ*
▪ Բուժանյութերի որակն անբավարար է ▪ Հողակտորները փոքր են, դժվար է մշակել ▪ Բուժանյութերը եւ պարարտանյութը թանկ են	➥ *Ստեղծեն ֆերմերների միություններ* ➥ *Պահպանել դեղորայքին վերաբերող օրենսդրական պահանջները* ➥ *Տրամադրել որակյալ բուժանյութեր եւ պարարտանյութ* ➥ *Կառուցել եւ վերականգնել ոռոգման համակարգերը*
▪ Ֆերմերների մասնագիտական եւ շուկայավարման գիտելիքներն անբավարար են ▪ Օրենսդրական տեղեկատվությունն ու գիտելիքները անբավարար են ▪ Շուկայական տեղեկատվությունն անբավարար է	➥ *Անցկացնել դասընթացներ մասնագիտական եւ շուկայավարման թեմաներով* ➥ *Անցկացնել դասընթացներ օրենսդրական, հարկային եւ մաքսային թեմաներով* ➥ *Տրամադրել շուկայական տեղեկատվություն*
▪ Գյուղատնտեսական տեխնիկան անբավարար է	➥ *Ապահովել գյուղատնտեսական տեխնիկա* ➥ *Ներդնել գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման ֆինանսական մեխանիզմներ*
▪ Իրացման շուկաները դժվար հասանելի են ▪ Փոքր ֆերմերները իրացման խնդիր ունեն ▪ Արտադրանքը շատ է փչանում ▪ Մթերման կետ չկա ▪ Դժվար է բերքի պահեստավորելը	➥ *Տեղերում հիմնել փոքր մթերման կետեր* ➥ *Տեղերում հիմնել փոքր վերամշակման կետեր* ➥ *Ստեղծել չրի արտադրամասեր* ➥ *Գտնել նոր շուկաներ* ➥ *Սահմանել մթերման կայուն եւ բարձր գներ՝ խթանելով արտադրությունը*
▪ Կարկուտը վնասում է, բնակլիմայական պայմանները անբարենպաստ են	➥ *Տեղադրել հակակարկտային կայաններ*
▪ Հարկային վարչարարությունը վատն է	➥ *Բարելավել հարկային վարչարարությունը*

▪ Մրցակցությունն անհավասար է ▪ Տեղական արտադրանքը մրցունակ չե ներմուծվածի նկատմամբ ▪ Միջնորդների եւ վերավաճառողների պահվածքն անազնիվ է	➥ *Ապահովել հավասարություն* ➥ *Համակարգել պետական եւ դոնորների միջամտությունը* ➥ *Ավելացնել գյուղացիների շահույթները միջնորդների հաշվին*
▪ Հողի հարկը բարձր է	➥ *Արտոնություններ տրամադրել նոր այգիներ հիմնողներին* ➥ *Պակասեցնել ջրի վարձը*
▪ Ֆինանսական միջոցներն անբավարար են	➥ *Իրականացնել համալիր ծրագրեր* ➥ *Ապահովել մատչելի վարկային ռեսուրսներ* ➥ *Տրամադրել անտոկոս փոքր վարկեր*

Դեղձ

Խոչընդոտներ	Հաղթահարման միջոցառումներ
▪ Այգիները քիչ են ▪ Այգիները ճիշտ չեն մշակվում ▪ Նոր այգիների հիմնումը թանկ է, ֆինանսներ չկան ▪ Հակակարկտային միջոցառումներ չկան	➥ *Հիմնել նոր այգիներ պետական աջակցությամբ* ➥ *Կիրառել նոր ագրոտեխնիկա, կաթիլային ոռոգում,* ➥ *Օգտագործել գաճաճ սորտեր՝ բարձր բերքատվությամբ* ➥ *Կիրառել կարկտապաշտպան ցանցեր, հակակարկտային կայաններ* ➥ *Հիմնել տնկարաններ* ➥ *Հիմնել զանգվածային այգիներ* ➥ *Տրամադրել մասնագիտական խորհրդատվություն*
▪ Իրացման խնդիրներ կան ▪ Գները ցածր են ▪ Արտադրանքը երկար չի պահվում, գյուղացին ստիպված ցածր գնով է վաճառում ▪ Տեղափոխման ծախսերը մեծ են	➥ *Պետականորեն վերահսկել մթերման գները* ➥ *Հիմնել մթերման կետեր* ➥ *Հիմնել վերամշակող փոքր ձեռնարկություններ՝ չորանոցներ*
▪ Ֆինանսական միջոցներ չկան երկարաժամկետ ներդրումներ անելու համար:	➥ *Ապահովել մատչելի ֆինանսական ռեսուրսներ* ➥ *Տրամադրել երկարաժամկետ վարկեր*
▪ Ոռոգումն անբավարար է ▪ Ոռոգովի հողերը քիչ են	➥ *Ստեղծել ինքնահոս ոռոգման համակարգեր* ➥ *Անցկացնել նոր ջրագծեր, վերանորոգել հները* ➥ *Վերահսկել գետերի ջրերի աղտոտվածությունը* ➥ *Պլանավորել ջրի օգտագործումը եւ ապահովել մատակարարման հուսալիությունը*
▪ Արտահանելը արհեստականորեն խոչընդոտվում է	➥ *Ապահովել ազատ եւ հեշտացված արտահանում* ➥ *Ապահովել, որ մենաշնորհ չլինի* ➥ *Պակասեցնել եւ հեշտացնել թղթատարությունը*
▪ Բուժանյութերը թանկ են եւ չկան	➥ *Տրամադրել բուժանյութեր* ➥ *Ստեղծել երաշխավորված բուժանյութերի խանութների ցանց*
▪ Գյուղտեխնիկայի, տրանսպորտային պարկը անբավարար են	➥ *Տրամադրել գյուղատնտեսական տեխնիկա* ➥ *Ներդնել գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման ֆինանսական մեխանիզմներ*
▪ Ֆերմերների մասնագիտական եւ շուկայավարման գիտելիքներն անբավարար են ▪ Ֆերմերների օրենսդրական տեղեկատվությունն ու գիտելիքները անբավարար են ▪ Շուկայական տեղեկատվությունն անբավարար է	➥ *Անցկացնել դասընթացներ մասնագիտական եւ շուկայավարման թեմաներով* ➥ *Անցկացնել դասընթացներ օրենսդրական, հարկային եւ մաքսային թեմաներով* ➥ *Տրամադրել շուկայական տեղեկատվություն*
▪ Հարկային վարչարարությունը վատն է ▪ Մրցակցությունն անհավասար է ▪ Տեղական արտադրանքը մրցունակ չե ներմուծվածի նկատմամբ ▪ Միջնորդների եւ վերավաճառողների պահվածքն անազնիվ է	➥ *Բարելավել հարկային վարչարարությունը* ➥ *Ապահովել հավասարություն* ➥ *Համակարգել պետական եւ դոնոր միջամտությունը* ➥ *Ավելացնել գյուղացիների շահույթները միջնորդների հաշվին*
▪ Հողի անալիզի, բույսերի բուժման խորհրդատվության կարիք կա	➥ *Ստեղծել բույսերի պաշտպանության կայան* ➥ *Փորձարկել թունաքիմիկատները*

▪ Հողի հարկը բարձր է	➥ *Արտոնություններ տրամադրել նոր այգիներ հիմնողներին* ➥ *Իջեցնել ջրի վարձը*

Թուզ եւ այլ մերձարեւադարձային պտուղներ

Խոչընդոտներ	Հաղթահարման միջոցառումներ
▪ Այգիները քիչ են ▪ Նոր այգիների հիմնումը թանկ է, ֆինանսներ չկան ▪ Հակակարկտային միջոցառումներ չկան	➥ *Ֆինանսավորել նոր այգիների հիմնումը դոնորների միջոցներով* ➥ *Ստեղծել տնկարաններ եւ տրամադրել որակյալ տնկիներ* ➥ *Հիմնել նոր այգիներ* ➥ *Վերականգնել ոռոգման համակարգերը* ➥ *Հիմնել տնկարաններ* ➥ *Ապահովել մատչելի վարկային ռեսուրսներ* ➥ *Հիմնել կարկտակայաններ*
▪ Իրացման խնդիրներ կան, շուկան հեռու է ▪ Գները ցածր են ▪ Արտադրանքը երկար չի պահվում, գյուղացին ստիպված ցածր գնով է վաճառում ▪ Մեծ քանակներ հնարավոր չէ վաճառել ▪ Գնորդների հզորությունները փոքր են ▪ Տեղափոխման ծախսերը մեծ են	➥ *Ստեղծել մթերման կետեր* ➥ *Ստեղծել սառնարաններ, վերամշակման փոքր արտադրամասեր եւ չորանոցներ, տրամադրել ժամանակակից սարքավորումներ* ➥ *Հայտնաբերել նոր շուկաներ* ➥ *Ապահովել ազատ արտահանման հնարավորություններ*
▪ Ծառերի սորտերը հին են, տեսականին քիչ է	➥ *Ներկրել նոր սորտեր, տեղայնացնել եւ տրամադրել ֆերմերներին* ➥ *Հիմնել տնկարաններ եւ ծրագրերի միջոցով որակյալ տնկիներ տրամադրել*
▪ Ֆինանսական միջոցներն անբավարար են ▪ Չկան երկարաժամկետ վարկեր	➥ *Ապահովել մատչելի ֆինանսական ռեսուրսներ երկարաժամկետ ներդրումային ծրագրեր իրականացնելու համար*
▪ Ոռոգումն անբավարար է ▪ Ոռոգովի հողերը քիչ են	➥ *Կառուցել եւ վերականգնել ոռոգման համակարգը* ➥ *Ապահովել մատչելի ֆինանսական ռեսուրսներ*
▪ Բուժանյութերը թանկ են	➥ *Ապահովել մատչելի եւ որակյալ բուժանյութեր*
▪ Հարկային վարչարարությունը վատն է ▪ Մրցակցությունն անհավասար է ▪ Տեղական արտադրանքը մրցունակ չե ներմուծվածի նկատմամբ ▪ Միջնորդների եւ վերավաճառողների պահվածքն անազնիվ է	➥ *Բարելավել հարկային վարչարարությունը* ➥ *Ապահովել հավասարություն* ➥ *Համակարգել պետական եւ դոնոր միջամտությունը* ➥ *Ավելացնել գյուղացիների շահույթները միջնորդների հաշվին*
▪ Արտահանումը արհեստականորեն խոչընդոտվում է	➥ *Ապահովել ազատ եւ հեշտացված արտահանում*
▪ Ֆերմերների մասնագիտական եւ շուկայավարման գիտելիքներն անբավարար են ▪ Շուկայական տեղեկատվությունն անբավարար է	➥ *Անցկացնել դասընթացներ մասնագիտական եւ շուկայավարման թեմաներով* ➥ *Տրամադրել շուկայական տեղեկատվություն*

Կաթ

Խոչընդոտներ	Հաղթահարման միջոցառումներ
▪ Անասնագլխաքանակը քիչ է եւ նվազում է	➥ *Աջակցել գլխաքանակի ավելացմանը* ➥ *Ապահովել մատչելի վարկային ռեսուրսներ* ➥ *Հալիր ծրագրերով տրամադրել տոհմային կաթնամատու ցեղեր*
▪ Իրացման շուկաները դժվար հասանելի են ▪ Մթերման գները ցածր են, շուկան մենաշնորհային է («Աշտարակ-Կաթ») ▪ Մթերողները չեն կարողանում կաթը փաստաթղթով գնել	➥ *Հիմնել վերամշակման կետեր* ➥ *Իրականացնել շուկայի հետազոտություն* ➥ *Նոր շուկաներ հայտնաբերել* ➥ *Մթերողների հետ պայմանագրային հարաբերություններ հաստատել* ➥ *Մրցակցություն ապահովել մթերողների մեջ* ➥ *Ստեղծել նորմալ լաբորատորիաներ*
▪ Նոր տոհմային տեսակների պակաս կա ▪ Արհեստական սերմնավորում չի կատարվում	➥ *Նոր տոհմային ցեղեր ներկրել եւ տրամադրել* ➥ *Մսատու կամ կաթնատու ցեղի անասուններ տրամադրել ֆերմերներին*

▪ Տեղական սորտերի կաթնատվությունը ցածր է	➥ *Տոհմային գործ իրականացնել*
▪ Համաճարակները շատ են ▪ Դեղորայքի հասանելիությունը ցածր է ▪ Անասնաբուժական միջոցառումները ժամանակին չեն իրականացվում ▪ Վակցիններն անորակ են ▪ Պետպատվերները պակասել են	➥ *Վերականգնել դեղորայքի պետպատվերները* ➥ *Ապահովել որակյալ վակցիններ եւ անասնաբուժական դեղորայք* ➥ *Վակցինները տրամադրել ժամանակին* ➥ *Ապահովել ժամանակին եւ որակյալ անասնաբուժական ծառայությունների մատուցումը*
▪ Հեռագնա արոտավայրերի ճանապարհները վատ են ▪ Ինտենսիվ օգտագործմամբ դեգրադացվում են մոտակա արոտավայրերը ▪ Արոտավայրերը ջրարբիացված չեն ▪ Սարերում կացարաններ եւ հոսանք չկան	➥ *Բարելավել հեռագնա արոտավայրերի ճանապարհները* ➥ *Համալիր ծրագրեր իրականացնել* ➥ *Ջրարբիացնել հեռագնա արոտավայրերը* ➥ *Տրամադրել գյուղատնտեսական տեխնիկա* ➥ *Արոտավայրերում կառուցել կացարաններ եւ էլեկտրաֆիկացնել դրանք* ➥ *Արոտավայրերում ջուր ապահովել*
▪ Գյուղտեխնիկան անբավարար է եւ հին	➥ *Տրամադրել գյուղտեխնիկա՝ հատկապես խոտհնձիչներ* ➥ *Ներդնել գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման ֆինանսական մեխանիզմներ*
▪ Ֆինանսներն անբավարար են ▪ Կենդանիներ չեն կարողանում գնել	➥ *Ապահովել մատչելի վարկային ռեսուրսներ* ➥ *Համալիր գյուղատնտեսական ծրագրեր իրականացնել համայնքներում*

Հատապտուղներ

Խոչընդոտներ	Հաղթահարման միջոցառումներ
▪ Իրացումների դժվարությունները՝ հատկապես մեծ քանակների դեպքում ▪ Մթերման կետերն անբավարար են ▪ Մթերման գները ցածր են ▪ Տեղափոխման ծախսերը մեծ են	➥ *Հիմնել մթերման կետեր, որոնք կաշխատեն կանխավճարային սկզբունքով* ➥ *Հիմնել պահպանման եւ վերամշակման կառույցներ՝ սառնարաններ, պահածոների եւ մրգօդիների արտադրամասեր* ➥ *Զինել նշված կառույցներն անհրաժեշտ սարքավորումներով* ➥ *Հայտնաբերել նոր շուկաներ*
▪ Արտահանումը արհեստականորեն խոչընդոտվում է (դեպի Վրաստան)	➥ *Ապահովել ազատ եւ հեշտացված արտահանում*
▪ Այգիները քիչ են ▪ Նոր այգիների հիմնումը թանկ է, ֆինանսներ չկան ▪ Որակյալ տնկիների կարիք կա	➥ *Տրամադրել տնկիներ* ➥ *Հիմնել նոր այգիներ* ➥ *Վերականգնել ոռոգման համակարգերը* ➥ *Ապահովել մատչելի վարկային ռեսուրսներ* ➥ *Ուղղորդել մարդկանց իրենց գործունեության մեջ*
▪ Ֆինանսական միջոցներն անբավարար են	➥ *Ապահովել մատչելի ֆինանսական ռեսուրսներ երկարաժամկետ ներդրումային ծրագրեր իրականացնելու համար* ➥ *Տրամադրել անտոկոս փոքր վարկեր*
▪ Ֆերմերների մասնագիտական եւ շուկայավարման գիտելիքներն անբավարար են օրգանական գյուղատնտեսության բնագավառում	➥ *Անցկացնել դասընթացներ մասնագիտական եւ շուկայավարման թեմաներով* ➥ *Անցկացնել դասընթացներ օրգանական գյուղատնտեսության թեմաներով*

Հոն

Խոչընդոտներ	Հաղթահարման միջոցառումներ
▪ Իրացումների դժվարությունները՝ հատկապես մեծ քանակների դեպքում ▪ Մթերման կետերն անբավարար են ▪ Մթերման գները ցածր են ▪ Տեղափոխման ծախսերը մեծ են	➥ *Հիմնել մթերման կետեր, որոնք կաշխատեն կանխավճարային սկզբունքով* ➥ *Հիմնել պահպանման եւ վերամշակման կառույցներ՝ սառնարաններ, պահածոների եւ մրգօդիների արտադրամասեր* ➥ *Զինել նշված կառույցներն անհրաժեշտ սարքավորումներով* ➥ *Հայտնաբերել նոր շուկաներ*
▪ Որակյալ տնկիների կարիք կա ▪ Ոռոգման համակարգն անբավարար է	➥ *Տրամադրել տնկիներ* ➥ *Հիմնել նոր այգիներ*

▪ Բերքի կորուստները հաճախակի են	➥ *Վերականգնել ոռոգման համակարգերը* ➥ *Կարգավորել ոռոգման ջրի ժամանակացույցը* ➥ *Հիմնել հակակարկտային կայաններ*
▪ Ֆինանսական միջոցներն անբավարար են	➥ *Ապահովել մատչելի ֆինանսական ռեսուրսներ* ➥ *Տրամադրել անտոկոս փոքր վարկեր*
▪ Ֆերմերների մասնագիտական եւ շուկայավարման գիտելիքներն անբավարար են ▪ Ֆերմերների օրենսդրական գիտելիքներն անբավարար են	➥ *Անցկացնել դասընթացներ մասնագիտական եւ շուկայավարման թեմաներով* ➥ *Անցկացնել դասընթացներ օրենսդրական թեմաներով*

Մեղր

Խոչընդոտներ	Հաղթահարման միջոցառումներ
▪ Մեղվափեթակները հին են ▪ Նոր մեղվափեթակները թանկ են ▪ Մեղվաթերթերը եւ մոմաթերթերը թանկ են	➥ *Տրամադրել նոր մեղվափեթակներ եւ այլ նյութեր* ➥ *Իրականացնել համալիր ծրագրեր* ➥ *Ապահովել մատչելի վարկային ռեսուրսներ*
▪ Բուժանյութերը թանկ է եւ անորակ ▪ Հիվանդությունների հսկողություն եւ բուժում չի իրականացվում	➥ *Ժամանակին ապահովել որակյալ եւ մատչելի բուժանյութեր* ➥ *Հիմնել բուժանյութերի մասնագիտացած խանութների ցանց* ➥ *Պետականորեն վերահսկել բուժանյութերի որակը եւ գները* ➥ *Իրականացնել մեղվաընտանիքների հիվանդությունների արդյունավետ վերահսկողություն* ➥ *Բարելավել կերաբազան, վերականգնել դաշտային եւ անտառային ճանապարհները*
▪ Իրացումների դժվարությունները՝ հատկապես մեծ քանակների դեպքում ▪ Արտահանումը արհեստականորեն խոչընդոտվում է	➥ *Ընդլայնել արտահանման հնարավորությունները, գտնել նոր շուկաներ* ➥ *Հիմնել մթերման եւ փաթեթավորման կետեր* ➥
▪ Ֆինանսական միջոցներն անբավարար են	➥ *Ապահովել մատչելի ֆինանսական ռեսուրսներ* ➥ *Տրամադրել անտոկոս փոքր վարկեր*
▪ Ֆերմերների մասնագիտական եւ շուկայավարման գիտելիքներն անբավարար են	➥ *Անցկացնել դասընթացներ մասնագիտական եւ շուկայավարման թեմաներով* ➥ *Տրամադրել շուկայական տեղեկատվություն*

Մրգօդիներ

Խոչընդոտներ	Հաղթահարման միջոցառումներ
▪ Ապրանքային տեսքն անբավարար է ▪ Փաթեթավորումն ու պիտակավորումն անբավարար են ▪ Գովազդ չի արվում	➥ *Տեղերում հիմնել շշալցման փոքր արտադրամասեր* ➥ *Ներդնել նոր տեխնոլոգիաներ եւ հոսքագծեր* ➥ *Իրականացնել արտադրանքի նորմալ փաթեթավորում եւ պիտակավորում*
▪ Իրացումներն անբավարար են ▪ Չի համապատասխանում արտահանման պահանջներին ▪ Շուկայավարումն անբավարար է	➥ *Իրացնել շուկայական հետազոտություններ (արտաքին)* ➥ *Տրամադրել շուկայական տեղեկատվություն* ➥ *Օժանդակել արտահանման հարցերում* ➥ *Կազմակերպել շուկայավարման դասընթացներ*
▪ Արտահանման խոչընդոտները շատ են ▪ Մաքսային կառույցները շատ են միջամտում եւ խնդիրներ առաջացնում ▪ Ներմուծվող ապրանքների հետ դժվար է մրցակցել	➥ *Ապահովել ազատ եւ հեշտացված արտահանում* ➥ *Բարելավել մաքսային վարչարարությունը* ➥ *Սահմանափակել ներմուծումը*
▪ Շուկան լճացած է ▪ Կիրառվող տեխնոլոգիաները հին են, պետք է վերազինվել ▪ Հումքի տեղափոխման ծախսերը մեծ են	➥ *Ներդնել ժամանակակից տեխնոլոգիաներ* ➥ *Ներդնել արտադրանքի ստանդարտներ* ➥ *Նոր սորտերի մրգերի մթերում* ➥ *Ապահովել մատչելի վարկային ռեսուրսներ*

Պանիր

Խոչընդոտներ	Հաղթահարման միջոցառումներ
▪ Հումքի (կաթի) քանակը քիչ է ▪ Անասնագլխաքանակը քիչ է ▪ Անասնագլխաքանակն ավելացնելու համար ֆինանսական ռեսուրսներն անբավարար են ▪ Հեռավոր արոտավայրերի ճանապարհները վատ վիճակում են, կաթի տեղափոխումը դժվար է	➥ *Ավելացնել ԽԵԱ գլխաքանակը* ➥ *Իրականացնել ինտենսիվ տոհմային գործ* ➥ *Զարգացնել սպառողական կոոպերատիվները* ➥ *Ապահովել մատչելի վարկային ռեսուրսներ* ➥ *Բարելավել անասնապահական ենթակառուցվածքները՝ ճանապարհները, եւ ապահովել կաթի ժամանակին տեղափոխումը*
▪ Կաթի հավաքման մեքենաները քիչ են ▪ Կաթի ստուգման լաբորատորիաներ չկան ▪ Կաթի պահպանման պայմաններն անբավարար են, սառնարանները քիչ են ▪ Տեխնոլոգիաները հնացած են	➥ *Տրամադրել կաթի հավաքման մեքենաներ* ➥ *Հիմնել լաբորատորիաներ, ավելացնել սառնարանները* ➥ *Ավելացնել փոքր մթերող եւ նախնական վերամշակող կետերի քանակը* ➥ *Վերագինել մթերող եւ վերամշակող կառույցները նորագույն սարքավորումներով*
▪ Իրացումներն անբավարար են՝ հատկապես ամռանը ▪ Ապրանքային տեսքն անբավարար է ▪ Շուկայական տեղեկատվությունն անբավարար է ▪ Շուկայավարումն անբավարար է	➥ *Կիրառել նորագույն տեխնոլոգիաներ* ➥ *Ստեղծել նորմալ փաթեթավորման արտադրամասեր, հնարավորություններ* ➥ *Բարելավել արտադրանքի արտաքին տեսքը* ➥ *Իրականացնել շուկայական հետազոտություններ* ➥ *Ստեղծել մասնագիտացած խանութների ցանց* ➥ *Տրամադրել շուկայական տեղեկատվություն* ➥ *Հայտնաբերել իրացման նոր հնարավորություններ եւ շուկաներ* ➥ *Կազմակերպել շուկայավարման դասընթացներ* ➥ *Պետական մասշտաբով խթանել տեղական արտադրանքը արտերկրում*
▪ Մասնագիտական եւ տեխնոլոգիական գիտելիքներն անբավարար են	➥ *Կրթել արտադրողներին հատուկ դասընթացների, գործնական պարապմունքների եւ փորձի փոխանակման միջոցով* ➥ *Ծանոթացնել արտաքին շուկայի հիմնական պահանջներին*
▪ Ֆինանսական ռեսուրսներն անբավարար են	➥ *Ապահովել մատչելի վարկային ռեսուրսներ երկարաժամկետ ներդրումային ծրագրեր իրականացնելու համար* ➥ *Ներդնել գյուղատնտեսական տեխնիկայի եւ վերամշակման սարքավորումների ձեռքբերման ֆինանսական մեխանիզմներ* ➥ *Իրականացնել համալիր ծրագրեր՝ ներառյալ տրամադրել դրամաշնորհներ*
▪ Շուկայում առկա է մեծ քանակով անորակ ու ցածրարժեք արտադրանք ▪ Միջնորդները մոնոպոլացնում են շուկան	➥ *Վերահսկել շուկաներում վաճառվող արտադրանքի որակը* ➥ *Ավելացնել վերամշակողների շահույթները միջնորդների հաշվին*
▪ Տեղական արժույթի արժեւորումը խոչընդոտում է արտահանմանը	➥

Չրեր

Խոչընդոտներ	Հաղթահարման միջոցառումներ
▪ Չորանոցների քանակը քիչ է ▪ Տնային պայմաններում արտադրված ապրանքների որակն անբավարար է ▪ Հնարավոր չէ ողջ առկա հումքը սպառել	➥ *Ստեղծել մթերման եւ նախնական վերամշակման կետեր* ➥ *Սահմանափակել տնային պայմաններում արտադրությունը* ➥ *Ստեղծել չորանոցներ (արեւային, էլեկտրական) եւ զինել նորագույն սարքավորումներով* ➥ *Սահմանել պատշաճ սանիտարական վերահսկողություն*
▪ Ապրանքային տեսքն անբավարար է ▪ Փաթեթավորումն անբավարար է ▪ Կիրառվում են արտադրության ավանդական եւ հին տեխնոլոգիաներ	➥ *Ստեղծել ժամանակակից չորանոցներ եւ զինել անհրաժեշտ սարքավորումներով՝ նաեւ փաթեթավորման եւ պիտակավորման* ➥ *Ներդնել նոր տեխնոլոգիաներ* ➥ *Կրթել աշխատակիցներին վերապատրաստումների եւ փորձի փոխանակման միջոցով*
▪ Անհատական իրացումների ծավալները փոքր են ▪ Արտահանումը սահմանափակ է ▪ Արտադրանքը չի համապատասխանում արտահանման պահանջներին	➥ *Կենտրոնացնել արտադրությունը ձեռնարկություններում* ➥ *Օժանդակել արտահանմանը, հայտնաբերել նոր շուկաներ* ➥ *Սահմանափակել ներմուծումը* ➥ *Կազմակերպել շուկայավարման դասընթացներ*

▪ Շուկայավարումն անբավարար է ▪ Ներմուծված արտադրանքը խոչընդոտում է զարգացմանը	➥ *Տրամադրել շուկայական տեղեկատվություն* ➥ *Պետականորեն խթանել այս ոլորտի արտադրանքն արտերկրում*
▪ Ֆինանսական ռեսուրսներն անբավարար են	➥ *Ապահովել մատչելի վարկային ռեսուրսներ երկարաժամկետ ներդրումային ծրագրեր իրականացնելու համար*
▪ Հարկային բեռը ծանր է ▪ Արտադրողների նկատմամբ վերաբերմունքն անհավասար է	➥ *Բարելավել հարկային եւ մաքսային օրենսդրությունը* ➥ *Բարելավել հարկային եւ մաքսային վարչարարությունը* ➥ *Հավասար պայմաններ ապահովել բոլոր արտադրողների համար*

Գինի եւ կոնյակ

Խոչընդոտներ	Հաղթահարման միջոցառումներ
▪ Հիմնական խնդիրն իրացումներն են ▪ Ներքին շուկայում շատ են էժան եւ անորակ ապրանքները ▪ Շուկան լճացած է	➥ *Օժանդակել արտադրանքի շուկայավարմանը եւ իրացումներին* ➥ *Որակի ստանդարտներ ներդնել եւ շուկան ազատել անորակ արտադրանքից* ➥ *Հայտնաբերել նոր շուկաներ* ➥ *Ներկայացնել նոր ապրանքներ*
▪ Արտահանման ծախսերը մեծ են ▪ Շուկայավարումն անբավարար է ▪ Արտադրանքը չի համապատասխանում արտահանման պահանջներին	➥ *Պետական մասշտաբով խթանել արտադրանքը արտերկրում՝ հատկապես եւրոպական շուկաներում* ➥ *Ներդնել արտադրանքի որակի միջազգային ստանդարտներ* ➥ *Իրականացնել շուկայական հետազոտություններ* ➥ *Տրամադրել շուկայական տեղեկատվություն* ➥ *Ինտենսիվորեն աշխատել արտահանման խոչընդոտների վերացման ուղղությամբ*
▪ Ապրանքային տեսքն անբավարար է ▪ Փաթեթավորումն ու պիտակավորումն անբավարար է ▪	➥ *Բարելավել արտադրանքի ապրանքային տեսքը* ➥ *Բարելավել փաթեթավորումն ու պիտակավորումը* ➥ *Նորագույն տեխնոլոգիաներ ներդնել ձեռնարկություններում* ➥ *Հիմնել շշալցման փոքր ձեռնարկություններ*
▪ Մասնագիտական գիտելիքներն անբավարար են	➥ *Կազմակերպել դասընթացներ տեխնոլոգիական անձնակազմի համար* ➥ *Կազմակերպել փորձի փոխանակում*
▪ Վերամշակողների հզորությունները թույլ են ▪ Տեխնոլոգիաները հին են	➥ *Նորագույն տեխնոլոգիաներ ներդնել ձեռնարկություններում* ➥ *Ապահովել մատչելի վարկային ռեսուրսներ*

Քաղցր պահածոներ

Խոչընդոտներ	Հաղթահարման միջոցառումներ
▪ Ֆինանսական ռեսուրսներն անբավարար են	➥ *Ապահովել մատչելի վարկային ռեսուրսներ երկարաժամկետ ներդրումային ծրագրեր իրականացնելու համար*
▪ Հարկային բեռը ծանր է ▪ Արտադրողների նկատմամբ վերաբերմունքն անհավասար է ▪ Մաքսային ծառայությունները խոչընդոտում են	➥ *Բարելավել հարկային եւ մաքսային օրենսդրությունը* ➥ *Բարելավել հարկային եւ մաքսային վարչարարությունը* ➥ *Հարկային արտոնությունների սահմանում սահմանամերձ գոտիներում աշխատող ձեռնարկությունների համար* ➥ *Հավասար պայմաններ ապահովել բոլոր արտադրողների համար*
▪ Ապրանքային տեսքն անբավարար է ▪ Փաթեթավորումն ու պիտակավորումն անբավարար է ▪	➥ *Բարելավել արտադրանքի ապրանքային տեսքը* ➥ *Բարելավել փաթեթավորումն ու պիտակավորումը* ➥ *Նորագույն տեխնոլոգիաներ ներդնել ձեռնարկություններում* ➥ *Հիմնել շշալցման փոքր ձեռնարկություններ* ➥ *Ապահովել արտադրանքի արտաքին տեսքի եւ տարաների համապատասխանությունը միջազգային ստանդարտներին*
▪ Վերամշակողների հզորությունները թույլ են ▪ Տեխնոլոգիաները հին են	➥ *Նորագույն տեխնոլոգիաներ ներդնել ձեռնարկություններում* ➥ *Ապահովել մատչելի վարկային ռեսուրսներ*
▪ Իրացման շուկաների հասանելիությունը ցածր է ▪ Արտահանման ծախսերը մեծ են ▪ Շուկայավարումն անբավարար է	➥ *Պետական մասշտաբով խթանել արտադրանքը արտերկրում՝ հատկապես եւրոպական շուկաներում* ➥ *Իրականացնել շուկայական հետազոտություններ*

▪ Արտադրանքը չի համապատասխանում արտահանման պահանջներին	➥ *Տրամադրել շուկայական տեղեկատվություն*
▪ Մասնագիտական գիտելիքներն անբավարար են	➥ *Կազմակերպել դասընթացներ տեխնոլոգիական անձնակազմի համար* ➥ *Կազմակերպել փորձի փոխանակում*
▪ Հումքի ծավալներն անբավարար են	➥ *Կոնկրետ հումքատեսակների մասով արտադրության ծավալների ընդլայնում*

Տարբեր ներուժային ապրանքների մասով արտադրության եւ արտահանման խոչընդոտները, ինչպես նաեւ դրանց հաղթահարման հնարավոր ուղղությունները խիստ տարբեր են: Նույնիսկ խմբավորված վերլուծության արդյունքներով հնարավոր խոչընդոտների ցանկը երկար է եւ ընդգրկում է գործունեության գրեթե բոլոր ուղղությունները: Նման իրավիճակը բնորոշ է ոչ միայն Տավուշի մարզին, այլեւ ողջ Հայաստանին:

Այնուամենայնիվ՝ կարելի է առանձնացնել առավել ցայտուն արտահայտված խոչընդոտներ՝ արտադրանքի քիչ քանակներ, ներդրումներ իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների անհասանելիություն, ոռոգման համակարգի եւ գյուղատնտեսական այլ ենթակառուցվածքների անբավարարություն, հնացած տեխնոլոգիաներ, իրացման դժվարություններ, հարկային սխալ վարչարարություն, մասնագիտական պատրաստվածության ցածր մակարդակ: Սրանք պետք է լինեն թիրախային այն ուղղությունները, որոնց առաջին հերթին պետք է անդրադառնան շահագրգիռ կառույցները՝ զարգացման ծրագրերը եւ պետական մարմինները:

2.3.4 <u>Ներուժային ապրանքների իրացման շուկաները</u>

Տավուշի մարզում արտադրվող առաջնային գյուղատնտեսական եւ վերամշակված ներուժային ապրանքների իրացման շուկաների վերաբերյալ ռեսպոնդենտների տեղեկացվածությունը հիմնականում հիմնված նրանց սեփական եւ գործընկերների փորձի, օժանդակող զարգացման ծրագրերից ստացվող եւ տարբեր զանգվածային լրատվամիջոցներով տարածվող տեղեկատվության վրա: Սույն հետազոտությամբ փորձ է արվել ի մի բերել առկա ողջ տեղեկատվությունը եւ բացահայտել տարբեր ներուժային ապրանքների ամենահավանական շուկաները: Ամփոփված տվյալները ներկայացված են ստորեւ (տես Աղյուսակ 27 եւ Աղյուսակ 28):

Աղյուսակ 27 - Առաջնային գյուղատնտեսական ներուժային ապրանքների իրացման շուկաները

Արտադրության եւ արտահանման ներուժ ունեցող առաջնային գյուղատնտեսական ապրանքներ	Մարզում	Մարզից դուրս՝ Հայաստան	Արտահանում	Արտահանման երկրներ							
				Չգիտեն	Ռուսաստան	Վրաստան	Եվրոպա	ԱՄՆ	Հոլանդիա	Իտալիա	Նորվեգիա
Արքայանարինջ	**59**	**59**	**22**	4	13	4	1	1	1	0	0
Խաղող	**79**	**40**	**9**	1	6	4	1	0	0	0	0
Տավարի միս	**67**	**50**	**8**	1	2	4	0	0	0	0	0
Դեղձ	**36**	**46**	**37**	1	32	11	2	2	0	0	0
Թուզ	**40**	**38**	**18**	3	9	3	2	1	1	1	0
Հոն	**32**	**33**	**13**	2	8	3	1	1	1	1	0

Հատապտուղներ	**31**	**35**	**11**	2	5	2	2	2	0	0	0
Մեղր	**30**	**26**	**20**	5	9	3	5	2	0	0	0
Կաթ	**43**	**21**	**2**	0	1	1	0	0	0	0	0
Ծխախոտ	**36**	**11**	**3**	1	2	1	0	0	0	0	0
Ընկույզ/տխիլ	**16**	**15**	**10**	3	6	0	1	1	0	0	1
Սեւ սալոր	**15**	**14**	**6**	0	2	2	1	1	0	0	1
Խնձոր	**15**	**11**	**7**	0	3	1	1	1	1	0	0
Խոզի միս	**13**	**14**	**1**	0	1	0	0	0	0	0	0
Ցորեն եւ այլ հացահատիկ	**21**	**5**	**1**	0	0	0	0	1	0	0	0
Կարտոֆիլ	**15**	**9**	**1**	0	1	1	0	0	0	0	0
Մերձարեւադարձային պտուղներ (նուռ, կիվի)	**9**	**8**	**1**	0	1	0	1	0	0	0	0
ԸՆԴԱՄԵՆԸ Պատասխաններ	**557**	**435**	**170**	**23**	**101**	**40**	**18**	**13**	**4**	**2**	**2**

Աղբյուր՝ Հետազոտության արդյունքների տվյալների բազա

Բնական է, որ ռեսպոնդենտները առաջնային գյուղատնտեսական ներուժային ապրանքների համար որպես առաջնային եւ հիմնական շուկա տեսնում են մարզի եւ Հայաստանի շուկաները: Հաշվետվության մեջ արդեն մի քանի անգամ նշվել է, որ առաջատար եւ ներուժային բազմաթիվ ապրանքների մասով Հայաստանի ներքին շուկան ամբողջովին հագեցած չէ: Սա լավագույն հնարավորություններ է ստեղծում կոնկրետ ապրանքների մասով արտադրության ծավալների ընդլայնման եւ իրացման համար: Ռեսպոնդենտների կարծիքով արտահանման լավագույն ներուժն ունեն դեղձը, արքայանարինջը, մեղրը եւ թուզը: Այս կարծիքները որոշակիորեն սուբյեկտիվ են եւ ավելի շատ արտահայտում են ռեսպոնդենտների ցանկությունները, քան թե իրականությունը՝ գոնե մեղրի եւ թզի մասով: Առաջին դեպքում տեղական արտադրանքը չի համապատասխանում միջազգային ստանդարտներին եւ բավականին թանկ է: Երկրորդ դեպքում առկա են տեղափոխման լուրջ խնդիրներ:

Արտահանման ամենախոստումնալից շուկաները առաջնային գյուղատնտեսական ներուժային ապրանքների համար հանդիսանում են Ռուսաստանը եւ Վրաստանը: Ռեսպոնդենտների այս կարծիքը լիովին ընդունելի է եւ հաստատվում է ոլորտում իրականացված այլ հետազոտություններով եւս: Ավելին՝ առկա է այս երկրներ կատարված արտահանումների հաջող փորձ (օրինակ՝ «Սպայկա» ընկերության գործունեությունը):

Աղյուսակ 28 - Վերամշակված ներուժային ապրանքների իրացման շուկաները

Արտադրության եւ արտահանման ներուժ ունեցող վերամշակված ապրանքներ	**Մարզում**	**Մարզից դուրս՝ Հայաստան**	**Արտահանում**	**Արտահանման երկրներ**											
				Չգիտեն	**Ռուսաստան**	**Վրաստան**	**Եվրոպա**	**ԱՄՆ**	**Ուկրաինա**	**Որտեղ հայ կա**	**Հունաստան**	**Ֆրանսիա**	**Թուրքմենիա**	**Ղազախստան**	**Իրան**
Մրգօղիներ	**53**	**55**	**46**	0	33	5	0	2	1	6	0	0	0	0	0
Պանիր	**46**	**45**	**40**	2	25	6	10	0	2	0	1	1	0	0	0
Չիրեր	**38**	**44**	**40**	3	25	1	6	6	0	1	3	2	0	0	0
Գինի եւ կոնյակ	**57**	**40**	**24**	4	9	5	2	2	0	0	1	2	0	0	1

Մուրաբաներ եւ ջեմեր	**28**	**34**	**33**	3	28	6	3	3	4	0	0	0	2	2	0
Թթու կաթնամթերք	**30**	**23**	**7**	2	3	0	0	1	0	0	0	0	0	0	0
Կարագ եւ յուղ	**18**	**17**	**20**	2	12	4	3	5	1	0	0	0	1	1	1
Այլ պահածոներ	**19**	**11**	**4**	0	1	3	0	0	0	0	0	0	0	0	0
ԸՆԴԱՄԵՆԸ Պատասխաններ	**289**	**269**	**214**	**16**	**136**	**30**	**24**	**19**	**8**	**7**	**5**	**5**	**3**	**3**	**2**

Աղբյուր՝ Հետազոտության արդյունքների տվյալների բազա

Արտահանման հակվածությունը շատ ավելի մեծ է վերամշակված ապրանքների դեպքում: Սա բնական է, քանի որ այս ապրանքների պարագայում արտադրանքի տեղափոխումն անհամեմատ ավելի հեշտ է եւ արտահանողները հիմնականում ապահովագրված են կորուստներից: Ըստ ռեսպոնդենտների արտահանման լավագույն ներուժն ունեն մրգօղիները, պանիրը եւ չրերը: Կրկին չենք կարող միանշանակորեն համաձայնվել այս պնդման հետ: Մրգօղիների պարագայում դեռեւս անհրաժեշտ է պատշաճ փաթեթավորում եւ պիտակավորում իրականացնել: Պանրի տեղափոխումը պահանջում է հատուկ պայմաններ եւ հայկական աղի պանիրները այնքան էլ պահանջված չեն արտաքին շուկաներում: Չիրերի պարագայում խիստ բարձր է մրցակցությունը:

Որպես լավագույն արտահանման շուկաներ կրկին հանդես են գալիս Ռուսաստանը եւ Վրաստանը:

2.3.5 <u>Արտահանման օրենսդրական դաշտը</u>

2.3.5.1 Ընդհանուր տվյալներ

Տավուշի մարզի մասով արտահանման օրենսդրական դաշտը չունի առանձնահատկություններ եւ այն նույնն է, ինչ որ ամբողջ Հայաստանի համար: Հետազոտության ընթացքում արտահանման օրենսդրական դաշտի վերաբերյալ հիմնական հարցերին պատասխանել են բոլոր խմբերի ռեսպոնդենտները՝ չնայած դրանցից ոչ բոլորն են իրենց գործունեության մեջ առնչվում հարկային եւ մաքսային մարմինների հետ: Մանրամասները ներկայացվում են հաջորդիվ:

Ռեսպոնդենտների որոշ խմբեր իրենց գործունեության ընթացքում բավականին սահմանափակ շփում են ունենում հարկային տեսչության հետ (պետական եւ հանրային կառույցները, ՀԿ-ները, զարգացման ծրագրերը): Վերամշակող ձեռնարկությունների պարագայում իրավիճակը ճիշտ հակառակն է, այս բոլոր ձեռնարկությունները ինտենսիվորեն շփվում են հարկային ծառայությունների հետ: Այս համատեքստում կարեւորվում են խոշոր ֆերմերների հարաբերությունները հարկային ծառայությունների հետ:

Հարցին պատասխանած 85 խոշոր ֆերմերներից 70-ը նշել են, որ որեւէ առնչություն չունեն հարկային կառույցների հետ: Սա բնական է, քանի որ առաջնային գյուղատնտեսությունը ազատված է հիմնական հարկատեսակներից եւ վճարներից՝ շահութահարկից, եկամտահարկից եւ այլն: Մնացած ֆերմերները որոշակիորեն հարաբերվում են հարկային մարմինների հետ, սակայն այլ ոլորտներում իրականացվող գործունեության մասով: Որոշ ֆերմերներ ունեն անհատական ձեռնարկություններ, ներգրավված են մանրածախ առեւտրի եւ փոքր արտադրությունների մեջ եւ հարաբերվում են հարկային մարմինների հետ, սակայն այդ խնդիրը կապ չունի սույն հետազոտության բուն թեմայի հետ:

Ֆերմերները հիմնականում վճարումներ են կատարում իրենց ունեցած անասնագլխաքանակի, սեփականություն հանդիսացող հողատարածքների հողի հարկի, վարձակալված հողերի վճարների

մասով: Նույնիսկ այս դեպքում նրանք գործ ունեն իրենց համայնքապետարանների հետ եւ հարկային ծառայության հետ չեն շփվում:

Տավուշի մարզում առաջնային գյուղատնտեսական եւ վերամշակման արտադրանքի արտահանման խթանման հնարավորությունների բացահայտումը եւ իրականացումը, խոչընդոտների սահմանումը եւ դրանց հաղթահարման ուղիների ներկայացումը հանդիսանում են սույն հետազոտության կարեւոր խնդիրները: Այս տեսանկյունից ծանրակշիռ գործոն է հանդիսանում նաեւ երկրում իրականացվող հարկային քաղաքականությունը՝ հատկապես արտահանման խթանմանն ուղղված միջոցառումները: Դրանց թվում անդրադարձ է կատարվել 3 հիմնական ասպեկտների՝ ԱԱՀ վճարման շեմին (58.35 մլն ՀՀ դրամ), ԱԱՀ վճարումից արտահանման ազատված լինելուն եւ Հայաստանում ազատ տնտեսական գոտիների ստեղծմանը:

2.3.5.2 ԱԱՀ-ի շեմի առկայության ազդեցությունը

Ռեսպոնդենտներն ակտիվորեն իրենց դիրքորոշումներն են հայտնել վերը նշված բոլոր երեք թեմաների վերաբերյալ: Ռեսպոնդենտների պատասխանների ԱԱՀ շեմի վերաբերյալ ամփոփ պատկերը ներկայացվում է ստորեւ (տես Աղյուսակ 29):

Աղյուսակ 29 - ԱԱՀ վճարման շեմի ազդեցությունը ռեսպոնդենտների գործունեության վրա

Ռեսպոնդենտների խմբեր	Ռեսպոնդենտների վերաբերմունքը				Ընդամենը
	Դրական	Բացասական	Անտարբեր	Դժվարանում են պատասխանել	
Պետական եւ հանրային կառույցներ	14	1	1	3	**19**
Զարգացման ծրագրեր	5	0	1	0	**6**
ՀԿ-ներ	11	1	1	0	**13**
Ֆինանսական հաստատություններ	1	0	3	1	**5**
Վերամշակողներ	26	3	2	5	**36**
Խոշոր ֆերմերներ	62	3	7	13	**85**
ԸՆԴԱՄԵՆԸ Պատասխաններ	**119**	**8**	**15**	**22**	**164**

Աղբյուր՝ Հետազոտության արդյունքների տվյալների բազա

Աղյուսակից երեւում է, որ ռեսպոնդենտների մեծ մասը **դրական** է համարում ԱԱՀ շեմի առկայությունը: *Զարգացման ծրագրերի* ներկայացուցիչները կարծում են, որ այս շեմը պետք է պահպանել եւ անհրաժեշտության դեպքում՝ նույնիսկ բարձրացնել, որպեսզի զարգացում ապահովվի: Միաժամանակ նրանք գտնում են, որ այս երեւույթը դրական արդյունքներ կարող է տալ զուգահեռաբար իրազեկվածության բարձրացման եւ գործունեության հավասար դաշտ ստեղծելու պայմաններում միայն: *Խոշոր ֆերմերները* եւս համաձայն են, որ ԱԱՀ շեմի առկայությունը նպաստում է առաջնային գյուղատնտեսության եւ վերամշակման ոլորտների զարգացմանը (արտադրության ծավալների ընդլայնմանը, նոր տնտեսությունների ու ՓՄՁ-ների հիմնմանը եւ այլն) եւ արտահանումների խթանմանը: Սա կարող է հանգեցնել արտադրական հզորությունների հետագա ընդլայնման եւ իրացման շուկաների դիվերսիֆիկացման:

Ներկայացված կարծիքներն, ընդհանուր առմամբ պաշտպանում են նաեւ ռեսպոնդենտների մյուս խմբերը: Լրացուցիչ հարկային բեռը իր ազդեցությունը կունենար արտադրանքի գների վրա՝

նվազեցնելով դրանց պահանջարկը եւ իրացման ծավալները: Թիրախված ոլորտները այս մարտահրավերին դիմագրավելու դեռեւս ի վիճակի չեն:

ԱԱՀ շեմի վերաբերյալ **բացասական եւ անտարբեր** վերաբերմունք ունեցող ռեսպոնդենտների մեկնաբանությունները եւս բավականին բազմաբնույթ են: Այս դեպքում եւս շատ է հիշատակվում մարզի տնտեսությունների եւ ՓՄՁ-ների փոքրությունը եւ իրական արտահանողների սակավությունը: Բացասաբար տրամադրված ռեսպոնդենտները կարծում են, որ նման գործիքները արդյունավետ կարող են աշխատել բացառապես արդարացի հարկային վարչարարության եւ օրենքների իրական կիրարկման պարագայում, ինչը մեր երկրում դեռեւս իրականություն չէ: Կարելի է եզրակացնել, որ Տավուշի մարզի սովորական ֆերմերները, որոնք հիմնականում զբաղված են միկրո կամ փոքր գործունեությամբ, պարզապես ի վիճակի չեն ինքնուրույն արտահանում իրականացնել: Նրանց արտադրանքի ծավալները քիչ են, նրանք չունեն համապատասխան ֆինանսական ռեսուրսներ արտահանումները կազմակերպելու համար եւ չունեն անհրաժեշտ գիտելիքներ արտահանման գործընթացը կազմակերպելու համար:

Կարծիք՝

Հատկանշական է ԱԱՀ շեմի վերաբերյալ բացասական վերաբերմունք ունեցող ռեսպոնդենտների հետեւյալ կարծիքը. **«ԱԱՀ վճարման շեմը գյուղատնտեսական ձեռնարկությունների համար պետք է բարձրացվի մինչեւ 100-110 մլն դրամ: Միայն այս պարագայում գյուղատնտեսությունը կհետաքրքրի խոշոր ֆինանսական ռեսուրսներ տնօրինողներին եւ կներգրավի ծավալուն ներդրումներ»**:

2.3.5.3 ԱԱՀ վճարումից արտահանման ազատված լինելու ազդեցությունը

ԱԱՀ վճարումներից արտահանման գործողությունների ազատված լինելը արտահանման խթանման ուղղակի միջոցառումներից է՝ նախատեսված հնարավորինս աջակցել արտահանող կազմակերպություններին իրենց գործունեության մեջ: Այս պնդմանը համաձայն է նաեւ հետազոտված ռեսպոնդենտների գերակշիռ մեծամասնությունը (տես Աղյուսակ 30):

Աղյուսակ 30 - ԱԱՀ-ից ազատված լինելու ազդեցությունը ռեսպոնդենտների գործունեության վրա

Ռեսպոնդենտների խմբեր	Ռեսպոնդենտների վերաբերմունքը				Ընդամենը
	Դրական	Բացասական	Անտարբեր	Դժվարանում են պատասխանել	
Պետական եւ հանրային կառույցներ	16	3	0	0	**19**
Զարգացման ծրագրեր	5	0	0	1	**6**
ՀԿ-ներ	13	0	0	0	**13**
Ֆինանսական հաստատություններ	2	0	2	1	**5**
Վերամշակողներ	35	0	1	0	**36**
Խոշոր ֆերմերներ	58	4	9	14	**85**
ԸՆԴԱՄԵՆԸ Պատասխաններ	**129**	**7**	**12**	**16**	**164**

Աղբյուր՝ Հետազոտության արդյունքների տվյալների բազա

ԱԱՀ վճարումից արտահանման շրջանառության ազատված լինելը միանշանակ դրական երեւույթ կարելի համարել ներկա իրավիճակում գործունեություն իրականացնող սուբյեկտների համար: Այն թույլ է տալիս ավելի մրցունակ դիրքերից հանդես գալ արտաքին շուկայում, տնօրինել զգալի շրջանառու միջոցներ, չներգրավել արտաքին թանկ ֆինանսական ռեսուրսներ եւ այլն: Միեւնույն ժամանակ պետք է նշել, որ միայն այս միջոցառումը դեռեւս բավարար չէ արտահանման ծավալների

զգալի ավելացումը երաշխավորելու համար: Այդ երեւույթի վրա լուրջ ազդեցություն ունեն նաեւ արտադրանքի որակը, արտաքին շուկաների իրավիճակը, պահանջարկի առկայությունը, մրցակիցների վարած քաղաքականությունը, ներքին արժույթի ձեւավորման քաղաքականությունը, առկա ենթակառուցվածքները (արտադրանքի պահպանման, տեղափոխման) եւ այլն: Առանձին հիշատակման է ենթակա արդյունաբերական արտահանող ձեռնարկությունների (օրինակ պահածոյագործների, գինի եւ կոնյակ արտահանողների եւ այլն) հիմնական խնդիրներից մեկը: Նրանց մոտ կուտակվում են ԱԱՀ գերավճարներ, որոնք հայկական իրականության մեջ երբեք չեն վճարվում, ինչը նշանակում է, որ իրական հաշվանցումներ չեն իրականացվում է այս ձեռնարկություններն, այնուամենայնիվ, ԱԱՀ զգալի գումարներ են վճարում:

Դրական կարծիք հայտնած ռեսպոնդենտների կողմից մեկնաբանվել են իրենց պատասխանները, որոնք ամփոփված են ստորեւ.

- Միջոցառումը դրական է, սակայն բնակչությունը հիմնականում անտեղյակ է դրանից: Առավել ուշադրություն պետք է դարձվի հանրության իրազեկվածության բարձրացմանը:
- Միջոցառումը միանշանակ դրական է: Ֆինանսական խնայողություններից զատ այն թույլ կտա խուսափել նաեւ զգալի քաշքշուկներից եւ թղթաբանությունից:
- Այս միջոցառումը հատկապես կնպաստի փոքր ֆերմերների զարգացմանը: Վերջիններս բացարձակապես ի վիճակի չեն նման ծախսերը կատարել:
- Նման միջոցառումները միանշանակ խթանում եւ շահագրգռում են արտահանումներ իրականացնողներին: Այս ամենը շատ լավ է եւ կունենա իր դրական ազդեցությունը, եթե լրացուցիչ «անլուծելի» խնդիրներ չառաջանան՝ սերտիֆիկացում, հովանավորչություն, ուշացումներ եւ այլն:

Կարծիք՝

Ֆերմերներից մեկը տվյալ խնդրի վերաբերյալ. **«Ես փոքր տնտեսություն եմ վարում, արտահանումներ չեմ իրականացնում եւ դժվար թե երբեւիցե ի վիճակի լինեմ: Սակայն նման միջոցառումների ձեռք առնումը մտածելու տեղիք է տալիս, շահագրգռում է: Սա լրացուցիչ հնարավորությունների դաշտ է բացում, որից շատերը կցանկանան օգտվել»:**

Չնայած *բացասական եւ անտարբեր վերաբերմունք արտահայտած ռեսպոնդենտները* թվով բավականին քիչ են, նրանց կարծիքը եւս խիստ կարեւոր է սույն համատեքստում: Ամենահաճախ հնչած հիմնավորումը վերաբերվում է արտադրության ծավալներին: Ռեսպոնդենտները նշում են, որ նման օրենսդրական նախաձեռնությունը Տավուշի մարզի ֆերմերների համար իրականում անիմաստ է, քանի որ արտահանման իրական ծավալներ ունեցող ֆերմերներ պարզապես չկան: Այս օրենսդրական դրույթը որեւէ ազդեցություն չի կարող ունենալ նրանց համար: Հասարակ գյուղացիները արտահանման համար դեռեւս բավարար «հասունացած» չեն՝ չունեն գիտելիքներ, տեղյակ չեն շուկաներից եւ չեն կարող բանակցել այդ շուկաների հետ, ֆինանսական ռեսուրսներ չեն տնօրինում արտահանման հետ կապված տրանսպորտային ծախսերը հոգալու համար եւ այլն: Գյուղատնտեսական արտադրանքի արտահանման մեջ մասնագիտացող եզակի տեղական կազմակերպությունները ներկայումս գրեթե մենաշնորհային դիրքեր ունեն եւ կարողանում են պայմաններ (գին, որակ, առաքման եւ վճարման պայմաններ) թելադրել առաջնային արտադրողներին:

2.3.5.4 Ազատ տնտեսական գոտիների ազդեցությունը

Վերջին տարիներին Հայաստանում ինտենսիվորեն քննարկվում էր երկրում Ազատ Տնտեսական Գոտիների (ԱՏԳ) ստեղծման խնդիրը: Այս գործընթացը քննարկումներից կոնկրետ գործողությունների անցավ 2010-2011թթ. եւ հիմնվեց Երեւանի «Զվարթնոց» ԱՏԳ-ն, որի կարեւոր խնդիրներից մեկը հայկական առաջնային եւ վերամշակված գյուղատնտեսական արտադրանքի

արտահանման աջակցությունն է հանդիսանում: ԱՏԳ-ն տնօրինում է արտադրանքի պահպանման համար անհրաժեշտ ժամանակակից լավագույն տեխնիկական միջոցներ: Նախատեսվում է, որ այս վայրում համակարգված ծառայություններ կմատուցվեն արտահանողներին՝ ազատելով նրանց ավելորդ խնդիրներից եւ բյուրոկրատիայից: Գաղափարն ինքնին շատ դրական է, սակայն տվյալ հարցի շուրջ ռեսպոնդենտների վերաբերմունքը բավականին ոչ միանշանակ է (տես Աղյուսակ 31):

Աղյուսակ 31 - ԱՏԳ-ների ազդեցությունը ռեսպոնդենտների գործունեության վրա

Ռեսպոնդենտների խմբեր	Ռեսպոնդենտների վերաբերմունքը				Ընդամենը
	Դրական	Բացասական	Անտարբեր	Դժվարանում են պատասխանել	
Պետական եւ հանրային կառույցներ	8	0	0	11	**19**
Զարգացման ծրագրեր	2	1	0	3	**6**
ՀԿ-ներ	4	2	0	7	**13**
Ֆինանսական հաստատություններ	1	0	0	4	**5**
Վերամշակողներ	6	4	0	26	**36**
Խոշոր ֆերմերներ	27	11	5	42	**85**
ԸՆԴԱՄԵՆԸ Պատասխաններ	**48**	**18**	**5**	**93**	**164**

Աղբյուր՝ Հետազոտության արդյունքների տվյալների բազա

Հետաքրքիր է, որ չնայած ԱՏԳ-ների հիմնման գործընթացն իրականացվել է մասնակցային եղանակով, այն լայնորեն լուսաբանվել է զանգվածային լրատվամիջոցներով, ռեսպոնդենտների մեծ մասը պարզապես տեղեկացված չէ այս գործընթացներից եւ պատկերացում չունի ԱՏԳ-ներ կոնկրետ գործառույթների վերաբերյալ: Ռեսպոնդենտների մեծ մասը պարզապես ի վիճակի չէր որեւէ կարծիք հայտնել:

Դրական վերաբերմունք արտահայտած ռեսպոնդենտները նշում են, որ սա լուրջ առաջընթաց քայլ է: ԱՏԳ-ների հիմնումը արտահանման խթանման միտված միջազգային լավագույն փորձառության կիրառման օրինակ է: Այն թույլ կտա խթանել արտահանման եւ հետեւաբար՝ արտադրության ծավալները, մրցունակ դառնալ արտաքին շուկայում, խուսափել խոչընդոտներից, եթե այս կառույցը իրականում գործի նախատեսված ձեւով: Այլապես այն լրացուցիչ գործիք կդառնա խոշոր (մոնոպոլ) կառույցների ձեռքում: Նման կառույցի հետ համագործակցելը շատ ֆերմերների համար երազանքի մակարդակի վրա է գտնվում:

Կարծիք՝

Տավուշի մարզի փոխմարզպետի պատասխանը տվյալ հարցին. **«Նախկինում սահմանի վրա գործում էր Բագրատաշենի շուկան, որը պետության հատուկ միջոցառումների ճնշման տակ դադարեցվեց: Այս շուկան ոչ այլ ինչ էր, քան ազատ շուկայական գոտի, որտեղ աշխատում էին Տավուշի մարզի բազմաթիվ բնակիչներ: Ստեղծված ԱՏԳ-ն նմանատիպ գործառույթ է իրականացնելու ավելի մեծ ծավալներով: Ինչու՞ չէր կարելի այդ ԱՏԳ-ն ստեղծել Բագրատաշենի շուկայի հիմքի վրա: Արդյունքում կրկին ականատես ենք լինում տնտեսական գործառույթների կենտրոնացման, որից Տավուշի մարզի (կամ որեւէ այլ սահմանամերձ տարածքի) բնակչությունը շատ չի շահելու»:**

Ռեսպոնդենտների կողմից լուրջ քննադատության է ենթարկվել ԱՏԳ տեղակայումը Երեւանում: Նրանց կարծիքով նման կառույցները պետք է հիմնվեն այն հատվածներում, որտեղ զարգացման լուրջ խնդիր կա: Ներկա իրավիճակում բազմաթիվ տնտեսվարողներ պարզապես ի վիճակի չեն լինի գրանցվել եւ գործունեություն իրականացնել ԱՏԳ-ում պարզապես հեռու տեղակայված լինելու պատճառով: Բացի այդ մտավախություն կա, որ այս կառույցը կվերածվի հերթական մեծածախ շուկայի, որտեղ կրկին պայմաններ կթելադրվեն միջնորդների եւ առեւտրականների կողմից:

Արտադրանքը ԱՏԳ հասցնելուց հետո ֆերմերներին ոչինչ չի մնա բացի իրենց թելադրված պայմաններով այն տեղի գործարարներին թողնելը: Նման խնդիրների լուծման հիմքը նմանատիպ գործառույթների ապակենտրոնացումն է եւ սահմանամերձ գոտիներում դրանց հիմնումը:

2.3.5.5 Հարկային խոչընդոտների եւ դրանց հաղթահարման հնարավորությունները

Հարկային խոչընդոտների եւ դրանց հաղթահարման հնարավորությունների վերաբերյալ ռեսպոնդենտների կողմից ստացվել են իրարից խիստ տարբերվող որակական պատասխաններ, ինչը մեծապես դժվարացնում է դրանց խմբավորումը եւ քանակական ամփոփումը: Ռեսպոնդենտների պատասխաններում հաճախ դրական եւ բացասական երանգները խառնված են եւ խմբավորումները կարող են հանգեցնել որակական տեղեկատվության կորստի: Այդ պատճառով քանակական ամփոփումներ գրեթե չեն կատարվել եւ հավաքագրված կարծիքները վերլուծվել են հիմնականում որակական տեսանկյունից՝ ըստ ռեսպոնդենտների խմբերի:

Զարգացման ծրագրերի ներկայացուցիչները նշում են, որ առաջնային գյուղատնտեսությունը ազատված հիմնական բոլոր հարկերից եւ այս ոլորտում փոփոխությունների կարիք չկա: Հիշատակվել է գյուղատնտեսական սարքավորումների ներմուծման հարկերից ազատելու անհրաժեշտությունը, սակայն այստեղ գործ ունենք ռեսպոնդենտի մասնակի տեղեկացվածության հետ: Գործող օրենսդրությամբ գյուղատնտեսական հիմնական սարքավորումներն ազատված են ներմուծման մաքսատուրքերից: Վերամշակող ձեռնարկությունների պարագայում որպես խնդիր է նշվել բոլոր ձեռնարկությունների նկատմամբ հավասար եւ արդար վերաբերմունքի դրսեւորումը հարկային մարմինների կողմից: Միաժամանակ հիշատակվում է, որ եթե այս ձեռնարկությունները ճիշտ եւ գրագետ աշխատեն, լուրջ խնդիրներ չեն ունենա:Հատուկ անդրադարձ է կատարվել սկսնակ ձեռնարկությունների նկատմամբ վարվող քաղաքականությանը: Ռեսպոնդենտները գտնում են, որ դրանց համար պետք է արտոնություններ սահմանվեն սկզբնական ժամանակաշրջանում:

Հետազոտված *խոշոր ֆերմերների* գերակշիռ մեծամասնությունը (78 ռեսպոնդենտ 85-ից) իրենց գործունեության մեջ հարկային խոչընդոտների չեն բախվել: Նրանք լուրջ փոփոխությունների ակնկալիքներ չունեն. ցանկանում են միայն, որ իրենց գործերին հարկային մարմինները չխառնվեն եւ իրենք կարողանան շարունակել իրենց գործունեությունը: Չնայած դրան՝ նրանք դեմ չեն, որ լրացուցիչ բարելավումներ կատարվեն: Խոսքը մասնավորապես վերաբերվում է սահմանամերձ բնակավայրերում գործող հարկերին եւ վճարներին: Առաջարկվում է հատուկ վերաբերմունք դրսեւորել նոր հիմնվող տնտեսություններին, որոնք կապիտալ ներդրումներ են իրականացնում՝ հիմնում են այգիներ, անասնապահական ֆերմաներ եւ այլն: Իրավիճակը մի փոքր այլ է վերամշակողների դեպքում. նրանք ազատված չեն հարկերից: Խոշոր ֆերմերների կարծիքով հարկային մարմինների հետ խնդիրներ են ունենում հատկապես փոքր ձեռնարկությունները: Հարկային ծառայությունը լուրջ ճնշում է գործադրում նրանց վրա, ինչը իր բացասական ազդեցությունն է ունենում նաեւ այդ ձեռնարկությունների եւ ֆերմերների համագործակցության պայմանների վրա:

ՀԿ-ների ներկայացուցիչները նշում են, որ ֆերմերներից գանձվող վճարները՝ հողի հարկ, անասնագլխաքանակի հարկեր եւ այլն, այնուամենայնիվ բարձր են Տավուշի մարզի ֆերմերների համար: Հատկապես սահմանամերձ գոտիներում այս բոլոր հարկերը եւ վճարները նրանց կարծիքով պետք է հանվեն: Ավելին, անհրաժեշտ է կիրառել դոտացիոն համակարգեր եւ լրջորեն պայքարել գյուղացիներին պարտադրվող վճարումների՝ շուկայում տեղի անարդար բարձր վարձերի, արտադրանքի տեղափոխման ընթացքում ճանապարհային ոստիկանության տրվող գումարների եւ այլն, պրակտիկայի դեմ: Կրկին տարբեր է կարծիքը վերամշակողների պարագայում: Նշվում է, որ

վերամշակողները ոչ միշտ են օբյեկտիվ բողոքներով հանդես գալիս, սակայն նրանց նկատմամբ հարկային մարմինների վերաբերմունքը կրկին քննադատվում է: Հարկերի դրույքաչափերը բավականին բարձր են, վերաբերմունքը՝ անհավասար, վարչարարությունը՝ խիստ կոշտ: Հատկապես ծանր է փոքր վերամշակողներին առաջադրվող թղթարարությունը:

Պետական եւ հանրային կառույցների 19 ներկայացուցիչներից 13-ը հարկային լուրջ խոչընդոտներ չեն նշել եւ գտնում են, որ ոչինչ պետք է չէ փոխել: Այս ռեսպոնդենտները եւս անդրադարձ են կատարել ֆերմերներից գանձվող «օրինական» վճարներին՝ շուկայի վարձերին, տեղեկանքների դիմաց գանձվող վճարներին, ոստիկանության վերաբերմունքին եւ այլն: Հիշատակվել է նաեւ սահմանամերձ բնակավայրերում արտոնյալ հարկային ռեժիմի եւ վարձակալական վճարների սահմանման անհրաժեշտությունը: Նշվել է նաեւ, որ որոշ դեպքերում անարդար վերաբերմունքի են արժանանում վերամշակող ձեռնարկությունները: Նրանց նկատմամբ վարչարարությունը պետք է մեղմացվի եւ որոշակի պետական հովանավորչական միջոցառումներ պետք է իրականացվեն ներքին շուկայում նրանց արտադրանքի մրցունակությունը բարձրացնելու համար: Սա մասնավորապես վերաբերվում է ներմուծվող մսին եւ մսամթերքներին, պահածոներին, հյութերին, պանրին եւ կաթնամթերքներին եւ այլն:

Ինչպես եւ ակնկալվում էր, հարկային խոչընդոտների վերաբերյալ ամենաքննադատական պատասխանները ստացվել են *վերամշակող ձեռնարկությունների ներկայացուցիչներից*՝ չնայած այս խմբի հետազոտված 36 ռեսպոնդենտների կեսը եւս նշել է, որ հարկային լուրջ խոչընդոտներ չկան[11]: Այս խմբի ռեսպոնդենտների մյուս մասի կողմից ներկայացված պատասխանները խոչընդոտների վերաբերյալ ամփոփված են ստորեւ.

Կարծիք՝

Ներկայացված հարցի վերաբերյալ լավագույն ամփոփիչ պատասխաններից մեկը. **«Հեռավոր տարածքների նկատմամբ հատուկ հարկային ռեժիմ պետք է սահմանվի, սակայն չպետք է թույլ տալ, որ գործարար հանրությունը չարաշահի դա (օրինակ՝ այլ վայրերի բիզնեսները գրանցվեն այդտեղ եւ հարկային արտոնյալ ռեժիմով աշխատեն): Բացի այդ՝ պետք է թույլ տան, որ ժողովուրդը ինքնուրույն ստեղծված կառույցում աշխատի, որպեսզի չվերածվի հերթական մոնոպոլացված միջնորդ օղակի»:**

- Լուրջ խնդիրներ են առաջացնում շահութահարկի կանխավճարները,
- Հնարավոր չէ դեբետագրել հումքի ձեռքբերումների ԱԱՀ-ն, քանի որ առաջնային գյուղատնտեսությունը ԱԱՀ սկսում է վճարել միայն 58.35 մլն ՀՀ դրամի շրջանառությունը գերազանցելու դեպքում,
- Եթե կոնկրետ մեկ սուբյեկտից ձեռք բերված հումքը գերազանցում է ընդհանուր ձեռքբերումների 80 տոկոսը, ապա պետք է ԱԱՀ վճարել: Սա խանգարում է հիմնական մատակարարների հետ կայուն հարաբերություններ ձեւավորելուն:
- Օրենքի փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը ժամանակին չի հասնում վերամշակողներին (*ինչը, սակայն սուբյեկտիվ կարծիք է, քանի որ բոլոր փոփոխությունները ժամանակին եւ լայնորեն ներկայացվում են հասարակությանը*),
- Հարկային մարմինները անհարկի շատ են անհանգստացնում, բյուրոկրատիան շատ է,
- Հարկային օրենսդրության հետ կապված լուրջ խնդիրներ չկան: Խնդրահարույց է այդ օրենսդրության արդար կիրարկումը,
- Տեղական վերամշակողների, հատկապես սկսնակ ձեռնարկությունների նկատմամբ որեւէ արտոնյալ վերաբերմունք չկա: Այս ձեռնարկությունները պարզապես չեն հասցնում կայանալ:

[11] Սա մասնավորապես պայմանավորված է այն հանգամանքով, որ պանրի արտադրությամբ զբաղվող վերամշակողները հիմնականում գրանցված չեն եւ գործում են որպես առաջնային գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող ֆերմերներ եւ հարկեր չեն վճարում:

Ներկայացված խնդիրների եւ խոչընդոտներին այս ցանկին դիմագրավելու համար վերամշակողները առաջարկում են հետեւյալ միջոցառումները.

- Բարեփոխել ԱԱՀ եւ Ծահութահարկի մասին ՀՀ օրենքները եւ դրանց կիրառությունը,
- Հնարավորինս բարձրացնել հարկային օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը,
- Առաջնային գյուղատնտեսությունը ամբողջովին ազատել հարկումից եւ մեղմացնել վերամշակողների նկատմամբ կիրառվող վարչարարությունը,
- Սուբսիդավորել առաջնային գյուղատնտեսական գործունեությունը,
- Հնարավորինս պարզեցնել հարկային մարմինների հետ շփումները եւ պակասեցնել բյուրոկրատիան,
- Նպաստել սկսնակ ձեռնարկությունների կայացմանը եւ որոշակի հովանավորչական քաղաքականություն դրսեւորել տեղական ձեռնարկությունների նկատմամբ, խստացնել ներմուծման վերահսկողությունը,
- Օրենքների ընդունման ժամանակ խորհրդակցել ոլորտի ներկայացուցիչների հետ եւ այլն:

Հարկային խոչընդոտների վերաբերյալ ամենալոյալ կարծիքները ներկայացվել են *ֆինանսական հաստատությունների ներկայացուցիչները:* Նրանց կարծիքով իսկապես լուրջ խնդիրներ օրենսդրության մեջ չկան, անհրաժեշտ է միայն բարելավել հարկային վարչարարությունը:

2.3.5.6 Մաքսային գործընթացների ազդեցությունը

Մինչեւ մաքսային օրենսդրության ազդեցության վերլուծությանը անցնելը մեկ անգամ եւս պետք է նշել, որ հետազոտված ռեսպոնդենտների (նույնիսկ վերամշակողների) գերակշիռ մեծամասնությունը երբեւէ առնչություն չի ունեցել մաքսային մարմինների հետ: Առաջնային գյուղատնտեսությամբ զբաղվող ֆերմերները բնավ արտահանումներ չեն իրականացրել: Սա նշանակում է, որ որոշակի վերապահումներով պետք է վերաբերվել նրանց կողմից ներկայացված կարծիքներին եւ առաջարկություններին: Ինչեւէ, Տավուշի մարզի ֆերմերների եւ վերամշակող ձեռնարկությունների գործունեության (արտադրության եւ արտահանման) վրա մաքսային գործընթացների ազդեցության վերաբերյալ հետազոտված ռեսպոնդենտների պատկերացումները ամփոփված են ստորեւ (տես՝ Աղյուսակ 32):

Աղյուսակ 32 - Մաքսային գործընթացների ազդեցությունը ռեսպոնդենտների գործունեության վրա

Ռեսպոնդենտների խմբեր	Ռեսպոնդենտների վերաբերմունքը				Ընդամենը
	Դրական	Բացասական	Անտարբեր	Դժվարանում են պատասխանել	
Պետական եւ հանրային կառույցներ	3	4	0	12	**19**
Զարգացման ծրագրեր	1	1	0	4	**6**
ՀԿ-ներ	3	2	0	8	**13**
Ֆինանսական հաստատություններ	1	1	0	3	**5**
Վերամշակողներ	5	6	0	25	**36**
Խոշոր ֆերմերներ	12	11	1	61	**85**
ԸՆԴԱՄԵՆԸ Պատասխաններ	**25**	**25**	**1**	**113**	**164**

Աղբյուր՝ Հետազոտության արդյունքների տվյալների բազա

Ակնհայտորեն աչքի է ընկնում ռեսպոնդենտների մեծ մասի անտեղյակությունը խնդրի վերաբերյալ: Դրական կարծիքներ հայտնած ռեսպոնդենտները որեւէ կերպ չեն մեկնաբանել իրենց կարծիքը, սակայն նշել են, որ ընդհանուր առմամբ արտահանումներն ազատված են մաքսատուրքերից եւ վերջին ժամանակահատվածում դրական տեղաշարժեր են նկատվում նաեւ ձեւակերպումների իրականացման հեշտացման եւ բյուրոկրատիայի նվազեցման առումներով: Սա վերաբերվում է հիմնականում արտահանման գործընթացներին, ներմուծման պարագայում իրավիճակն այդքան էլ դրական չէ:

Բացասական կարծիք հայտնած ռեսպոնդենտները ավելի հիմնավոր են հանդես եկել՝ նշելով իրենց կարծիքը հիմնավորող կոնկրետ պատճառներ: Մասնավորապես նրանք կարծում են, որ մաքսային բյուրոկրատիան դեռեւս շատ է, մաքսավորների վերաբերմունքը արտահանողների հետ անկիրթ է, գործընթացի արհեստական ձգձգումները սովորական երեւույթ են, ներսում խմբեր են գործում, որոնք վերահսկում են ողջ գործընթացը, հիմնական արտահանումներն իրականացվում են ոչ-թե արտադրողների, այլ կոնկրետ միջնորդների կողմից եւ այլն: Ավելի կոնկրետ օրինակներ եւս նշվել են. 1 կգ դեղձի արտահանման համար 1 ԱՄՆ դոլար, 15 կգ սմբուկի արտահանման համար՝ 15,000 ՀՀ դրամ է պահանջվել մաքսավորների կողմից, նմանատիպ խնդիրներ են առաջացել նաեւ կարտոֆիլի արտահանման պարագայում, տնկիների ներմուծումը պարզապես արգելվել է: Վերամշակողները կարծիք են հայտնել, որ մեր մաքսավորների դրսեւորած վերաբերմունքը արտերկրյա ներմուծողների նկատմամբ ադեկվատ արձագանք է առաջացրել նաեւ արտերկրյա (նկատի ունեն՝ վրացական) մաքսային ծառայությունների կողմից:

15 ռեսպոնդենտներ 164-ից նշել են, որ ոչինչ փոխելու կարիք չկա: Մյուսների կողմից առաջարկվող բարեփոխումների շարքում հիշատակման են արժանի հետեւյալները.

- Հնարավորինս նվազեցնել մաքսային բյուրոկրատիան, վերացնել արհեստական ուշացումները եւ քաշքշուկները,
- Պահանջել մաքսավորներից փոխել իրենց վերաբերմունքը եւ ավելի բարեհամբույր ընդունել հաճախորդներին,
- Բացառել արտահանվող ապրանքների դիմաց անօրինական գանձումների իրականացումը,
- Հավասար եւ արդար վերաբերմունք դրսեւորել բոլոր արտահանողների նկատմամբ, ապահովել մրցակցություն եւ բացառել մենաշնորհները,
- Պարտադրել մաքսավորներին գործել օրենքի պահանջով եւ ոչ-թե օրենքը հարմարեցնել իրենց անձնական խնդիրներին,
- Բարելավել ներմուծվող ապրանքների մաքսային արժեքների որոշման գործընթացը, սահմանափակել գների ճշգրտման գործողությունները եւ այլն:

Ամփոփելով կարելի է նշել, որ ներկայացված հարկային եւ մաքսային խնդիրների գրեթե ողջ փունջը վերաբերվում է կոնկրետ կառույցների կողմից իրականացվող գործողություններին, այն է՝ վարչարարությանը: Այս խնդիրը Հայաստանում առկա է արդեն բազմաթիվ տարիներ եւ վերջին ժամանակաշրջանում համապատասխան պետական կառույցների կողմից մեծ ծավալի աշխատանք է կատարվել բարեփոխումների իրականացման ուղղությամբ: Բնական է, բոլոր խնդիրները դեռեւս չեն լուծվել, սակայն առաջընթացն այնուամենայնիվ նկատելի է: Ակնհայտ է նաեւ, որ ներկայացված խնդիրների մեծ մասը չի կարող լուծվել (կամ նույնիսկ անդրադարձ չի կարող ստանալ) ՄԱՁԾ կողմից իրականացվելիք ծրագրի շրջանակներում, սակայն ՄԱՁԾ-ն լրացուցիչ լավ ամբիոն կարող է հանդիսանալ դրանց մասին մեկ անգամ եւս հիշատակելու եւ լուծման հնարավոր ուղղություններ առաջարկելու համար:

3 ՓՄՁ-ՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

3.1 ՓՄՁ-ՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ

Տավուշի մարզում փոքր եւ միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ների) գրանցման եւ գործունեության դադարեցման դինամիկայի վերաբերյալ խնդիրները քննարկվել են ՀՀ արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Տավուշի մարզի ստորաբաժանումների եւ հարկային տեսչությունների ներկայացուցիչների հետ: Մյուս ռեսպոնդենտներին այս խնդիրները չեն առաջադրվել ելնելով դիտարկվող տեղեկատվության բնույթից: Նման տեղեկություններ նրանք պարզապես չէին կարող տնօրինել եւ անտեղյակ ռեսպոնդենտների պատասխանները կարող էին աղավաղել իրական պատկերը:

Նշված հարցերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը լուրջ խնդիր է հանդիսացել հետազոտական թիմի համար: Քանակական ցուցանիշների մասով այս խնդիրն այդպես էլ լուծում չի ստացել: Այս տեղեկատվությունը, եթե նույնիսկ առկա է, ապա չի տրամադրվում համապատասխան պետական կառույցների կողմից այն ձեւաչափով, որով պահանջվում է սույն հետազոտության շրջանակներում: Հիմնական խնդիրը կայանում է նրանում, որ ձեռնարկությունների գրանցումը եւ լուծարումն իրականացվում է Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից, իսկ գործունեության ժամանակավոր դադարեցումը եւ վերսկսումը՝ հարկային տեսչության կողմից: Շատ ժամանակ ձեռնարկություններն իրականում լուծարվում են, սակայն պաշտոնապես պարզապես ժամանակավորապես դադարեցնում են իրենց գործունեությունը: Եթե այս խնդրին ավելացնենք այն հանգամանքը, որ երկու պետական կառույցներն էլ սովորաբար խուսափում են կոնկրետ եւ ամփոփ տվյալներ տրամադրելուց, հասկանալի կդառնա, թե ինչու է անհնար տվյալ խնդրի վերլուծությունը: Ելակետային տվյալներ պարզապես չկան: Այնուամենայնիվ՝ *հավաքագրված տեղեկատվության (հիմնականում որակական)* ամփոփ վերլուծությունը ներկայացվում է հաջորդիվ:

Կարծիք՝

Ներկայացված հարցի վերաբերյալ լավագույն ամփոփիչ պատասխաններից մեկը. **«ՓՄՁ-ների գրանցման բյուրոկրատական քաշքշուկներ չկան: Սկսնակ ձեռնարկությունների համար <u>նորմալ</u> ֆինանսավորման հնարավորություններ չենք կարողանում ստեղծել: Մինչեւ տնտեսական ճգնաժամը ամեն տարի նոր գրանցվող ՓՄՁ-ների թիվն աճում էր, ճգնաժամից հետո միտումը հակառակն է: Չկան նորմալ խորհրդատուներ, չկա նման գործողությունները ֆինանսավորող կոնկրետ կառույց»:**

Տավուշի մարզում գյուղատնտեսության ոլորտի ձեռնարկությունների թիվը գրեթե անփոփոխ է. նոր ձեռնարկություններ գրեթե չեն գրանցվում, հները՝ չեն լուծարվում: Օրինակ՝ 2011թ. ընդամենը 2 սպառողական կոոպերատիվներ (ՍԿ)[12] են է գրանցվել տարածաշրջաններից մեկում (համեմատության համար՝ այս նույն տարածաշրջանում 1994թ. հետո ընդհանուր առմամբ գրանցվել է 1,925 անհատական ձեռնարկություններ): Պատճառն այն է, որ գյուղատնտեսությունը շատ քիչ է զարգանում, զարգանում են հիմնականում առեւտրի եւ սպասարկման ոլորտները: Տպավորության մակարդակով կարելի է եզրակացնել, որ իրավիճակը քիչ թե շատ մնում է անփոփոխ՝ չնայած երկարաժամկետ առումով նոր գրանցվողների որոշակի նվազում է նկատվում:

Տավուշի մարզում ՓՄՁ-ների գործունեության դադարեցման եւ լուծարման դեպքերը հաճախացել են գլոբալ տնտեսական ճգնաժամից հետո՝ 2009-2010թթ.: Հետաքրքիր է այն փաստը, որ ԱՁ-ների մոտ այս գործընթացն արտահայտվում է լուծարումներով (1994թ.-ից հիշատակված տարածաշրջանում

[12] Ռեսպոնդենտների կողմից նշվել է, որ ՍԿ-ների հիմնումը համեմատաբար նոր միտում է

լուծարվել են 823 ԱՁ-ներ՝ հիմնականում մանրածախ առեւտրի եւ սպասարկումների ոլորտներից), իսկ մյուս իրավաբանական անձանց մոտ՝ հիմնականում գործունեության ժամանակավոր դադարեցմամբ: Սա կարող է բացատրվել վերջիններիս լուծարման գործընթացի որոշակի բարդությամբ: ՓՄՁ-ների լուծարման կամ գործունեության դադարեցման պատճառների թվում նշվում են հետեւյալ հիմնականները.

- Գլոբալ տնտեսական եւ ֆինանսական ճգնաժամը,
- Բիզնեսները սխալ եւ անարդյունավետ կառավարումը,
- Իրացման շուկաների փոքրությունը եւ ցածր պահանջարկը՝ պայմանավորված գնողունակության անկմամբ,
- Հարկային ծանր եւ խիստ վարչարարությունը,
- Ինովացիոն մոտեցումների եւ գաղափարների սակավությունը,
- Տնտեսական անկարողությունը, գործունեության եւ բնակության վայրի տեղափոխումը,
- Կաթի մթերումների եւ նախնական վերամշակման դեպքում՝ մթերման ցածր գները եւ գործընկերների հետ կայուն հարաբերություններ հաստատելու անհնարինությունը:

3.2 ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

3.2.1 Նոր բիզնեսներ հիմնելու պայմանները

Տավուշի մարզի գործարար միջավայրի վերաբերյալ տեղեկատվությունը համեմատաբար ավելի ծավալուն է, իսկ աղբյուրներն էլ՝ շատ ավելի մատչելի: Գործարար միջավայրի եւ նոր բիզնեսներ հիմնելու նպաստավորության վերաբերյալ կարծիք հայտնելու հնարավորություն են ունեցել ռեսպոնդենտների բոլոր խմբերը՝ բացի խոշոր ֆերմերներից: Նրանց պատասխանների ամփոփ պատկերը ներկայացված է ստորեւ (տես Աղյուսակ 33):

Աղյուսակ 33 - Մարզում առկա պայմանները նպաստավո՞ր են արդյոք նոր բիզնես հիմնելու համար

Ռեսպոնդենտների խմբեր	Ռեսպոնդենտների վերաբերմունքը			Ընդամենը
	Նպաստավոր են	Նպաստավոր չեն	Դժվարանում են պատասխանել	
Պետական եւ հանրային կառույցներ	14	7	3	**24**
Զարգացման ծրագրեր	2	3	1	**6**
ՀԿ-ներ	4	9	0	**13**
Ֆինանսական հաստատություններ	1	4	0	**5**
Վերամշակողներ	8	26	2	**36**
ԸՆԴԱՄԵՆԸ Պատասխաններ	**29**	**49**	**6**	**84**

Աղբյուր՝ Հետազոտության արդյունքների տվյալների բազա

Այս անգամ եւս ռեսպոնդենտների պատասխանների հիմնավորումների հստակ կենտրոնացումներ չկան եւ նպատակահարմար է դրանք վերլուծել ըստ ռեսպոնդենտների խմբերի՝ սկզբում անդրադառնալով *դրական կարծիքներին:*

Զարգացման ծրագրեր

- Պայմանները նպաստավոր են, բայց պետք է սկսնակ բիզնեսներին պետք է ճիշտ աջակցություն տրամադրել եւ օգնել նրանց համագործակցային դաշտի (networking) ստեղծման հարցում,

- Հատկապես կարեւոր է երկարաժամկետ եւ մատչելի ֆինանսական ռեսուրսների հասանելիության ապահովումը:

ՀԿ-ներ

- Մարզում բիզնեսները քիչ են, շուկան համեմատաբար ազատ է եւ մրցակցությունը քիչ է,
- Ճիշտ գաղափարի ներքո հիմնված սկսնակ բիզնեսները զարգանալու լավ հնարավորություններ ունեն:

Պետական եւ հանրային կառույցներ

- Մարզում գործում են տեխնիկական. մասնագիտական եւ ֆինանսական աջակցության բազմաթիվ ծրագրեր՝ որոնք մեծապես աջակցում են նոր այգիների հիմնմանը, անասնապահության զարգացմանը եւ այլն,
- Առկա են նաեւ ազատ հողատարածքներ եւ այլ հարմարություններ,
- Մարզի սահմանակից լինելը հարեւան Վրաստանին արտահանման լրացուցիչ հնարավորություններ է ընձեռում,
- Մարզն ունի լավ աշխարհագրական դիրք՝ կլիման նպաստավոր է գյուղատնտեսական տարբեր տեսակների գործունեությամբ զբաղվելու համար:

Վերջին կարծիքի հետ համաձայն են նաեւ **վերամշակողները**: Առանձնացվում են սննդի վերամշակման, չորացման եւ սառնարանային տնտեսությունների, ջերմոցների հիմնման հնարավորությունները:

Տավուշի մարզի գործարար միջավայրի եւ նոր բիզնեսներ հիմնելու պայմանների վերաբերյալ բացասական կարծիք ունեցող ռեսպոնդենտները բերում են հետեւյալ հիմնավորումները.

Զարգացման ծրագրեր

- Տավուշի մարզը հեռու է Երեւանից, իրացման հիմնական շուկայից, ներքին շուկան ծավալուն չէ,
- Աղքատության մակարդակը բարձր է, սպառման ծավալները փոքր են,
- Որակյալ կադրերի խնդիր կա՝ երիտասարդների արտահոսքը մեծ է,
- Գիտելիքների եւ ֆինանսական ռեսուրսների խնդիր կա,
- Ներմուծվող ապրանքների համեմատ տեղական արտադրանքի մրցունակությունը ցածր է:

ՀԿ-ներ

- Հարկային բեռը ծանր է, հարկային վարչարարությունը վատն է,
- Մարզը գտնվում է սահմանամերձ գոտում, քաղաքական վիճակն անկայուն է,
- Չկան նոր գործ հիմնելու համար անհրաժեշտ մատչելի ֆինանսական ռեսուրսներ,
- Չկա մի մարմին, մի կառույց, որ սկսնակ բիզնեսներին հավաքի, բացատրի, խրախուսի:

Պետական եւ հանրային կառույցներ

- Բիզնեսի կենտրոնացումը Երեւանում շատ մեծ է,
- Հարկային վարչարարությունը վատն է, տույժերը եւ տուգանքները շատ մեծ են,
- Արտադրանքի իրացման հնարավորությունները քիչ են,
- Չկան նոր գործ հիմնելու համար անհրաժեշտ մատչելի ֆինանսական ռեսուրսներ:

Վերամշակողներ

- Հարկային վարչարարությունը վատն է՝ հատկապես նոր հիմնված ձեռնարկությունների նկատմամբ, հովանավորչական սխեմաներ են գործում,

- Չկա սկզբնական կապիտալ եւ մատչելի ֆինանսական ռեսուրսներ ներգրավելու հնարավորություն, վարկային ռեսուրսները թանկ են եւ կարճաժամկետ,
- Սահմանամերձ գյուղական տարածքների բիզնեսների նկատմամբ հատուկ վերաբերմունք չկա,
- Երեւանից եւ մյուս իրացման մյուս հիմնական շուկաներից հեռու են արտադրողները,
- Իրացման խնդիրներ են առաջանում արտադրանքի համեմատաբար մեծ ծավալների պարագայում, իրացման շուկաներ չկան:
- Որակյալ կադրերի խնդիր կա եւ խոշոր ներդրողները խուսափում են հեռու մարզերից:

Ֆինանսական հաստատություններ

- Հարկային վարչարարությունը վատն է, ՓՄՁ-ները չեն դիմանում,
- Սկսնակ բիզնեսները համապատասխան աջակցություն չեն ստանում,
- Իրացման շուկան մարզի ներսում փոքր է, սկսնակ բիզնեսները գոյատեւել կարող են, սակայն զարգանալ՝ ոչ:

3.2.2 Բիզնեսների ձեւավորման խնդիրների հաղթահարումը եւ աջակցության կարիքները

3.2.2.1 Խնդիրների հաղթահարման առաջարկություններ

Նախորդ բաժնում ռեսպոնդենտների կողմից սահմանվել են Տավուշի մարզի սկսնակ բիզնեսների հիմնական խնդիրները եւ գործունեության խոչընդոտները: Ռեսպոնդենտները հետեւողական են եղել նաեւ ներկայացված խնդիրների լուծման ուղղությամբ առաջարկությունների կատարման հարցում: Այդ առաջարկությունները դասակարգվել են ըստ ռեսպոնդենտների խմբերի եւ ներկայացվում են հաջորդիվ:

Զարգացման ծրագրեր

- Խթանել առաջնային գյուղատնտեսական արտադրությունը եւ իրացումը,
- Ապահովել պետական մասնակցություն եւ աջակցություն խնդիրների լուման ընթացքում.
  - Հստակ կանոնակարգելով ներմուծված ապրանքների գները, որակը եւ քանակը,
  - Օժանդակելով տեղական արտադրողներին,
  - Պետական աջակցությունն իրականացնել բացառապես կարգավորման տեսքով եւ ռազմավարական մակարդակի վրա:
- Փոխել մարդկանց մտածելակերպը. կոնկրետ օրինակներով պետք է ցույց տալ եւ ապացուցել, թե ինչպես պետք է աշխատել,
- Փոքր ծրագրեր իրականացնել մարզում՝ սարքավորումներ տրամադրել, իրականացնել վերապատրաստումներ,
- Ապահովել մատչելի վարկային ռեսուրսներ:

ՀԿ-ներ

- Դաշտը դարձնել բաց եւ թափանցիկ: Ստեղծել ազատ տնտեսական դաշտ եւ ապահովել մրցակցություն,
- Ապահովել մատչելի վարկային ռեսուրսներ,
- Դիտարկել բնակլիմայական պատճառներով գյուղացիների կրած վնասների փոխհատուցման հնարավորություններ,
- Հարկային արտոնություններ սահմանել սահմանամերձ գոտիներում գործող/ձեւավորվող բիզնեսների համար,

- Միջոցառումներ ձեռնարկել իրացման շուկաների հասանելիության բարձրացման ուղղությամբ, նվազագույնի հասցնել մենաշնորհ դիրք ունեցող միջնորդների կողմից գանձվող գումարները,
- Շարունակել պետական լայնածավալ ծրագրերի իրականացումը մարզի ենթակառուցվածքների վերականգնման ուղղությամբ,
- Ավելի ինտենսիվացնել համագործակցությունը միջազգային զարգացման ծրագրերի եւ կառույցների հետ, համակարգել նրանց աշխատանքը սիներգետիկ արդյունքներ ապահովելու նպատակով,
- Մեղմել հարկային տեսչության վերաբերմունքը նորաստեղծ ձեռնարկությունների նկատմամբ գործունեության սկզբի 4-5 տարիների համար:

<u>Պետական եւ հանրային կառույցներ</u>

- Բարելավել, մեղմել հարկային վարչարարությունը, հավասար դաշտ ապահովել մարզի եւ դրսի ձեռնարկությունների համար (հատկապես պետական մրցույթային ծրագրերում),
- Ապահովել մատչելի վարկային ռեսուրսներ եւ դրամաշնորհներ,
- Սուբսիդավորել առաջնային գյուղատնտեսական արտադրությունը,
- Վերականգնել ենթակառուցվածքները,
- Զարգացման հավասար հնարավորություններ ստեղծել Տավուշի մարզի բոլոր տարածաշրջանների համար (հատկապես Շամշադինի եւ Բերդի),
- Բիզնեսներին ծանոթացնել գործող օրենսդրությանը՝ տրամադրել բուկլետներ, իրականացնել ուսուցում,
- Աջակցել իրացման նոր շուկաների հայտնաբերման եւ արտադրանքի իրացման հարցերում:

<u>Վերամշակողներ</u>

- Բարելավել հարկային վարչարարությունը, մեղմել ճնշումը սկսնակների նկատմամբ, հավասար վերաբերմունք ապահովել բոլոր բիզնեսների համար,
- Գյուղատնտեսությամբ զբաղվողների (հատկապես սահմանամերձ գոտիների) համար հարկային արտոնություններ սահմանել, կամ էլ իսպառ ազատել բոլոր տեսակի հարկերից, հատուկ պայմաններ ստեղծել սկսնակ բիզնեսների համար,
- Վերականգնել ենթակառուցվածքները՝ ճանապարհները, ոռոգման համակարգերը եւ այլն, հատուկ ուշադրություն դարձնել հեռավոր տարածաշրջաններին (Բերդին),
- Ապահովել մատչելի վարկային ռեսուրսներ,
- Աջակցել արտադրանքի իրացման շուկաների հայտնաբերման եւ արտահանման հարցերում,
- Ինտենսիվացնել զարգացման ծրագրերի իրականացումը, որոնք օրինակ կարող են ծառայել գյուղացիների համար (ինչպես դա կատարվեց Նոյեմբերյանում իրականացված IFAD-ի ծրագրերով):

<u>Ֆինանսական հաստատություններ</u>

- Հատուկ պայմաններ սահմանել նոր գաղափարների, ինովացիոն բիզնեսների համար,
- Հնարավորինս աջակցություն ցուցաբերել արտադրության ոլորտի ձեռնարկություններին,
- Հարկային արտոնություններ եւ մեղմ վարչարարություն սահմանել սկսնակ բիզնեսների համար:

Հետազոտված ռեսպոնդենտների վերը ներկայացված առաջարկները խմբավորվել են հետազոտական թիմի կողմից, սակայն գրեթե չեն խմբագրվել: Իրականում որոշակի կենտրոնացումներ են նկատվում 3 գաղափարների շուրջ՝ **մատչելի (ցածր տոկոսադրույքով եւ երկարաժամկետ) ֆինանսական ռեսուրսների ներգրավման հնարավորությունների ստեղծում, հարկային արդար (հավասար) եւ համեմատաբար մեղմ վարչարարության իրականացում եւ**

արտոնությունների տրամադրում, ինչպես նաեւ՝ **իրացման շուկաների (ներքին ու արտաքին) հայտնաբերման ուղղությամբ աջակցության ապահովում**:

3.2.2.2 Սկսնակ բիզնեսների խորհրդատվական աջակցության կարիքները

Հետազոտության ընթացքում ռեսպոնդենտների կողմից բազմիցս նշվել է, որ սկսնակ բիզնեսները Տավուշի մարզում ունեն ցանկացած, այդ թվում՝ հատկապես խորհրդատվական աջակցության կարիք: Ի սկզբանե սահմանվել են խորհրդատվական աջակցության 4 տեսակ կարիքներ՝ հաշվապահական, իրավաբանական, գործարար եւ ձեռնարկատիրական ունակությունների վերաբերյալ խորհրդատվություն: Այս թեմաներով ռեսպոնդենտների կարիքների գնահատականը ամփոփված է ստորեւ (տես Աղյուսակ 34):

Աղյուսակ 34 - Սկսնակ բիզնեսների խորհրդատվական աջակցության (նախապես սահմանված) կարիքները

Ռեսպոնդենտների խմբեր	Հաշվապահական խորհրդատվություն	Իրավաբանական խորհրդատվություն	Գործարար խորհրդատվություն	Ձեռնարկատիրական ունակությունների բարելավում
Պետական եւ հանրային կառույցներ	13	12	15	14
Զարգացման ծրագրեր	6	5	6	6
ՀԿ-ներ	12	12	12	12
Ֆինանսական հաստատություններ	3	3	4	3
Վերամշակողներ	29	26	30	30
ԸՆԴԱՄԵՆԸ Պատասխաններ	**63**	**58**	**67**	**65**

Աղբյուր՝ Հետազոտության արդյունքների տվյալների բազա

Տարբեր խմբեր ներկայացնող ռեսպոնդենտները գրեթե հավասարապես կարեւորել են նախապես սահմանված խորհրդատվական կարիքներից յուրաքանչյուրը: Այնուամենայնիվ, որոշակիորեն շեշտադրվել է գործարար խորհրդատվության եւ ձեռնարկատիրական ունակությունների բարելավման անհրաժեշտությունը: Այս խնդիրն անուղղակիորեն հաստատվել է նաեւ ոչ պաշտոնական շփումների ընթացքում: Նույնիսկ ոչ սկսնակ գործարարները նշել են, որ իրավաբանական խնդիրների իրենք հաճախ չեն բախվում, հաշվապահական խնդիրները լուծվում են մասնագետի ներգրավմամբ, սակայն բիզնեսի եւ գործարարության խնդիրներ նրանք ունենում են հաճախ եւ պարտավոր են ինքնուրույն լուծել դրանք: Ահա այս դեպքում նրանք խնդիրների առաջ են կանգնում համապատասխան գիտելիքներ եւ ունակություններ չունենալու պատճառով: Միաժամանակ ուրախալի է, որ ռեսպոնդենտները գիտակցում են տվյալ խնդրի առկայությունը եւ պատրաստակամ են միջոցներ ձեռք առնել դրանց հաղթահարման ուղղությամբ:

Կարծիք՝

Ներկայացված հարցի վերաբերյալ հետաքրքիր կարծիք է հայտնել ֆինանսական հաստատություններից մեկի ներկայացուցիչը. **«Խորհրդատվությունն ու կրթվելը խիստ անհրաժեշտ են մարզի ձեռնարկությունների համար: Կրթվելով մարդիկ կհասկանան, որ վարկ վերցնելը նաեւ ռիսկ է եւ վերջապես կսկսեն ինքնուրույն հաշվարկներ անել»:**

Նախօրոք սահմանված աջակցության տեսակներից զատ ռեսպոնդենտների կողմից առաջ են քաշվել այլ կարիքներ եւս, որոնք ներկայացնում ենք լրացուցիչ (տես՝ Աղյուսակ 39): Չնայած լրացուցիչ կարիքները խմբավորվել են, իրականում ներկայացված աղյուսակի առաջին 3 սյուները կարելի է պարզապես միավորել նախորդ աղյուսակում ներկայացված գործարար խորհրդատվության սյունի

հետ: Դա եւս մեկ անգամ հաստատում է այն պնդումը, որ մարզում նման վերապատրաստում իրականացնելու կարիք կա:

Աղյուսակ 35 - Սկսնակ բիզնեսների խորհրդատվական եւ այլ աջակցության (լրացուցիչ հայտնաբերված) կարիքները

Ռեսպոնդենտների խմբեր	Բիզնեսի պլանավորում եւ կառավարում	Մասնագիտական խորհրդատվություն	Շուկայավարման խորհրդատվություն	Ֆինանսական աջակցություն	Խելամիտ հարկային վարչարարություն եւ արտոնություն	Ցանկացած խորհրդատվություն
Պետական եւ հանրային կառույցներ	1	0	0	7	2	2
Զարգացման ծրագրեր	1	1	1	0	0	1
ՀԿ-ներ	0	1	0	5	1	0
Ֆինանսական հաստատություններ	1	0	0	0	1	0
Վերամշակողներ	3	6	3	11	4	2
ԸՆԴԱՄԵՆԸ Պատասխաններ	**6**	**8**	**4**	**23**	**8**	**5**

Աղբյուր՝ Հետազոտության արդյունքների տվյալների բազա

Չնայած սույն հարցադրումը խնդիր ուներ բացահայտելու հիմնականում այսպես կոչված «փափուկ միջոցառումների» (խորհրդատվության տեսակների) կարիքները՝ ռեսպոնդենտները կրկին մատնանշել են մատչելի ֆինանսական ռեսուրսների անբավարարության եւ հարկային տեսչության կողմից վարվող կոշտ քաղաքականության հետ կապված խնդիրները: Այս երկու խնդիրներն իրապես խոչընդոտում են մարզի տնտեսության զարգացմանը եւ հնարավոր միջոցառումները պետք է իրականացնել դրանց հաղթահարման ուղղությամբ:

Ռեսպոնդենտները նշել են նաեւ, որ խորհրդատվական ծառայությունները պետք է ֆինանսավորվեն պետական եւ միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցությամբ (հատկապես ֆինանսական) եւ մատուցվեն համապատասխան մասնագիտական ներուժ եւ փորձառություն ունեցող կազմակերպությունների կողմից, որոնք առավելագույնս տեղեկացված են Տավուշի մարզի խնդիրների մասին: Կարեւոր պայմաններից պետք է լինի մատուցված խորհրդատվական աջակցության արդյունքում ստացված գիտելիքների եւ ունակությունների գործնական կիրառելիությունը:

4 ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՎՐԱ

4.1 ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Ազգային մակարդակում մենաշնորհների առկայությունը եւ դրանց ազդեցությունը երկրի տնտեսության վրա սույն հետազոտության առաջնային եւ ուղղակի խնդիրը չի հանդիսանում: Տվյալ հարցի ներառումը նպատակ է հետապնդում պարզել ռեսպոնդենտների տեղեկացվածությունը երկրի ընդհանուր տնտեսական կյանքից, նրանց վերաբերմունքը մենաշնորհների առկայության նկատմամբ: Հետազոտության այս բաժինը մի տեսակ նախաբան է հանդիսացել Տավուշի մարզում մենաշնորհային երեւույթների հայտնաբերման եւ դրանց ազդեցությունները հասկանալու համար: Հետաքրքրական է, որ ազգային մակարդակում մենաշնորհների առկայության վերաբերյալ ստացվել են խիստ բազմազան տեղեկություններ: Վերլուծության իրականացման հարմարության նպատակով պատասխանների խմբավորումը կրկին իրականացվել է ըստ ռեսպոնդենտների խմբերի:

Զարգացման ծրագրերի ներկայացուցիչները մենաշնորհային ապրանքների եւ ծառայությունների շարքում հիշատակել են վառելիքը, ենթակառուցվածքները եւ հիմնական ռազմավարական ապրանքները՝ նկատի ունենալով առաջնային կարեւորություն ունեցող սննդամթերքի տեսակները:

Խոշոր ֆերմերներն իրենց պատասխաններում ավելի ընդգրկուն են եղել՝ չնայած քիչ չէին նաեւ «ամեն ինչն էլ մոնոպոլիզացված է» տիպի հայտարարությունները, որոնք սակայն որեւէ կերպ հիմնավորելու փորձերն անհաջող են եղել: Քիչ թե շատ հիմնավոր ձեւով հիշատակվել են մենաշնորհային եղանակով ներկրվող վառելիքը, ալյուրը, շաքարավազը, ձեթը եւ սննդամթերքի այլ տեսակները: Ավելի հետաքրքրական են եղել խոշոր ֆերմերների պատասխանները անմիջապես իրենց հետ կապ ունեցող ոլորտների վերաբերյալ: Նրանք հիշատակել են մեղրի եւ մեղրամոմի շուկաների մենաշնորհ վիճակը, կաթի շուկայի օլիգոպոլ վիճակը եւ մթերման գների կարգավորումը մի քանի խոշոր մթերողների կողմից, պտղի մթերումների օլիգոպոլ վիճակը (մի քանի տեղական վերամշակողներ, 1-2 մեծածախ շուկաներ, 1 խոշոր տեղական արտահանող եւ այլն), խաղողի մթերումների օլիգոպոլ շուկան եւ գների կարգավորումը 3-4 խոշոր վերամշակող գործարանների կողմից, եւ վերջապես թութունի մթերման գների սահմանումը մեկ խոշոր մթերողի կողմից: Հետաքրքիր է, որ *չնայած պատասխանների սպոնտան բնույթին՝ այս խմբի ռեսպոնդենտները բավականին հաջող ձեւով սահմանել են հիմնական մենաշնորհային եւ օլիգոպոլային շուկաները՝ ուղղակիորեն մատնանշելով դրանց հիմնական բացասական գործառույթը՝ մթերման գների նվազագույն մակարդակի սահմանումը:*

ՀԿ-ների ներկայացուցիչների պատասխանները շատ չեն տարբերվում: Կրկին հիշատակվել են ներմուծվող կարեւոր ապրանքները, մեղրը եւ մեղրամոմը, խաղողի եւ ծխախոտի մթերումները, ծիրանի արտահանումը: Կարծիքները գրեթե նույնական են նաեւ *պետական եւ հանրային կառույցների ներկայացուցիչների* մոտ: Հետաքրքրական է սակայն, որ մենաշնորհային եւ օլիգոպոլային շուկաները ռեսպոնդենտների կողմից ոչ միշտ են բացասական երանգներով ներկայացվում: Այս շուկաների առկայությունը շատերի համար այլեւս փաստ է՝ տվյալ ելակետային իրավիճակ: Դրա փոխարեն հատուկ բացասական վերաբերմունքի է արժանանանում միջնորդ առեւտրային կառույցների ինստիտուտը: Գրեթե բոլոր ռեսպոնդենտների մոտ այս կառույցները դիտարկվում են որպես առաջնային արտադրողի շահույթի զգալի մասը անարդարացիորեն կլանող օղակ: Հետազոտական թիմի փորձագիտական կարծիքն այս հարցի վերաբերյալ մի փոքր այլ է: Այս միջնորդ օղակներն այնուամենայնիվ անհրաժեշտ են, սակայն նրանց գործելաոճը

(ծառայությունների գները, ձեւավորված գործառույթները, հովանավորչությունը եւ այլն) պետք է որոշակի փոփոխության ենթարկվի:

Հետազոտված *վերամշակող ձեռնարկությունների* 36 ներկայացուցիչներից 22-ը չեն նշել (չգիտեն կամ կարծում են, որ չկա) մենաշնորհային շուկա ունեցող որեւէ ապրանք: Մնացած վերամշակողները մենաշնորհային շուկա ունեցող ապրանքների թվում նշել են դեղձի, ծիրանի արտահանումը, խաղողի եւ ծխախոտի թութունի մթերումները, կաթնամթերքի մթերումները, մեղրի եւ մեղրամոմի շուկան, ինչպես նաեւ ցորենի եւ վառելիքի ներմուծումը: *Ֆինանսական հաստատությունների ներկայացուցիչներն* ավելի ընդհանրական կարծիքներ են հայտնել: Նրանք գտնում են, որ Հայաստանում մենաշնորհային են բոլոր ռազմավարական ապրանքների շուկաները՝ առաջին հերթին նկատի ունենալով սննդամթերքի հիմնական տեսակները եւ վառելիքը:

4.2 ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Մենաշնորհային եւ օլիգոպոլային շուկաների սահմանումից հետո փորձ է կատարվել պարզել, թե որ երեւույթներն են հատկապես խոչընդոտում Տավուշի մարզում առաջնային գյուղատնտեսության եւ վերամշակման ոլորտների զարգացմանը եւ արտադրանքի արտահանմանը: Ռեսպոնդենտների մոտ կեսը նման բացասական ազդեցության որեւէ օրինակ չի նշել: Մյուս ռեսպոնդենտների խմբավորված կարծիքներին փորձենք անդրադառնալ առանձին:

Մենաշնորհային շուկա ունեցող ապրանքներից բոլորից հաճախ հիշատակվել է վառելիքը: Գյուղատնտեսական ակտիվ աշխատանքների սեզոնին բազմաթիվ երկրներում վառելիքի գներն իջեցվում են (կամ թույլ չի տրվում դրանց աճը), ինչը թույլ է տալիս զգալիորեն աջակցել ֆերմերներին՝ նվազեցնելով նրանց ծախսերը: Հայաստանում այդ սեզոնին հատկապես բարձրանում է դիզելային վառելիքի գները:

Վերջին տարիներին տեխնիկական սորտերի խաղողի մթերման գները Հայաստանում տատանվում են 120-150 դրամ/կգ սահմաններում՝ կախված խաղողի տեսակից, շաքարայնության մակարդակից եւ այլ բնութագրիչներից: ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից պաշտոնապես իրականացված հաշվարկների համաձայն 1 կգ խաղողի ինքնարժեքը ֆերմերների համար կազմում է առնվազն 140 դրամ/կգ: Մթերման գների ցածր մակարդակը (որը իրականում սահմանվում է օլիգոպոլային շուկայում), ինչպես նաեւ վճարումների ստացման դժվարությունները զարգացման եւ եկամուտ ստեղծելու հնարավորություն չեն տալիս Տավուշի մարզի ֆերմերներին: Ներկայումս բազմաթիվ ֆերմերներ պարզապես կտրում են խաղողի այգիները՝ դրանք փոխարինելով պտղատու տնկարկներով եւ այլ կուլտուրաներով:

Նմանատիպ իրավիճակ է նաեւ կաթի մթերման ոլորտում: Չնայած Հայաստանում կաթնամթերքի մթերումներ են իրականացնում բազմաթիվ ընկերություններ՝ Տավուշի մարզում դրանք շատ չեն եւ կարողանում են մթերման գներ թելադրել: Վերջին տարիներին մարզում հիմնվել են կաթի մթերման եւ նախնական պահպանման բազմաթիվ կետեր, որոնցից եւ ոչ մեկը ներկա պահին չի գործում: Բոլոր նմանատիպ հաստատություններում բողոքում են վերջնական մթերողների կողմից սահմանված կաթի գների ցածր մակարդակից: Իսկ մթերողներն ի վիճակի են այս գները պահել ցածր մակարդակի վրա, քանի որ անհրաժեշտության դեպքում կարող են նաեւ կաթի փոշի օգտագործել, ինչը երբեմն նույնիսկ տնտեսապես ավելի շահավետ է (օրինակ՝ ձմռան ամիսներին):

Տավուշի մարզի ներքին շուկայում լուրջ խնդիրներ են առաջացնում Վրաստանից, Իրանից եւ այլ երկրներից իրականացվող բանջարեղենի եւ պտղի ներմուծումը: Հատկապես ջերմատնային տնտեսությունների պարագայում ներքին արտադրողը հաճախ պարզապես ի վիճակի չի լինում մրցակցել ներմուծողների հետ եւ հայտնվում է անբարենպաստ իրավիճակում: Ճշգրիտ նույն խնդիրն է արձանագրվել նաեւ մսի շուկայում: Ներմուծվող ցածրարժեք մսի առկայությունը մեծապես խոչընդոտում է մսի ներքին արտադրությանը:

Բազմաթիվ հիշատակությունների է արժանացել նաեւ մեղրի եւ հատկապես մեղրամոմի շուկայի մենաշնորհային իրավիճակը: Այս խնդրի վերաբերյալ իրենց դժգոհությունն են հայտնել մեղվաբուծությամբ զբաղվող գրեթե բոլոր ֆերմերները, ինչպես նաեւ ռեսպոնդենտների մյուս խմբերի բազմաթիվ ներկայացուցիչները: Նրանց կարծիքով շուկայի մենաշնորհային իրավիճակը զգալիորեն բարդացնում եւ թանկացնում է մեղրի արտադրությունը՝ համապատասխանաբար նվազեցնելով եկամտաբերությունը եւ զարգացման հնարավորությունները:

Կարծիք՝

Մեծ թվով ռեսպոնդենտների (հատկապես խոշոր ֆերմերների) կարծիքով մենաշնորհների բացասական հետեւանքների ամենավառ դրսեւորումը երեւում է շուկաներում: Ըստ նրանց. **«Գյուղացին չի կարող իր արտադրանքը շուկա հանել: Շուկան պատկանում է մեկ մարդու, որը ինքնուրույն է որոշում շուկայի աշխատանքի ձեւը, գները եւ այլն»:**

5 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

5.1 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

5.1.1 Տեղեկացվածությունը իրականացված եւ ընթացիկ ծրագրերի վերաբերյալ

Տավուշի մարզը ի սկզբանե (անկախությունից հետո) հանդիսացել է զարգացման ծրագրերի հետ համագործակցող Հայաստանի ամենաակտիվ մարզը: Այստեղ զարգացման ծրագրեր են իրականացրել ներքին եւ միջազգային ֆինանսավորում ունեցող գրեթե բոլոր կառույցները: Հիմնական պատճառը մարզի բնակչության աղքատության բարձր մակարդակն է, հեռավոր տեղադիրքը եւ համայնքների մեծ մասի սահմանակցությունը հարեւան Ադրբեջանին: Նշված երեք պատճառներն էլ մեծապես խոչընդոտում են մարզի սոցիալ-տնտեսական զարգացումը, ինչը եւ գրավում է զարգացման ծրագրեր իրականացնողների ուշադրությունը:

Սույն հետազոտության խնդիրների մեջ իրականացված զարգացման ծրագրերի ուսումնասիրության ներառումը նպատակ ունի բացահայտել քաղված դասերը, լավագույն արդյունքներ ապահոված գործողությունները, թույլ տրված սխալները եւ համագործակցության հնարավորությունները: Հետազոտության արդյունքում պարզվել է, որ 51 ռեսպոնդենտներ (ընդհանուր 169-ից) ընդհանրապես կոնկրետ տեղեկություններ չունեն որեւէ ծրագրի մասին: Տեղեկացված ռեսպոնդենտների պատասխաններն ամփոփված են ստորեւ (տես՝ Աղյուսակ 36):

Աղյուսակ 36 - Տավուշի մարզում իրականացված եւ ընթացիկ զարգացման ծրագրերը

Ռեսպոնդենտների խմբեր	ՄԱԿ-ի ծրագրեր	ՀԲ (ԳԲԿԾ)	ՀՄՀ-Հայաստան	World Vision	IFAD	Համահայկական հիմնադրամ	GIZ	CARD	Masis Tobacco	DFID	OXFAM
Պետական եւ հանրային կառույցներ	8	7	6	2	6	11	3	0	1	3	0
Խոշոր ֆերմերներ	16	18	10	15	12	5	2	2	4	2	5
Զարգացման ծրագրեր	3	0	4	2	1	2	3	4	1	2	0
ՀԿ-ներ	3	1	4	2	1	2	2	0	0	1	0
Ֆինանսական հաստատություններ	1	2	2	2	1	0	2	0	0	0	1
Վերամշակողներ	9	4	4	6	4	4	0	3	2	0	2
ԸՆԴԱՄԵՆԸ Պատասխաններ	**40**	**32**	**30**	**29**	**25**	**24**	**12**	**9**	**8**	**8**	**8**
Ծրագրերի արդյունավետության գնահատականը	**3.4**	**3.1**	**3.2**	**3.2**	**3.2**	**3.2**	**2.8**	**3.2**	**3.4**	**2.9**	**3.4**

Աղբյուր՝ Հետազոտության արդյունքների տվյալների բազա

ՄԱԿ-ի գրասենյակի կողմից Տավուշի մարզում իրականացվել են բազմաթիվ ծրագրեր՝ կոոպերատիվների ստեղծում, կաթի մթերման կետերի հիմնում, սառնարանային եւ չորանոցային

միությունների հիմնում, հասարակական աշխատանքների դիմաց սննդի տրամադրում եւ այլն: ՀԲ ԳԲԱԾԻԳ-ի կողմից իրականացված ծրագրերը ներառել են խորհրդատվության մատուցում, համայնքային զարգացման ենթածրագրեր, մրցակցային դրամաշնորհային ծրագրեր, արոտավայրերի եւ անասնապահության զարգացման գործողություններ: ՀՄՀ-Հայաստանն առավել կենտրոնացել է ոռոգման համակարգի վերականգնման, արտադրանքի ետվաճառքային սպասարկման, ցուցադրական ծրագրերի կազմակերպման վրա: World Vision կազմակերպությունը հնարավորինս թիրախում է կոնկրետ համայնքների զարգացման ծրագրերը, առողջապահական եւ կրթական խնդիրները: IFAD-ի կողմից իրականացվել են ոռոգման համակարգի վերականգնման մեծածավալ աշխատանքներ, հիմնվել են զանգվածային այգիներ: Համահայկական Հիմնադրամը աշխատանքներ է իրականացնում ֆերմերային միությունների ստեղծման, գյուղատնտեսական ենթակառուցվածքների վերականգնման եւ գյուղատնտեսական մեխանիզացիայի պարկերի ստեղծման ուղղությամբ: «Մասիս-Տոբակո» ընկերությունը եւ պատգամավոր Միքայել Վարդանյանի աջակցությամբ իրականացվում են համայնքային զարգացման փոքր ծրագրեր, ինչպես նաեւ ծխախոտի արտադրության ավանդույթների վերականգնում Տավուշի մարզում:

Աղյուսակ 36-ում ներկայացված են առվել հայտնի ծրագրերը: Ընդլայնված ցանկը ներառում է նաեւ պակաս հայտնի այնպիսի դոնորների կողմից իրականացված ծրագրերը, որոնք են «Հեյֆերը», ՀՍՆՀ-ն, Թրփանջյան Հիմնադրամը, ԱՄՆ Խաղաղության Կորպուսը, ԱՄՆ Գյուղդեպարտամենտը, Բնապահպանական Ծրագրերի Կենտրոնը, «Ֆինկա» ՈւՎԿ-ն, Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալությունը, Լինսի Հիմնադրամը, ԵԱՀԿ-ն, Ասիական Զարգացման Բանկը եւ այլն:

5.1.2 <u>Քաղված դասերը եւ կոկնօրինակման ներուժը</u>

Իրականացված բոլոր ծրագրերն էլ բավականին շոշափելի արդյունքներ են տվել: Ցավոք ռեսպոնդենտների տեղեկացվածությունը իրականացված եւ ընթացիկ ծրագրերի նպատակների, կոնկրետ գործողությունների ւ դրանց արդյունքների վերաբերյալ խիստ ցածր է եւ շատ դեպքերում՝ սխալ: Մարդկանց տեղեկություններն ընդհանրական են, հաճախ նրանք ի վիճակի չեն զանազանել տարբեր դոնորներին եւ նրանց կողմից իրականացվող ծրագրերը: Սա մասնակիորեն վկայում է ծրագրեր իրականացնողների եւ շահառուների միջեւ հետադարձ կապի թուլության կամ նույնիսկ բացակայության մասին:

Քաղված դասերի թվում կարելի է հատկապես առանձնացնել հետեւյալ մի քանիսը.

- Որոշ ծրագրեր չեն թիրախում շահառուների առաջնային կարիքները, ինչը հետեւանքն է ծրագրերի նախագծման փուլում ոչ-մասնակցային գործողությունների իրականացումը եւ շահառուների կարիքների շրջանցումը իրականացնողների կողմից: Լավագույն օրինակներից մեկը կաթի մթերման բազմաթիվ կետերի ստեղծումն է հանդիսանում: Հաջողությամբ ստեղծվելով տարբեր ծրագրերի շրջանակներում՝ դրանք պարզապես որեւէ գործունեություն չեն իրականացնում:
- Համագործակցությունը տարբեր ծրագրերի միջեւ բարելավման տեղ ունի: Տարբեր ծրագրեր իրարից անկախ նպատակներ են սահմանում իրենց համար, որոնք հաճախ կրկնվում են: Արդյունքում սահմանափակ ռեսուրսներն անարդյունավետ են օգտագործվում եւ բազմաթիվ խնդիրների լուծման համար ռեսուրսները չեն բավականացնում: Գործունեության համակարգումը (մարզային իշխանությունների վերահսկման ներքո) ներկայումս կարեւոր խնդիրներից մեկն է հանդիսանում:

- Ծրագրերի նախագծման եւ իրականացման փուլերում պատշաճ ուշադրություն չի դարձվում արդյունքների շարունակականության եւ կայունության վրա: Բազմաթիվ ծրագրեր իրականացվել են մեծ հաջողությամբ եւ ապահովել են ակնկալվող արդյունքները: Սակայն ծրագրի ավարտից հետո այդ արդյունքների շարունակականությունը չի ապահովվում եւ երկարաժամկետ կտրվածքով դրական զարգացումները դանդաղում են:
- Զարգացման ծրագրերի համագործակցությունը տեղական կառույցների (ՀԿ-ների, միությունների, մասնագիտացած կառույցների եւ այլն) հետ առկա է, սակայն բուն իրականացման միջոցառումներում (ներդրումային գործողություններում) այս համագործակցության ինտենսիվությունը բարձրանալու ներուժ ունի:
- Զարգացման ծրագրերի իրականացումը Տավուշի մարզում սովորական երեւույթի է վերածվել: Շահառուները այդ ծրագրերի գործունեությունը համարում են ինքնին հասկանալի եւ պատշաճ մակարդակով չեն արժեւորում դրանց արդյունքները: Սա կրկին հետեւանքն է ծրագրերի սխալ նախագծման եւ ոչ-մասնակցային գործընթացների իրականացման:

Արդյունավետության տեսանկյունից շահառուների կողմից առավելագույնս արժեւորվել են ՄԱԿ-ի, OXFAM-ի եւ «Մասիս-Տոբակո» ընկերության կողմից իրականացվող ծրագրերը, որոնք 4 առավելագույնից ստացել են 3.4 գնահատական: Չնայած դրան՝ կրկնօրինակման ենթակա ծրագրերի ցանկը մի փոքր ավելի ընդարձակ է: Առավել հաճախ հիշատակված ցանկալի ծրագրերից են[13].

- **<u>Ոռոգման համակարգերի բարելավումը</u>**: Ոռոգման ժամանակակից խնայողական եւ բարձր արդյունավետ տեխնոլոգիաների ներդրումը: Ոռոգման ջրի կառավարման արդյունավետության բարձրացումը:
- **<u>Նոր պտղատու այգիների հիմնումը</u>**: Տնկարանային տնտեսությունների հիմնումը, տնկիների տրամադրումը ֆերմերներին, ժամանակակից սորտերի կիրառությունը, արդյունավետ ագրոտեխնիկայի իրականացումը:
- **<u>Անասնագյխաքանակի ավելացումը</u>**: Բարձր մթերատու անասունների ներմուծումը եւ տրամադրումը ֆերմերներին, տոհմային գործի եւ անասնաբուժության պատշաճ իրականացումը:
- **<u>Արոտավայրերի հասանելիության, կառավարման եւ արդյունավետության բարելավումը:</u>** Հեռավոր արոտավայրեր տանող ճանապարհների վերականգնումը, արոտավայրերում էլեկտրական հոսանքի եւ ջրի ապահովումը, կացարանների ստեղծումը եւ այլն:
- **<u>Գյուղատնտեսական տեխնիկայի պարկերի հիմնումը:</u>** Ժամանակակից գյուղատնտեսական տեխնիկայի ներմուծումը եւ մատչելի ֆինանսական սխեմաներով համայնքներին տրամադրումը:
- **<u>Առաջնային գյուղատնտեսական արտադրանքի արժեքի բարձրացումը վերամշակման եւ այլ հնարավորությունների ընձեռնման միջոցով:</u>** Մթերման կետերի, սառնարանների, չորանոցների, սպանդանոցների, արտադրանքի պահպանման, իրացման եւ դիստրիբուցիոն համակարգի բարելավումը: Փոքր ջերմատնային տնտեսությունների հիմնումը:
- **<u>Համայնքային համայիր զարգացման սոցիալական (կրթական, առողջապահական, մշակութային, ենթակառուցվածքային եւ այլն) ծրագրերի իրականացումը:</u>** (Գազաֆիկացում, խմելու ջուր, բուժկետեր, դպրոցներ, համայնքի լուսավորություն, ներհամայնքային ճանապարհներ եւ այլն),
- **<u>«Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագիրը</u>**:

[13] Կրկնօրինակման ենթակա ծրագրերի ամբողջական ցանկը ներկայացվում է սույն հետազոտության տվյալների բազայում

5.2 ՄԱԶԾ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հետազոտությանը մասնակցած գրեթե բոլոր զարգացման ծրագրերը եւ ՀԿ-ները հայտնել են ՄԱԶԾ հետ համագործակցելու իրենց պատրաստակամությունը: Տվյալ հարցի վերաբերյալ պատասխանները ստորեւ ներկայացվում են առանց լրացուցիչ մեկնաբանության.

- Համայնքների եւ կոոպերատիվների ռեսուրսներն անբավարար են: Կարելի է փոխլրացնող գործողություններ պլանավորել եւ իրականացնել,
- Համագործակցությունը արդյունավետ կարող է լինել հատկապես ցուցահանդեսների կազմակերպման դաշտում:
- Կարող են համագործակցել մասնագիտական խորհրդատվության տրամադրմամբ ձկնաբուծության եւ մեղվաբուծության ոլորտներում,
- ՄԱԿ-ի կողմից լավ ծրագրեր են իրականացվում: Առկա է նաեւ ՄԱԿ-ի եւ այլ միջազգային կառույցների հետ նախկին համագործակցության հաջող փորձը,
- Պատրաստ են համագործակցել գյուղատնտեսության ոլորտում աջակցության ծրագրեր իրականացնող ցանկացած կառույցի հետ,
- Ներկայացված ծրագիրը շատ կարեւոր է եւ պատրաստ են բազմակողմանիորեն աջակցել ծրագրի իրականացմանը:

Զարգացման ծրագրերի եւ ՀԿ-ների կողմից ՄԱԿ-ի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում կարող են մատուցվել օժանդակության հետեւյալ տեսակները (տես՝ Աղյուսակ 37):

Աղյուսակ 37 - Տարբեր շահագրգիռ կառույցների կողմից մատուցվելիք օժանդակությունը

Ռեսպոնդենտների խմբեր	Դասընթացներ	Խորհրդատ-վություն	Ֆինանսական օժանդակություն	Տեխնիկական օժանդակություն	Մասնագի-տական օժանդակություն	Տեղեկատվական օժանդակություն եւ իրազեկում
Զարգացման ծրագրեր	6	3	3	2	3	3
ՀԿ-ներ	12	12	2	8	10	12
ԸՆԴԱՄԵՆԸ Պատասխաններ	**18**	**15**	**5**	**10**	**13**	**15**

Աղբյուր՝ Հետազոտության արդյունքների տվյալների բազա

6 ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

6.1 ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՌԿԱ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

6.1.1 Առկա կենտրոնների կարգավիճակը

2011թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսների դրությամբ Տավուշի մարզում (ինչպես նաեւ ողջ Հայաստանում) դասական իմաստով գործող շուկայական տեղեկատվական կենտրոն (ՇՏԿ) չի հայտնաբերվել: Հայաստանում տարբեր կառույցների կողմից ներկայումս իրականացվում են ՇՏԿ-ների որոշ կոնկրետ գործառույթներ, սակայն ամբողջական եւ բազմակողմանի գործունեություն չի իրականացվում որեւէ հաստատության կողմից: Այնուամենայնիվ, այս խնդիրը հնարավորինս մանրամասն արծարծվել է սույն հետազոտության շրջանակներում եւ քննարկվել է հետազոտության մեջ ներգրավված բոլոր շահառուների (ֆիզիկական անձանց՝ ֆերմերների եւ հաստատությունների ներկայացուցիչների) հետ: Խնդիր է դրվել հասկանալ տվյալ տիպի կառույցների վերաբերյալ ռեսպոնդենտների տեղեկացվածությունը եւ նրանց գնահատականը իրականացվող հատուկենտ գործողությունների արդյունավետության վերաբերյալ:

Հետազոտությանը մասնակցած եւ ՇՏԿ-ների վերաբերյալ հարցերին պատասխանած ռեսպոնդենտների մոտ կեսը կա՛մ ընդհանրապես տեղյակ չէ նմանատիպ որեւէ կառույցի վերաբերյալ, կա՛մ համարում է, որ նման կառույց չկա: Այս ռեսպոնդենտների մեծ մասը պարզապես ոչինչ չի լսել կամ չի հետաքրքրվել ՇՏԿ-ների մասին: Հատուկենտ ռեսպոնդենտներ հանդես են եկել ուրույն մեկնաբանություններով. նրանք չեն արժեւորում նմանատիպ գործողություններ իրականացնող կառույցների աշխատանքը եւ համարում են, որ նրանք ճիշտ չեն աշխատում եւ տրամադրվող տեղեկատվությունը հասանելի չէ:

ՇՏԿ-ների վերաբերյալ «տեղյակ» ռեսպոնդենտների կողմից, ընդհանուր առմամբ, հիշատակվել են բավականին մեծ թվով կազմակերպություններ, որոնք որոշակի տեղեկատվություն են տրամադրում: Դրանց թվում են.

- Տավուշի մարզի Գյուղատնտեսության Աջակցության Մարզային Կենտրոնը (ԳԱՄԿ-ը),
- Հանրապետական եւ մարզային հեռուստակայանները՝ «Արմենիա», «Հ1», «Հ2», «Կենտրոն», «Իջեւանի Հեռուստակայան», «Ցենզուր» եւ այլն,
- «Ագրոլրատու» եւ «Ֆերմեր» թերթերը,
- Գյուղապետարանները (հատկապես Գանձաքար համայնքի),
- Տարբեր ՀԿ-ներ եւ ծրագրեր՝ ՓՄՁ-ՁԱԿ-ը, GTZ-ի բիզնես կենտրոնը Իջեւանում, «Երեւակ» ՀԿ-ն, «Դիլնեթ» ՀԿ-ն, «Էմուլիկ» ՍԿ-ն, «Թրփանջյան Հիմնադրամը», «ՕՔՍՖԱՄ-Հայաստան» ԲԿ-ն, «Օրհուս» Կենտրոնը, եւ այլն: Մոտավոր նմանություն ունեցող (անհամեմատ ավելի համեստ նպատակներով) ծրագիր է նախաձեռնվել նաեւ World Vision կազմակերպության կողմից, որը «Երիտասարդ Տավուշ» ՀԿ միջոցով նախատեսում է ստեղծել մարզի մի շարք համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների տվյալների բազա:

Իրականում նման պատասխանները վկայում են ռեսպոնդենտների անտեղյակության կամ սխալ տեղեկացվածության վերաբերյալ: Նշված կառույցներից եւ ոչ մեկը ՇՏԿ ամբողջական գործառույթ չի իրականացնում եւ չի իրականացրել: Առանձին միջոցառումներ նախաձեռնվել են, սակայն դրանք հիմնականում կրել են պահային բնույթ: Այնուամենայնիվ անդրադառնանք հատկապես շատ

հիշատակված կառույցներին՝ ԳԱՄԿ-ին եւ լրատվամիջոցներին: Տավուշի մարզի ԳԱՄԿ-ի կողմից իրականացվում է ֆերմերային տնտեսությունների ընդհանուր խորհրդատվություն, որոշակի աջակցություն է տրամադրվում նաեւ շուկայական իրավիճակի մասին: Սակայն կանոնավոր ձեւով շուկայական տեղեկատվության հավաքագրում եւ ֆերմերային տնտեսություններին արտադրանքի շուկայավարման հետեւողական գործողություններ իրականացնելու համար ԳԱՄԿ-ը բավարար ռեսուրսներ չի տնօրինում:

Լրատվամիջոցների պարագայում կարելի է առանձնացնել «Ագրոլրատու» թերթի կողմից կանոնավոր կերպով իրականացվող հիմնական գյուղատնտեսական ապրանքների գների մոնիտորինգը եւ տպագրությունը: Սա շատ օգտակար տեղեկատվություն է ֆերմերային տնտեսությունների համար եւ կարող է կողմնորոշիչ դեր խաղալ նրանց համար: Այնուամենայնիվ՝ ներկայացվող գները հիմնականում միջինացված են եւ կոնկրետ առաջարկներ (գնման կամ վաճառքի) չեն հանդիսանում:

Հայաստանում ԾՏԿ-ների հիմնման փորձերի օրինակներից կարելի է առանձնացնել հետեւյալ երկուսը, որոնց վերաբերյալ ռեսպոնդենտները, ցավոք, անտեղյակ են: Համառոտ նկարագիրը ներկայացվում է ստորեւ.

Տեղեկություն՝

Կովկասի Շուկայավարման Համակարգ[14]		**Հայաստանի Գյուղատնտեսական Շուկայի Տեղեկատվական Համակարգ**[15]	
Նախաձեռնող եւ ֆինանսավորող՝	Գլոբալ Խաղաղության Ամերիկյան Համալսարան	***Նախաձեռնող եւ ֆինանսավորող՝***	Հազարամյակի Մարտահրավեր Հիմնադրամ՝ Հայաստան Ծրագիր, Ջրից Շուկա բաղադրիչ
Իրականացնող՝	Մարդկային Զարգացման Միջազգային Կենտրոն (ՄԶՄԿ), (Հայաստան)	***Իրականացնող՝***	Գյուղատնտեսական Միությունների Ֆեդերացիա (ԳՄՖ), (Հայաստան)
Կարգավիճակը՝	Չգործող	***Կարգավիճակը՝***	Չգործող
Համացանցային կայքէջ՝	www.manec.biz	***Համացանցային կայքէջ՝***	www.armis.am
Նպատակները՝		***Նպատակները՝***	
Ծրագրի նպատակը տարածաշրջանի երկրների մասնակից ֆերմերների աջակցությունն է իրենց արտադրանքի վաճառքի աջակցության տրամադրումն է համացանցային տեխնոլոգիաների կիրառության միջոցով: Այս վիրտուալ շուկան գործարկվել է տարբեր երկրների տեղական գրասենյակների միջոցով, որտեղ իրականացվել է առկա ապրանքների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, եւ կազմակերպվել է վաճառողների եւ գնորդների երկխոսությունը: Այդ գրասենյակները միջնորդի դեր են ստանձնել գնորդների եւ մատակարարների միջեւ՝ Ծրագրի կայքէջը օգտագործելով որպես հաշվարկային կենտրոն:		Ծրագրի նպատակն է Հայաստանում ֆերմերներին սննդի արտադրության եւ շուկայավարման շղթայի մյուս մասնակիցներին ժամանակին ապահովել գյուղատնտեսական ապրանքների շուկայական գների մասին տրամադրվող տեղեկատվությամբ: Այս տեղեկատվությունը տրամադրվել է ավելի քան 40 տեսակ ապրանքների վերաբերյալ՝ հավաքագրվելով Երեւանի, Արմավիրի, Գյումրիի եւ Վանաձորի շուկաներում:	

Ցավոք ներկայացված երկու ԾՏԿ-ներն էլ ներկայումս գործունեություն չեն իրականացնում: Չնայած գործունեության դադարեցման պատճառներն առաջին հայացքից տարբեր են՝ դրանց հիմքում նույն նախադրյալներն են ընկած: Իրականում գործունեություն չիրականացնելու հիմնական պատճառը

[14] Marketing Network of Caucasus (MANEC)

[15] Armenian Agricultural Market Information System (ARMIS)

կոնկրետ ծրագրի իրականացման ժամանակահատվածի ավարտն է եւ համապատասխան ֆինանսավորման բացակայությունը: MANEC համակարգի դեպքում ծրագիրը նպատակ ուներ սերտացնել Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ առեւտրային հարաբերությունները, որոնք սակայն ի չիք դարձան քաղաքական հարաբերությունների ճգնաժամային վիճակի անփոփոխության պատճառով: ARMIS համակարգի դեպքում եւս գործունեությունը դադարեց Հազարամյակի Մարտահրավերների Հայաստանի Ծրագրի եւ համապատասխան ֆինանսավորման ավարտով:

Գործունեության կայունության եւ ինքնաֆինանսավորման հասնելու հանգամանքը կարեւորագույն նշանակություն ունի ցանկացած ՇՏԿ կայացման համար: Սա առաջնային խնդիր է, որը պետք է անպայմանորեն հաշվի առնվի ՄԱԶԾ համապատասխան մասնագետների կողմից, որոնք կներգրավվեն Տավուշի մարզում ապագա ՇՏԿ հիմնման գործում:

6.1.2 Տրամադրվող տեղեկատվության բնութագիրը

6.1.2.1 Առկա տեղեկատվության տեսակները եւ տրամադրման եղանակները

Չնայած ռեսպոնդենտների կողմից հիշատակված կառույցները իրենց բնույթով ՇՏԿ-ներ չեն հանդիսանում՝ նրանք որոշակի կանոնավորությամբ կոնկրետ տեղեկություններ են տրամադրում Տավուշի մարզի ֆերմերներին, վերամշակման ոլորտի ձեռնարկություններին եւ հետազոտության մեջ ներգրավված այլ կառույցներին: Ընդհանուր տպավորությունն այն է, որ նշված սուբյեկտներին տրամադրվող ցանկացած տեղեկատվությունը կարեւոր է եւ որոշակիորեն օգնում է նրանց իր գործունեությունը կազմակերպելու ընթացքում: Ելնելով դրանից՝ անդրադարձ է կատարվել նաեւ տրամադրվող տեղեկատվության բնութագրերին, այն է՝ տեղեկատվության տեսակներին եւ տրամադրման եղանակներին:

Տնտեսվարող մասնավոր եւ այլ գործունեություն իրականացնող ռեսպոնդենտներին ներկայումս տրամադրվող տեղեկատվությունը խիստ տարաբնույթ է: Վերլուծության ընթացքում այն պայմանականորեն դասակարգվել է եւ հիմնական խմբերը վերլուծվել են: Նշենք նաեւ, որ ռեսպոնդենտներին ընձեռվել է բազմակի պատասխաններ տալու հնարավորություն: Հիշատակության արժանի արդյունքները ներկայացված են ստորեւ:

Մասնագիտական տեղեկատվության տրամադրումը ամենահաճախն է հիշատակվել ռեսպոնդենտների կողմից (50 պատասխան 170 ռեսպոնդենտներից): Այս խմբի ներքո հիշատակվել են տեղեկատվության հետեւյալ տեսակները. գյուղատնտեսության վերաբերյալ խորհրդատվություն, նոր ագրոտեխնիկական տեխնոլոգիաների վերաբերյալ խորհրդատվություն, բուսաբուծության եւ մասնավորապես այգիների խնամքի (ցանքս, բուժում եւ պայքար վնասատուների դեմ, պատվաստում եւ այլն) վերաբերյալ խորհրդատվություն, եւ, վերջապես, անասնապահության եւ անասնաբուժության վերաբերյալ խորհրդատվություն: Հետաքրքրական է, որ ռեսպոնդենտները տեղեկատվության տրամադրումը նույնացնում են խորհրդատվության ստացման հետ: Հստակ դիտարկվում է ամենից հաճախ հիշատակված տեղեկատվության տրամադրողի (Տավուշի մարզի ԳԱՄԿ-ի) եւ տրամադրված տեղեկատվության բնույթի միջեւ կորելացիան: Նույնը կարելի է հաստատել նաեւ հիշատակված այլ կառույցների՝ տեղական ՀԿ-ների, զարգացման ծրագրերի, սպառողական կոոպերատիվների մասով: Տեղեկատվությունը տրամադրվել է հիմնականում երես առ երես հանդիպումների, գործնական միջոցառումների անցկացման, սեմինարների եւ քննարկումների, տպագիր նյութերի տրամադրման տեսքով: Այնուամենայնիվ, մեկ անգամ եւս պետք

է նշել, որ տրամադրվող տեղեկատվության այս խումբն ուղղակիորեն շուկայական չի կարող համարվել:

Գյուղատնտեսության ոլորտի ընդհանուր զարգացումները, ինչպես նաեւ տարբեր նորությունները հիշատակման հաճախության տեսանկյունից հաջորդ տեղեկատվության խումբն է հանդիսանում (41 պատասխան 170 ռեսպոնդենտներից): Այս խմբում նշվել են այնպիսի տեղեկություններ, որպիսիք են մարզային եւ հանրապետական լուրերը, եղանակի տեսությունները, գյուղոլորտին առնչվող նորությունները եւ այլն: Սա վկայում է այն մասին, որ ռեսպոնդենտները (հատկապես ֆերմերները եւ վերամշակող ձեռնարկությունները) կանոնավոր հետեւում են ոլորտի զարգացումներին: Նման տեղեկությունների հիմնական աղբյուրը կրկին զանգվածային լրատվամիջոցներն են: Տեղեկությունների այս խումբը եւս ԾՏԿ-ների առաջնային թիրախ չի հանդիսանում: Դրանց հավաքագրումը եւ տրամադրումը կարող է լրացուցիչ գործառույթ հանդիսանալ ԾՏԿ-ների համար:

Շուկայական տեղեկատվության խումբը հիշատակման հաճախության տեսանկյունից երրորդն է (31 պատասխան 170 ռեսպոնդենտներից): Այս խմբում մասնավորապես հիշատակվել են գյուղատնտեսական ապրանքների (շուկայական) գների, առաջարկի եւ պահանջարկի եւ տարբեր շուկաների միտումների, շուկայավարման եղանակների վերաբերյալ ստացված տեղեկությունները: Նման տեղեկությունները ռեսպոնդենտները հիմնականում ստացել են զանգվածային լրատվամիջոցներից՝ թերթերից, հեռուստատեսությունից, համացանցից: Հատուկ հիշատակվել է «Ագրոլրատու» թերթը, որը կանոնավոր ձեւով տեղեկություններ է տպագրում գյուղատնտեսական հիմնական ապրանքների գների վերաբերյալ: Բավականին օգտակար են եղել նաեւ տարբեր կառույցների կողմից կազմակերպված սեմինարները եւ քննարկումները: Տեղեկատվության այս խմբի տրամադրումը հանդիսանում է ԾՏԿ-ների կողմից իրականացվող հիմնական գործառույթը: Առկա պրակտիկան անհրաժեշտաբար պետք է հաշվի առնվի նոր ԾՏԿ հիմնման գործընթացում. կարելի է դիտարկել համագործակցության հնարավորությունը արդեն իսկ գործող կառույցների հետ:

Վերջին եզրահանգումը (10 պատասխան 170 ռեսպոնդենտներից) լիովին վերաբերվում է նաեւ տեղեկատվության հաջորդ խմբին՝ *գյուղատնտեսության ոլորտում զարգացման ծրագրերին, ֆինանսավորման հնարավորություններին վերաբերվող տեղեկություններին*: Այս տեղեկատվությունը ստացվում է կոնկրետ ծրագրեր իրականացնող կառույցներից (զարգացման ծրագրեր, ֆինանսական հաստատություններ եւ այլն), լրատվամիջոցներից եւ տեղական ինքնակառավարման մարմիններից: Տեղեկությունները հիմնականում տրամադրվում են սեմինարների եւ հանդիպումների կազմակերպման, տպագիր նյութերի տրամադրման, մամուլի հաղորդագրությունների միջոցով:

Ամփոփելով եւս մեկ անգամ կարելի է նշել, որ **տեղեկատվության փոխանցման հիմնական եղանակը թերթերն են եւ տպագիր այլ նյութերի տրամադրումը: Դրանք համեմատաբար հեշտորեն հասանելի են ռեսպոնդենտների գերակշիռ մեծամասնությանը եւ նրանք ինտենսիվորեն օգտվում են այս հնարավորությունից: Բավականին հաճախ հիշատակվել են նաեւ սեմինարների, դասընթացների եւ հանդիպումների անցկացումը: Այս հանգամանքը եւս հարկավոր է հաշվի առնել, քանի որ միայն նման միջոցառումների ընթացքում է հնարավոր իրական քննարկումներ կազմակերպել եւ պարզել շահառուների կարիքները: Դա հատկապես կարեւոր կլինի նոր ԾՏԿ հիմնման եւ նրա խնդիրների ու գործառույթների հստակեցման նախնական փուլում:** Տեղեկատվության տրամադրման այլ եղանակների թվում ռեսպոնդենտների կողմից (թեեւ ավելի հազվադեպ) հիշատակվել են նաեւ հեռախոսազանգերը եւ տեքստային հաղորդագրությունների ստացումը (հատկապես եղանակի մասին), մասնագետների այցելությունները եւ բանավոր քննարկումները, էլեկտրոնային տեղեկատվության տրամադրումը (էլեկտրոնային փոստի եւ համացանցի միջոցով) եւ այլն:

Հետազոտության արդյունքում հավաքագրված առավել մանրամասն տեղեկությունները ներկայացված են սույն հետազոտության շրջանակներում ստեղծված տվյալների բազայում, որը եւս տրամադրվում է:

6.1.2.2 Առկա տեղեկատվության գնահատականը

Շուկայական եւ հարակից տեղեկատվության մասնակի առկայությունը եւ հասանելիությունը ֆերմերների եւ շահագրգիռ մյուս ռեսպոնդենտների համար ինքնին շատ դրական երեւույթ է: Ինչպես արդեն նշվել է, ներկայիս իրավիճակում ցանկացած տիպի տեղեկատվական աջակցությունը կարեւոր է: Միաժամանակ հետաքրքիր է նշված տեղեկատվության սպառողների վերաբերմունքը եւ գնահատականը առկա տեղեկատվությանը: Այս վերաբերմունքը պարզելու համար առանձնացվել են տեղեկատվության 3 կարեւոր բնութագրիչներ՝ օպերատիվությունը, ճշգրտությունը եւ հասանելիությունը: Ռեսպոնդենտներին առաջարկվել է 4 բալանոց համակարգով գնահատել ներկայումս առկա տեղեկատվության նշված բնութագրիչները: Համակարգում 4 գնահատականը համարվել է լավագույն գնահատականը (տեղեկատվությունը տրամադրվում է շատ օպերատիվ ձեւով, ճշգրտությունը բարձր է եւ լիովին հասանելի է օգտագործողների համար), իսկ 1 գնահատականը՝ վատագույնը (տեղեկատվությունը մատուցվում է անկանոն եւ ուշացումներով, դրանում պարունակվում են բազմաթիվ սխալներ եւ այն դժվար հասանելի է): Հետազոտության ընթացքում հավաքագրված տվյալները որոշակի դասակարգման եւ վերլուծության են ենթարկվել: Արդյունքները կներկայացվեն ըստ ռեսպոնդենտների հիմնական խմբերի:

Առկա տեղեկատվության վերաբերյալ կարծիք հայտնելուց եւ գնահատական տալուց ձեռնպահ են մնացել *զարգացման ծրագրերի* եւ *ֆինանսական հաստատությունների* ներկայացուցիչները: Այս կառույցները նշել են, որ թեեւ որոշ բաներ լսել են ՇՏԿ-ների մասին, նրանց ծառայություններից (տրամադրած տեղեկություններից) չեն օգտվել եւ կարծիք չեն կարող հայտնել: Հետազոտությանը մասնակցած մյուս ռեսպոնդենտների գնահատականների միջինացված ցուցանիշները ներկայացված են ստորեւ:

Նկար 4 - Տրամադրվող տեղեկատվության բնութագրիչների գնահատականը



Աղբյուր՝ Հետազոտության արդյունքների տվյալների բազա

Տեղեկատվության *օպերատիվության* վերաբերյալ բարձր գնահատականներ են ստացվել խոշոր ֆերմերներից եւ վերամշակող ձեռնարկություններից: Օպերատիվ ձեւով տեղեկատվություն տրամադրող կառույցների թվում այս երկու խմբերի ռեսպոնդենտների կողմից հիշատակվել են Թրփանջյան Հիմնադրամը, կոնյակի գործարանը, ՓՄՁ ՁԱԿ-ը, «Ագրոբիզնեսի եւ գյուղատնտեսական

զարգացման կենտրոնը», սպառողական կոոպերատիվները, «ՕՔՍՖԱՄ-Հայաստան» ԲԿ-ն, «Հեյֆեր» ՀԿ-ն եւ այլն: Կրկին հստակ է, որ ռեսպոնդենտների մոտ շուկայական տեղեկատվության վերաբերյալ ոչ ճիշտ ըմբռնում կա, քանի որ նշված կառույցներից գրեթե ոչ մեկը նմանատիպ տեղեկատվություն հավաքելու եւ տարածելու գործառույթ չունի: Օպերատիվության վերաբերյալ ցածր գնահատականներ են ստացվել պետական եւ հանրային կառույցներից, որոնց համար տեղեկատվության աղբյուրներ են հանդիսացել ԳԱՄԿ-ը եւ Տավուշի մարզպետարանը: Ցավոք ստացվող տեղեկատվության գնահատականների վերաբերյալ ռեսպոնդենտները ռելեւանտ մեկնաբանություններ չեն կատարել, ինչը անհնար է դարձնում նրանց գնահատականների օբյեկտիվության վերաբերյալ կարծիքի ձեւավորումը:

Տեղեկատվության *ճշգրտության* վերաբերյալ բարձր գնահատականներ են ստացվել Տավուշի մարզի ՀԿ-ներից: Որպես ճշգրիտ տեղեկատվության աղբյուր նշվել են ԳԱՄԿ-ը, Թրփանջյան Հիմնադրամը, ՓՄՁ ՁԱԿ-ը, «Հեյֆեր» ՀԿ-ն եւ մի շարք այլ կառույցներ: Մյուս խմբերի ռեսպոնդենտները հատկապես արժեւորել են «Ագրոբիզնեսի եւ գյուղատնտեսական զարգացման կենտրոնի», «Համայնքների միության» կողմից տրամադրվող տեղեկատվությունը: Կրկին պետք է նշել, որ այս կառույցներից եւ ոչ մեկը կանոնավոր հիմունքներով շուկայական տեղեկատվության հավաքագրում եւ տարածում, այնուամենայնիվ, չի իրականացնում: Ռեսպոնդենտների մեկնաբանություններից պարզ է դառնում, որ ԳԱՄԿ-ը նման բարձր գնահատականի է արժանացել կանոնավոր այցելությունների եւ խորհրդատվության մատուցման արդյունքում, Թրփանջյան Հիմնադրամը՝ իր հաճախորդների միջեւ գործուն համագործակցային ցանցի ստեղծման եւ տեղեկատվության շրջանառության կազմակերպման արդյունքում:

Կարծիք՝

Տեղեկատվության տրամադրման հետաքրքիր եւ կրկնօրինակելի համակարգ է կիրառել «ՕՔՍՖԱՄ-Հայաստան» ԲԿ-ն: Կազմակերպությունը իր ծրագրերի շահառուներին կանոնավոր տեքստային հաղորդագրություններ է ուղարկել եղանակի կանխատեսումների վերաբերյալ: Հատկապես խոշոր ֆերմերների կողմից այս ծառայությունը շատ է արժեւորվել: **Շահառուների հետ հաղորդակցման այս եղանակը կարող է հաջողությամբ կրկնօրինակվել այլ բնույթի տեղեկատվության տարածման համար եւս:**

Տեղեկատվության *հասանելիության* վերաբերյալ բարձր գնահատականները կրկին ստացվել են խոշոր ֆերմերներից եւ վերամշակողներից: Տեղեկատվության աղբյուրները այս դեպքում եւս գրեթե նույնն են՝ «Ագրոբիզնեսի եւ գյուղատնտեսական զարգացման կենտրոն», «Երեւակ» ՀԿ, Թրփանջյան Հիմնադրամ, «ՕՔՍՖԱՄ-Հայաստան» ԲԿ-ն եւ այլն: Ռեսպոնդենտների ընդհանուր մեկնաբանություններում կարելի է հանդիպել անվստահության դեպքերի՝ որոշ մարդիկ կարծում են, որ տեղեկատվությունը խիստ սահմանափակված է: Սակայն առավել տարածված կարծիքն այն է, որ տեղեկատվությունը «հասնում» է այն շահառուներին, ովքեր հետաքրքրված այդ տեղեկատվության ստացմամբ: Այն դեպքերում, երբ շահառուները չեն արժեւորում կոնկրետ տեղեկատվությունը, չեն էլ հետաքրքրվում այդ տեղեկատվության ստանալու հարցերով: Ընդհանուր առմամբ, այս հարցի վերաբերյալ ռեսպոնդենտները որոշակի սուբյեկտիվություն են դրսեւորել:

6.1.3 <u>Գործունեության հիմնական խնդիրները եւ խոչընդոտները</u>

Մինչեւ վերլուծության բուն թեմային անցնելը մեկ անգամ եւս ցանկանում ենք նշել, որ հետազոտության արդյունքում Տավուշի մարզում չի հայտնաբերվել որեւէ կառույց, որը կայուն հիմունքներով իրականացնում է ՇՏԿ-ներին բնորոշ գործառույթների քիչ թե շատ ամբողջական փաթեթ: Ստորեւ դիտարկվելիք խնդիրները եւ խոչընդոտները վերաբերվում են այն կառույցների եւ կազմակերպությունների գործունեությանը, որոնք որեւէ հաճախականությամբ ցանկացած տիպի

տեղեկատվություն են մատուցում Տավուշի մարզի խոշոր ֆերմերներին, վերամշակող ձեռնարկություններին եւ շահագրգիռ այլ կառույցներին:

Տեղեկատվություն տրամադրողների հետ կապված խնդիրների վերաբերյալ հարցադրմանը ստացված պատասխանները ճիշտ է վերլուծել ըստ կոնկրետ կառույցների, որոնք ներկայումս այս կամ այն տիպի տեղեկություններ են տրամադրում: Դա թույլ կտա որոշակիորեն դասակարգել պատասխանները եւ բացահայտել դրանց շեշտադրումները: Ելնելով պատասխանների ստացման հաճախականությունից՝ առանձնացվել են տեղեկատվության հետեւյալ աղբյուրների գործունեության խնդիրներին վերաբերվող պատասխանները.

- Տավուշի մարզի ԳԱՄԿ (30 պատասխան 61 ռեսպոնդենտներից),
- Մարզային եւ հանրապետական հեռուստաալիքներ (7 պատասխան 61 ռեսպոնդենտներից),
- Մարզային եւ տեղական իշխանություններ (3 պատասխան 61 ռեսպոնդենտներից),
- ՓՄՁ ԶԱԿ (3 պատասխան 61 ռեսպոնդենտներից):

Պատասխանները ներկայացնելիս փորձ է կատարվել զերծ մնալ ծայրահեղ սուբյեկտիվ եւ անհիմն կարծիքներից: Բացի այդ որոշ նմանատիպ եւ փոխլրացնող պատասխաններ խմբավորվել են: Անդրադառնանք յուրաքանչյուր կառույցին առանձին-առանձին: Ներկայացված ցանկում հաշվի չեն առնված այն ռեսպոնդենտների պատասխանները, որոնք որեւէ կոնկրետ խնդիր կամ թերացում տեղեկատվության աղբյուրների գործունեության վերաբերյալ չեն նշել:

Ռեսպոնդենտները նշել են *Տավուշի մարզի ԳԱՄԿ-ի* կողմից տրամադրված տեղեկատվության հետ կապված հետեւյալ խնդիրները.

- Մասնագիտական անձնակազմի ունակությունների եւ գիտելիքների բարելավման, երիտասարդ կադրեր ներգրավելու կարիք կա,
- Տեղեկատվությունը սահմանափակ է. ցանկալի է, որ լրացուցիչ տեղեկություններ տրամադրեն եղանակի տեսության, բուժանյութերի, նորագույն տեխնոլոգիաների վերաբերյալ,
- Հաղորդակցման եւ տեղեկատվության տրամադրման հաճախականության եւ ինտենսիվության բարձրացման կարիք կա: Նման կառույցը պետք է ֆիզիկապես ավելի հասանելի լինի շահառուների համար: Տեղեկատվության տարածման լավագույն ձեւ կարող են հանդիսանալ կանոնավոր հեռուստատեսային հաղորդումները. դրանք տեղեկատվության ավելի լայն եւ օպերատիվ տարածման եղանակ են,
- Շուկայական տեղեկատվությունն անբավարար է, անհրաժեշտ է, որ կառույցը ավելի ինտենսիվորեն զբաղվի արտադրանքի իրացման լրացուցիչ հնարավորությունների հայտնաբերմամբ:

Ռեսպոնդենտները նշել են *մարզային եւ հանրապետական հեռուստաալիքների* կողմից տրամադրված տեղեկատվության հետ կապված հետեւյալ խնդիրները.

- Մարզային թեմաներով եւ գյուղատնտեսությանը վերաբերվող հաղորդումները քիչ են,
- Հեռարձակվող տեղեկությունները միատարր են եւ ոչ բազմակողմանի,
- Իրազեկման գործընթացը բավարար հաճախ եւ ինտենսիվորեն չի իրականացվում:

Ռեսպոնդենտները նշել են *մարզային եւ տեղական իշխանությունների* կողմից տրամադրված տեղեկատվության հետ կապված հետեւյալ խնդիրները.

- Տեղեկատվության հավաքմանը եւ տարածմանը անհրաժեշտ է ներգրավել համապատասխան պատրաստվածություն ունեցող մասնագետների՝ հատկապես շուկայագետների,
- Տրամադրվող տեղեկատվությունը միօրինակ է, ավելի բազմակողմանի մոտեցում պետք է ցուցաբերել,

- Ցածր է տեղեկատվության տրամադրման օպերատիվության մակարդակը:

Ռեսպոնդենտները նշել են *ՓՄՁ ՀԱԿ-ի* կողմից տրամադրված տեղեկատվության հետ կապված հետեւյալ խնդիրները.

- Շահառուներին անհատական մոտեցում պետք է ցուցաբերվի, խմբային լուծումները ոչ միշտ են արդյունավետ,
- Կառույցը պետք է շատ ավելի նախաձեռնող լինի եւ ավելի հասանելի հասարակ շահառուների համար:

Ներկայացված պատասխանները կարող են որոշակի ուղղորդող դեր ունենալ ՇՏԿ-ի կազմակերպման ընթացքում: Ակնհայտ է, որ ՇՏԿ-ն պետք է ներգրավի լավագույն մասնագետների, որոնք պետք է ունենան համապատասխան պատրաստվածություն եւ ունակություններ, տեղեկատվությունը պետք է լինի առավելագույնս ճշգրիտ, թարմ եւ հեշտ հասանելի շահառուների համար: ՇՏԿ-ն հնարավորինս բազմակողմանի տեղեկատվություն պետք է մատուցի, սակայն չպետք է կրկնի ԳԱՄԿ-ի կամ արդեն առկա որեւէ այլ կառույցի գործառույթները: Տեղեկատվության տարածումը պետք է իրականացվի հնարավորինս լայն ծավալով եւ մեծ ընդգրկունությամբ: Այս ամենը հետազոտությունն իրականացրած թիմի փորձագիտական կարծիքն է: Այն կարելի է համեմատել ապագա ՇՏԿ-ին առաջադրվող պահանջների վերաբերյալ ռեսպոնդենտների հայտնած կարծիքների հետ, ինչը ներկայացվում է հաջորդիվ:

6.2 ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆՈՐ ԿԵՆՏՐՈՆԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

6.2.1 <u>Պահանջվող տեղեկատվության տեսակները</u>

Նախքան Տավուշի մարզում ՇՏԿ հիմնումը եւ լայնածավալ գործունեության իրականացումը նպատակահարմար կլինի որոշակի գործողություններ իրականացնել տեղեկացվածության բարձրացման ուղղությամբ: Դա թույլ կտա խուսափել հետագա խնդիրներից եւ բարդություններից եւ պոտենցիալ շահառուների հետ կապ հաստատել գործընթացի հենց սկզբից: Այս գործողությունը կարեւոր է նաեւ ապագա կառույցի խնդիրները եւ գործառույթները վերջնական հաստատելու առումով, քանի որ ներկա պահին մարզի գործարար հանրությունը, վարչակազմը եւ տարբեր կազմակերպությունները դեռեւս լիովին չեն պատկերացնում ՇՏԿ խնդիրների դաշտը: Այս պնդումը հստակ հաստատվում է նաեւ ապագա ՇՏԿ-ին առաջադրվող պահանջների վերլուծությամբ:

Վերլուծության արդյունքները համակարգված ներկայացնելու նպատակով կրկին ռեսպոնդենտների պատասխանները խմբավորվել են ըստ նրանց խմբերի: Կրկին փորձ է կատարվել անդրադառնալ քիչ թե շատ հիմնավոր առաջարկություններին:

Ըստ Տավուշի մարզում գործունեություն իրականացնող *զարգացման ծրագրերի* ՇՏԿ-ները պետք է տեղեկություններ հավաքեն եւ տարածեն հետեւյալ հարցերի շուրջ.

- **Առաջնային գյուղատնտեսական արտադրանքի (առնվազն ըստ մարզի տարածաշրջանների), ՓՄՁ-ների եւ նրանց գործունեության վերաբերյալ,**
- **Գյուղատնտեսական ապրանքների, դրանց շուկայական գների, գյուղացիների կոնկրետ առաջարկների, պահանջվող ապրանքների եւ ծառայությունների վերաբերյալ:**

Ըստ Տավուշի մարզի *խոշոր ֆերմերների* ՇՏԿ-ները պետք է տեղեկություններ հավաքեն եւ տարածեն հետեւյալ հարցերի շուրջ.

- Անասնապահության եւ անասնաբուծության, տոհմային գործի իրականացման, անասնաբուժության եւ դեղորայքի կիրառության վերաբերյալ,
- Հողագործության եւ այգեգործության բնագավառում արդյունավետ ագրոտեխնիկական միջոցառումների, օրգանական գյուղատնտեսության, բուժումներ իրականացնելու վերաբերյալ,
- Ժամանակակից մեղվաբուծության եւ այս ոլորտում նոր տեխնոլոգիաների վերաբերյալ,
- Բուժանյութեր առաջարկողների (ֆիրմային խանութներ, սերտիֆիկացված առեւտրի կետեր, ներմուծողներ) վերաբերյալ,
- Գյուղատնտեսական ժամանակակից նոր եւ բարձր արդյունավետ տեխնոլոգիաների, նոր սորտերի, գյուղատնտեսական տեխնիկայի վերաբերյալ,
- **Գյուղատնտեսական արտադրանքը արտահանողների պահանջարկի եւ նրանց տեղակայվածության ու կոնտակտների վերաբերյալ,**
- **Գյուղատնտեսական արտադրանքի գների, իրացման շուկաների, մթերման կետերի, սպառողների պահանջարկի վերաբերյալ,**
- **Շուկաների, արտադրանքի շուկայավարման առանձնահատկությունների, անհրաժեշտ պահանջվող պայմանների վերաբերյալ,**
- Օդերեւութաբանական տվյալների եւ եղանակի տեսության եւ կանխատեսումների վերաբերյալ,
- Գյուղատնտեսական ոչ ավանդական ճյուղերի վերաբերյալ,
- Գյուղատնտեսության ֆինանսավորման հնարավորությունների վերաբերյալ:

Ըստ Տավուշի մարզի *ՀԿ- ների* ՇՏԿ-ները պետք է տեղեկություններ հավաքեն եւ տարածեն հետեւյալ հարցերի շուրջ.

- **Գյուղատնտեսական արտադրանքի եւ վայրի մթերքների շուկայական գների, իրացման շուկաների եւ պահանջարկի վերաբերյալ,**
- Առաջատար գյուղատնտեսական տեխնոլոգիաների, տեխնիկայի, պարարտանյութերի, թունաքիմիկատների եւ բուժանյութերի, անասնակերի վերաբերյալ,
- Գյուղատնտեսության ոլորտում համաշխարհային առաջադեմ փորձի, նոր սորտերի եւ տեխնոլոգիաների վերաբերյալ,
- Զարգացման ծրագրերի, դոնոր կազմակերպությունների, համայնքային զարգացմամբ զբաղվող կառույցների եւ նրանց գործունեության վերաբերյալ,
- Գյուղատնտեսության ֆինանսավորման հնարավորությունների վերաբերյալ:

Ըստ Տավուշի մարզի *պետական եւ հանրային կառույցների* ՇՏԿ-ները պետք է տեղեկություններ հավաքեն եւ տարածեն հետեւյալ հարցերի շուրջ.

- **Գյուղատնտեսական արտադրանքի, հումքի եւ նյութերի շուկայական (մթերման) գների, դրանց կանխատեսումների, շուկայական պահանջարկի, իրացումների հնարավորությունների եւ արտաքին շուկաների վերաբերյալ,**
- **Տավուշի մարզի արտադրական եւ գյուղատնտեսական ձեռնարկությունների, նրանց արտադրանքի, զբոսաշրջության հնարավորությունների վերաբերյալ,**
- Գյուղատնտեսական մշակության, դեղորայքի եւ սերմացուների, դրանց սերտիֆիկացման գործողությունների, գների վերաբերյալ,
- Անասնակերի, գյուղատնտեսական տեխնիկայի վերաբերյալ,
- Գյուղատնտեսության ֆինանսավորման հնարավորությունների վերաբերյալ,

Կարծիք՝

Տավուշի մարզի փոխմարզպետի պատասխանը տվյալ հարցին. **«Ո՞ր գյուղում, ո՞ր ապրանքից, ո՞վ եւ որքա՞ն ունի, ի՞նչ գնով է վաճառում: Ի՞նչ պահանջարկ ունեն վերամշակողները եւ մյուս գնորդները, ի՞նչ են ցանկանում գնել, ի՞նչ գնով, ի՞նչ բնութագրիչներ ունեցող ապրանք են ուզում»:**

- Զարգացման ծրագրերի եւ նրանց գործունեության վերաբերյալ,
- Մարզի արտադրական եւ գյուղատնտեսական ձեռնարկությունների, ինչպես նաեւ զբոսաշրջության հնարավորությունների վերաբերյալ:

Ըստ *վերամշակողների* ՇՏԿ-ները պետք է տեղեկություններ հավաքեն եւ տարածեն հետեւյալ հարցերի շուրջ.

- **Արտադրանքի շուկայական (միջազգային) գների, ինչպես նաեւ արտասահմանյան կազմակերպությունների պահանջարկի վերաբերյալ,**
- **Հումքի եւ իրացման շուկաների վերաբերյալ,**
- **Կաթի եւ պանրի, ինչպես նաեւ խաղողի (մթերման) գների, արտադրանքի ներքին եւ արտաքին շուկաների զարգացումների, սպառողների վերաբերյալ,**
- Անասնաբուծության եւ անասնապահության, կենդանիների խնամքի եւ մորթի (սպանդանոցների), կաթի արտադրության վերաբերյալ,
- Բույսերի եւ կենդանիների հիվանդությունների, պաշտպանության, նոր տեխնոլոգիաների վերաբերյալ,
- Սերմացուների մատակարարների, լիցենզավորված վաճառքի կետերի վերաբերյալ,
- Եղանակի կանխատեսումների վերաբերյալ,
- Հարկային եւ մաքսային քաղաքականության փոփոխությունների վերաբերյալ:

Վերջապես, Տավուշի մարզի *ֆինանսական հատվածի* ներկայացուցիչները կարծում են, որ ցանկացած տեղեկատվություն, որը ի վիճակի կլինի տրամադրել ապագա ՇՏԿ-ն, միանշանակ օգտակար կլինի մարզի գործարար հանրությանը: Պարզապես անհրաժեշտ է ապահովել տեղեկությունների ճշգրտությունը եւ թարմությունը:

Կարծիք՝

Տավուշի մարզի ֆինանսական հատվածի ներկայացուցիչների կողմից առաջադրված վերապահումները. **«ՇՏԿ հիմնելու փորձ է արվել մի քանի տարի առաջ GTZ-ի բիզնես կենտրոնի միջոցով, սակայն այս փորձը հաջողություն չի ունեցել: Ժողովուրդը թերահավատ էր, չէր օգտվում կառույցի ծառայություններից: Եթե կոնկրետ եւ շոշափելի արդյունքներ չապահովվեն, ՇՏԿ-ն չի կայանա»:**

Նշված հարցի շուրջ ռեսպոնդենտների կարծիքները շատ խոսուն են եւ միգուցե լրացուցիչ մեկնաբանության կարիք այլեւս չկա: Այնուամենայնիվ, պատասխանների վերլուծությունից ակնհայտորեն երեւում է, որ ռեսպոնդենտների գերակշիռ մեծամասնությունը լավ չի ըմբռնում ապագա ՇՏԿ խնդիրները եւ գործառույթները: Նրանց կողմից պահանջված տեղեկատվության մեծ մասի տրամադրումը հանդիսանում է ներկա պահին մարզում գործող այլ կառույցների՝ ԳԱՄԿ-ի, մարզպետարանի եւ այլն, ուղղակի պարտականությունը: **Ապագա ՇՏԿ-ն չի կարող ստանձնել գյուղատնտեսական մասնագիտական խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտականություններ, դա պարզապես չի համապատասխանի տվյալ կառույցի սահմանմանը եւ կարող է ավարտվել սահմանափակ ռեսուրսների փոշիացմամբ: Առավել նպատակահարմար է, որ ապագա ՇՏԿ-ն կենտրոնանա հենց բուն շուկայական տեղեկատվության տրամադրման վրա՝ առավելագույն արդյունքներ ապահովելով իր շահառուների համար:**

6.2.2 <u>Պահանջվող տեղեկատվության ձեւաչափը</u>

Տեղեկատվության տրամադրման գործընթացում կարեւոր նշանակություն ունի նաեւ տեղեկությունների տրամադրման ձեւաչափը: Այն պետք է առավելագույնս հարմար լինի

օգտագործման տեսանկյունից՝ միաժամանակ հասանելի մնալով հնարավորինս մեծ քանակությամբ շահառուների համար: Այս առումով հատկապես կարեւոր է հաշվի առնել հենց ապագա օգտագործողների կարծիքը: Ընդհանուր առմամբ տրամադրվող տեղեկատվության ձեւաչափի վերաբերյալ կարծիք են հայտնել 149 ռեսպոնդենտներ: Ամենատարածված պատասխանների խմբերը ներկայացված են ստորեւ.

Աղյուսակ 38 - Տեղեկատվության ստացման ներկա ձեւաչափերը

Տեղեկատվության տրամադրման ձեւաչափ	Ռեսպոնդենտների քանակ	Ընդհանուր ռեսպոնդենտներ[16]
Համացանցով, էլ. փոստով կամ էլեկտրոնային որեւէ այլ եղանակով	61	149
Թերթերի միջոցով	40	
Հանդիպումների, սեմինարների, դասընթացների միջոցով	29	
Բուկլետների, բրոշյուրների եւ այլ տպագիր նյութերի միջոցով	17	
Հեռուստատեսությամբ	15	
Հեռախոսազանգերի եւ տեքստային հաղորդագրությունների միջոցով	14	

Աղբյուր՝ Հետազոտության արդյունքների տվյալների բազա

Ակնհայտ է, որ թվային տեխնոլոգիաները գնալով ավելի շատ են տարածվում մեր հանրության շրջանում եւ մարդիկ իրապես ընկալում են տեղեկատվության ստացման եւ մշակման թվային եղանակի հարմարությունը: Այնուամենայնիվ՝ հեռավոր գյուղական համայնքներում համացանցը եւ համակարգչային ծառայությունները դեռեւս լայնորեն հասանելի չեն եւ տեղեկատվության տարածման հաջորդ արդյունավետ եղանակը թերթերն են հանդիսանում: Հատկանշական է, որ կրկին նկատվում է տեղեկատվության եւ խորհրդատվության ստացման միջեւ սահմանների անհստակությունը: Ծուկայական տեղեկատվության տրամադրման տեսանկյունից սեմինարներ եւ դասընթացներ պետք չէ կազմակերպել, սակայն շահառուները այս ձեւաչափը եւս չեն բացառում:

6.2.3 <u>Վճարներ</u>

Կարծիք հայտնած ռեսպոնդենտների կեսից մի փոքր ավելին պատրաստ է վճարել ստացվող տեղեկատվության համար, սակայն առաջ է քաշում կոնկրետ պայմաններ: Նախ եւ առաջ՝ տեղեկատվությունը պետք է օգտակար լինի՝ այսինքն՝ շահառուն պետք է ստանա այն տեղեկատվությունը, որի կարիքն ունի իր գործունեությունն արդյունավետորեն իրականացնելու համար: Տեղեկատվությունը պետք է լինի օպերատիվ, ճշգրիտ եւ օգտագործելի: Միաժամանակ՝ վճարներն ավելի շատ սիմվոլիկ բնույթ պետք է ունենան: Մեծ մասի համար այդ վճարները չպետք է գերազանցեն տարեկան մոտ 10,000 ՀՀ դրամի սահմանը՝ չնայած կան հատուկենտ շահառուներ, որոնք պատրաստ են ամսական վճարել 3,000-5,000 ՀՀ դրամ, միայն թե ստանան իրենց անհրաժեշտ տեղեկությունները եւ նույնիսկ որոշակի ռեսուրսներ (տարածք, սարքավորումներ եւ այլն): Որոշ ռեսպոնդենտներ առաջարկել են տեղեկատվության դիմաց վճարների մեծությունը պայմանավորել կոնկրետ արդյունքներով՝ ստացված շահույթով, վաճառված արտադրանքի քանակությամբ եւ այլն:

Ցուգահեռաբար կարծիքներ են հնչել (68 պատասխան 153 ռեսպոնդենտներից) նաեւ, որ գոնե սկզբնական ժամանակահատվածում (մի քանի տարի) ԾՏԿ-ն պետք է տեղեկատվությունը տրամադրի անվճար, ապացուցի այդ տեղեկատվության օգտակարությունը եւ հետո միայն վճարներ

[16] Մնացած 20 ռեսպոնդենտները կա՛մ դժվարացել են, կա՛մ էլ հրաժարվել են այս հարցին պատասխանելուց

սահմանի: Հաշվի առնելով հեռավոր գյուղական համայնքներում բնակչության աղքատության բարձր մակարդակը՝ կարելի է նշել, որ բազմաթիվ ֆերմերներ ներկայումս ի վիճակի չեն որեւէ գումար վճարել (անկախ մեծությունից) տեղեկատվություն ձեռք բերելու համար, իսկ ՇՏԿ-ն հենց այս տիպի տնտեսություններին պետք է աջակցի առաջին հերթին:

Ընդհանուր հետեւություն կարելի է անել, որ ՇՏԿ-ն կարող է դիվերսիֆիկացնել իր գործունեությունը: Որոշ ժամանակ (պայմանականորեն 1-2 տարի) անվճար տեղեկատվություն տրամադրելուց հետո, այն կարող է ծառայությունների տարբերակված փաթեթներ ձեւավորել եւ առաջարկել իր հաճախորդներին: Որոշ հաճախորդներ կօգտվեն ընդհանուր, անվճար տեղեկություններից՝ ստանալով մակերեսային եւ սահմանափակ տեղեկատվություն, մյուսների համար անհատականացված հատուկ ծառայությունների փաթեթ կարող է մշակվել, որի մատուցումը կարող է բավականին բարձր արժեք ունենալ:

Վերջում նշենք, որ ռեսպոնդենտների գերակշիռ մեծամասնությունը պատրաստակամ է իր ունեցած տեղեկատվությունը տրամադրել ապագա ՇՏԿ-ին: 159 ռեսպոնդենտներից հրաժարվել են ընդամենը 6-ը, որոնց թվում կան ֆինանսական հաստատություններ (նրանք իրավունք չունեն իրենց բանկային գաղտնիք հանդիսացող տվյալները որեւէ մեկին տրամադրել): Ծայրահեղ բացասաբար է տրամադրված միայն 1 շահառու, որը կարծում է, որ նման ՇՏԿ ստեղծումը անիմաստ է եւ վաղաժամ, հատկացվելիք ռեսուրսներով ավելի կարեւոր խնդիրների կարելի էր անդրադառնալ:

7 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԸ

7.1 ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

7.1.1 Մեթոդը

Տեղեկացվածությունը հանդիսանում է գործունեության արդյունավետ իրականացման կարեւորագույն նախադրյալներից մեկը ցանկացած ոլորտում: Տեղեկատվական կարիքների վերլուծությունը նպատակ ունի բացահայտել ֆերմերների եւ վերամշակող ձեռնարկությունների մոտ ներկայումս առկա տեղեկատվական բացերը եւ հետագա կոնկրետ միջոցառումներով փորձել լրացնել դրանք: Տեղեկատվական կարիքների բացահայտման նպատակով ռեսպոնդենտները պատասխանել են, թե ինչպիսի տեղեկատվություն պետք է տնօրինեն ֆերմերները եւ վերամշակողները արտադրանքի արդյունավետ թողարկման եւ արտահանման համար:

Տարբեր տեսակի տեղեկատվական կարիքների գնահատման համար որպես չափանիշներ են ընտրվել դրանց *կարեւորության աստիճանը* (Լիկերտի սանդղակի կիրառմամբ՝ 4 - շատ կարեւոր.... 1 - ոչ կարեւոր), մարզում նման տեղեկատվության *առկայության աստիճանը* (գնահատականները՝ այո, ոչ, մասնակի, չգիտեն) եւ *հասանելիության աստիճանը* (գնահատականները՝ բարձր, միջին, ցածր):

7.1.2 Տեղեկատվական կարիքները

Հետազոտության ընթացքում առանձնացվել են տեղեկատվության 7 հիմնական տեսակներ, որոնց վերաբերյալ կարծիքներ են հայտնել ռեսպոնդենտները: Արդյունքների թվայնացված վերլուծությունը ներկայացվում է ստորեւ:

Աղյուսակ 39 - Տեղեկատվության տարբեր տեսակների կարեւորությունը, առկայությունը եւ հասանելիությունը

Տեղեկատվության տեսակներ	Կարեւորություն[17]	Առկա է՞ մարզում				Հասանելիությունը		
		Այո	Ոչ	Մասնակի	Չգիտեն	Բարձր	Միջին	Ցածր
Նոր տեխնոլոգիաներ								
Պետական եւ հանրային կառույցներ	3.7	1	10	4	3		2	3
Զարգացման ծրագրեր	3.5		1	3	2		2	1
ՀԿ-ներ	3.9		11	2			2	
Ֆինանսական հաստատություններ	3.4		1	3	1		2	2
Վերամշակողներ	3.7		28		7			
Խոշոր ֆերմերներ	3.6	3	38	39	5	1	36	5
Ընդամենը	**3.6**	**4**	**89**	**51**	**18**	**1**	**44**	**11**
Իրացման շուկաներ								
Պետական եւ հանրային կառույցներ	3.3	2	8	6	2		5	3
Զարգացման ծրագրեր	3.8		1	3	2		2	1

[17] Ցուցանիշները ներկայացված են կշռված միջիններով

ՀԿ-ներ	3.8		11	1	1			1
Ֆինանսական հաստատություններ	3.6		2	2	1		2	1
Վերամշակողներ	3.7	4	26		5	3	1	1
Խոշոր ֆերմերներ	3.4	11	37	28	9	4	32	3
Ընդամենը	**3.5**	**17**	**85**	**40**	**20**	**7**	**42**	**10**
Գներ								
Պետական եւ հանրային կառույցներ	3.2	3	6	7	2		6	4
Զարգացման ծրագրեր	3.8	1	1	2	2		2	1
ՀԿ-ներ	3.8	1	12			1		
Ֆինանսական հաստատություններ	3.4	1	2	1	1		2	1
Վերամշակողներ	3.6	9	20		6	3	3	3
Խոշոր ֆերմերներ	3.3	19	33	27	6	8	30	8
Ընդամենը	**3.4**	**34**	**74**	**37**	**17**	**12**	**43**	**17**
Մրգակիցներ								
Պետական եւ հանրային կառույցներ	2.8		12	4	2			4
Զարգացման ծրագրեր	3.7		1	3	2		2	1
ՀԿ-ներ	3.7		11	1	1		1	
Ֆինանսական հաստատություններ	3.2		2	2	1		2	1
Վերամշակողներ	3.1	2	25		8	2		
Խոշոր ֆերմերներ	2.9	6	56	15	8	2	18	1
Ընդամենը	**3.1**	**8**	**107**	**25**	**22**	**4**	**23**	**7**
Սպառողներ								
Պետական եւ հանրային կառույցներ	2.8		12	4	2		1	3
Զարգացման ծրագրեր	3.3		1	3	2		2	1
ՀԿ-ներ	3.6		11	1	1			1
Ֆինանսական հաստատություններ	3.4		2	2	1		2	1
Վերամշակողներ	3.2	2	25		8	2		
Խոշոր ֆերմերներ	3.1	11	54	12	8	4	18	2
Ընդամենը	**3.1**	**13**	**105**	**22**	**22**	**6**	**23**	**8**
Օրենսդրություն								
Պետական եւ հանրային կառույցներ	3.4	2	8	5	3	1	3	3
Զարգացման ծրագրեր	3.3	1	1	2	2		2	1
ՀԿ-ներ	3.8	2	10	1		2		1
Ֆինանսական հաստատություններ	2.6		2	3			2	1
Վերամշակողներ	3.3	4	24		7	2	2	
Խոշոր ֆերմերներ	2.9	9	55	8	13	5	13	
Ընդամենը	**3.1**	**18**	**100**	**19**	**25**	**10**	**22**	**6**
Վիճակագրություն								
Պետական եւ հանրային կառույցներ	2.4	5	8	2	3	1	1	5
Զարգացման ծրագրեր	3.0	1	2	1	2		1	1

ՀԿ-ներ	2.6	1	10	1	1			2
Ֆինանսական հաստատություններ	2.6		2	2	1		1	2
Վերամշակողներ	2.6	5	22		8	3	1	1
Խոշոր ֆերմերներ	2.7	15	43	21	6	11	13	12
Ընդամենը	**2.6**	**27**	**87**	**27**	**21**	**15**	**17**	**23**

Աղբյուր՝ Հետազոտության արդյունքների տվյալների բազա

Այն հանգամանքը, որ ռեսպոնդենտների կողմից *նոր տեխնոլոգիաների* վերաբերյալ տեղեկատվական կարիքների կարեւորությունը ամենաբարձր գնահատականի է արժանացել, գալիս է հաստատելու, որ ՇՏԿ խնդիրների եւ գործառույթների վերաբերյալ ընդհանուր թյուր ըմբռնում է կա մարզի գործարար հանրության մոտ: Ինչեւիցե ակնհայտ է, որ նման տեղեկատվական կարիքն առկա է (ընդամենը 4 ռեսպոնդենտ է նշել, որ մարզում նման տեղեկատվություն առկա է)՝ չնայած այն հանգամանքին, որ այս ոլորտում գործողությունների իրականացումը եւ խորհրդատվության մատուցումը հանդիսանում է ԳԱՄԿ-ի եւ նմանատիպ այլ կառույցների ուղղակի գործառույթներից մեկը: Այս իրավիճակը տարբեր բացատրություններ կարող է ունենալ, որոնց թվում կարելի է առանձնացնել հետեւյալ մի քանիսը.

- Համապատասխան կառույցները կա՛մ չունեն նման տեղեկություններ, կա՛մ էլ տնօրինում են խիստ սահմանափակ տվյալներ,
- Համապատասխան կառույցներում մասնագետների պակաս կա, ովքեր կարող են նման տեղեկատվություն հավաքել եւ տարածել,
- Եթե նույնիսկ նման տեղեկատվություն առկա է մարզում, ապա բնակչության մեծ մասը պարզապես տեղյակ չէ, թե ինչպես այն կարելի է ստանալ,
- Ֆերմերները հարմարվել են իրենց ավանդական եղանակներով աշխատելուն եւ հաճախ պատրաստ չեն լինում նոր տեխնոլոգիաներ կիրառել:

Կարծիք՝

Նոր տեխնոլոգիաների կիրառության եւ դրանց վերաբերյալ տեղեկատվության տարածման լավագույն օրինակ կարող են հանդիսանալ ՀԲ RESCAD Ծրագրով ֆինանսավորված եւ ԳԱՄԿ-ի միջոցով իրականացված մոդելային եւ ցուցադրական փոքր ծրագրերը: Դրանց ընթացքում կոնկրետ տնտեսություններում ներդրվում են ժամանակակից գյուղատնտեսական ծրագրեր, բացատրվում են կիրառության եղանակները, գործնական առավելությունները եւ շոշափելի արդյունքները:

Նոր տեխնոլոգիաների փոխանցման նմանատիպ միջոցառումներ իրականացվել են նաեւ հիշատակված ծրագրի Մրցակցային Դրամաշնորհների բաղադրիչով:

Իրացման հնարավոր շուկաների վերաբերյալ տեղեկատվությունը մշտապես կարեւորվում է ֆերմերների կողմից: Առաջնային ոչ խոշոր արտադրողների համար ավելի գերադասելի է իրենց արտադրանքը անմիջապես սպառողին իրացնելը՝ չնայած դա կապված է շուկայավարման եւ վաճառքի որոշ ծախսերի հետ: Մեծածախ վաճառողները ավելի հակված են խոշոր մթերողների եւ վերավաճառողների հետ համագործակցել, սակայն որպես կանոն դժգոհ են մնում իրացման գներից:

Իրացման շուկաների տեսանկյունից հատկապես կարեւոր է բարձրարժեք գյուղատնտեսական ապրանքների արտաքին շուկաների վերաբերյալ տեղեկատվությունը: Ռեսպոնդենտների կողմից հիշատակված աղբյուրները (թերթեր, ԳՍԿ-ների ղեկավարներ, ՀԿ-ներ, ԳԱՄԿ եւ այլն) նման տեղեկատվություն գրեթե չեն տնօրինում:

Շուկայական գների վերաբերյալ տեղեկատվությունը հաջորդն է կարեւորության տեսանկյունից: Ռեսպոնդենտները նշել են, որ գների վերաբերյալ տեղեկատվությունը նրանք քաղում են հիմնականում «Ագրոլրատու» եւ «Ֆերմեր» թերթերից, սակայն այդ տեղեկատվությունը ոչ միշտ է արդիական եւ ճշգրիտ լինում: Սովորաբար ֆերմերները ստիպված են լինում կողմնորոշվել

մարզկենտրոն Իջեւանի շուկայի մեծածախ գներով, որոնք սովորաբար թելադրվում են այստեղ գործող վերավաճառողների կողմից: Այս հանգամանքը հատկապես անհանգստացնող է, քանի որ հանգեցնում է տվյալ գյուղատնտեսական արտադրանքից գեներացվող եկամուտների անազնիվ բաշխման:

Ֆերմերները հիմնականում տեղյակ չեն երկրի (հատկապես) մայրաքաղաքի շուկաներում ձեւավորված մանրածախ գներից եւ այլ շուկաներն էլ ավելի անհասանելի են նրանց համար: Այս իրավիճակում կրկին հետաքրքիր գործողություն է իրականացնում «ՕՔՍՖԱՄ-Հայաստան» ԲԿ-ն, որը իր շահառուներին տեքստային հաղորդագրություններով օպերատիվ տեղեկություններ է փոխանցում Երեւանում ձեւավորված գների վերաբերյալ:

Հատկանշական է, որ ռեսպոնդենտների կողմից կարեւորվում են ոչ միայն իրենց արտադրանքի իրացման շուկայական գների վերաբերյալ տեղեկատվությունը, այլեւ կիրառվող հումքային միջոցների՝ սերմերի, վառելիքի, բուժանյութերի եւ պարարտանյութերի գների վերաբերյալ տվյալները:

Ռեսպոնդենտների կողմից ամենաքիչ կարեւորված տեղեկատվության տեսակները վերաբերվում են *օրենսդրությանը եւ վիճակագրությանը*: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ Տավուշի մարզի ֆերմերների գերակշիռ մեծամասնությունը գործունեության սահմանափակ ծավալներ ունի, գործում է հարկային կարգավորման դաշտից դուրս, արտադրանքի շուկայավարում չի իրականացնում, չի կիրառում արտադրական եւ ֆինանսական պլանավորման գործիքներ: Նրանք պարզապես նման տեղեկատվության կարիք չեն զգում եւ չեն կիրառում յան:

7.1.3 <u>Տեղեկատվության ստացման գերադասելի ձեւաչափերը</u>

Տեղեկատվության տրամադրման գերադասելի ձեւերի վերաբերյալ կողմնորոշված դիրքորոշում են հայտնել 151 ռեսպոնդենտներ: Հատկանշական է, որ ռեսպոնդենտների գերակայությունների հաջորդականությունը նույնական է ներկա պահին նրանց կողմից ստացվող ձեւաչափերի հաջորդականությանը (տես Աղյուսակ 40):

Աղյուսակ 40 - Տեղեկատվության ստացման գերադասելի ձեւաչափերը

Տեղեկատվության տրամադրման ձեւաչափ	Ռեսպոնդենտների քանակ	Ընդհանուր ռեսպոնդենտներ[18]
Համացանցով, էլ. փոստով կամ էլեկտրոնային որեւէ այլ եղանակով	59	151
Թերթերի միջոցով	48	
Հանդիպումների, սեմինարների, դասընթացների միջոցով	34	
Բուկլետների, բրոշյուրների եւ այլ տպագիր նյութերի միջոցով	27	
Հեռուստատեսությամբ	20	
Հեռախոսազանգերի եւ տեքստային հաղորդագրությունների միջոցով	20	

Աղբյուր՝ Հետազոտության արդյունքների տվյալների բազա

Տեղեկատվության ստացման գերադասելի ձեւաչափերը որոշակիորեն տատանվում են՝ կախված ռեսպոնդենտների կոնկրետ խմբերից: *Զարգացման ծրագրերի* ներկայացուցիչները գերադասում են

[18] Մնացած 20 ռեսպոնդենտները կա՛մ դժվարացել են, կա՛մ էլ հրաժարվել են այս հարցին պատասխանելուց

տեղեկատվություն ստանալ համացանցի միջոցով, սակայն նշում են, որ հիմնական շահառուների (ֆերմերների եւ վերամշակողների) համար այն ոչ միշտ է հասանելի: Այդ պատճառով նրանց կողմից առաջարկվել է կիրառել տեղեկատվության տարածման այլ եղանակներ եւս՝ հեռուստատեսություն, թերթեր, տպագիր նյութեր եւ այլն:

Խոշոր ֆերմերների պարագայում իրավիճակը փոքր-ինչ այլ է. ռեսպոնդենտների այս խումբը գերադասում է տեղեկություններ ստանալ թերթերից եւ տպագիր նյութերից, ինչպես նաեւ անձնական հանդիպումների, դասընթացների եւ սեմինարների ընթացքում: Կրկին հարց է առաջանում, թե խոշոր ֆերմերները ինչպիսի՞ տեղեկատվությունն են համարում շուկայական:

Կարծիք՝

Հետազոտության ընթացքում անդրադարձ է արվել նաեւ ռեսպոնդենտների կողմից կանոնավոր հիմունքներով տեղեկատվության հավաքման ներկա գործընթացներին: Պարզվել է, որ նմանատիպ կանոնավոր գործողություններ ներկայումս չեն իրականացվում: Որոշ կառույցներ ժամանակ առ ժամանակ որոշ տեղեկություններ հավաքում են, սակայն այս գործողությունները ունեն անկանոն, պահային եւ սահմանափակ բնույթ: Մասնավորապես՝ ֆինանսական հաստատությունները որոշ շուկայական տեղեկություններ են հավաքում վարկային հայտերը գնահատելու համար, ՀԿ-ները՝ գործարար ծրագրեր պատրաստելու եւ հետազոտություններ իրականացնելու համար եւ այլն:

Ռեսպոնդենտների մյուս խմբերի մոտ տեղեկատվության ստացման ձեւաչափերի վերաբերյալ հստակ արտահայտված գերակայություններ չեն նկատվում: Որոշակի հակվածություն կա դեպի էլեկտրոնային ձեւաչափով տեղեկատվության ստացումը, սակայն զուգահեռաբար նշվում են մյուս ձեւաչափերը եւս:

7.2 ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

7.2.1 <u>Վերապատրաստման հիմնական թեմաները</u>

Տավուշի մարզի գործարար առաջնային գյուղատնտեսության եւ վերամշակման ոլորտների ներկայացուցիչների վերապատրաստման կարիքների գնահատումն իրականացվել է պարզելու համար, թե որքանով են այդ կարիքները խոչընդոտում սահուն գործունեության իրականացմանը եւ ինչ կոնկրետ միջոցառումներ պետք է իրականացվեն այդ խոչընդոտները հաղթահարելու համար: Վերապատրաստման կարիքների վերաբերյալ կարծիք են հայտնել հետազոտված 6 խմբերից 4-ի ներկայացուցիչները: Պետական եւ հանրային կառույցների, ինչպես նաեւ զարգացման ծրագրերի ներկայացուցիչներին այս հարցերը չեն տրվել: Ռեսպոնդենտների պատասխանների վերլուծության արդյունքները ամփոփված են ստորեւ (տես՝ Աղյուսակ 41):

Վերապատրաստման կարիքների գնահատման համար եւս չափանիշներ են ընտրվել: Տարբեր թեմաների *կարեւորության աստիճանը* կրկին գնահատվել է 4-ից (շատ կարեւոր) - 1 (ոչ կարեւոր) սանդղակով, մարզում նման դասընթացների *առկայության աստիճանը*՝ այո, ոչ, մասնակի, չգիտեն պատասխաններով: Վերապատրաստման բնույթը տարբերակվել է տեսական, գործնական եւ խառը դասընթացների:

Աղյուսակ 41 - Վերապատրաստման կարիքների գնահատականը

Վերապատրաստման թեմաներ	Կարեւորություն	Առկա է՞ մարզում				Ի՞նչ բնույթի		
		Այո	Ոչ	Մասնակի	Չգիտեն	Տեսական	Գործնական	Խառը
Ագրոտեխնիկա								
ՀԿ-ներ	3.9	2	7	2	2	1		12
Ֆինանսական հաստատություններ	3.4	2		3		1	1	3
Վերամշակողներ	3.7		26	1	9		6	28
Խոշոր ֆերմերներ	3.2	13	35	32	5	14	28	40
Ընդամենը	**3.4**	**17**	**68**	**38**	**16**	**16**	**35**	**83**
Գործարարություն								
ՀԿ-ներ	3.8	4	8	1		2	1	10
Ֆինանսական հաստատություններ	2.8	1		4			1	4
Վերամշակողներ	3.4	2	23	2	9	2	8	24
Խոշոր ֆերմերներ	3.1	8	38	28	11	29	8	42
Ընդամենը	**3.2**	**15**	**69**	**35**	**20**	**33**	**18**	**80**
Շուկայավարում								
ՀԿ-ներ	3.7	2	10	1		1		12
Ֆինանսական հաստատություններ	3.0	1	1	3		1	1	3
Վերամշակողներ	3.3	1	27		8	3	6	24
Խոշոր ֆերմերներ	3.1	14	32	31	8	39	5	36
Ընդամենը	**3.2**	**18**	**70**	**35**	**16**	**44**	**12**	**75**
Պլանավորում								
ՀԿ-ներ	3.6	2	10	1				12
Ֆինանսական հաստատություններ	3.4	1		4		1	1	3
Վերամշակողներ	3.0	1	24	1	10	4	7	19
Խոշոր ֆերմերներ	2.9	5	44	21	15	17	8	52
Ընդամենը	**3.0**	**9**	**78**	**27**	**25**	**22**	**16**	**86**
Հաշվապահություն								
ՀԿ-ներ	3.7	4	8	1		1	1	11
Ֆինանսական հաստատություններ	2.0	1		4				3
Վերամշակողներ	3.2	2	23	2	9	3	8	22
Խոշոր ֆերմերներ	2.9	12	34	32	7	28	14	36
Ընդամենը	**3.0**	**19**	**65**	**39**	**16**	**32**	**23**	**72**
Հարկեր/մաքսեր								
ՀԿ-ներ	3.8	2	10	1		1	1	11
Ֆինանսական հաստատություններ	2.2		3	2				4
Վերամշակողներ	3.1	2	22	2	10	3	6	22
Խոշոր ֆերմերներ	2.8	2	50	13	20	11	4	63
Ընդամենը	**3.0**	**6**	**85**	**18**	**30**	**15**	**11**	**100**

Համակարգիչ								
ՀԿ-ներ	3.8	3	8	1	1		2	11
Ֆինանսական հաստատություններ	2.0	1		3			1	2
Վերամշակողներ	2.9	5	20	1	10	2	4	28
Խոշոր ֆերմերներ	3.0	19	31	29	6	19	29	29
Ընդամենը	**3.0**	**28**	**59**	**34**	**17**	**21**	**36**	**70**
Օտար լեզու								
ՀԿ-ներ	3.2	3	7	1	2	1		11
Ֆինանսական հաստատություններ	1.8	1		3			1	2
Վերամշակողներ	2.5	5	21	1	9	4	4	23
Խոշոր ֆերմերներ	2.7	13	35	27	10	37	7	28
Ընդամենը	**2.7**	**22**	**63**	**32**	**21**	**42**	**12**	**64**

Աղբյուր՝ Հետազոտության արդյունքների տվյալների բազա

Ագրոտեխնիկայի թեմաներով վերապատրաստման անցկացումը առավելագույնն է կարեւորվել ռեսպոնդենտների կողմից: Սա նշանակում է, որ հայ ֆերմերները վերջապես սկսել են կարեւորել ժամանակակից ագրոտեխնոլոգիաների կիրառությունը եւ առավել արդյունավետ գործունեության իրականացումը: Միեւնույն ժամանակ՝ նման գիտելիքների փոխանցումը, համապատասխան դասընթացների եւ գործնական միջոցառումների իրականացումը արդեն մեկ տասնամյակից ավել հանդիսանում է ԳԱՄԿ-ի առաջնային խնդիրը: Սույն հետազոտության ներքո ԳԱՄԿ-ի աշխատանքի արդյունավետության գնահատական չի տրվի, սակայն այս կառույցին առաջարկվում է առավելագույնս ինտենսիվացնել իր գործունեությունը, քանզի 139 ռեսպոնդենտներից ընդամենը 55-ն են հիշատակել մարզում նման միջոցառումների առկայության մասին:

Գործարարության եւ *շուկայավարման* թեմաներով վերապատրաստման կարիքները հավասարապես են կարեւորվել ռեսպոնդենտների կողմից: Կարեւորության հատկապես բարձր գնահատականներ են տրվել ՀԿ-ների եւ վերամշակողների կողմից: Այս կարծիքը հաստատվում է նաեւ հանձնարարության իրականացման ընթացքում հետազոտական թիմի մոտ ձեւավորված տպավորություններով: Ռեսպոնդենտների (հատկապես խոշոր ֆերմերների) գերակշիռ մեծամասնությունն իր գործունեությունն իրականացնում է առանց երկարաժամկետ պլանավորման եւ ռեսուրսների արդյունավետ կառավարման: Նման անհրաժեշտություն նրանց մոտ սովորաբար առաջանում է բացառապես ֆինանսական հաստատությունների հետ համագործակցելու (վարկեր ստանալու) պարագայում:

Կարեւորության ամենացածր գնահատականը տրվել է *օտար լեզուների իմացությանը* եւ այս թեմայով վերապատրաստվելու անհրաժեշտությանը: Բացառություն են կազմել միայն ՀԿ-ների ներկայացուցիչները: Նման գնահատականը մի փոքր զարմանալի է, քանի որ Տավուշի մարզում իրենց ծրագրերն են իրականացրել բազմաթիվ միջազգային կազմակերպություններ եւ զարգացման ծրագրեր: Օտար լեզուների բավարար իմացությունը անհամեմատ կհեշտացներ շահառուների շփումները այս կառույցների հետ եւ կբարձրացներ համագործակցության հավանականությունը:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ *սույն հետազոտության համատեքստում հայտնաբերված կարեւորագույն վերապատրաստման կարիքները վերաբերվում են գործարարության եւ շուկայավարման հարցերին: Միաժամանակ ակնհայտ է, որ ռեսպոնդենտները գերադասում են այդ*

կարիքները բավարարել խառը բնույթի (ե՛ւ տեսական, ե՛ւ գործնական) վերապատրաստման դասընթացների միջոցով:

7.2.2 Վերապատրաստման լրացուցիչ թեմաներ

Ներկայացված հիմնական թեմաներից բացի որոշ (սահմանափակ թվով) ռեսպոնդենտների կողմից նշվել են վերապատրաստման այլ թեմաներ եւս: Խոշոր ֆերմերների կողմից խիստ կարեւորվել են անասնապահության (անասնաբուծություն, խոզերի կերակրում եւ սերմնավորում, կենդանիների մորթի) թեմաները: Վերամշակողների կողմից հիշատակվել են HACCP ստանդարտների ներդրումը, բյուջետավորումը (ֆինանսական պլանավորումը), սպանդանոցների հիմնումը եւ այլն: Նշվել է, որ հիշատակված թեմաներով վերապատրաստման հնարավորություններ մարզում չկան: Կրկին նախընտրություն է տրվել խառը բնույթի վերապատրաստման միջոցառումներին:

7.2.3 Վերապատրաստման դասընթացների իրականացման վայրը

Վերապատրաստման դասընթացների իրականացման վայրերի վերաբերյալ ընդհանուր առմամբ կարծիք են հայտնել 122 ռեսպոնդենտներ: Մյուսներին տվյալ հարցը կամ չի տրվել, կամ էլ նրանք չեն ցանկացել պատասխանել: Հատկանշական է նաեւ, որ պատասխանների գերակշիռ մեծամասնությունը ստացվել է խոշոր ֆերմերներից եւ վերամշակողներից (120 ռեսպոնդենտներ): Վերապատրաստման դասընթացների իրականացման վայրի վերաբերյալ ռեսպոնդենտների մոտ հստակ հակվածություն է նկատվում դեպի տեղային միջոցառումները: Ընդհանուր առմամբ 88 ռեսպոնդենտներ (որից՝ 55 խոշոր ֆերմերներ) գտնում են, որ այդ դասընթացները պետք է իրականացվեն Տավուշի մարզում, ցանկալի է բոլոր տարածաշրջաններում, եւ, եթե հնարավոր է, համայնքներում: Մայրաքաղաք Երեւանում անցկացվող դասընթացները հասանելի չեն մարզի բնակչության համար: Ցանկալի է, որ դասընթացներն իրականացվեն փորձառություն ունեցող լավագույն մասնագետների կողմից: Դասընթացները նպատակահարմար է իրականացնել ոչ գյուղատնտեսական սեզոնների (ուշ աշունից մինչեւ վաղ գարուն) ընթացքում, ինչը թույլ կտա ներգրավել առավել մեծ թվով մասնակիցների:

25 ռեսպոնդենտներ (որից՝ 20 խոշոր ֆերմերներ) կարծիք են հայտնել, որ վերապատրաստման դասընթացները նպատակահարմար է իրականացնել մարզից դուրս՝ որեւէ հանգստյան գոտում (հատկապես շատ է հիշատակվում Ծաղկաձորը) կամ արտերկրում (ԱՄՆ, Գերմանիա, Իտալիա, Հոլանդիա, Իսպանիա): Արտերկրում վերապատրաստվելու ցանկությունը հիմնավորվում է առաջադեմ միջազգային փորձին անմիջականորեն առնչվելու, գործնական գիտելիքներ ստանալու ցանկությամբ: Այն փաստը, որ ռեսպոնդենտները նշում են կոնկրետ երկրներ (երբեմն նույնիսկ հաստատություններ) վկայում է, որ նրանք բավարար լրջությամբ են վերաբերվում խնդրին եւ նույնիսկ որոշակիորեն նախապատրաստված են:

8 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.1 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տավուշի մարզում ձեռնարկատիրության՝ մասնավորապես առաջնային գյուղատնտեսական եւ վերամշակված ապրանքների արտադրության եւ արտահանման խթանման հնարավորությունների հետազոտության հիմնական նպատակը մարզում աղքատության հաղթահարման, բնակչության զբաղվածության ապահովման եւ եկամուտների ավելացման ուղղությամբ հիմնավորված, արդյունավետ եւ համակարգված միջոցառումների իրականացումն է: Հետազոտության ընթացքում անդրադարձ է կատարվել մարզի տնտեսության եւ ձեռնարկատիրության զարգացման բազմաթիվ խնդիրների: Դրանք վերլուծվել են ինչպե՛ս առանձին, այնպե՛ս էլ՝ իրար հետ փոխազդեցության մեջ: Վերլուծության արդյունքները մանրամասնորեն ներկայացվել են հաշվետվության համապատասխան բաժիններում: Հաջորդիվ այդ արդյունքները ամփոփվել են եզրակացությունների տեսքով, ինչպես նաեւ կոնկրետ առաջարկություններ են արվել խնդիրների հաղթահարման ուղղությամբ իրականացվելիք քայլերի վերաբերյալ:

8.1.1 <u>Գյուղատնտեսության եւ վերամշակման ոլորտի զարգացման միտումները</u>

Տավուշի մարզի գյուղատնտեսության եւ վերամշակման ոլորտի զարգացման վերջին մի քանի տարիների ընդհանրական միտումներն ավելի շուտ բացասական են: Նկատվում է գյուղատնտեսության համախառն արտադրանքի քանակական եւ արժեքային անկում, ավանդաբար զարգացած որոշ ոլորտներ հետընթաց են ապրում: Բազմաթիվ են խնդիրները ենթակառուցվածքների (ճանապարհներ, ոռոգման համակարգ, ագրոսպասարկում եւ նյութեր, անասնաբուժություն), արտադրանքի իրացումների, ֆինանսավորման հասանելիության, պետական աջակցության, համայնքային զարգացման եւ այլ ասպեկտներում: Հատկանշական է, որ խնդիրների գերակշիռ մեծամասնությունը ընդհանրական բնույթի են. դրանք գրեթե նույնական են նաեւ Հայաստանի այլ տարածաշրջանների (հատկապես գյուղատնտեսական տարածքների) համար: Խնդիրների ընդհանրական բնույթը պայմանավորում է նաեւ դրանց լուծման նույնպես ընդհանրական՝ ռազմավարական, մոտեցման կիրառման անհրաժեշտությունը:

Խնդիրների բացահայտմանը զուգահեռ հետազոտության ընթացքում բացահայտվել են նաեւ Տավուշի մարզում առաջնային գյուղատնտեսության եւ վերամշակման ոլորտների զարգացման հնարավորություններ: Զարգացման լավագույն միտումներ են արձանագրվել մասնավորապես խաղողագործության, այգեգործության (հատկապես մերձարեւադարձային պտուղների մշակության), ծխախոտի մշակության, խաղողի վերամշակման, պահածոյագործության, պանրի արտադրության ոլորտներում: Առկա համակարգային խնդիրների լուծման, ինչպես նաեւ զարգացման ներկա միտումների պահպանման պարագայում այս ոլորտները կարող են կայուն եւ իրական զարգացում ապահովել մարզի տնտեսության մեջ:

Զարգացման միտումներ արձանագրող ոլորտներից զատ արտադրության ծավալների աճի եւ արտահանման լավ ներուժ են արձանագրել այլ ոլորտներ եւս: Մասնավորապես խոսքը վերաբերվում է հետեւյալ ապրանքատեսակների արտադրությանը եւ արտահանմանը.

- **Առաջնային գյուղատնտեսական ապրանքներ**
  - ➥ Խաղող, տավարի միս, արքայանարինջ, դեղձ, մերձարեւադարձային պտուղներ, կաթ, ծխախոտ, հատապտուղներ, հոն, մեղր

▪ **Վերամշակված ապրանքներ**	➥ Մրգօղիներ, պանիր, չրեր, գինի եւ կոնյակ, պահածոներ, մուրաբաներ, ջեմեր

Ներկայացված ապրանքների ներուժային լինելը հիմնավորվում է հետեւյալ հիմնական նախադրյալներով.

- Պահանջարկը եւ իրացման հնարավորությունները (գործող մթերողներ եւ վերամշակողներ),
- Արտահանման հնարավորությունները,
- Բնակլիմայական նպաստավոր պայմանները,
- Արտադրական հենքը (այգիների, վերամշակող հզորությունների, որոշ ենթակառուցվածքների առկայություն եւ արդյունավետություն),
- Գործունեության կոնկրետ տեսակների իրականացման զարգացած ավանդույթները,
- Ներմուծման փոխարինման հնարավորությունները,
- Արտադրանքի համահոտային հատկանիշները, բարձրորակությունը եւ մաքրությունը,
- Արտադրանքի ճանաչվածությունը (հիմնականում) ներքին եւ արտաքին շուկաներում,
- Որակյալ հումքի առկայությունը (վերամշակման պարագայում):

Ներկայացված ապրանքների ներուժը լիովին իրացնելու տեսանկյունից հիմնական խոչընդոտների թվում կարելի է նշել հետեւյալները.

- Մթերումների ցածր գները եւ իրացման սահմանափակ շուկաները,
- Ենթակառուցվածքների (ոռոգման համակարգ, ճանապարհներ, արոտավայրեր, գյուղատնտեսական տեխնիկա, հակակարկտային կայաններ եւ այլն) անբավարարությունը,
- Արտադրական հենքի սահմանափակությունը (փոքր գլխաքանակ, քիչ այգիներ) եւ հնությունը (ցածր մթերատվություն, նոսրացած այգիներ, հնացած եւ մաշված սարքավորումներ),
- Արտադրանքի սահմանափակ քանակը,
- Ժամանակակից տեխնոլոգիաների եւ ագրոտեխնիկայի սահմանափակ կիրառությունը,
- Ագրոսպասարկման (բուժանյութեր, պարարտանյութեր եւ այլն) անբավարարությունը,
- Տոհմային գործի եւ անասնաբուժական միջոցառումների անբավարարությունը,
- Մասնագիտական գիտելիքների անբավարարությունը,
- Ֆինանսական ռեսուրսների ցածր հասանելիությունը եւ անմատչելիությունը,
- Հարկային եւ մաքսային սխալ ու անհավասար վարչարարությունը,
- Պետական աջակցության անբավարարությունը,
- Արտադրանքի շուկայավարման եւ իրացման անարդյունավետությունը,
- Միջնորդների մենաշնորհային դիրքը;
- Վերամշակված արտադրանքի անհամապատասխանությունը արտաքին շուկաների պահանջներին (որակ, փաթեթավորում, պիտակավորում):

Ներուժային ապրանքների համար որպես առաջնային եւ հիմնական շուկա են հանդիսանում մարզի եւ Հայաստանի շուկաները, որոնք այս ապրանքների առաջարկի դեֆիցիտ ունեն: Սա լավագույն հնարավորություններ է ստեղծում կոնկրետ ապրանքների մասով արտադրության ծավալների ընդլայնման եւ իրացման համար: Արտահանման լավագույն ներուժն ունեն դեղձը, արքայանարինջը, թուզը, պանիրը, կոնյակը եւ պահածոները: Արտահանման ամենախոստումնալից շուկաները առաջնային գյուղատնտեսական ներուժային ապրանքների համար հանդիսանում են Ռուսաստանը եւ Վրաստանը՝ չնայած լավ հնարավորություններ կան նաեւ նախկին ԽՍՀՄ այլ երկրներում, Հյուսիսային Ամերիկայում եւ Եվրոպայում:

8.1.2 Գործարար միջավայրը

Ըստ համապատասխան տեղեկատվություն տնօրինող կառույցների Տավուշի մարզում ձեռնարկությունների հիմնման եւ լուծարման դինամիկան գրեթե անփոփոխ է: Նկատվում է նոր հիմնվող ձեռնարկությունների թվի աննշան նվազում: Միաժամանակ, գործունեությունը ժամանակավորապես դադարեցրած ձեռնարկությունների թիվը շատ մեծ է: Ցավոք հետազոտված կառույցները հրաժարվել են հստակ քանակական ցուցանիշներ տրամադրել դիտարկվող խնդիր վերաբերյալ:

Ռեսպոնդենտների (հատկապես մասնավոր հատվածը ներկայացնող) մեծամասնության կարծիքով մարզում գործարար միջավայրը նպաստավոր չէ: Չնայած մարզում գործում են բազմաթիվ զարգացման ծրագրեր, խորհրդատվական եւ գործարար աջակցության կառույցներ, ֆինանսական հաստատություններ եւ այլն՝ բուն ձեռնարկատիրական գործունեությունը վերջին տարիներին գրեթե չի զարգանում: Ռեսպոնդենտների կողմից նշվում է հարկային եւ մաքսային մարմինների կողմից վարվող անարդարացի խիստ եւ անհավասար քաղաքականությունը: Սկսնակ ձեռնարկությունների բավարար օժանդակություն չի ցուցաբերվում, սահմանամերձ տարածքներին արտոնություններ չեն տրվում:

Մենաշնորհների բացասական ազդեցությունը մարզում մեծ չէ: Ծոշափելի ազդեցություն ունի հիմնականում վառելիքի մենաշնորհային շուկան, որը գյուղատնտեսական ինտենսիվ աշխատանքների ժամանակահատվածում որոշակիորեն խոչընդոտում է (գների բարձրացման միջոցով): Դրան հակառակ՝ ռեսպոնդենտների շրջանում մեծ է դժգոհությունը արտադրանքի իրացման միջնորդ օղակների գործունեությունից: Ըստ ռեսպոնդենտների՝ արտադրանքի իրացման գործընթացում այս միջնորդների եկամուտները բացարձակ մեծությամբ հաճախ գերազանցում են արտադրողների (հիմնականում ֆերմերների) եկամուտներին, ինչը նրանց կարծիքով ծայրահեղ անազնիվ է:

8.1.3 Իրականացված զարգացման ծրագրերը

Տավուշի մարզում զարգացման տարբեր ծրագրեր են իրականացվել գրեթե երեք տասնյակ տարբեր կառույցների կողմից: Իրականացված ծրագրերի մեծ մասն արձանագրել են նախատեսված ցանկալի արդյունքները եւ հասել են իրենց սահմանած նպատակներին: Այնուամենայնիվ՝ առկա են որոշ խնդիրներ. որոշ կարեւոր խնդիրներ չեն բացահայտվում, շահառուների մասնակցությունը ծրագրերի նախագծմանը եւ իրականացմանը սահմանափակ է, ծրագրերը երբեմն զուգահեռվում են եւ ռեսուրսներն անարդյունավետորեն են օգտագործվում, չի ապահովվում արդյունքների շարունակականությունը եւ այլն:

Լավագույն ծրագրերի թվում առանձնացվել են ոռոգման համակարգի բարելավումը, նոր այգիների հիմնումը, անասնագլխաքանակի ավելացումը, արոտավայրերի բարելավումը եւ արդյունավետության բարձրացումը, գյուղատնտեսական տեխնիկայի պարկերի հիմնումը, արտադրանքի պահպանման, վերամշակման եւ իրացման համակարգերի ստեղծումը, համայնքային զարգացումը եւ սոցիալական ենթակառուցվածքների բարելավումը եւ այլն:

8.1.4 Շուկայական տեղեկատվական կենտրոնի ստեղծման նախադրյալները

ՇՏԿ ստեղծումը Տավուշի մարզում ծայրահեղ պահանջված միջոցառում է: Ներկա պահին, թարմ, ճիշտ եւ օգտագործելի շուկայական տեղեկատվության մատուցման կանոնավոր գործընթաց Տավուշի մարզում պարզապես չկա: Շուկայական տեղեկատվության պակասը մեծապես խոչընդոտում է մարզի ֆերմերների եւ վերամշակողների գործունեությունը, դժվարացնում իրացումները, նվազեցնում եկամուտները եւ այլն: Միաժամանակ ռեսպոնդենտների մեծամասնությունը թյուր պատկերացում ունի ՇՏԿ նպատակների եւ խնդիրների, ինչպես նաեւ նրա կողմից իրականացվող գործառույթների վերաբերյալ:

Շուկայական տեղեկատվության տարածման եղանակները եւ ձեւաչափերը պետք է բազմազան եւ տարբերակված լինեն: Հեռավոր գյուղական համայնքներում էլեկտրոնային տեղեկությունները հասանելի չեն, իսկ մարզկենտրոնում նման ձեւաչափն ավելի պահանջված է: Առանձնահատուկ կարեւորվում է ՇՏԿ կողմից տարածվող տեղեկատվության ճշտությունը, թարմությունը եւ կիրառելիությունը: ՇՏԿ գործունեության կայունությունը (ինքնաֆինանսավորումը) եւ շարունակականությունը մեկ այլ խնդիր է, որը մասնավորապես չի հաղթահարվել նախկինում Հայաստանում գործող առնվազն երկու նմանատիպ կառույցների կողմից:

8.1.5 Տեղեկատվության եւ գիտելիքների կարիքները

Տեղեկատվական կարիքների թվում ռեսպոնդենտների կողմից հատկապես կարեւորվում են հետեւյալ մի քանիսը.

- Նոր տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկություններ,
- Իրացման շուկաների վերաբերյալ տեղեկություններ,
- Շուկայական գների վերաբերյալ տեղեկություններ,
- Մրցակիցների վերաբերյալ տեղեկություններ:

Հատկանշական է, որ ռեսպոնդենտների կողմից ամենից առավել կարեւորվել է նոր տեխնոլոգիաների եւ ագրոտեխնիկայի վերաբերյալ տեղեկատվության կարիքը: Ինչ-որ առումով սա կարող է ոչ այնքան դրական գնահատական հանդիսանալ ներկա փուլում մարզում նմանատիպ տեղեկատվություն եւ ծառայությունների մատուցող կառույցների համար: Տեղեկատվության մատուցման ամենացանկալի եղանակներն են համացանցը (ներառյալ՝ էլեկտրոնային փոստը) եւ ԶԼՄ-ները (հիմնականում թերթերը):

Վերապատրաստման կարիքների ցանկում առավել հաճախ հիշատակվել են հետեւյալ գիտելիքների կարիքները.

- Ագրոտեխնիկա,
- Գործարարություն եւ գործունեության պլանավորում, եւ
- Շուկայավարում:

Ռեսպոնդենտները գերադասում են վերապատրաստման նշված կարիքները բավարարել խառը բնույթի (ե՛ւ տեսական, ե՛ւ գործնական) վերապատրաստման դասընթացների միջոցով:

8.2 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես արդեն նշվել է, հետազոտության ընթացքում հայտնաբերված խնդիրները եւ խոչընդոտները կարելի է դասակարգել երկու մեծ խմբերի՝ ընդհանրական (ռազմավարական, համակարգային) եւ կոնկրետ: Բնականաբար՝ դրանց հաղթահարման ուղղությամբ առաջարկվող գործողությունները եւս կլինեն ընդհանուր եւ կոնկրետ:

8.2.1 Ընդհանուր բնույթի առաջարկություններ

- Շարունակել մարզային, համայնքային եւ գյուղատնտեսական զարգացման ծրագրերի իրականացումը Տավուշի մարզում՝ ապահովելով շահագրգիռ կառույցների եւ շահառուների մասնակցության բարձր մակարդակ ծրագրերի նախագծման եւ իրականացման բոլոր փուլերում:
- Համակարգել զարգացման տարբեր ծրագրերի գործունեությունը, պետությանը մասնակից դարձնել ծրագրերի ֆինանսավորման գործընթացին:
- Բարձրացնել արտադրանքի իրացման շուկաների հասանելիությունը:
- Բարելավել գյուղատնտեսական ենթակառուցվածքների վիճակը եւ հասանելիությունը:
- Բարելավել գործարար միջավայրը՝ իրականացնելով հարկային եւ մաքսային բարեփոխումներ, փոփոխելով վարչարարությունը:
- Բարձրացնել ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը:
- Բարձրացնել բնակչության տեղեկացվածության մակարդակը:

8.2.2 Կոնկրետ գործողությունների առաջարկություններ

- Օժանդակել առաջնային գյուղատնտեսական արտադրանքի մթերման հնարավորությունների հետագա զարգացմանը:
- Նպաստել մթերման գների ազատ ձեւավորմանը՝ արդյունավետորեն կարգավորելով շուկայի մոնոպոլացման եւ/կամ օլիգոպոլացման միտումները (մասնավորապես խաղողի մթերումների պարագայում):
- Օժանդակել առաջնային գյուղատնտեսական արտադրանքի իրացման հնարավորությունների ընդլայնմանը, նոր շուկաների հայտնաբերմանը:
- Օժանդակել նոր պտղատու եւ խաղողի այգիների հիմնմանը:
- Օժանդակել տնկարանային տնտեսությունների հիմնմանը եւ զարգացմանը:
- Օժանդակել ժամանակակից եւ ճիշտ ագրոտեխնիկայի իրականացմանը, սորտերի թարմացմանը:
- Նպաստել գյուղատնտեսական նյութերի (բուժանյութեր, պարարտանյութեր, սերմեր, տնկիներ, վառելիք եւ այլն) հասանելիության եւ որակի բարձրացմանը դրանց ձեռքբերումների կենտրոնացված իրականացման (հնարավոր է միությունների միջոցով) եւ վերահսկման գործառույթների ներդրման միջոցով:
- Օժանդակել արոտավայրերի հասանելիության բարձրացմանը եւ դրանց պայմանների բարելավմանը՝ ճանապարհների վերականգնմանը, ջրարբիացմանը, կացարանների ստեղծմանը, էլեկտրականությամբ եւ ջրով ապահովմանը:
- Օժանդակել գյուղատնտեսական տեխնիկայի թարմացմանը եւ ձեւավորել համայնքային պարկերի արդյունավետ կառավարման համակարգեր:
- Օժանդակել անասնագլխաքանակի թարմացմանը եւ ավելացմանը:
- Օժանդակել անասնաբուժական միջոցառումների որակի բարձրացմանը եւ տոհմային գործին,

- Օժանդակել վերամշակող ձեռնարկությունների հզորությունների թարմացմանը եւ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանը:
- Օժանդակել վերամշակող ձեռնարկություններին՝ արտադրանքի պատշաճ փաթեթավորման եւ պիտակավորման հարցերում:
- Օժանդակել ջերմատների, սառնարանների/պահեստների, չորանոցների, վերամշակման կետերի, փաթեթավորման եւ պիտակավորման արտադրամասերի, սպանդանոցների եւ նմանատիպ այլ կառույցների հիմնման (ցուցադրական) (դրամաշնորհային) ծրագրերի իրականացմանը:
- Օժանդակել ոռոգման համակարգի վերականգնմանը, ժամանակակից խնայողական եւ արդյունավետ համակարգերի (կաթիլային ոռոգում, արտեզյան ջրհորների, ինքնահոս համակարգեր եւ այլն) ներդրմանը, ոռոգման ջրի արդար եւ արդյունավետ կառավարմանը:
- Օժանդակել շուկայական տեղեկատվական համակարգի ստեղծմանը:
- Օժանդակել արտաքին շուկաների հետազոտությանը եւ իրացման հնարավորությունների բացահայտմանը:
- Օժանդակել տեղական արտադրողներին միջազգային ցուցահանդեսներին մասնակցելու հարցերում:
- Օժանդակել հակակարկտային կայանների ստեղծմանը:
- Շարունակել ֆերմերների միավորման գործընթացը եւ միությունների ստեղծումը:
- Օժանդակել ֆերմերների եւ այլ շահառուների իրազեկման եւ տեղեկացվածության բարձրացման արշավների անցկացմանը:
- Օժանդակել ֆերմերների եւ այլ շահառուների մասնագիտական պատրաստվածության բարձրացմանը (տեսականորեն եւ գործնականորեն), կազմակերպել վերապատրաստման դասընթացներ գործունեության կազմակերպման ու պլանավորման, շուկայավարման, ժամանակակից արդյունավետ տեխնոլոգիաների ներդրման եւ այլ թեմաներով:
- Օժանդակել մատչելի ֆինանսական ռեսուրսների (դրամաշնորհների, ցածր տոկոսով եւ երկարաժամկետ վարկերի, լիզինգային մատչելի ծառայությունների) ձեւավորմանը եւ ֆինանսական հաստատությունների խիստ քաղաքականության վերանայմանը:

9 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

9.1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

9.1.1 Տեղեկատվության աղբյուրների 1-ին խումբ 1. Հարցումների մասնակիցները

ա) Պետական եւ հանրային կառույցներ 24 սուբյեկտ

Կառույցը	Ռեսպոնդենտը		Գտնվելու վայրը եւ տարածաշրջանը
	Անունը	Պաշտոնը	
Տավուշի մարզպետարան	Լեւոն Սարգսյան	Փոխմարզպետ	ք. Իջեւան
Տավուշի մարզպետարան	Գրիգոր Փայտյան	Գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ	ք. Իջեւան
Տավուշի մարզպետարան	Գուրգեն Հարությունյան	Տարածքային զարգացման ծրագրերի եւ վերլուծության բաժնի պետ	ք. Իջեւան
Տավուշի մարզպետարան	Ասքանազ(Վրեժ) Բաբլումյան	Ֆինասատնտեսագիտական բաժնի պետի տեղակալ	ք. Իջեւան
ԱՎԾ Տավուշի մարզային գործակալություն	Ավդա Աչինյան	Մարզային գործակալության պետ	ք. Իջեւան
Հայաստանի իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի գործակալության Նոյեմբերյանի տարածքային ստորաբաժանում	Սերժիկ Քոչարյան	Բաժնի պետ	ք. Նոյեմբերյան
Հայաստանի իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի գործակալության Իջեւանի տարածքային ստորաբաժանում	Գուրգեն Առաքելյան	Բաժնի պետ	ք. Իջեւան
Հայաստանի իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի գործակալության Տավուշի տարածքային ստորաբաժանում	Անժելա Հերիքյան	Բաժնի պետ	ք. Բերդ
Հայաստանի իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի գործակալության Դիլիջանի տարածքային ստորաբաժանում	Կարեն Սաղաթելյան	Բաժնի պետ	ք. Դիլիջան
Իջեւանի ՏՀՏ	Համլետ Քամալյան	ՏՀՏ Պետ	ք. Իջեւան
Գյուղապետարան	Սեվադա Բալասանյան	Աշխատակազմի քարտուղար	գ. Ազատամուտ (Իջեւան)
Գյուղապետարան	Սարգիս Ղազարյան	Համայնքի ղեկավար	գ. Գետահովիտ (Իջեւան)
Գյուղապետարան	Շահեն Շահինյան	Համայնքի ղեկավար	գ. Գանձաքար (Իջեւան)
Գյուղապետարան	Համլետ Գեւորգյան	Համայնքի ղեկավար	գ. Աչաջուր (Իջեւան)
Գյուղապետարան	Համայակ Նազարյան	Համայնքի ղեկավար	գ. Կիրանց (Իջեւան)
Գյուղապետարան	Սամվել Մանուչարյան	Համայնքի ղեկավար	գ. Վարագավան (Բերդ)

Գյուղապետարան	Լորիկ Բադիրյան	Համայնքի ղեկավար	ք. Բերդ
Գյուղապետարան	Հայկ Քամալյան	Համայնքի ղեկավար	գ. Խաշթառակ (Իջեւան)
Գյուղապետարան	Նաիրի Աթաբեկյան	Համայնքի ղեկավար	գ. Ն. Ծաղկավան (Իջեւան)
Գյուղապետարան	Արսեն Աղաբաբյան	Համայնքի ղեկավար	գ. Կողբ (Նոյեմբերյան)
Գյուղապետարան	Արարատ Գաբրիելյան	Համայնքի ղեկավար	գ. Բերդավան (Նոյեմբերյան)
Գյուղապետարան	Սեյրան Միկիչյան	Համայնքի ղեկավար	գ. Արճիս (Նոյեմբերյան)
Գյուղապետարան	Արամ Նիգոյան	Համայնքի ղեկավար	գ. Նավուր (Բերդ)
Գյուղապետարան	Քաջիկ Շահնազարյան	Համայնքի ղեկավարի տեղ.	գ. Ակնաղբյուր (Իջեւան)

բ) Զարգացման ծրագրեր 7 սուբյեկտ

Կառույցը	Ռեսպոնդենտը		Գտնվելու վայրը եւ տարածաշրջանը
	Անունը	Պաշտոնը	
CARD	Նաիրա Մկրտչյան	Ծրագրերի ղեկավար	ք. Երեւան
ՀՄՀ, Ջրից դեպի շուկա բաղադրիչ	Նորա Ալանակյան	Մարքեթինգի խորհրդատու	ք. Երեւան
TRDP (Տավուշի Մարզի Զարգացման Ծրագիր)	Զորայր Կիրակոսյան	Ծրագրի ղեկավար	ք. Իջեւան
World Vision Հայաստան, Տավուշի Տարածքային Զարգացման Ծրագիր	Ռոբերտ Հակոբյան	Ծրագրի ավագ համակարգող	ք. Իջեւան
ՀԲ Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցունակության ծրագիր	Պավել Ցուցուլյան	Տավուշի ՄԱԹ համակարգող	ք. Իջեւան
ՓՄՁ ՁԱԿ Հիմնադրամ, Տավուշի մասնաճյուղ	Թամարա Գաբրիելյան	Փորձագետ, տնօրենի ժ/պ	ք. Իջեւան
ՕՔՍՖԱՄ-Հայաստան	Վաղիմ Ուզունյան	Ծրագրերի համակարգող	ք. Երեւան

գ) Հասարակական կազմակերպություններ 13 սուբյեկտ

Կառույցը	Ռեսպոնդենտը		Գտնվելու վայրը եւ տարածաշրջանը
	Անունը	Պաշտոնը	
Տավուշի ԳԱՄԿ	Վահան Կարապետյան	Տնօրեն	ք. Իջեւան
«Տավուշի զարգացման» ՀԿ	Սիրակ Մարտիրոսյան	Նախագահ	ք. Իջեւան
«Պրոգրես» ՀԿ	Գեղեցիկ Գյուլանյան	Նախագահ	ք. Իջեւան
«Երկխոսություն եւ գործարարություն» ՀԿ	Շիրակ Եդիգարյան	Նախագահ	ք. Նոյեմբերյան
«Հուսո Շող» ՀԿ	Ոսկան Սարգսյան	Նախագահ	ք. Նոյեմբերյան
«Վերելք» ՀԿ	Պավլիկ Հակոբյան	Նախագահ	ք. Նոյեմբերյան
«Երեւակ» ԲՀԿ	Սաշա Գիշյան	Գործադիր տնօրեն	ք. Նոյեմբերյան
«Էլեն» ՀԿ	Մելսիկ Ենգիբարյան	Նախագահի տեղակալ	ք. Դիլիջան
Գարուն Վերածնունդ ՀԿ	Դավիթ Մելիքյան	Նախագահ	ք. Բերդ
«Կաղնի» ՀԿ	Արտակ Չիլինգարյան	Փոխնախագահ	ք. Բերդ
«Աջակցություն գյուղացիական տնտեսություններին» ՀԿ	Մերուժան Փաշիկյան	Նախագահ	գ. Կողբ (Նոյեմբերյան)

«Տավուշ-Մշակ գյուղացիական շահերի պաշտպանության» ՀԿ	Արծրուն Ղալթախչյան	Տավուշ-Մշակ գյուղացիական շահերի պաշտպանության ՀԿ-ի նախագահ, Ագրոսպասարկում Իջեւանի շրջանային միավորում ԲԲԸ-ի խորհրդի նախագահ	գ. Աչաջուր (Իջեւան)

դ) Ֆինանսական հաստատություններ 5 սուբյեկտ

Կառույցը	Ռեսպոնդենտը		Գտնվելու վայրը եւ տարածաշրջանը
	Անունը	Պաշտոնը	
ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկի Տավուշի մ/ճ	Սասուն Ավետիսյան	Մասնաճյուղի կառավարիչ	ք. Իջեւան
Նոր-Հորիզոն ՈւՎԿ Իջեւանի մասնաճյուղ	Գագիկ Բեջանյան	Մասնաճյուղի կառավարիչ	ք. Իջեւան
ՀայԷկոնոմԲանկի Տավուշի մասնաճյուղ	Հայկ Ղալումյան	Մասնաճյուղի կառավարիչ	ք. Իջեւան
Արեգակ ՈւՎԿ Տավուշի Մասնաճյուղ	Գրետա Հարությունյան	Մասնաճյուղի կառավարիչ	ք. Իջեւան
ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկի, Բերդի մ/ճ	Սասուն Ասատրյան	Մասնաճյուղի կառավարիչի ժ/պ, Նոյեմբերյանի մ/ճ-ի կառավարիչ	ք. Բերդ

ե) Վերամշակողներ 36 սուբյեկտ

Կառույցը	Ռեսպոնդենտը		Գործունեությունը	Գտնվելու վայրը եւ տարածաշրջանը
	Անունը	Պաշտոնը		
«Իջեւանի գինու կոնյակի գործարան» ՓԲԸ	Ռոբերտ Իսկանդարյան	Փոխտնօրեն	Գինու, կոնյակի եւ մրգաջրերի արտադրություն	ք. Իջեւան
«Հենրիկ Ամիրխանյան եւ որդիներ» ՍՊԸ	Աշոտ Ամիրխանյան	Ղեկավար	Սպանդանոց	ք. Նոյեմբերյան
Կամո Մամյան Ա/Ձ	Կամո Մամյան		Մսի տեղափոխում	ք. Նոյեմբերյան
Արշալույս Իսրայելյան Ա/Ձ	Արշալույս Իսրայելյան		Պանրի արտադրություն	ք. Նոյեմբերյան
Անդրանիկ Վերանյան Ա/Ձ	Անդրանիկ Վերանյան		Չրի արտադրություն	ք. Նոյեմբերյան
	Սամվել Գասպարյան		Սպանդանոց, մրգերի վերավաճառք	ք. Նոյեմբերյան
«Բալուդ» ՍՊԸ	Դավիթ Հովսեփյան	Տնօրեն	Ձկան կերի արտադրություն	ք. Դիլիջան
«Դիլի» ՍՊԸ	Ալեքսանդր Ալեքսանյան	Մենեջեր	Կաթնամթերքի արտադրություն	ք. Դիլիջան
«Հ. ԵՎ Տ. Հակոբյաններ» ՍՊԸ	Վաչագան Գեւորգյան	Տնօրեն	Կաթնամթերքի արտադրություն	ք. Դիլիջան
	Համլետ Փալանդուզյան		Կաթնամթերքի արտադրություն	ք. Բերդ
Նավուր կաթ արտադրողների սպառողական կոոպերատիվ	Գագիկ Ասրյան	Նախագահ	Կաթի վերավաճառք, պանրի արտադրություն	գ. Նավուր (Բերդ)

Վարդաշեն կաթ արտադրողների միություն	Նավասարդ Սիմոնյան	Միության անդամ, գյուղապետի տեղակալ	Կաթի վերավաճառք	գ. Ն. Կամիրաղբյուր (Բերդ)
	Գեվորգ Գալստյան		Պանրի արտադրություն	գ. Ն. Ծաղկավան (Իջեւան)
Ն. Ծաղկավանի արոտ օգտագործողների կոոպերատիվ	Կարո Գալստյան	Կոոպերատիվի անդամ	Պանրի արտադրություն	գ. Ն. Ծաղկավան (Իջեւան)
«Միկլենդ» ՍՊԸ	Նաիրա Բուդաղյան, Սոս Քոչարյան	Տնօրեն	Պանրի արտադրություն	գ. Կողբ (Նոյեմբերյան)
Գուրգեն Աբովյան Ա/Ձ	Գուրգեն Աբովյան	Հիմնադիր	Պանրի արտադրություն	գ. Կոթի (Նոյեմբերյան)
	Սպարտակ Խաչիկյան		Մսի վերավաճառք	գ. Կոթի (Նոյեմբերյան)
«ՄԱԳԱ պահածոների գործարան» ՍՊԸ	Գրիշա Մանուչարյան	Տնօրեն	Պահածոների արտադրություն	գ. Վարագավան (Բերդ)
Տավուշ կաթ կոոպերատիվ	Առաքել Պողոսյան	Նախագահ	Կաթի վերավաճառք	գ. Տավուշ (Բերդ)
«Երեւանի կոնյակի գործարան» ՓԲԸ, Բերդի մ/ճ	Գարիկ Վարդանյան	Մասնաճյուղի կառավարիչ	Կոնյակի սպիրտի արտադրություն	գ. Տավուշ (Բերդ)
Լուսաձոր ԳՍԿ	Սուրեն Քոչարյան	Կոոպերատիվի անդամ (գյուղապետ)	Սառնարանային տնտեսություն	գ. Լուսաձոր (Իջեւան)
Լուսաձորի կոոպերատիվ խոհանոց անվտանգ սնունդ սպառողական կոոպերատիվ	Արծրուն Նազարյան	Կոոպերատիվի պրեզիդենտ	Չրերի արտադրություն	գ. Լուսաձոր (Իջեւան)
	Մարինե Մանուչարյան		Սառնարանային տնտեսություն	գ. Սարիգյուղ (Իջեւան)
Լուսիկ Ղուկասյան Ա/Ձ	Լուսիկ Ղուկասյան		Սառնարանային տնտեսություն	գ. Պտղավան (Նոյեմբերյան)
Հենրիկ Սարուխանյան Ա/Ձ	Հենրիկ Սարուխանյան		Պանրի արտադրություն	գ. Ոսկեպար (Նոյեմբերյան)
Չինարի այգեգործական, անասնապահական սպառողական կոոպերատիվ	Սամվել Սաղոյան	Նախագահ	Գինու եւ օղու արտադրություն	գ. Չինարի (Բերդ)
«Սարագար» ՍՊԸ	Արմեն Հախվերդյան	Հիմնադիր	Պանրի արտադրություն	գ. Թեղուտ (Դիլիջան)
«Էկո Գարդեն արտադրական կորպորացիա» ՍՊԸ	Սամվել Մակարյան	Տնօրեն	Մուրաբաների արտադրություն	գ. Այգեձոր (Բերդ)
Ակնաղբյուրի գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվ	Հակոբ Եգանյան	Նախագահ	Սառնարանային տնտեսություն	գ. Ակնաղբյուր (Իջեւան)
Աչաջուր գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվ	Արմենակ Գասպարյան	Նախագահ	Սառնարանային տնտեսություն	գ. Աչաջուր (Իջեւան)
«Ազատամուտ կաթ» ՍՊԸ	Ռոբերտ Մարտիրոսյան	Տնօրեն	Կաթի վերավաճառք, մսի վերավաճառք, պանրի արտադրություն	գ. Ազատամուտ (Իջեւան)
	Հովսեփ Վերանյան		Պանրի արտադրություն	գ. Գոշ (Դիլիջան)
	Սերժիկ Վերանյան		Կաթնամթերքի արտադրություն	գ. Գոշ (Դիլիջան)
Էմմա Հակոբյան Ա/Ձ	Էմմա Հակոբյան		Պանրի արտադրություն	գ. Գանձաքար (Իջեւան)

«Գվարգին» ՍՊԸ	Դերենիկ Բեջանյան	Գյուղատնտես	Պանրի արտադրություն	գ. Բագրատաշեն (Նոյեմբերյան)
«Բերդավանի գինու գործարան» ԲԲԸ	Արշակ Ավագյան	Գործադիր տնօրեն	Գինու, գինենյութի եւ մրգօղիների արտադրություն	գ. Բերդավան (Նոյեմբերյան)

գ) Խոշոր ֆերմերներ 85 սուբյեկտ

Գործունեությունը	Ռեսպոնդենտը		Գտնվելու վայրը եւ տարածաշրջանը
	Անուն Ազգանուն	Տնտեսության չափը	
Խոշոր եղջերավոր անասնաբուծություն	Կարինե Մելիքսեթյան		գ. Գանձաքար (Իջեւան)
Խոշոր եղջերավոր անասնաբուծություն	Ազատ Հակոբյան		գ. Գանձաքար (Իջեւան)
Խոշոր եղջերավոր անասնաբուծություն	Արտակ Իսկանդարյան		գ. Գանձաքար (Իջեւան)
Խոշոր եղջերավոր անասնաբուծություն	Գառնիկ Եգանյան		գ. Աչաջուր (Իջեւան)
Խոշոր եղջերավոր անասնաբուծություն	Աշոտ Նաղդալյան		գ. Հովք (Իջեւան)
Խոշոր եղջերավոր անասնաբուծություն	Ալբերտ Դավթյան		գ. Սարիգյուղ (Իջեւան)
Խոշոր եղջերավոր անասնաբուծություն	Ժորա Մարտիրոսյան		գ. Ազատամուտ (Իջեւան)
Խոշոր եղջերավոր անասնաբուծություն	Հովիկ Խեչյան	186 գլուխ ԽԵԱ	գ. Գետահովիտ (Իջեւան)
Խոշոր եղջերավոր անասնաբուծություն	Կենսաբեր (Ռուբիկ) Այդինյան	100 գլուխ ԽԵԱ	գ. Գետահովիտ (Իջեւան)
Խոշոր եղջերավոր անասնաբուծություն	Լորա Հովլաթբեկյան		գ. Գանձաքար (Իջեւան)
Խոշոր եղջերավոր անասնաբուծություն	Բախչիման Շահնազարյան	60 գլուխ ԽԵԱ	գ. Ակնաղբյուր (Իջեւան)
Խոշոր եղջերավոր անասնաբուծություն	Հունան Եգանյան		գ. Սարիգյուղ (Իջեւան)
Խոշոր եղջերավոր անասնաբուծություն	Երվանդ Գեւորգյան		գ. Վազաշեն (Իջեւան)
Խոշոր եղջերավոր անասնաբուծություն	Արծրուն Սիմոնյան	50 գլուխ ԽԵԱ	գ. Վ. Ծաղկավան (Բերդ)
Խոշոր եղջերավոր անասնաբուծություն	Արմենակ Բայլամյան		գ. Բաղանիս (Նոյեմբերյան)
Մանր եղջերավոր անասնաբուծություն	Արազ Ենգիբարյան		գ. Գետահովիտ (Իջեւան)
Մանր եղջերավոր անասնաբուծություն	Սողոմ Մաղաքյան		գ. Գանձաքար (Իջեւան)
Մանր եղջերավոր անասնաբուծություն	Գրիգոր Գրիգորյան		գ. Աղավնավանք (Իջեւան)
Մանր եղջերավոր անասնաբուծություն	Բախշի Պողոսյան		գ. Խաչարձան (Իջեւան)
Մանր եղջերավոր անասնաբուծություն	Հայկազ Հարությունյան		գ. Ակնաղբյուր (Իջեւան)
Մանր եղջերավոր անասնաբուծություն	Հայկ Պետրոսյան	110 գլուխ ՄԵԱ	գ. Գետահովիտ (Իջեւան)
Մանր եղջերավոր անասնաբուծություն	Արաքսյա Մաչկալյան		գ. Տավուշ (Բերդ)
Մանր եղջերավոր անասնաբուծություն	Սամվել Առաքելյան		գ. Ն. Կամիրաղբյուր (Բերդ)
Մանր եղջերավոր անասնաբուծություն	Նովելլա Գասպարյան		գ. Թեղուտ (Դիլիջան)
Մանր եղջերավոր անասնաբուծություն	Մխիթար Միքայելյան	45 գլուխ ՄԵԱ	գ. Արճիս (Նոյեմբերյան)
Խոզաբուծություն	Անդրանիկ Վիրաբյան		գ. Խաշթառակ (Իջեւան)
Խոզաբուծություն	Թաթուլ Ներկարարյան		գ. Գանձաքար (Իջեւան)
Խոզաբուծություն	Արթուր Հովհաննիսյան		գ. Տավուշ (Բերդ)
Խոզաբուծություն	Արտակ Մխիթարյան		գ. Նորաշեն (Բերդ)
Խոզաբուծություն	Ռաֆիկ Բաբաջանյան		գ. Զորական (Նոյեմբերյան)
Մեղվաբուծություն	Հակոբ Ջիլարյան		գ. Գետահովիտ (Իջեւան)

Մեղվաբուծություն	Պավել Ջանինյան		գ. Գանձաքար (Իջեւան)
Մեղվաբուծություն	Անդրանիկ Ղալթախչյան		գ. Աչաջուր (Իջեւան)
Մեղվաբուծություն	Կամո Միրզոյան		գ. Աղավնավանք (Իջեւան)
Մեղվաբուծություն	Սիմոն Շահնազարյան		գ. Խաչարձան (Իջեւան)
Մեղվաբուծություն	Ռադիկ Մխիթարյան		գ. Ն. Ծաղկավան (Իջեւան)
Մեղվաբուծություն	Ալվարդ Հարությունյան		գ. Ակնաղբյուր (Իջեւան)
Մեղվաբուծություն	Վիկտոր Եգանյան		գ. Սարիգյուղ (Իջեւան)
Մեղվաբուծություն	Մարտիկ Առաքելյան		գ. Վ. Ծաղկավան (Բերդ)
Մեղվաբուծություն	Արա Հարությունյան		գ. Բաղանիս (Նոյեմբերյան)
Մեղվաբուծություն	Արմեն Ղուլիջանյան		գ. Կողբ (Նոյեմբերյան)
Մեղվաբուծություն	Սերյոժա Քոչարյան		գ. Կողբ (Նոյեմբերյան)
Մեղվաբուծություն	Վլադիմիր Պողոսյան	47	գ. Զորական (Նոյեմբերյան)
Խաղողագործություն	Յուրի Միրզոյան		գ. Աչաջուր (Իջեւան)
Խաղողագործություն	Զաբելա Շաբանյան		գ. Աչաջուր (Իջեւան)
Խաղողագործություն	Ցոլակ Նազինյան		գ. Աչաջուր (Իջեւան)
Խաղողագործություն	Արթուր ՂազարյանՆ		գ. Վ. Ծաղկավան (Բերդ)
Խաղողագործություն	Հրաձին Գրիգորյան		գ. Տավուշ (Բերդ)
Խաղողագործություն	Սերոբ Ամիրխանյան		գ. Վ. Ծաղկավան (Բերդ)
Խաղողագործություն	Հարություն Հարությունյան		գ. Պառավաքար (Բերդ)
Խաղողագործություն	Մարիետա Դալլաքյան		գ. Պառավաքար (Բերդ)
Խաղողագործություն	Սամվել Բրուտյան		գ. Պառավաքար (Բերդ)
Խաղողագործություն	Հովսեփ Բրուտյան		գ. Պառավաքար (Բերդ)
Խաղողագործություն	Ալիկ Պետրոսյան		գ. Պառավաքար (Բերդ)
Խաղողագործություն	Մարինե Պողոսյան		գ. Պառավաքար (Բերդ)
Խաղողագործություն	Անիչկա Մարդանյան		գ. Պառավաքար (Բերդ)
Խաղողագործություն	Վահան Գրիգորյան		գ. Տավուշ (Բերդ)
Խաղողագործություն	Վարդան Զուրաբյան		գ. Բերդավան (Նոյեմբերյան)
Պտղաբուծություն	Մարտիկ Մխիթարյան	1 հա	գ. Ակնաղբյուր (Իջեւան)
Պտղաբուծություն	Սամվել Աղասյան		գ. Չինարի (Բերդ)
Պտղաբուծություն	Արթուր Սիմոնյան		գ. Նորաշեն (Բերդ)
Պտղաբուծություն	Հայկ Պետրոսյան		գ. Չինարի (Բերդ)
Պտղաբուծություն	Ռաֆիկ Օհանյան		գ. Պտղավան (Նոյեմբերյան)
Պտղաբուծություն	Սպարտակ Զախարյան		գ. Պտղավան (Նոյեմբերյան)
Պտղաբուծություն	Մեխակ Հարությունյան		գ. Պտղավան (Նոյեմբերյան)
Պտղաբուծություն	Կարապետ Աղաբաբյան		գ. Կողբ (Նոյեմբերյան)
Պտղաբուծություն	Սմբատ Մակարյան		գ. Զորական (Նոյեմբերյան)
Պտղաբուծություն	Արկադի Մակյան		գ. Բագրատաշեն (Նոյեմբերյան)
Ծխախոտագործություն	Սամվել Եղիկյան		գ. Վարագավան (Բերդ)
Ծխախոտագործություն	Ռիմա Մանուչարյան		գ. Վարագավան (Բերդ)

Ծխախոտագործություն	Մարինե Մելիքյան		գ. Տավուշ (Բերդ)
Ծխախոտագործություն	Աշոտ Բալդրյան		գ. Վ. Ծաղկավան (Բերդ)
Ծխախոտագործություն	Արսեն Մարալյան		գ. Տավուշ (Բերդ)
Ջերմոցային տնտեսություն	Լորիկ Սիմոնյան		գ. Լուսաձոր (Իջեւան)
Ջերմոցային տնտեսություն	Արամ Ամիրխանյան		գ. Սարիգյուղ (Իջեւան)
Ջերմոցային տնտեսություն	Արծրուն Մխիթարյան		գ. Խաշթառակ (Իջեւան)
Ջերմոցային տնտեսություն	Երջանիկ Այվազյան		գ. Լուսաձոր (Իջեւան)
Ջերմոցային տնտեսություն	Վաչիկ Հարությունյան		գ. Ակնաղբյուր (Իջեւան)
Ջերմոցային տնտեսություն	Ալեքսանդր Օհանյան		գ. Պտղավան (Նոյեմբերյան)
Ոչ ավանդական / Արեւաձաղկի մշակ.	Սամվել Ղազարյան		գ. Գետահովիտ (Իջեւան)
Ոչ ավանդական / Հնդկահավի բուծում	Ռաֆիկ Բալաբեկյան		գ. Զորական (Նոյեմբերյան)
Ոչ ավանդական / Սնկի արտադրություն	Ռաֆիկ Խաչիկյան		գ. Կոթի (Նոյեմբերյան)
Ոչ ավանդական / Ձիթենու մշակություն	Գագիկ Դավթյան		գ. Բերդավան (Նոյեմբերյան)
Ոչ ավանդական / Ջայլմաբուծություն	Աշոտ Բեջանյան		գ. Լճկաձոր (Նոյեմբերյան)
Ոչ ավանդական / Փասիանաբուծություն	Սեյրան Զուռնաչյան		գ. Հաղթանակ (Նոյեմբերյան)

9.1.2 <u>Տեղեկատվության աղբյուրների 2-րդ խումբ 1. Վիճակագրական նյութեր, պաշտոնական տեղեկանքներ, հաշվետվություններ</u>

1. «Անասնագլխաքանակի համատարած հաշվառման հանրագումարները 2007-2011թթ. հունվարի 1-ի դրությամբ», ԱՎԾ, 2007-2011
2. «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության 2-նիշ դասակարգման, ըստ մարզերի եւ ք. Երեւանի 2010թ.-ի հունվար-դեկտեմբերին», ԱՎԾ, 2011
3. «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները եւ համախառն բերքը 2006-2010թթ.», ԱՎԾ, 2007-2011
4. «Հայաստանի Հանրապետության մարզերը եւ Երեւան քաղաքը թվերով», ԱՎԾ, 2010
5. «Հայաստանի Հանրապետության մարզերը եւ Երեւան քաղաքը թվերով», ԱՎԾ, 2008
6. «Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 01.07.2011թ.-ի դրությամբ», ԱՎԾ, 2011
7. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2006-2010թթ.», ԱՎԾ, 2007-2011
8. «Հաշվետվություն (Ձեւ 22)՝ Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության եւ բաշխման (ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի, գործառնական նշանակության եւ սեփականության սուբյեկտների), առ 01.07.2010թ., Տավուշի մարզ», Տավուշի մարզպետարան
9. «Հաշվետվություն (Ձեւ 22ա)՝ Հայաստանի Հանրապետության ոռոգվող հողերի առկայության եւ բաշխման (ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի եւ սեփականության սուբյեկտների), 2010թ., Տավուշի մարզ», Տավուշի մարզպետարան
10. ՀՀ Գյուղատնտեսության Նախարարության տեղեկանքներ
11. «Մրգերի եւ բանջարեղենի արտահանման հնարավոր ծավալների ուսումնասիրություն», ՀԲ / Զարգացման Հայկական Գործակալություն / ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնի, 2010
12. «Պարենային ապահովություն եւ աղքատություն, 2010թ. հունվար-դեկտեմբեր», ԱՎԾ, 2011
13. Տավուշի մարզպետարանի տեղեկանքներ
14. Տավուշի ԳԱՄԿ-ի տեղեկանքներ